



9(3)

4680

25

mp

2-19

ՀԱՄԼԹՕՏ

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ
ՈՐ ՅԵՏՈՅ ԱՆԿԱՆ ԸՆԴ ՏԷՐՈՒԹԵԱՄԲ
ՀՈՌՎՄԱՅԵՑՑՈՑ

Ի ՅՈՎՀԱՆՆԵ ՊՐՈՒՍԱՑՑՈՑ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
~~ՉԱՄՈՒԹՅԵԱՆՑ~~


Ի ՊԵՏՍ ԴՊՐՈՑԱՑ

ՀԱՄԼԹՕՏԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԻԿ
ԼԵԶՈՒ

A
643


ՀՐԱՄԱՆԱԻ ՏԵԱՌՆ

ՄԱՏԹԵՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱԶԳԱՍԵՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԲԻ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԵՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԻ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ



4888

1
201102
201102

ВНИМАНИЕ
ВНИМАНИЕ
ВНИМАНИЕ

ВНИМАНИЕ
ВНИМАНИЕ

ВНИМАНИЕ
ВНИМАНИЕ

0
2
0



31542.64

ՅԱՌԱՅԱԿԱՆ

Երբ որ կը լսեմք որ պատմութիւնը շատ հարկաւոր մէկ գիտութիւն մըն է, պէտք է գիտնալ որ պատմութիւնը ինքնին գիտութիւն չէ: Գիտութիւնը ընդհանուր բաներու վրայ է, պատմութիւնը մասնաւորի վրայ է. ուստի պատմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ գիտութեան մը կանոններուն հաստատութիւնը և փորձը:

Ողջամիտ բարոյականք մէկ կը սորվեցընէ որ՝ առանձին մարդիկ ընկերութեան օգուտը իրենց օգտէն եւել բռնելու են, և իրենց վշտասուն անգամ յանձնառու ըլլալով հասարակութեան օգուտը քալեցընէլ նայելու են. չէ նէ հասարակութեան փնտս կ'ըլլայ. և իրենք ալ հասարակութեան մէկ մասը ըլլալով իրենք ալ այն փնտսէն չեն կրնար ազատ մնալ: Ասիկայ մէկ ընդհանուր կանոն մըն է. ուստի գիտութիւնը այս կանոնի վրայ է: Ասիկայ հաստատելու համար սպառնայ պէտք է. ինչպէս որ գիտութեանց առէն կանոններն ալ հաստատութեան կարօտ են: Պատմութիւնը կուգայ օրինակով կը հաստատէ ասիկայ. և կ'ըսէ որ՝ յիշուի ժամանակով մէկ մարդ մը իր օգուտը ամենեւին չի մտածելով հասարակաց օգուտ ըլլալու համար զինքը վշտանցի մէջ է գրեթէ. և անոր փնտսովք ուրիշներուն և հասարակութեան օգուտ ըլլալով, անոր մահը, որ ինչև իցէ եղանակաւ պիտի գար, (բան զի անմահ մնալիք չունէր), այս կերպովս գալով հասարակաց փրկութիւն եղեր է: Օրինակին ըստուգութեանը սրբազայներն են այս մարդուս անունը, որ տեղացի և ինչ աստիճանի տէր մարդ ըլլալը, ինչ ժամանակ ըլլալը, և այլն: Բուն կանոնին հաստատութեանը ասանք անսարքեր

բաներ են. անունը Վարդան և տեղը Հայաստան
 և ժամանակը հինգերորդ դարուն մէջ է եղեր ,
 և Պարսից կրակապաշտութիւնը իր ազդին մէջ
 չի մտցրնելու համար և եկեղեցին սրայծառացը-
 նելու համար մեռնիլը աչքը առեր է : Աստժէ
 անունը կողքու , տեղը Աթէնք . ժամանակը Քր-
 բիստոսէ 1152 տարի առ.աջ , յանիացիք ակթեռու
 ցիներուն վրան յաղթող շքլան , և Աթէնք յու-
 նիացիներուն ծառայութեան տակը գերի շքլ-
 րայ բռնով զինքը պատերազմի մէջ մահուան
 մասներ է . բուն նպատակին նայելով երկուքն ալ
 մէկ են : Կարելի է որ՝ սրատմութիւնը մինչեւ հի-
 մա մեղի անծանօթ մնացած մէկ ազգի մը մէջ
 ուրիշ ասե՛ն և ուրիշ անունով մարդ մըն ալ ե-
 րած ըլլայ , գործքը սասնց բրածին պէս նոյն , և
 գործոյն ելքն ալ նոյն . և ասիկայ մեր չգիտնալը
 միայն այնքան փնաս կրնայ ունենալ բարոյական
 և քաղաքական գիտութեան , որչափ փնաս կ'ու-
 նենայ բնական գիտութեան մէջ մէկ կանոնին
 հարիւր տեսակ փորձով ապացոյց ունենալուն
 տեղը իննսուն և ինն կամ իննսուն և ութն տե-
 սակ փորձով ապացոյց ունենալ : Ասիկայ քաղա-
 քական սրատմութեան վրայ շտտերէն մէկ օրի-
 նակ մը եղած ըլլայ :

Վուզն եկեղեցական սրատմութեան վրայ
 ալ ասիկայ ճշմարտել : Հպարտ և ամբարտաւան
 մարդիկ իրենց մտքին դատումը բնդ հանուր քր-
 բիստանէից ՚ի սկզբանէ հետէ միօրինակ բնդու-
 նած բանէն աւելի բրոնելով քրիստանէից մի-
 ութենէն կը զատին . իրենք իրենց նոր հա-
 ւատք կը հնարեն , և հերեօթիկասապետ կ'ըլլան :
 Աստ սանկ բռնք , ամէն հերեօթիկասութեան բու-
 կիպը՝ ամբարտաւանութիւն , և մարդուն իրեն
 խելքին ապաւինիլն է . որ այս տարաւնութիւնա
 և ամբարտաւանութիւնս ամօթ բան ըլլալը գիտ-
 նալով իմ հաւատքիս կանան սուրբ գիրքը կը
 ճանչնամ բռնը իրեն մէկ պատճառանք (էօպիւր)
 մը կը բրոնէ : Եկեղեցական գիտութեան սոր-
 վեցուցածը այս է : Եկեղեցական սրատմութիւ-
 նըն ալ ասոր ապացոյցները կուտայ , որով գի-
 տութեան տուած կաններ հաստատութիւն կը

գրանէ : Եւ այս բանիս վրայ որքան հերեւտիկոս եկեր են Քրիստոսի օրէն մինչեւ հիմայ և որքան ալ պիտի գան սակեց ետքը մինչեւ աշխարհքիս վերջը , ամէնն ալ գրեթէ մի և նոյն գաղափարի վրայ ձեւած են . թէպէտ մոլորութիւննին այլ և այլ , բայց մոլորութեան պատճառը մի և նոյն : Այս յատկութիւնս կը տեսնես Սիւնն մոզին վրայ , որ ամբարտաւանութիւնս Եսաուծոյ մեծ զօրութիւնը ես եմ կ'ըսեր . Մարկիանի վրայ , Մանասնոսի վրայ , և այլն . և ետքը Արիստի վրայ , որուն հարցուցին թէ երեք հարիւր տարիէ 'ի վեր քրիստոսնէից ընդունած գաւանութիւնը կ'ընդունին մի , ինչպէս որ Լուտերի ալ Ապոկալիպսիս կարգինալը հարցուց : Արիստի պատասխանը ինչ եղաւ նէ՛ Լուտերինն ալ նոյնը եղաւ . մենք սուրբ գիրքը գիտեմք ըսին . անկէց զատ բան չեմք գիտեր : Քանզի երկուքն ալ կառավարողը մի և նոյն ամբարտաւանութեան հոգին էր . մըտքերնին անանկ գրեր էին որ այնքան տարի աշխարհք եկած խմաստուն մարդոց մէջ իրենց պէս մարդ չէր երած որ սուրբ գրոց միտքը հասկընայ : Ասոր մէջն ալ կանոնին հաստատութիւնը նոյն կերպով է . ուրիշ պարագայներն որ կը պատմրվին կանոնին ըստուգութեանը հաստատութիւն են . ինչպէս է անունը Արիստ և Աղէքսանդրիայի քահանայ ըլլալը , և չորրորդ դարուն սկիզբները երեւան ելլելը , կամ անունը Լուտեր և Մաքսանիայի քահանայ ըլլալը , և տասն և վեցերորդ դարուն ըսկիզբները երեւան ելլելը : Պատմութեան ուրիշ պարագայներն ալ մարդկային գործքերուն իրար մէ ինչ եղանակաւ կախում ունենալը կը ջըջընեն :

Այս իրարմէ կախում ունենալնին ալ դեռ տեղու արժանի բան մըն է . քանզի սասանկ իրար մէ առաջ եկած գործքերուն մէկը բըւնելով և անոր պատճառը , այն պատճառին ալ պատճառը գրանելով՝ վերջապէս մէկ պատճառ մը կը գտնուի որ ամէն գործ անկէց առաջ կուգան : Ասով ալ կը գանեմք աշխարհքի մէջ գարծած գիպուածներուն թէ իրարու հետ կապուելուն

կերպը : և թէ բուն առաջին պատճառնին , որ
 իմացական պիտի ըլլայ . չէ նէ այդ կապակցու-
 թիւնները մէկ վախճանի մը հասնելու համար
 չի կրնար տնօրինել : Աւտի բազդը և դիպուածը
 չէ . քանզի ասոնք գոյութիւն անդամ չունին .
 թնգ թէ իմացականութիւն : Մարդկային ինա-
 ցականութիւն ալ պիտի չըլլայ . քանզի մէկ բա-
 նը մարդ մը կ'ընէ կոր նէ՝ ծայրը սւր երթալերը
 չի գիտնար կոր . մանաւանդ իրեն միտքը գրա-
 ծին հակառակը ընելու կ'ըստիպով կոր : Անցեալ
 դարուն վերջերը գաղղիացիները սոք երան .
 ազատութիւն և հաւատարութիւն ըսելով մէկ
 ռամկապետական կառավարութիւն մը պիտի
 հանէին . և որովհետեւ այս տեսակ կառավա-
 րութեանն թագաւոր պէտք չէր , թագաւորնին
 ալ մեռցուցին . շատ մեծ խռովութիւններ հա-
 նեցին : Տակէն անանկ բան մը ելաւ՝ որ սոք ե-
 լած ստեղծնին ունեցած մըտքերնուն ամենեւին
 հակառակն էր : Մէկ կայսերութիւն մը ելաւ
 Նարպէնին ձեռօքը . որ Պոսպօնեան թագա-
 ւորներէն աւելի իշխանութիւն և բռնութիւն
 բանեցուց : Ո՞վ կրնայ ըսել թէ տիկայ ընողները
 գաղղիացիներն էին : Գիպուածը անանկ բերաւ
 պիտի ըսես . բայց դիպուածը ո՞վ է . գաղղիաց-
 ւոց ազգէն աւելի զօրութիւն ունի մի այդ ո-
 նունը : որ գոյութիւն ալ չունի : Բանն այն է
 որ՝ Աստուած գաղանի տնօրէնութեամբ բանը
 այնպէս կ'առաջնորդէր . մարդիկ առաջնորդող
 ամենազօր ձեռքը չի տեսնելով ասոր անունը
 դիպուած գրին :

Հին պատմութեանց մէջն ալ տեսնելքնիս
 այս է : Եգիպտացիները կ'եւրէն . կը ծաղկին . ան-
 գիէն Պարսից և Մարոց հետ պատերազմ մը կը
 բացվի . Նաոբիւս կուգայ Եգիպտոս կ'առնէ . կը
 խառնրվի Պարսից տէրութեանը հետ : Պարսից
 տէրութիւնը մէկ գիէն կը զօրանայ . Վիւրոս կու-
 գայ Բարսիլոն կ'առնէ . և Ասորեստանեայց թա-
 գաւորութիւնն ալ կը վերնայ : Պարսիկները կը
 մեծնան . բոլոր աշխարհքի վրայ տիրեմը ըսելով
 յունաստանի կողմը ձեռք կը զարնեն . մէկ մըն
 ալ տակէն Ազգբասնդը մակեդոնացի մը կ'եւրէ .

որ Պարսից տէրութիւնը և անոնց իշխանութեանը տակը եղած երկիրները իր ձեռքին տակը կ'առնէ . որպէս թէ Կամբիւս և Աիւրոս իրեն համար գացած Եգիպտոսի և Ասորեստանեայց տիրած ըլլան , որ Աղէքսանդր շատ աշխատութիւն չի քաշէ ասոնց տիրելու :

Աղէքսանդր կը մեռնի . տղայ չունի . յաջորդները իրարու հետ կը պատերազմին . մինչեւ որ ամէն մէկը իրենց բաժնին հաստատութեամբ տիրելու ըլլան նէ՝ անգին Իդալիայի մէկ անկիւնը պըզտիկ մէկ տէրութիւն մը կայ , անիկայ կը հաստատի և կը զօրանայ : Թէ որ Աղէքսանդր տղայ ունենար , և իրեն տեղը անիկայ անցնէր , և իր բռնած ճամբան բռնելու ըլլար նէ՝ Ասիայի և Ափրիկէի կողմը շատ տեղ չէր մնացած Յունաց ձեռքը անցնելու . կարգը Իդալիայի եկած էր . Հռովմայու վրայ ծանր վտանգ կրնար ըլլալ . դիպուածը անանկ բերաւ որ Աղէքսանդր անոր դի մնաց . յաջորդներուն պատերազմին ատենը Հռոմ ատեն գտաւ զօրանալու . մինչեւ ետքը բոլոր Աղէքսանդրի տիրած երկիրները ձեռք ձեռքէց , և Յունաց և Մակեդոնացւոց տէրութիւնները վերցուց :

Աստուածային անօրէնութիւնը չի մտածող մարդուն համար ասիկայ դիպուած է . բայց մարգարէները ասոնց ասանկ ըլլալիքը գիտէին ըլլալէն շատ առաջ : Եզեկիէլ մարգարէն կ'ըսէր որ եգիպտացւոց իշխանութիւնը պիտի վերնայ . եգիպտացիք պըզտիկ ազգ մը պիտի ըլլան . և մէկ մըն ալ իրենց ազգէն թապաւօր և իշխան պիտի չունենան : (Եւէի . Իթ . Լ . ԼԱ . ԼԲ) : Մինչեւ հիմա պատմութիւնը այս մարգարէութիւնս հաստատելու վրայ է : Ատեն ատեն Եգիպտոս ինքնիշխան մէկ տէրութեան մը երկիր եղաւ . բայց իշխանները սլ էին : Օտար ազգի մարդիկ . Պըսղամէս և անոր ցեղը . Մակեդոնացիք . Արաբացի Խալիֆէներ . Չերքէզ Մէմալիւքներ . բայց բուն ազգաւ եգիպտացի՝ Նաբուգոդոնոսորայ կամ Կամբիւսայ օրէն ետքը մինչեւ հիմայ եգիպտոսի վրայ տիրած չէ : Իսպուած մը որ հաղարաւոր տարի առաջ ասանկ ըլլալիքը զբուցված էր

որ յայտնապէս աստուածային անօրէնութիւն ըսել է :


Պարսից Ալի-բաս թագաւորին անունը Եսայի մարգարէն կուտայ . Հրեայները գերութենէ ա սիկայ պիտի աղատէ և Երուսաղէմին պարիսպ ներքը ասոր օրովը պիտի շինվին կ'ըսէ : Ե՛րբ . Եզեկիա թագաւորին օրը . որ Հրէից ազգը զօրաւոր թագաւորութիւն ունէին , մարգու գերի չէին : Երուսաղէմի պարիսպները շէն էին , փլած տեղ ալ չունէին : Եւ այն ասունը բոլոր աշխարհքի վրայ եբրայեցւոց յարմարութիւն ունեցող ազգաց մէջ Ալի-բաս անուն թագաւոր չըկար : Ետքը՝ երկու հարիւր տարիի չափ ժամանակ անցաւ . Հրեայները քաղզէացւոց ձեռքը ինկած էին . Ալի-բաս անուն Պարսից թագաւոր մը եկաւ Բաբելոն կոխեց , քաղզէացւոց թագաւորութիւնը կործանեց . Երուսաղէմի ալ պարիսպները շինելու հրաման ըրաւ , որ Եօթանասուն տարիի չափ առաջ քաղզէացիները փրցուցեր էին : Այս ալ աշխարհքի դարձուածք էր կ'ըսէ քաղաքական գիտութիւնը . բայց աստուածային անօրէնութիւն է կ'ըսէ սուրբ գիրքը , ասոնց ամէն մէկուն վրայ մարգարէութիւնները իր մէջը պարունակելով :

Պատմութեան հնաստութիւն ըսված մասն ալ՝ որ վերջապէս հասկնայեցւոց ընդարձակ իշխանութեանը մասն եղած երկիրներուն և ազգերուն իշխանութեանը պատմութիւնն է . ամէն հին ազգաց պատմութիւնը չի պարունակեր , Դանիէլի մարգարէութեան 8 և 11 գլուխներուն մեկնութիւնն է . անանկ մարգոցմէ գրքված՝ որ Դանիէլի անունն ալ լըսած չունէին . ըսած խօսքերուն ալ տեղեկութիւն չունէին . բայց ըրած մարգարէութիւններուն կատարումը կը պատմեն . որ համառօտ կերպով , բայց պէտք եղած խորհրդածութիւններն ալ տեղն 'ի տեղը ընելով կը պատմեմք այս գրքիս մէջ : Ընթեցող մանկունք ասոր մէջ պատմութիւն սորված ատենին մարգարէութեանց ճշմարտութիւնըն ալ կը սորվին . աստուածային գերագոյն տընտեսութիւնը և ինամակալութիւնն ալ կը հաս

կրնան, որ աշխարհքիս վրայ ունի. և միանգամայն բանագէտ կ'ըլլան, և սուրբ հաւատոյ վրայ ալ աւելի հաստատութիւն կը գտնեն:

Այս համառօտ հնախօսութեանս բաժանումը այսպէս պիտի ըլլայ: Ամբողջ գիրքը երկու մասն պիտի բաժնրվի. Պատմութիւն արեւելեան ազգաց, և Պատմութիւն Յունաց: Առաջին մասը աւելի ամէն մէկ ազգին կրօնական և բարոյական և ուսումնական և քաղաքական տեղեկութիւնները կը պարունակէ: Եւ հինգ գլուխ կը բաժանվի: Ա. Եգիպտացոց վրայ: Բ. Փիւնիկեցոց վրայ: Գ. Քաղդէացոց և ասորեստանեայց վրայ: Դ. Մարաց և Պարսից վրայ: Ե. Հնդկաց վրայ: Այս ամէն ազգերըս մէկ տէրութեան տակ մըտնելը, ուստի և կառավարութե պատմութիւննին կը գտնես երկրորդ մասին մէջ, որ երեւելի գիպուածներու վրայ բաժնրված ըլլալով 21 գլուխ կը պարունակէ: Եւ վերջը համառօտ տեղեկութիւն մըն ալ գրինք յունաստանի արուեստից և գիտութեանց և դպրութեանց վրայ:

Իմաստուն և խոհական վարժապետներուն ձեռքն է՝ որ ուսանող տղայքը ասանկ պատմութիւններ կարդալով խոհեմ և բարեպաշտ ըլլան. ուստի աւելի անոնց կ'աղաչեմք, որ իրենց արժուն աշխատութեամբը և իմաստուն դասատուութեամբը օգնական ըլլան տղայքը այս ճամբովըս բարեպաշտութեան և հաստատ աստուածպաշտութեան մէջ առաջ տանելու:



Լրասանցները (Ի. Ա.) Երևոյթ Գեղե խորհրտ՝ Քրիստոսէ առաջ:

ՄԱՍՆ Ը.

ՊԱՏՄՈՒԹՒՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Պատմութիւն Եգիպտոսոց :

1. Եգիպտոս Ափրիկէի մէջ կ'ընայ . բայց Ափրիկէի ամէն երկիրներէն աւելի մօտ է Ասիայի : Աւսիան ու Ափրիկէն իրարմէ կը բաժնէ կարմիր ծովը : Թէպէտ շատ բարեբեր է , բայց վարպետ և աչխատասէր մարդոց ձեռք չ'ընար նէ՛ մարդու բնակելու տեղ չէր կրնար ըլլալ : Տարւան երեք ամիսէն եվել՝ Նեղոս գետը ասոր գետինները կուխած է . գետինը բնապէս անբեր . բայց գետը այս անբեր գետնին վըրայ տիղմ (չամուռ) կը ձգէ . որ բարեբերու թեանը պատճառ կ'ըլլայ : Այս գետը բղխած երկիրները՝

որ Ագիտոսի հարաւ կողմի լեռներ
 րը կլինան Հասկեշիտանու մէջ,
 հինգ ամիս շարունակ անձրեւ կու
 գայ. գետինն ջուրերը շատնալուն
 և գետինը կոխելուն պատճառը այս
 է: Թէ որ ջուրը մինչեւ ութը
 կանգուն չի բարձրանայ նէ՛ կամ
 թէ որ քսան և չորս կանգունէն ե
 վել բարձրանայ նէ, Ագիտոս սով
 կ'ըլլայ:

2. Ամառ ատեն այս երկիրս կըղ
 ղիներով և անտառներով լեցված
 ծով կը դառնայ. ձմեռը գեղեցիկ
 և զուարճալի դաշտ մը կ'ըլլայ ցորե
 նով գարիով և ուրիշ հունձերով
 և անուշահոտ խունկի ծառերով
 և ոչխարներով և հովիւներով և
 մշակներով և եղներով և տեսակ
 տեսակ ընտանի անասուններով լե
 ցուն: Մայց մէկ ժողովուրդ մը հսն
 ջուրերուն մէջ բնակուածիւն հաս
 տատելու, և Աեղոսին ջուրերուն
 շատնալէն օգուտ տեսնելու և վը
 նասներէն զգուշանալու համար
 պէտք էր որ այն մարդիկը բնութե

իրենց դէմ հանած դժուարութիւները յաղթելու չափ ուժ ունենալին իրենց խելքին մէջ : Այլ ասիկայ ժամանակով և փորձով սորվելու բան մըն էր : Պատմութեանց մէջ յիշատակված կրթեալ ազգերուն պինդ հիներուն մէկը Ագիպտացիներն են :

3. Ահապետաց ատենն ալ ասոնց թագաւորութիւնը ծաղկեալ էր : Քուրմերնին անանկ կ'ըսէին որ շատ հին է իրենց թագաւորութիւնը : Իսոյց 'Վիտգորոս սիկիլիացի հեթանոս պատմիչը կ'ըսէ որ՝ ատեն մը եգիպտացիները ամիսին տարի կ'ըսէին . որով մեր մէկ տարի ըսածը անոնց հաշուովը տասներկու տարի կ'ըլլար : Այն եգիպտացիները ուրիշ ամէն հին ազգաց պէս՝ իրենց երկրին առաջին թագաւոր կը սեպէին քանի մը աստուածներ . ամէնէն հինը Հեփեստոսն է՝ և ինը հազար տարի թագաւորեց կ'ըսէին : Վիտէին որ՝ ասանկ շատ մը տարի թագաւորութիւն տալ պէտք է ա-

նոր, որ աստուած է ըսելինն ամէ :
 Մնկէց ետքը իրենց թագաւոր կը
 գնէին Ասիրիա, և անոր քոյրը Բսիս,
 որ ետքը անոր կին ալ եղաւ կ'ըսէ-
 ին : Հերմէս, որ Հելլենացիները
 Սերկէսիոս ըսին, ասոնք ալ աստ-
 ուածներու կարգ անցած էին, և
 օրէնքները և արուեստները և գի-
 տութիւնները ասոնք գտան կ'ըսէ-
 ին : Մնկերութեան օգուտ ընող
 մարդիկը այս կերպով աստուած կը
 սեպէին, և կռապաշտութեան ըս-
 կիզներուն մէկը այս է :

4. Թէ որ եգիպտացւոց աւան-
 դութիւնը ազգային աւանդութի
 մը սեպեմք, տեղւոյ մասնաւոր ա-
 ւանդութի չի սեպեմք նէ, քիչ մը
 ճշմարիտը կրնամք գուշակել : 9000
 տարին՝ եգիպտացւոց հաշուով,
 կ'ընէ 750 տարի : Հեփեստոս ըսած-
 նին Մշամը սեպեմք նէ՝ որ 930 տա-
 րի ապրեցաւ, և քանի որ ինքը կեն-
 դանի էր՝ բոլոր ազգաց վրայ թա-
 գաւորութիւն կ'ընէր տանուտէ-
 րական իշխանութեամբ, Ասիրիա և

Իսիս ալ կը գտնեմք Ադամայ տղու
ցը մէկը, որ ուրիշ մարդ չըլլալուն
համար հարկաւ իրենց քոյրը իրենց
կին առնելու կ'ըլլային :

5. Այս ճշմարիտ կ'երեւի որ՝ եւ
գիտատացւոց առաջին թագաւոր Այ-
գիտատոսի վրայ տիրող՝ եղաւ Սե-
նէս : Ասոր թագաւորութեան ա-
տենը այնքան հին է որ՝ շատ գի-
տուններ Այոյայ թոռներուն մէկը
կը կարծեն ասիկայ : Քանի մը ժա-
մանակագիրներուն հաշուովը՝ Քը-
րիստոսէ 2965 տարի առաջ էր ա-
սիկայ : Իայց սովորական ժամանա-
կագրութիւններուն նայիմք նէ՝ ջըր-
հեղեղը Քրիստոսէ 2348 տարի ա-
ռաջ է : Այս հաշիւը՝ որով Սենէսի
թագաւորութիւնը՝ ժամանակագ-
րաց հաշուովը ցրցուցած ջրհեղե-
ղին ժամանակէն հին ըլլալով, թէ
որ ճշմարիտը ասիկայ սեպելու ըլ-
լամք նէ, եօթանասնից ժամանա-
կագրութիւնը աւելի յարմար կու-
գայ հաշուին, որ ջրհեղեղը Քրիս-
տոսէ 2937 տարի առաջ կը գընէ :

Վամ՝ անկէց առաջ ծնած էր . և ե-
 գիստացւոց ազգին առաջինն ախա-
 հայրն է Վամ : Վայց եգիստացւոց
 գիրքերուն ժամանակագրութիւն
 ներք կասկածելի են . ժամանակ ու-
 բաշէլոյ առաջնորդ չեն կրնար ըլլալ :

6. Սենէսէն ետքը շատ ատեն
 անցաւ , որ ժամանակ հարստութեան հով-
 ոսոց կ'ըսվի . և սլատմութիւնը այն
 ատեններուն յատուկ բան շատ չի
 սլատմեր : Այս հովիւ ըսվածները
 ոմանք կ'ըսեն թէ արաբացիներն է-
 ին որ եկան Ագիստոսի տիրեցին :
 Ասոնցմէ ետքը երեւելի Աեստաու-
 բիսը թագաւոր կ'ըլլայ . երկիրնին
 կը մեծցընէ . օրէնքներ կը դընէ . և
 յաղթութեամբ մէկ դիէն մինչեւ
 շնդկաստան և մէկ դիէն մինչեւ
 թրակիա գնաց կ'ըսեն , որ է Վա-
 տամսօլու գաւառը : Վայց ասոր
 թագաւորութեանը վրայօք ալ ըս-
 տոյգ բան մը չի կայ :

7. Ագիստացւոց սլատմութիւ-
 նը՝ Վրիստոսէ 670 տարի մը առաջ
 ժամանակները քիչ մը ստուգու-

Թեան նշաններ կը ցըցընէ : Այն ա-
տենն է որ Պսամմեաիկոս ազատու-
թիւն տուաւ օտարազգիներուն որ
իր երկիրները մըտնելու կարող ըլ-
լան . այն ատենէն սկսան եգիպ-
տացիք հելլենացւոց հետ հաղոր-
դութիւն ունենալ :

8. Ասոր տղան Նեքաւով մէկ ջը-
րանցք մը բանալով Նեղոսը կարմիր
ծովու հետ միացընելու ձեռք զար-
կաւ : Այս գործը որ յիրաւի մէկ
մեծագործ թագաւորի մը ընելու
գործ էր , չիյաջողեցաւ . և այս բա-
նիս բանողներէն հարիւր հազար հո-
գիէն աւելի մարդ կորսընցուց : Աւ-
րիշ գործի մը ձեռք զարկաւ , որով
անունը կրնար յաւիտեան մնալ աշ-
խարհքիս վրայ : Փիւնիկեցի նաւա-
վարներ ասոր հրամանովը կարմիր
ծովէն ճամբայ ելելով Ափրիկէի բո-
լորտիքը սլըտըտեցան . երեք տարի-
էն ետքը՝ Նեղոս գետին բերանը
հասան :

9. Ամասիս եկաւ Նեքաւովին
տղան թագաւորական աթոռէն վը-

ուրնատեց . և վաճառականութիւնը
 ծաղկեցընելով, և Յունաց աղ-
 գէն իր երկիրներուն մէջ բնակիչ
 շատցընելով անուն վաստրկեցաւ :
 Սողոն և Պիւթագորաս իմաստու-
 թիւն սորվելու համար Ագիպտոս
 գացին :

10. Ասկէց ետքը նստող թագա-
 ւորին օրը թագաւորութիւնը աւ-
 րովեցաւ : Պարսից թագաւորը
 կամբիւս՝ այս երկիրս իր իշխանու-
 թեան տակը ձգեց . Քրիստոսէն 525
 տարի առաջ : Անկէց ետքը Ագիպ-
 տոս միշտ Պարսից կամ գերի կամ
 հարկատու եղաւ . մինչեւ Պարսից
 թագաւորութիւնն ալ Աղէքսան-
 դրու ձեռք անցաւ : Պտղոմեան
 թագաւորներուն օրը Ագիպտոս նու-
 րէն ծաղկեցաւ . ինչպէս որ վերջը
 պիտի տեսնեմք երկրորդ մասին մէջ :
 Ի այց եգիպտացիներուն պատմու-
 թիւնէն աւելի մեղի խեղք սորվեցը-
 նողն է անոնց կառավարութիւնը .
 օրէնքնին , կրօնքնին , բարբերնին ,
 արուեստնին և գիտութիւննին :

11. Այդ խարտայիններուն թագա-
 ւորու թիւնը ինչ ատենէն ըսկըսիլը
 ճիշդ յայտնի չէ : Այս թագաւո-
 րու թիւնս Ռապէփական էր . և այս
 տեսակիս առաջին օրինակ եղած կըլ-
 լայ հայրական իշխանու թիւնը . որ
 իր տանը մէջ մինակ բացարձակ իշ-
 խանու թիւն կը վարէ : Թագաւոր
 կ'ընտրէին՝ որ ազգին ամէնուն մէ-
 կէն հօրսէս ըլլայ . և անոնք կառա-
 վարէ : Ասոր վարմունքին վրայ ալ
 կ'իշխէր օրէնքը . տունը ինչպէս պի-
 տի ըլլար , ժամանակը ինչպէս պիտի
 դործածէր , երբ ինչ կերակուր պի-
 տի ուտէր . ասոնց ամէնուն վրան
 օրէնք դրուած էր : Արօնքը ամէն օր
 իր ընելիքները իրեն կիմացընէր .
 քրմապետը կը յորդորէր որ թագա-
 ւորավայել առաքինու թիւններէն
 ետ չիկէնայ . և անոր չար խրատ տը-
 վողներուն անէծք կը կարդար : Այս-
 քը շիտկելու համար աղէկ բարոյա-
 կաններ և բարի օրինակ տալու պատ-
 մու թիւններ կարդալն ալ իրեն
 պարտքն էր :

12. Ամէն թագաւոր ասանկ խրատներու չէին դար. Սովսէսի ատենվան Փարաւոնը խստասիրտ և իր խօսքին վրայ անհաստատ մարդ մըն էր. անկէց առաջինը անգուծ էր՝ որ եբրայեցւոց տղայքը ջուրը նետել և խեղդել կուտար : Ասոնք կառավարութեան հաստատութեւնը համար եղած անօրէնութիւններ ըլլալով, գուցէ այդ խելացի ազգը ասանկ ընող թագաւորները կը գուժէր ալ : Վայց թէ որ կառավարութեան գաչելու բան մը ընէր նէ՛ կենդանութեան ատենը անիկայ շտակելու արիութիւն ունեցող մարդ քիչ գլտներովէլը գիտնալով՝ օրէնքնին անանկ կանոն դրաւ որ թագաւոր մը մեռած ատենը անոր վարուցը վրայ դատաստան ըլլայ : Ամէն մարդ կրնար անոնց համար ամբաստանութիւն ընել, հասարակութիւնը վճիռը կը կտրէր : Թէ որ կեանքը կամ կառավարութիւնը գէշ էր նէ՛ թագաւորական թաղմանէ կը զրկուէր : Այս սովորու-

Թիւնս ալ մարդոյս գէշու-թիւննե-
րուն սանձ մը կ'ըլլար, բայց Թա-
գաւորին յաջորդը իր նախորդին սա-
տուոյն սաշտական կենար, և անոր
գէշու-թիւնը երեւան հանելու և
անոր վրայ դատաստան ընելու կամք
չունենար նէ ինչ ընելու էր. ո-
րովհետեւ միշտ կենդանի Թագա-
ւորին կամքը պիտի առաջ քալէր :
Թագաւորնեւրուն խղճմտանաց ձայ-
նը արթընցընելը՝ անոնք մեռնելէն
ետքը վրանին անօգուտ տեղը դա-
տաստան ընելէն աղէկ է : Սեռնե-
լը միտք չի բերելով գէշու-թիւն ը-
նելու մարդը՝ մեռնելէն ետքը վը-
րան ըլլալու դատաստանը և մարմ-
նոյն չի Թաղվելիքը ամենեւին միտք
չի բերեր :

13. Ագիստոս հին ատենը 36
գաւառ բաժնրված էր, որ օրէնս
կ'ըլլէին, և այս բաժանումնս Սե-
սոստրի ատենէն կը կարծրվի, որ ա-
մէն մէկ գաւառին արժանի գա-
ւառապետներ և կուսակալներ կը
խրկէր : Վետինը երեք մասն բաժ-

նեց. մէկը թագաւորին, մէկը քուրմերուն՝ և երրորդը զինուորներուն : Աւրիշ մարդոց կը մնար որ իրենց աշխատութեամբը ապրին : Այս կերպ գեափն բաժնելը շատ անհաւասար էր. և քուրմերուն ձեռքն ալ շատ զօրութիւն կ'ըլլար, զինուորներուն հաւասար ըլլալով :

14. Վիտութիւնը միայն քուրմերուն մէջն էր. կառավարութեան կանոնները ասոնք կարգադրեցին, և ամէն բանի մէջ ձեռք ունէին : Արեւելի որ զինուորները հարստանալով թուլցան. քանզի որ ազգ որ եւ գիտացուցուց վրայ ելաւ՝ եւ գիտացուց զինուորները մէկուն ալ դէմ չի կրցան դնել :

15. Հասարակաց խաղաղութեան գլխաւոր հիմանը մէկը՝ դատաստան ընելու կերպին վրայ հիմնած էր : Վատաւորները երեսուն հոգի էին, որ Ագիտոսի երեք երեւելի մայրաքաղաքներէն կ'ընտրուէին. Արեգ քաղաքէն, որ ստորին Ագիտոս էր. միջին Ագիտոս

սի Մեմփիս քաղաքէն , և վերին
 Ագիստոսի թեքէ քաղաքէն , և ա-
 սոնց դատաւորական ատեանը շատ
 մեծ յարգու թիւն ունէր : Ասոնց
 ապրուստը թագաւորը կուտար , և
 երգում տալ կուտար անոնց , որ ի-
 րեն չի հնազանդին՝ թէ որ անիրաւ
 բան մը հրամայէ նէ : Կատելու բա-
 ները գրով կուտային ասոնց , որ ճար-
 տար խօսելու ձեւերով դատաւոր-
 ները խաբւելով դատաստանը չի ծը-
 ունէն : Մեծ դատաւորներուն ձեռքը
 մէկ պղղտիկ արձան մը կար , որ ճշ-
 մարտու թիւնը կը ցըցընէր : Այլ որ
 դատը վաստըկէր նէ՝ կուգար ձեռքը
 այն արձանին կը դըպցընէր և կը
 համբուրեր , որպէս թէ դատը ի-
 րեն վաստըկցընողը դատաւորը չէր ,
 ճշմարտու թիւնն էր : Բայց կը տես-
 նէին ալ որ այն ճշմարտու թիւն
 ըսած բաներնին դատաւորին ձեռ-
 քըն էր :

16. Ագիստոսացւոց օրէնքներուն
 մէկ քանին նշանաւոր են : Շնու-
 թիւնը ընկերու թեան շատ մնասա-

կար յանցանք մը բռնելոված ըլլալով չնացեալը ծանր պատիժ կը կրէր : Այրիկ մարդուն հազար գաւաղան (տէյնէկ) կը զարնէին, և կնիկ մարդուն քիթը կը կտրէին :

17. Ախտուած թեան յանցանքով բռնելոված զինուորներուն պատիժը մէկ խայտառակութեան նշան մըն էր . քանզի զինուորներուն աւելի սիրտ և կարիճութիւն տուողը՝ իրենց պատիւը ճանչնալը պիտի ըլլայ : Թէ որ մարդասպան մարդ մը մէկուն վրան յարձակէր ու պիտի սպաննէր, և մէկ մարդ մը կրնար ա՛նիկայ ազատել և չազատեց նէ՛ կը մեռցընէին : Ար քաղաքին կամ գեղին քով սպաննելոված մարդ մը գըտնէին նէ, անոր փառաւոր թաղում մը կ'ընէին, և ծախքը՝ որ ծանր կ'ըլլար, այն քաղաքէն կամ գեղէն կ'առնէին : Այս օրէնքներս անոր համար էր որ՝ ամէն մարդ հոգ տանի որ իր սահմանին մէջ անանկ բան չըլլայ :

18. Պարտականին անձը չէ, այլ

ինչքը պարտքը պիտի վըճարէր : Աւստի առնելիքի տէր եղողները պարտքի տէրը բանար դնել կամ ուրիշ նեղութիւն տալ չէին կրնար ընել :

19. Ամասիա թագաւորը օրէնք մը դրեր էր , որով ամէն մարդ տարին անգամ մը պարտական էր քաղաքական կառավարութեան հասկըցընելու թէ ինչ արուեստ կը բանի և ինչով կ'ապրի . և ո՛վ որ իրեն ապրուստ գտնալը օրինաւոր կերպով ըլլալը չէր կրնար հաստատել նէ՛ մահապարտ կ'ըլլար : Այս օրէնքս թէպէտ շատ խիստ է . բայց կը ցըցընէ որ եգիպտացիները պարսպ պըտըտող և խարդախ և անիրաւ ճամբով վաստակ ընողներուն երեսէն տեսած և տեսնելու մնասնեանուն գէշութեան առաջը առնելու ասկէց աղէկ ճամբայ չի գըտան :

20. Արուեստները ցեղի կապ ված էին . տղան հօրը արուեստէն զատ ուրիշ արուեստ չէր կրնար բանիլ : Ամանք կը կարծեն որ ասիկայ


արուեւստաւորները վարպետ ընելու
 ճամբայ մըն է, կարելի է որ այս օ-
 րէնքը գնողին ալ միտքը այս եղան-
 քըլայ. բայց փորձը ցրցուց որ ասով
 առաջ երթալու սէր մը չի կրնար ըլ-
 լալ. որովհետեւ ուրիշէն վախ չկայ
 որ աւելի վարպետ ըլլալով հացը
 ձեռքէն յափշտակէ : Ազխպտացւոց
 մէջ ալ արուեւստները ժամանակ
 անցնելով տկարանալուն և ինալուն
 սրտածառը այս է : Աղէկ օրէնքներ
 ունէին, բայց գէշ սովորութիւն-
 ներ ալ ունէին : Ասիրիսի և Վսիսի
 նմանութեամբ՝ քոյր և եղբայր ի-
 րար կ'առնէին, քուրմերէն զատ ա-
 մէնուն ալ ներեալ էր որ ուղած-
 նուն չափ կին առնեն, քուրմերուն
 կինը մէկէն ելել չէր ըլլար :

Չ1. Արօնքը՝ որ առաքինութեան
 կապն է, անոնց մէջ տղայական և
 վնասակար սնտոխապաշտութիւննե-
 րու փոխվեցաւ : Արեւակայութիւ-
 նը և վախը աստուածներնին շատ
 ցուցին, մարդոյս ամէն սիրոյ և սա-
 տուոյն արժանի եղող աստուծոյ մէկ

հատիկ ըլլալը մոռցուցին : Չէ՛ թէ
միայն երեւելի մարդիկ, այլ և անա-
սունները անգամ աստուածներուն
կարգը առին : Խոտերուն մէջն ալ
պաշտելու բան գտան :

22. Գլխաւոր չաստուածներն՝ մէկ
սեւագոյն ցուլ մըն էր, վրան տեղ
տեղ բիծեր ունէր, և Ապիս կ'ըսե-
ին : Աստուն, շունը, կոկորդիլոսը,
և ուրիշ անասուններ ալ աստուած
սեպված էին, և այս պաշտելի ա-
նասուններուն մէկը ակամայ ան-
գամ մեռցընողը մահապարտ կ'ըլլար :
Սով եղած ատենը եգիպտացիները
իրար մորթել ուտելը այս անասուն-
ները մորթելէն աղէկ կը սեպէին :

23. Պաշտելու կերպին վրայ ա-
մէն անգիտ սովորութիւնը մէկ չէր :
Տեղ կար որ կոկորդիլոսին պաշտու-
կը մատուցանէին, տեղ կար որ՝ Փա-
րաւոնի մուկ ըսված փոքրիկ կեն-
դանիին, որ կոկորդիլոսին թշամի-
է : Տեղ մը ոչխարը կը պաշտէին և
ուրիշ տեղ այժը : Այլ այս տարբե-
րութեանս պատճառաւ իրարու



հետ կրօնիւնին ալ պակաս չէր : Արովհետեւ հրեայները անասնոց պաշտօն չէին տաներ , անխղճաբար կը մորթէին կ'ուտէին , ուստի Յակոբ նահապետ իր ընտանիքովը Ազգիպոսս գնաց նէ՛ թագաւորը աւոր առանձին երկիր տուաւ որ ուրիշ եգիպտացիներուն հետ խառն ըլլալով այս բանիս համար անհանգիստ չըլլան :

24. Քանի մը անասուններ անմաքուր և պիղծ սեպւած էին մէջերնին , մանաւանդ խողը : Օ՞րին ալ չէին սիրեր , անոր համար նաւով ճամբայ ընելն ալ ասոնց բանը չէր : Օտարականներու թշնամութի մը ունէին , քանզի իրենց կրօնքը պատուիրած էր որ անոնց հետ կերակուր չուտեն , օտարներուն դանակովը կըտրըված բանը անգամ չէին ուտեր :

25. Քուրմերը աւելի ճիշտ տեղեկութիւն ունէին աստուծոյ վերայ : Մաղանի ուսմունք մը ունէին , հասարակութեան սորվեցու-



ցածներնուն շատ գերազանց . բայց քիչ մարդու կը սորվեցնէին . անոնք ալ արարողութիւններով իրենց խորհուրդներուն հաղորդ կ'ընէին . հասարակութեան սնտոխապաշտութիւնն ալ չէին աւրեր , քանզի առկէց իրենց օգուտ կ'ըլլար : Միայն ճշմարիտ կրօնքն է որ մոլորութիւնները ցրուելով առ հասարակ ամէնուն ճշմարտութիւն և առաքիւնութիւն կը սորվեցընէ :

26. Այգիստացիներուն եմբըք անուն վաստրկիլը իրենց գիտութիւնովը և արուեստովը եղած է : Այրկաթ և կրակ գործածելու սովորութիւնը հնարվելէն ետքը քիչ ազգի մէջ մընաց որ չի մտնէ այս գիւտը : Հաց շինելը հիմայ ալ շատ ազգ կայ որ չեն գիտեր , որ իրենց նախնիքը գիտէին : Աւստի ասանկ բաները մէկ ազգի մը մէջ ամէնուն սորվեցընելու և հասարակացընելու պատճառ եզող մարդը շատ մեծ ազէկութիւն բրած կ'ըլլայ : Վետին հերկելու խտիը (սասպանը) Ասիրիս

գտաւ կ'ըսէին . և ասիկայ հնարե-
լովը մարդոց շատ մեծ օգուտը բրաւ .
քանզի քաղաքական ընկերութեան
հիմը՝ երկրագործութիւնն է :

27. Աբրայեցիները մէկ մասնա-
ւոր ազգ մը ըլլալէն առաջ եգիպ-
տացիները արուեստներու հմուտ
էին : Պատուական կտաւեղէններ
և քանդակով զարդարված (խալէմ-
քեարի) տեսակ տեսակ անօթներ կը
չինէին : Ղարտարապետութեան ար-
ուեստով մեծութեւ և ամբուէ կող-
մանէ զարմանալի շէնքեր շինած են :

28. Ագիպտոսի հին բուրգերէն
երեքը մինչեւ հիմա տակաւին կը
կենան : Սեծին շրջապատն է 2640
ոտնաչափ . և ուղղագիծ բարձրու-
թիւնը 500 ոտնաչափ : Ա՛րսէն որ
հարիւր հազար բանվոր բաներ են
ասոր վրայ շարունակ երեսուն տա-
րի : Այս ասագին շինուածքները՝
ամբարտաւան թագաւորները ի-
րենց գերեզման ընելու համար շի-
նել կուտային . շէնքերնին մնաց , շի-
նել տուողներուն անունը չի կայ :

29. Հասարակաց օգտին ծառայելովը յաւիտեան մնալու ասոնցմէ աւելի արժան էր Սէրիս լիճը. Նեղոսին ջուրը չափէն ելել շատցած ատենը՝ աւելի ջուրը հոս կը լեցվէր, և սովորական չափին չի հասած տարին այս լիճըս գետին սալահասու թիւնը կը լեցրնէր : Հո՞ւնաց հարսպոսթիան ատենը շինվեցաւ (թ . 6) : Այս թագաւորներէս Ասիմանտիաս ըսվածին սալաատը գրատուն մը կար որ Եղարան հոգոց կ'ըսվէր . և աշխարհքիս մէջ ամէնէն հին գրատունը այս է :

30. Եգիպտոսի երկիրը շատ արձաններ ալ կային . որ կը ցրցրնէին թէ որքան բան կուգայ եգիպտացւոց ձեռքէն : Շատ կային՝ որ 190 ոտք բարձրութիւն ունէին . և միայն մէկ կըտորէ շինված էին : Ասոնց մեծերուն մէկը Հոսմ տարին . որ հինգերորդ Քսեստոս սրապը տընկել տուաւ . և այս գործքերըս կը ցրցրնեն որ եգիպտացիները իրենց շինած բաներնուն գեղեցիկ ըլլալը

չէին նայեր. կուզէին որ չափէ գուրս մեծ ըլլայ : Վործը գլուխ հանելը որքան դժուար ըլլար նէ՝ գործը այնքան շատ յարգութիւն կը գտնէր :

31. Ագիտացիներուն գեաին չափելը շատ ճիշդ էր. ջուրի ճամբաներ չինած էին Աեղոսին ջուրը բաժնելու համար. ջուրին որքան շատնալը ճիշդ կը չափէին. ամէն տեսակ մեքենաներ գործ կ'ածէին, աստղերուն ընթացքն ալ կը ճանչնային : Աստի քանի մը գիտութիւններու մէջ ասոնց շատ առաջ գացած ըլլալուն վրայ երկբայութի չկայ : Առաջ ամիսը տարի կը սեպէին. բայց ետքը գիտողութիւններ ընելով՝ 12 ամիսին տարի մը ըսին : Առջի բերանը լուսնի ամսի վրայ հաշուելով 354 օրը տարի մը ըրին. ետքը բուն արեգակնային տարին գտան. 365 օր և քանի մը ժամ : Աստղաբաշխութեան և երկրաչափութեան մասնաւոր ջանքով կը հետեւէին :

32. Բայց անանկ աւելորդասպաշ

տու թիւն մը ունէին որ՝ ամէն բան,
 և մինչեւ բժշկական գիտութիւն
 նին անգամ կ'աւրէր: Մեռելնե-
 րուն երջանկութիւն կը սեպէին
 անոնց մարմիններուն երկար ատեն
 դիմանալ չի փրտտիլը. ուստի՝ դի-
 ազարդելու (մեռելները սահարլա
 միշ ընելու) զարմանալի արուեստ
 ունէին: Նանկ որ՝ հին ատենէ չի-
 նած մեռելնին մինչեւ հիմա կը մը-
 նան, և ճոճա ըսվածը անոնք են:
 Եւ այց այն ծաղրական էր որ՝ մեռել-
 ները ասանկ դեղող մարդիկը՝ մեռել-
 լի մարմինի դպած ըլլալնուն համար
 պիղծ կը սեպվէին, գործերնին լմըն-
 ցածին պէս անկէց փախչելու էին:

33. Վիրերնին առաջ նշանագիր
 էր. ըսել է որ՝ ամէն բանի անուն՝
 մէկ յատուկ նշան մը ունէր: Այս-
 քը երբ որ այբ և բենը ճանչցան,
 որ ամենահարկաւոր գիտերուն
 մէկն է, հին նշանագիրները քուր-
 մերուն մնացին. որ իրենց գիտու-
 թիւնը ռամիկներէն ծածկել կ'ու-
 ղէին. քանզի այս գրերըս միտք սա-

հելը շատ դժար ըլլալով՝ մարդոց մէ սրահելը դիւրին էր . մէկալ գիւրերը ամէն մարդ դիւրաւ կը սորվէր :

34. Ազգիպտացիներուն վրայ եղած գովուիններուն շատը չափէն ելլել և սուտ են : Առաքինութիւններ ունէին . հանդարտ ազգ մը էին . հայրական իշխանութեան ելլելօք հնազանդ , հին սովորութիւննին ամենեւին չէին ձգեր : Այց թոյլ և անզօր և սնտոխապաշտ մարդիկ էին . խելվընին ինչ բանի պառկած էր նէ՝ անոր որպէս թէ գերի կ'ըլլային . իրենց չըրած բաները ոչինչ կը սեպէին . անոր համար արուեստներնուն մէջ կատարելութիւն մտնելը անհնար էր : Չինացիք թէ՛ այս կողմէն և թէ՛ ուրիշ բանի մի բաներով եզիպտացոց շատ կը նմանին . ինչպէս որ Հնդիկներն ալ : Աւստի ասոնց տեղերը թէպէտ իրարմէ այնքան հեռու , բայց սկիզբնին և ծագումնին մէկ ըլլալու նշան է : Չորս հազար տա-

րի առաջ չինացիք ինչ անկատար
 դիտութիւն ունէին նէ, հիմա ալ
 նոյն անկատարութեան մէջ են. կա
 րելի է որ աւելի անկատար ալ ե
 ղան :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Պատճառ-իւն Փի-նիկեցոց :

1. Փիտնիկէ ըսլած երկիրը՝ ճեր
 մակ ծովուն եզերքը մէկ անբեր եր
 կիր մըն էր . որ բերքը բնակիչնե
 րուն չէր օգտեր : Ար տեղ կարօ
 տութիւն շատ ըլլայ նէ՝ այն տեղի
 մարդիկը ճարտար (մարիֆէթի)
 կ'ըլլան . և արուեստներուն առա
 ջին պատճառը կարօտութիւնն է .
 որուն հետ փորձը և խելքը՝ շատ
 հեղ դիպուածն ալ խառնըլելով
 նոր բաներ գտնել կուտան :

2. Շատ հին ատենէ 'ի վեր փիւ
 նիկեցիներուն խելքը հասած էր որ՝
 իրենց պէտքին պակասը ծովու վը
 րայ ճամբորդութիւն ընելով կըր

նան լեցրնել, և այս բանիս իրենց շատ օգուտ ըրին | իբանան լերան խոշոր ծառերը, և ծովեղերեաց յարմար նաւահանգիստնին : Բեւեռաւ կան աստղէն զատ առաջնորդ չունենալով ալ վաճառականութիւնին շատ հեռու տեղեր տարածեցին :

3. Ասոնցմէ դաղթականներ դացին Ախպրոս, Հոռոս, Ալլադա, Սիկիլիա, Սարտէնիա : Իրենք մինչեւ Սպանիա հասան, Ովկիանոս ծովն ալ անցան : Արդիքս (քառիչէ) քաղաքը իրենց վաճառանոց ըրին : Այլ մասնաւորապէս Բեաիկէէն շատ հարստութիւններ ձեռք ձգեցին : Սէկ անգամի ճամբորդութենէ ետ դառնալնուն հետերնին շատ արծաթ ունենալով, նաւուն երկաթին վրայ կապեցին արծիճի տեղ : Աւրիշ ազգերը ինչ օգտակար և գեղեցիկ և սլատուական բաներ ունէին նէ՝ ասոնք իրենց վաճառականութեամբը անոնց ամէնն ալ ձեռք կը ձրգէին :

4. Իրենց նաւարկութիւնով հասած

տեղերնին գաղտնի կը պահէին . չէին ուզեր որ մարդ իմանայ . չըլլայ որ իրենց ընելու շահուն հաղորդըլան : Ափրիկէին բոլորտիքը ճամբորդութիւն ընելնին այնքան զարմանալի է որ՝ նաւերնին ցամաքէն շատ հեռու չէր կրնար բացվիլ : Այն ատենը անհնարի պէս եղած բանը հիմայ կողմնացոյցով (բուսուլայով) շատ գիւրին եղած է :

5. Փիւնիկեցիները գիպուածով ծիրանի ներկելուն կերպը սորվեցան : Հովիւի շուն մը անօթութենէն ծովուն եղերքը պրտրտած ատենը մէկ խեցեմորթ մը կը գըտնէ , միսը ուտելու համար կը կոտրէ . և բերանը ասկէց ելած ներկովը կը ներկըվի : Աոյնը շատ գեղեցիկ ըլլալով ետեւէ ինկան , այս խեցեմորթէն այն ներկը հանելուն և անով բան ներկելուն կերպը գըտան : Քիչ ատենէն՝ այս գոյնըս թաղաւորական հագուստներու յատուկ եղաւ : Ահա՛ գիպուածը ասանկ կ'ըլլայ որ արուեստից վերա-

բերեալ բան գըտնելու պատճառ
կ'ըլայ :

6. Վիր գրելուն հնարքն ալ
փիւնիկեցիներուն կուտան , որ
մարդոյս մտքինը ուրիշին հասկըցը-
նելու միջոց մը ըլլալով՝ շատ գե-
րազանց գիւտ մըն է : Փիւնիկեց-
ւոց վրայ ինչ որ գիտեմք նէ (Յոյնե-
րէն գիտեմք , ասոնք ալ իրենց գի-
րերը փիւնիկեցիներէն առած ըլլա-
լով , և բուն հնարողներէն առինք
ըսելը իրենց պարծանք գալով՝ գի-
րը փիւնիկեցիները հնարեցին ըսե-
լը ասկէց մնացած կ'երեւի : Աւրու
պացւոց գիրերն ալ (Յունաց միջ-
նորդութեամբը փիւնիկեցիներէն
են : Վարդկային ծանօթութիւննե-
րը և տեղեկութիւնները եվելցը-
նելու՝ գիրը ամենահարկաւոր է ,
որովհետեւ քանի մը արտաքին նը-
շաններով մարդոյս մտքէն անցածը
թող չի տար որ ցնդի և կորսըլի :
Աստի գիր գրելուն սկզբնաւորու-
թիւնը խօսելու սկզբնաւորութիւ-
նէն շատ հեռու չենք կրնար ձգել :

և հարկաւ ջրհեղեղէն առաջ ըլլալու է . որ այն ատենը ազգաց տարբերութիւնն չի կար :

7. Փիւնիկեցիներն ալ թէպէտ խելացի և ճարտար մարդիկ , աւելորդապաշտութենէ ազատ չէին . բայց այս կողմէն եգիպտացիներէն շատ աղէկ էին : Ասոնց համար կ'ըսվի որ մարդ զոհ կ'ընէին իրենց աստուծոյն . բայց այս գարշելի սովորութիւնս ուրիշ զատ ազգեր ալ ունէին :

8. Առաջ ասոնց մայրաքաղաքն էր Սիդոն , բայց ետքը Տիւրոս աւելի ծաղկեցաւ : Տիւրոսէն խելմը մարդիկ իրենց ընտանեօքը ելան Ափրիկէ գացին . Արքեդոն քաղաքը հիմնեցին Քրիստոսէ 890 տարի առաջ . որ հարստութեան և ուժի կողմէն Փիւնիկէն անցաւ :

9. Արքեդոնի շինութեան մէկ սրտածառն ալ՝ Տիւրոսի Պիւգմալիոն թագաւորին չարութիւնը եղաւ : Իր Վիդոն անուն քրոջը այրը մեռցուցեր էր՝ որ անոր ինչքը ի-

րեն առնէ : Վիդոն երկանը բոլոր
ինչքը իր հետը առաւ փախաւ Ափ-
րիկէ գնաց այս քաղաքս շինեց . որ
ատեն մը Հռոմայի հետ հաւասար
եղաւ :

10 . Ափրիկէ գնացող առաջին
գաղթական՝ փիւնիկեցիները չեն :
Յետու որդի Նաւեայ՝ քանանացւոց
երկիրը տիրապետած ատենը քանա-
նացիներուն երեւելի իշխանները
որ մէկ մէկ մանր թագաւորի սէս
մարդիկ էին՝ անկէց փախան , Ափ-
րիկէի ծովեզերքը գացին բնակեցան .
և հոն արձան ալ տնկեցին . որ մինչև
Խորենացիին օրը կայ եղեր : Անկէց
ետքը Հայերէն ալ խել մը զօրք ժող-
վելով և Հերակլէսի հետ տեղ տեղ
յաղթու թիւններ ընելով՝ Ափրիկէ
ալ գնացին Հերակլէս մեռնելէն
ետքը Սալանիայէն անցնելով . և Վա-
րաց և Պարսից ազգերէն իրենց հետ
գլտնըված մարդոցը հետ երկիրը
բնակելով կողմ որոշեցին իրենց մէ-
ջը : Վարաց ազգին անունը մինչև
հիմա կը մնայ Ափրիկէ քիչ փոփո-

խուժեամբ՝ կ'ըսէ Սալուստիոս հը-
 ումայեցի սլատմիչը . քանզի Մաւրի
 անունով ազգ կայ հոն = Այս ազգն
 է որ հիմա Մաղըրայի կ'ըսվի . քանզի
 երբոր արաբացի խալիֆէները տի-
 րեցին նէ Ափրիկէի մէջ , ազգին և
 երկրին հին անուներ քիչ փոփոխուի
 իրենց լեզուին մէջ նշանական անու-
 նի մը դարձուցին . Մաղըրայ ըսին , որ
 արեւմտեան ազգ ըսել է = Հայոց
 Ափրիկէ գաղթական երթալը՝ նու-
 միգացւոց Յեմիսալ թագաւորին
 գրատանը մէջ գրտնըլած արձանա-
 գրութիներէն հանելով կը սլատմէ
 Սալուստիոս , Յուգուրթայ սա-
 տերաղմին սլատմութեանը մէջ , և
 Հերակլէս ըսածը մերձ ահագն հայ-
 կազունն էր չըսենք նէ՝ յունազգի
 Հերակլէսին հետ Հայոց և Մարաց
 և Պարսից ազգէն զօրք կենալ չի
 յարմարիր = Այլ Ահագն և Հե-
 րակլէս մէկ մարդու անուն ըլլալը
 հին կարծիք է (Խոր . ւն . 18) :

Գ Լ ՈՒ Խ Գ .

Պատճառ-լի-ն Քաղաքէացոց և
Ասորեստանէաց :

1. ԼՅՓՐԱՏ և Տիգրիս գետերուն մէջ տեղը ինկած երկիրը կ'ըսվի Միջագետք : Այս տեղիս օդը և գետինը շատ աղէկ ըլլալով՝ հին և անուանի ազգի մը բնակարան եղած ըլլալը գիւրաւ կը հասկըցվի : Շատ պատմիչներ կ'ըսեն որ՝ Միջագետք երկու մայրաքաղաք ունէր . Ափրատայ վրայ Նաբիլոն , և Տիգրիսի վրայ՝ Աինուէ . մէկը բաբելացոց կամ քաղաքացոց՝ և մէկալը ասորեստանէաց : Նայց երկար ատեն ասանկ չի մընաց . այս երկու տէրու թի մէկ եղան , անուանին երկուք մնացին , որ իրարու տեղ ալ գործ կ'ածվին :

2. Յոյն պատմիչները կ'ըսեն որ Աինուէ քաղաքը Աինոս թագաւորը շինեց . որուն շրջապատն է քսան և հինգ փարսախի չափ . անկէց ետքը հետը միլիօն մը զօրք առնելով ճամբ

բայ ելաւ երկիրներ առնելու : Անոր
զօրավարներուն մէկուն կինը Շա-
միրամ անուն կտրիճու թիւ երեւելի
և անուանի կ'ըլլայ . Աինոս ասիկայ
իրեն կին կ'առնէ . և ինք մեռնելէն
ետքը թագը ասոր կը մնայ :

3. Այս թագուհիս աշխարհքի
մէջ անմահական յիշատակ մը ձգե-
լու համար Վաբիլոն քաղաքի հիմը
ձգեց և քիչ տարվան մէջ լըմընցուց .
որ Աինուէէն շատ մեծ եղաւ : Պա-
տին լայնութիւնը այնքան էր որ՝ վեց
կառք իրարու քովէ քալելով հան-
դիստ կրնային երթալ վրայէն : Ղար-
տարապետութիւն և քանդակագոր-
ծութեան զարմանալի բաներ դրաւ
մէջը . Վէլայ մեհեանին մէջ մէկ ոս-
կի արձան մը կար քառասուն ոտնա-
չափ բարձրութեամբ . այս ալ Շա-
միրամ շինել տուած էր : Հայաս-
տանի Վան քաղաքն ալ Շամիրամայ
չէնքն ըլլալով՝ անունին մէկն ալ
Շամիրամակերտ կ'ըսվի . ուրիշ քա-
ղաքներ ալ շինեց . թագաւորութի-
ւներ իր իշխանութեան տակը առ-

նելու ելաւ . Հայոց Արայ նահապետին հետ ալ ծեծ բացաւ . քանզի չիկրոցաւ իր կամքին հաճեցընել և իրեն ամուսին ընել : Արայ պատերազմի մէջ մեռաւ . անոր տեղը անոր տղուն Վարդոսին շատ պատիւ և իշխանութիւն տուաւ : Անհամար զօրքով Հնդկաց թագաւորին վրայ գնաց . յաղթըվեցաւ , փախաւ , և իր երկիրներուն մէջը մեռաւ : Ասանկ պատմութիւններէն գիտես թէ սուտի հոտ կուգայ . բայց վրձնողաբար չենք կրնար բան մը ըսել :

4. Ասկէց մինչեւ ութն հարիւր տարի ետքը , ըսելէ մինչեւ ասորեստանեայց Սարգանաբաղանուն թոյլ և հեշտասէր թագաւորին օրը երեւելի բան մը չիպատմըլիր : Սարաց թագաւորը՝ Հայոց Պարոյր թագաւորն ալ հետը առնելով , որ այն ատենը իշխան էր , եկաւ իր քաղաքին և սպալատին մէջ պաշարեց . Սարգանաբաղ սպալատը բռնկուց . կնիկներուն հետ մէկ տեղ ինքն ալ այն սպալատին մէջ պրեցաւ : Ասոր

վրայ Պարոյր ալ թագաւորու թեան
անուն ստացաւ : Ասոնք ամէնն ալ
մուծ սլատմուծիւններ են . ստոյգ
գիտցածնիս սուրբ գրոց մէջ սլատ
մըվածն է որ Վաբիլոն շինողը՝ Արայ
թուանը տղան է , Աբբուլթ . և ի-
մաստուն մարդիկ ալ ասորեստա-
նեայց թագաւորու թեան հին սլատ
մուծիւնը չեն կրօցեր ստուգելու
և երեւան հանելու :

5. Վաղգէացիները որ Վաբելա-
ցի ալ կ'ըսվին , և մանաւանդ Վաղ-
գէայ ըսվածները , որ ասոնց քուր-
մերն են , երկինքը շատ անգամ սլա-
ծառ տեսնելով աստղերուն ընթաց-
քին աղէկ գիտողութիւն ըրին . և
աստեղագէտ եղան : Այս գիտու-
թեանս մէջ բաւական առաջ գա-
ցին . արեւային ժամացոյց հնարող-
ները ասոնք են . որ Աղեկիա թա-
գաւորին օրը շրէից մէջն ալ մտած
էր այս ժամացոյցիս գործածութիւր :
Վայց այս երեսէն մէկ սուտ և սլա-
րապ գիտութեան մըն ալ հետեւե-
ցան , որ ճշմարիտ կրօնքը բնաւ ըն-

դու նաճ չէ՛, և միշտ կը դատաստարտե՛ս : Աստղերուն նայելով ըլլալէբը կը գիտնանք կ'ըսէին . և այս կերպ գուշակութեանս անունը այս ազգին անունէն մնաց, որ Քաշտէն-Բին կ'ըսվի . և գուշակողները Քաշտէն կ'ըսվին : Ասկէց շատ շահ կ'ընէին . քանզի ինչ որ ուզէին նէ կ'ըսէին և ընել կուտային : Աստղերը պաշտելն ալ ասոնց միջնորդութեամբը այն երկիրները տարածվեցաւ : Իել ըսած չաստուածնին արեւն էր : Այս կռապաշտութիւնովս ալ մէկ գերագոյն աստուած մը կը ճանչնային . բայց ռամիկները ասիկայ չէին գիտեր :

6. Շատ հին ատենէ ՚ի վեր թէ Քաբիլոն և թէ Ասորեստան արուեստները ծաղկած էին : Փափկութեան և զարգարանքի վերաբերեալ բաներու հետ վարքի գէշութիւն ալ տիրած էր մէջերնին : Բայց Քաբիլոն Աիւրոսին ձեռքը անցնելէն ետքը այս գէշութիւներս չափը անշուցին : Ասոր գլխաւոր սպառճաս

եղաւ գէշ ուսմունքներուն շատ
 նալը . քանզի շատ անգամ սուտ գի-
 տութիւնը տգիտութեանն ելլել
 սպառնաւ կ'ըլլայ տեսակ տեսակ
 գէշութիւններու : Ասով կրնիկ մար-
 դոց քով ամբննալ չիմնար . երիկ մար-
 դիկ ալ բարոյականք բողոքովին մէկ
 գի կը ձգեն :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Պարտաւորութիւնն Արաց և Պարտից :

1. ՏԻԳՐԻՍԻՆ արեւելեան կող-
 մը կ'իյնան Արաց և Պարտից եր-
 կիրները : Արաց երկիրը հիւսիս կի-
 նայ . և Պարտից երկիրը հարաւ :
 Անոնց երկիրը շատ ընդարձակ է ,
 մէջը տեղ տեղ լեռներով իրարմէ
 բաժնելած : Արաց ազգը ատեն
 մը ասորեստանեայց իշխանութեան
 տակն էր . բայց երբ որ Վարդանա-
 բաղ իրեն հեշտութիւններուն և
 զուարճութիւններուն ետեւէն իյ-
 նալով թագաւորութեան հոգը

մէկ դի ձգեց՝ ասոնք ալ յարմար
 ժամանակ դասն ապստամբելու .
 և ազատութիւննին ձեռք ձգեցին
 Վարբակեսին ձեռօքը , և Հայոց
 առաջին թագաւոր Պարոյրին օգ-
 նութեամբը : Առաջ անգլուխ ա-
 զատ ազգ մը եղան . կառավարու-
 թեան կանոն չունէին , և մէջերնին
 շատ խառնակութիւններ եղաւ :
 Վերջապէս վրանին թագաւոր մըն
 ալ դրվեցաւ Քրիստոսէ 600 տարի
 առաջ :

2. Սկիզբները Վէսկէս ասոնք ի-
 մաստութեամբ կառավարեց . բայց
 մեծութիւնը խելքը ցընորեցընելով ,
 կամ իր հպատակները վախով հնա-
 զանդութե մէջ պահել մըտմըտա-
 լով՝ շատ խստութիւն բանեցընել
 սկսաւ . պալատին մէջ գոցվեցաւ ,
 քովը մարդ չէր հանդպցընել , միայն
 իր տանը սպասաւորները առաջը
 կըրնային ելլել . և Արոգոտոս կը
 պատմէ որ՝ ասոր առաջը խնդալը
 կամ թքնելը մահապարտութե ար-
 ժանի յանցանք սեպված էր : Արեւելի

որ հասարակութիւնը վախցընելով
 թագաւորել կ'ուզէր . որ մարդոց
 վրայ իշխանութիւն բանեցընելու
 կերպերուն ամենէն աւելի անվա-
 յելու չն է :

3. Այս թագաւորս իրեն մայ-
 րաքաղաք ընելու համար Ալեքսան-
 քաղաքը շինեց . որ եօթն պարիսպ
 ունէր իրարմէ բարձր : Ասոց ասի-
 ացւոց ղեղխութիւնը և թուրա-
 մորթ կեանքը քիչ ատենի մէջ թա-
 գաւորն ալ պիտի տկարացուցանէր՝
 հպատակներն ալ : Թագաւորնե-
 րուն տղոցը կրթութիւնը կընիկ
 մարդոց և ներքինիներուն յանձնը
 ված էին : Աստի երիկ մարդու
 վայելուչ առաքինութիւններուն տե-
 ղը թոյլ կեանք մը վարել կը սորվե-
 ին : Արիկ մարդոց , և մանաւանդ
 ուրիշներու վրայ իշխանութի բա-
 նեցընելու մարդոց՝ այս կերպ կրթ-
 թութիւնը անարգութիւն է : Ասոր
 համար շատ ատեն չանցաւ , Սարաց
 ազգը Պարսից իշխանութեան տակը
 ինկաւ , որ տակաւին հին ատենվան

սովորութիւննին ձգած չըլլալով
կորիճ էին :

4. Աշխարհքիս պինտ հին թա-
գաւորութիւններուն մէկը Պարսից
թագաւորութիւն է : Շատ ատեն
խելացի և իմաստուն ազգ մըն էին .
կրօնք ալ ունէին . և կրօնապաշտ
չէին . աստուծոյ միութիւնը կը ճանչ-
նային . և արեւը երկինքին վրայ ,
և կրակը աշխարհքիս վրայ՝ այս աս-
տուծոյն նշանը բռնելով կը պաշ-
տէին : Խիստ հին ատենները ասոնք
ոչ մեհեան ունէին և ոչ կուռք . և
կ'ըսէին որ՝ ան չորս պատի մէջ պա-
րունակել ուղելը՝ աստուծոյ անար-
գութի է : Իսկ է որ՝ տաճար ըսելը
աղէկ մը չէին հասկըցած . նոյն երկրը-
պագութե համար յատկացած տեղը՝
աստուծոյ բնակութե համար յատ-
կացած կը կարծէին : Իրենք զիրենք
իմաստուն կարծող մարդիկ հիմայ ալ
չատ կը գրտնըլին որ այս կարծիքէս
հեռու չեն :

5. Ասոնց բուրմերը , որ Մոգ կ'ըս-
վէին , իրենց գիտութիւնը և կանոնա-

ւոր վարքովն յարգուէ արժանի եւ
 զած էին : Ասոնք ալ եգիպտացիներ
 բուն քուրմերուն պէս շատ զօրացեր
 էին . և զօրութիւնն չի պակսեցընե-
 լու համար՝ գիտութիւննն գաղտ-
 նի կը պահէին : Հին ատենը իրենց օ-
 բնադիր մը ունեցեր են : Օրադաշտ
 անուն՝ որ իրենք Օէրտիւշդ կ'ըսեն ,
 և եւրոպացիները աւրելով Օորու-
 ասդր ըրեր են : Ասիկայ սորկեցու-
 ցեր էր որ աշխարհքս երկու արա-
 ըիչի բան է . և գէշ բաները որկէ՛
 առաջ եկած ըլլալը ասով կը մեկնե-
 ին : Մարի արարիչնին՝ Արմիդդ , կամ
 Հիւրմիւղ , որ եւրոպացիները Արու-
 մաղ կ'ըսեն , գերագոյն աստուածն
 է որ լոյսն ու խաւարը ստեղծեց :
 Չար արարիչն է Ահրիման կամ Արհ-
 մըն կամ Հարամանի , պարսկերէն
 Ահրէմէն . որ եւրոպացիք Արիման
 ըսին : Պարսիկները կ'ըսէին որ՝ որ-
 քան գէշ բաներ կան նէ՛՝ անոնք ալ
 ասկէց են :

6. () րէնքնին մոլութիւներուն
 ալ պատիժ կուտար , ինչպէս է ա

պերախտու թիւնը . մարդոց սիրտը
արդարու թեան սէր և ստու թեան
և պարսպ կենալու դէմ ատելու
թիւն մը կը մըտցընէր : Մէջերնին
երկրագործու թիւնը շատ պատուե-
լի և յարգի էր . և թագաւորը տա-
րին անգամ մը երկրագործներուն
հետը սեղանակից ըլլալը՝ տերու թե
օրինօք պարտք սեպիւած էր : Ասանկ
խելացի օրէնքներով այս ազգըս եր-
ջանիկ և յարգոյ կ'ըլլար : Սուտ խօ-
սելը ասոնց մէջ մեծ ամօթ բան
կը սեպիւէր . մընացածն ալ ասկէց
հասկըցիր :

7. Տղոց կըթու թիւնը հասարա-
կու թեան կողմէն կ'ըլլար . և տը-
ղայքը խելացի և սրտոտ կը մեծնա-
յին : Մինչեւ տասն և եօթն տար-
վան ըլլային նէ իմաստուն վարպետ
ներու ձեռք ըլլալով՝ աղէկ քաղա-
քացիներուն ընելու և գիտնալու
ինչ բան սէտք էր նէ անոնք ամէ-
նըն ալ կը սորվէին . և մէկ մարդ
մը որ այս դպրատանս մէջ կըրթը-
ված չէր՝ քաղաքական պաշտօնի չէր

Հասնէր : թագաւորներուն տըղոցը կըրթութիւնը անգամ աղէկ կարգի տակ մտած էր . թէ գործքով և թէ խօսքով շատ աղէկ կը կըրթըվէին :

8. Աիւրոս այս թագաւորուն շատ ծաղկեցոյց և շատ ուժի տէր ըրաւ : Ասոր թագաւորութեան աւտէնը Վրիտանոսէ 560 տարիի մը չափ առաջ է , անուանի եղած է . բայց ոչ որո՞ւ տղայ ըլլալը , ոչ սպատերազմական գործքերը , և ոչ որ տեղ և ինչպէս մեռնելը ստոյգ չեն գիտցրիլիր : Արբւամ չեն ըսել չէ . այլ սպասմողներուն խօսքը իրարու չի նմանիր :

9. Վսենտիոնի ըսածին նայիսնէ՝ առաքինի թագաւոր մը կը գըտնես Աիւրոս : Արողոտոսին ըսածին նայիսնէ՝ սուրիչներուն երկիրները յափըշտակելու զբաղած անիրաւ մարդ մըն է կ'ըսես : Յիրաւի ասիկայ մեծ կայսերութեան մը հիմնադիր եղաւ , և քաջութիւնը և ճարտարութիւնը և զօրաց կըրթութիւնը և անոնց զէն

քը որ ինքը կատարելագործեց, իրեն գործոյն քիչ ատենի մէջ մեծաւ մեծ յաջողութիւններ տուին : Այլ գացւոյ թագաւոր Արեստը՝ որ անհատնում գանձի տէր էր, յաղթեց : Մարիլոն երկար ատեն սրաշարելէն ետքը առաւ . Հրեայներուն աղատութիւն տուաւ, որ եօթանասուն տարիէ ՚ի վեր գերի էին : Ար իշխանութիւն մէկ կողմէն մինչեւ Հրեկատան և մէկ կողմէն մինչեւ Ասսսից ծովը և մինչեւ Ճերմակ ծով հասցուց :

10. Արոգոտոս կը պատմէ որ՝ Աիւրոս Սասագեթաց կամ Սաղթութ աղգին Ղոմիրիս անուն թագուհիին հետ պատերազմելով յաղթ թրվեցաւ և նոյն կռուոյն մէջը մեռաւ : Ղոմիրիս ասոր գլուխը կըտրել տուաւ . արիւնով լեցուն աւմանի մը մէջ խօթեց ու ըսաւ . արիւնէ չէիր կշտանար, գոնէ հիմա կշտացիր : Մայց Քսենոփոն կը պատմէ որ իր անկողինին մէջ մեռաւ . երեսուն տարի փառօք թագաւոր

ընկէն ետքը : Քսենոփոն Արողոտոսին գրածը կարդացեր էր, առանց զօրաւոր սխառճառ ունենալու անոր բաժին հակառակը չէր գրեր : Ասցց հին սխառմիչներուն մէջ ասանկ իրարու հակառակ բաներ շատ կը գըտնելին :

Ա. Ամէնէն աւելի դիտելու բանը այս է որ՝ Աիւրոսի բրած յաղթութիւնները իրեն ազգին աւելի մնաս բերին՝ քան թէ օգուտ : Պարսիկները հարստացան, խաղաղութի գտան, և թուլցան : Թագաւորը ինքն ալ Վարաց թագաւորներէն հեշտութեամբ կեանք վարել սորվեցաւ, տղայքը կրթելու հոգ չէ տարաւ : Օսուանները իրեն երկըր պագութիւն կ'ընէին, որ հին սովորութեան դէմ էր, և ինքը բան չէր ըսեր : Աերբինիները և անարգ գերինները ասոր պալատին մէջ շատ մեծ յարգութիւն գտան : Ասիաւրարները և կուսակալները որ Վատրապ կ'ըսվին՝ հասարակութիւնը կը զըրկէին, սխառժըլեւէ վախ մը չու-

նէին . քանզի թագաւորները զը-
 ւարձանալէն և հեշտութիւն կեանք
 վարելէն ուրիշ բանի չէին նայեր :
 Ասանկ է աստուծոյ գաղտնի դա-
 տատանը , որ մարդոց ըրած անի-
 րաւութեանէն կ'ելլէ նոյն անիրա-
 ւութեան պատիժը : Տէրութիւնը
 զօրանալու համար երկիրներ կ'առ-
 նէ , կը հարստանայ , հեշտութեան
 կ'իյնայ , կը թուլնայ , կը տկարանայ :
 Պատմութիւնը միշտ սորվեցուցած
 է որ ասոնք իրարմէ կը հետեւին .
 և պինդ վերջինը պինդ առաջինին
 պատիժն է :

12. Պարսից տէրութեան մէջ
 բռնական իշխանութիւնը տիրեց :
 Առնաւորական իշխանութիւն կ'ըս-
 վի այն պետութիւնը՝ որուն թա-
 գաւորը ամենեւին գրի առնելու
 օրէնք չի ճանչնար , իր կամքը ինչ
 է նէ՝ անիկայ օրէնք բռնեւ կու-
 տայ , և հասարակութեան ընչիցը
 և կենացը բացարձակ տէր կ'ըլլայ ,
 և իր հպատակները իրեն գերի կը
 սեպէ :

13. Ախւրոսին տղան Աամբիւս՝
 ԹագաւորուԹե՛ր ամենեւին չի վայ-
 լելու մէկ հրէշք մը եղաւ : Այդօ-
 րը Շմերտին վրայ նախանձելով ա-
 նիկայ մեռցուց . իր երկրին և ազ-
 գին օրէնքին հակառակ՝ իր քոյրը
 իրեն կին առաւ : Այս բանիս վրայ
 դատաւորներուն բողոք ընող եղաւ,
 որ Թագաւորը հասարակուԹեան
 չար օրինակ կ'ըլլայ . բայց դատա-
 ւորները պատասխան տուին որ՝ օ-
 րէնքը Թագաւորներուն իշխանու-
 Թիւն կուտայ , որ ինչ կ'ուզեն նե-
 ընեն : Ասիկայ Արողոտոսին պատ-
 մուԹիւնն է . բայց Պարսիկ կրա-
 կապաշտները իրենք Հայոց նախա-
 րարներուն գրած նամակներնուն
 մէջը քրիստոնէուԹեան մէկ պակ-
 սուԹիւն մը կը գրանեն այս՝ որ քոյր
 և եղբայր իրար առնելու օրէնքը
 հրաման չի տար քրիստոնէից մէջ :
 Մտել է որ՝ իրենց մէջ օրէնքը կը նե-
 րէ եղեր , ինչպէս որ Ագիտացի-
 ներուն ալ կը ներէր . (« Է . Վեր . Մ .
 20) :

14. Ամբիւս առանց պատճառի
 Արքիպոսոսի վրայ ծեծ բացաւ :
 Ար պատմելի որ՝ Պեղուսիոն քաղաքը
 յարձակմամբ առնել ուղելով՝
 իր զօրքերուն առջեւէն շատ մը այն
 տեսակ անասուններէն քալեցուց ,
 որ եգիպտացւոց մէջ յարգութիւն
 գտած էին իբրեւ աստուած (Գե.
 ՔրԸ . Գլ . 21) : Արքիպոսոսները
 զէնքերնին մէկ դի գրին . չըլլայ որ ի
 բնց աստուածները զարնեն ու վի
 ռաւորեն կամ մեռցընեն : Ասիկայ
 սուտ ալ է նէ՝ եգիպտացիներուն
 սնտիապաշտուէր հետ շատ յար
 մարութիւն ունի : Ամբիւս անոնց
 Ապիս ըսված եղը (Գե . ՔրԸ . Գլ .
 22) սատկեցուց , մեհեաննին
 կործանեց , և ասանկ անխոհեմ
 և չտիազանց բաներ ընելով ամե
 նուն աչքէն ինկաւ : Արքիպոսոսի
 պէս Աթովպիա ալ ձեռքին տակը
 առնելը դիւրին բան մը գիտցաւ .
 որուն ժողովուրդը շատվոր և կրտ
 բիճ էին , պատերազմիլը աղէկ գի
 տէին : Յանդգնութեամբ և ամե

նեւին պատրաստու թիւն մը չընե-
լով վրանին քալեց . բայց խաղք ու
խայտառակ ետ դառնալու ստիպ-
վեցաւ : Պարսից երկիրը քանի մը
մեծամեծ և ուժով մարդիկ ասոր
դէմ միաբաներ էին , և ինքը իմա-
նալով վրէժ առնելու դացած ատե-
նը երբ որ ձի կը հեծնար՝ իր սրբովը
իրեն բարձքը (խալչան) զարկաւ վի-
րաւորեց . անկէց մեռաւ Քսէ 522
տարի առաջ :

15. Կամբիւս իր կենդանուէ ա-
տենը իրեն Շ մերտ անուն եղբայրը
մեռցընել տուեր էր . («Ե՛ւ Վերը . Վե-
թ . 13) : Կամբիւս մեռնելէն ետքը
մէկ Մոգ մը երեւան ելաւ . ես Շը-
մերտն եմ , և դահիճը զիս մեղքընա
լով ողջ թողուց ըսելով թագաւո-
րութե՛ն ետեւէ ինկաւ : Խաբէուիը
երեւան ելաւ , և Մոգը մեռցուցին
տեղը Վարեհ վշտասպեայ անցաւ ,
որուն Պարսիկները կ'ըսեն Տարաի
Կիւշդասէս . ասիկայ ալ Կամբիւսի
սէս բռնաւոր և յանդուգն մարդ
մը եղաւ . սկիւթացիներուն հետ

պատերազմեցաւ , որ աղքատ և ազատ ազգ մըն էին , և մինչեւ այն ատենըս հնազանդութե տակ մտած չունէին , խաղք ու խայտառակ ետ դարձաւ առանց բան մը վատորկելու : Ար սրտամըլի որ՝ երբ որ Վարեհ ասոնց վրայ պատերազմի ելլալիքը ասոնք իմացան , թռչուն մը , մուկ մը , գորտ մը , և հինգ հառնետ խրկեցին իրեն , ասոնցմով ինչ ըսել ուղեւնին չէին իմացուցեր , նախարարներէն մէկը ասոնց միտքը հասկըցուց : Մտել է որ՝ ըսաւ . թէ որ Պարսիկները թռչունի պէս երկինքը թռչին , կամ մուկի պէս ծակերը պահմին , կամ գորտի պէս ջուրին տակը մըտնեն , սկիւթացիներուն նետերէն ազատվելիք չունին : Արեւելեան ազգաց սովորութիւնն էր որ ասանկ այլաբանական օրինակներով իրարու բան կը հասկըցընէին . բայց կերեւի որ ասիկայ սկիւթացւոց իրենց բուն միտքը չէր . ետքէն հնարված զրուցվածք մըն է պատմութիւնը անուշցընելու հա

մար : Այս Գարեհը ետքը Յունաց
հետ ալ պատերազմեցաւ , ինչպէս
որ գրքիս երկրորդ մասին մէջ պիտի
պատմեմք :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Պատմութիւնն Հնդկաց :

1. Հնդկաստան ըսլաճը Ասիայի
հարաւային կողմն է , մէկ կողմը
Հինդոս և մէկ կողմը Գանգէս մեծ
գետերը , և երկրին մէջն ալ շատ
գետեր , որ այս գետերուս մէկին
կամ մէկալին մէջը կը թափէին . և
բերքը շատ առատ էր : Անդամանդ-
ներէն (էլմասներէն) և ուրիշ տե-
սակ պատուական քարերէն զատ այն
տեղի ելաճ բերքերն են առատ մե-
տաքս (իփէկ) , բամբակ , բրինձ , շա-
քար , համեմներ (պահարեղէններ) ,
պատուական սրտուղներ , ուրիշ տեղ
չի գըտնըլաճ օգտակար կենդանի-
ներ , ինչպէս են ուղտ և փիղ : Օղը
այնքան տաք է որ՝ բնակիչները հա-

գուստի շատ կարօտ չեն . գետինն
 ալ շատ բարեբեր է , շատ մշակուի
 չուղեր : Հնդկաստան ասանկ աղէ-
 կու թիւններ ունենալով՝ ուրիշ տե-
 ղերէն առաջ այս տեղս մարդու բը-
 նակուի հաստատուած պիտի ըլլայ .
 և բնակիչներուն մէջն ալ կրթութիւն
 հնուց մտած պիտի ըլլայ : Ալ հնու-
 թիւնը անանկ է որ՝ հին պատմու-
 թիւնին կորսըված է :

2. Հնդիկները առաջ ալ հիմակ-
 վան պէս ցեղ ցեղ բաժնըված էին ,
 որ բնաւ իրարու չէին խառնըվեր :
 Արակացուներ ունէին , որոնց գոր-
 ծը այն էր որ ուրիշներուն ըրածը
 թողածը մեծին իմացընէն : Աշակ-
 ներուն մէկ հանգստուի մը տըրըված
 էր , որով երկրագործութիւն շատ կը
 ծաղկէր : Ասոնց ուրիշ գործ յանձ-
 նելու համար իրենց գործքէն չէին
 զատեր . և յատուկ օրէնք մըն ալ
 ունէին որ՝ բնաւ մէկ մարդ մը ոչ
 անոնց անձին կըրնար դըպչել և ոչ
 ընչիցը : Արահման ըսված ցեղը ու-
 ըիշ ցեղերուն ամէնէն աւելի պա-

տու աւոր սեպւած էր . քանզի թէ
կրօնքը և թէ ուրիշ գիտու թիւները
ասոնց ձեռքն էին : Անուննին Պրամա
անուն մէկէ մը առեր էին . որուն
համար ոմանք կ'ըսէին թէ աստուած
մըն է . և ոմանք ալ թէ առաջին
կարգի ոգիներէն մէկն է : Պարսից
մոգերը և եգիպտացւոց քուրմերը
ինչ իշխանու թիւն ունէին նէ՛ ա
սոնցն ալ նոյնն էր :

3. Այս Պրահմաններուն մէջ ա
նանկներ կային որ իրենց խստակրօն
վարքովը տեսնողները ամէնն ալ կը
զարմացընէին : Արակի պէս տաք ա
րեւին տակը ոտքի վրայ կը կայնէին .
իրենց մարմիննին ցաւ քաշելու կը
սորվեցընէին . մեռնելը բանի տեղ
չէին գներ . և շատ անգամ հրա
պարակի մէջ անանկ խրոխտու թիւ մը
իրենք զիրենք կը մեռցընէին որ՝ անձ
նասպանու թէ՛ զօրաւոր պատճառ
ներուն մէկը՝ իրենց անունը յաւի
տեան զրուցվելուն սէրը ըլլալը
յայտնի կերեւէր . ասոնց շատը վը
րանին բան ալ չէին հագներ . անոր

համար յունարէն Արիստոֆիստա ըս-
վեցան, որ հայերէն Արիստոֆանի կը
թարգմանվի :

4. Հնդիկներուն հին ատենական
հաւատոյ վարդապետութիւննին ե-
րեւելի է : Աննկ կը հաւատային որ
աշխարհս ստեղծուած է, և վերջ
ալ պիտի ունենայ : Աստուած իրեն
ներկայութիւն անիկայ կը լեցընէ :
Առաջին մարդիկ իրենց երջանկուն
յարգը չգիտցան, ուստի դատաւ
պարտութեան որ իրենց ճակատին
քրտինքովը ապրին : Աննեւուն
ետքը հողինին ուրիշ մարմիններու
մէջ կը մըտնէ և կը հողեւորէ, և
թէ որ մեզք ունին նէ՝ անոնց հո-
գիները պիղծ և ամէն ատեն չար-
չարանքի մէջ եղող անասուններու
մարմին կը մըտնէ : Այլ մարմինէ մար-
մին անցնելնին անոնց ասաշխարանք
քաշելու պէս բան մը ըլլալով կը
մաքրովին և կ'երթան իրենց սկզբանը
հետ կը միանան, և յաւիտենական
երջանկութի կը վայելեն : Այս վար-
դապետութիւնս այդ մարդոց մէկ

սանձ մը կ'ըլլար , գէշութի ընելու
կը վախնային , բայց այս գրութէս
հաւատացողները միս ալ չէին կըր-
նար ուտել : () գերնին տաք , շատ
բան ալ չէին բաներ , մտածուինին
շատ կ'ըլլար , որով երեւակայուինին
ալ կը տաքնար , ասոր համար Հընդ-
կաստան շատ խենթ ու մենթ աւել-
լորդապաշտութիւններ ելան : Արն-
կան մը երիկը մեռներ նէ՝ անոր մար-
մինը այրած ատեննին այն կինն ալ
ինքը զինքը նոյն կրակին մէջ նետել
և այրիլը իրեն մէկ սպարոք մը կը
սեպէր , և ասոր օրինակը մինչեւ հի-
մա կը տեսնուի :

5. Թուանշանները , Թէ՛ Տաճկաց
և Թէ՛ Ալբոսպացոց գործածածը ,
և քամա ըսված խաղը և սաբրանձը , ա-
նանկ կը կարծուի որ Հնդիկները
հնարած են : Ասոնք հնարելու հա-
մար յայտնի է որ շատ խելք կ'ուզէ :
Բայց գիտութեանց կողմէն , և
մասնաւորապէս աստղաբաշխութե-
կողմէն եգիպտացիները և քաղզէ-
ացիները ասոնցմէ շատ վեր կերե-

ւին : Հընդիկները կը կարծէին որ
 աշխարհքս տափակ թէ՛իւ՛իւ պէս բան
 մըն է . կեդրոնը մէկ լեռ մը կայ .
 աստղերը այն լեւանը բոլորը կը պը-
 տրտին : Վարդս ուսմունքով միտքը
 չի լուսաւորէ նէ՛ ինքնիրէն գտածը
 ասանկ խելացնոր բաներ կըրնայ ը-
 լալ :

ՄԱՍՆ Բ .

ՊԱՏՄՈՒԹՒՒՆ ՅՈՒՆԱՅ



ԳԼՈՒԽ Ա .

Առասպելական ժամանակներուն պատ-
ճութիւնը :

1. Այս մը յունաստան ըսլած
տեղին պղտիկութիւն տեսնես , մէկ
մըն ալ այն մըտածես որ՝ մէջի բը-
նակիչները խել մը մանր մուներ և
խրարու թշնամի ժողովուրդներ են ,
ասոնց պատմութիւնէն ինչ կը սոր-
վըլի կ'ըսես . և կը կարծես որ Ասի-
այի մեծամեծ տէրութեանց պատ-
մութիւններուն չափ գիտնալու ար-
ժանի բան ասոնց պատմութեանէն
չի հասկցւիր : Այց ազատութեան
առաջ եկած կտրիճութիւնը , և այս
կտրիճութեան և առաքինութեան
առաջ բերած զարմանալի գործքե-
րը , և քաղաքական գիտութեան
կամ Բօլշեւիկի առաջ երթալը , և

խելքի և արուեստի ճարտարունէն մնացած նշանները այս երկիրս անանկ երեւելի ըրին որ՝ այս տեղեղած բաները չգիտնալը կարդացող մարդու ամօթ է : Շատ հին ըլլալուն համար սկիզբը աղէկ չգիտցրիք :

2. Յունաստան առաջները չորս գլխաւոր մասն կը բաժնւնէր : 1. Ալլաքա . որուն գաւառներն էին Ատողիա , Վորիք , Փոկք կամ Փոկէացիք , Վէովտիա , Ատտիկէ և Վոկրիք : 2. Պեղոպոննէսոս . ասոր մէջ կը պարունակէին Աքացիա , Սեսեանիա , Արկադիա , Ակոնիա և Արգոս : 3. Ապիրոս : 4. Թեսսաղիա : Պեղոպոննէսոս դէսպ ՚ի ծովը երկընցած ցամաք կղզի մըն էր . մէկ նեղ կիրճով մը կը միանար յունաստանի ուրիշ գաւառներուն հետ . և այս կրճին մէկ կողմը Աորնթոս քաղաքը ըլլալուն համար՝ Աորնթոսի կիրճ կ'ըսվէր :

3. Յոյները հին ատենը վայրենի մարդիկ էին . ընկերու թիւնը ինչ

ըսել ըլլալը գրեթէ բնաւ չգիտէին :
 Հիւղ շինել և ծածկլլելու համար
 անասնոց կաշի գործածել հաղիւ
 խելք ըրին , և առաջին գիւտերնին
 այս է . բայց ուրիշ կողմէ՝ անասու
 նի պէս կ'ապրէին . ամուսնութի
 անգամ չգիտէին . քանզի քաղաքա
 կանութեան գաղափար բնաւ չու
 նէին : Աշխարհքի ուրիշ կողմերը
 ջրհեղեղէն ետքը ցրուող մարդոց
 մէջ կրթութիւնը շատ հին կը
 գրտնեմք . ասոնց ետ մնալը այն չէ
 որ կրթութիւնը իրենք պիտի հը
 նարէին և ուշ մնացին , այլ կ'երե
 ւի որ ասոնք մէկ բռնութիւնէ մը
 փախած այս տեղները ինկած՝ և
 իրարմէ կասկած ունենալով ան
 տառներուն մէջ ցրուած են . ժա
 մանակ անցնելէն ետքը ընկերական
 կեանքը մոռնալով վայրենի են դար
 ձեր : Հիմայ ալ անանկ ազգեր կը
 գրտնեմք , որ առաջ շատ կրթեալ
 են եղեր , հիմա բոլորովին կրթու
 թիւն չունին :

4. Քրիստոսէ 2000 տարի մը ա

աւջ՝ յունաստան մէկ գաղթական
 մը եկաւ բնակեցաւ : Ար կարծրովի
 որ՝ այս գաղթականիս գլխաւորներն
 էին Առոնոս , Վիոս , և ուրիշ Տի-
 տանեան ըսված հսկայ մարդիկը ,
 որ Յոյները ետքը իբրեւ ինձ պաշտե-
 ցին : Ասոնց այն ատենվան հոն հաս-
 տատուի գըտնելնին յիշատակելու
 բան մը չունի : Աւրիշ օտարական-
 ներ եկան որ քանի մը տուն մէկ
 տեղ բերեն և մանր ցեղեր բաժա-
 նեն , և ասոնք հիմնեցին Աթէնք ,
 Արգոս , Սպարտա և Թեբէ , որ ա-
 մէն մէկը մէկ մէկ մանր տերութի
 եղան : Հաս շարժեր եղած պիտի
 ըլլան այն ատենները , և շատ գե-
 տեր ջուրը կոխելով ցամաքէն շատ
 տեղեր բաժնրված ծովը մնացած և
 մէկ մէկ կրողի ձեւացած են : Վեու-
 նին ասանկ տակնու վրայ ըլլալը տես-
 նելով այն խեղճերը լեղապատառ
 կը փախչէին : Մինչեւ որ խեղ-
 վընին գլուխնին կուգար և ժող-
 վրովնք կ'ըսէին նէ փորձանք մըն ալ
 կը սլատահէր , ասով ասոնց քաղա-

բական կրթութիւնը ծանր առաջ
կ'երթար : Վողերն ալ մեջերնին պա-
կաս չէին . և այս ալ մեծ արդէւք
մըն էր :

5. Աթէնքին հիմնադիրն եղաւ
Վեկրոպս եղիպտացին : Ասոր Ատտի-
կէ բնակելուն սկիզբը եղաւ Քրիս-
տոսի թուականէն 1582 տարի առաջ .
և Ատտիկէ գաւառին հին անունը
ասկէց առնելով ըսեցաւ Վեկրո-
պիա . որ մայրաքաղաքին ալ անու-
նըն է . և այս մայրաքաղաքս է՝ որ
ետքը ամէն խելացի գործքերուն և
փիլիսոփայական և ճարտասանական
ուսմունքներուն հայրենիքը և աղ-
բիւրը պիտի ըլլար : Քաղաքական
կենաց և կրթութեան հիմնադիր
եղաւ , կրօնք մը՝ և ամուսնութեան
օրէնք հաստատելով այն տեղ : Ա-
րիսպագոս ըսլած ատեանը հաս-
տատեց . և անոր գործ յատկացուց
մահուան և սպանութեան վերա-
բերեալ դատերը տեսնել : Այս ա-
տեանիս համբաւը երկար ատեն մը-
նաց փառաւոր կերպով : Այս տե-

ղի դատաստանները կ'ըլլային գիշերը և բաց տեղ, և միայն բանին եղածին պատմութիւնը կ'ըլլովէր հոն. խիստ քիչ եղաւ որ այն տեղ կրտորված դատաստանը անիրաւութեամբ եղաւ ըսվէր :

6. Սէկ ուրիշ եգիպտացի մը՝ Գանաոս անուն, Արգոսի թագաւորութեան մէջ երկրագործութիւն և քանի մըն ալ արուեստ մըտցուց : Կադմոս փիւնիկեցին Վէովտիայի թեբէ քաղաքը շէնցուց. այգիի մշակութիւն սորվեցուց այն տեղ : Հանքային նիւթերը բանելը, և սլաքուբենական գրերն ալ ասոր սորվեցուցածն են :

7. Այս կերպովըս յունաստան ամէն բան դըրսեցիներէն կ'առնէր, և այն ազգերը՝ որոնց ետքը բարբարոս անուն տուաւ, իրեն առաջին վարպետ եղան, և ամէն վարպետներն ալ՝ Ասիայէն և Ասիայի մօտ տեղերէն են : Բայց հելլենացիները առասպել սիրող ազգ մը ըլլալով՝ այս մարդկային գիւտերս աս-

տուածներէն սորված կեղծեցին : Ասոնց այնքան առասպելներուն մէջ մէկ գլխաւոր ճշմարտութիւն մը կայ . ըսել է որ՝ բարբարոսութիւնը կամ անկրթութիւնը շատ օգտակար և շահաւոր բաներ սորվելու արդեւք եղեր էին : Օրինակի համար ըսենք : Տրիպտողեմոս երկրագործութիւն կը սորվեցնէր . բայց քիչ մնաց որ մարդը կտոր կտոր կ'ընէին : Ապրոս ալ այգիի մշակութի սորվեցնելու ատենը նոյն վտանգին մէջ ինկաւ : Ահա՛ այսպէս տրգիտութիւնը մարդս կը կուրացնէ և անիրաւ կ'ընէ :

8. Աեկրոպսէն և 'Աեւկալիոնի անունով յիշված ջրհեղեղէն քիչ մը ետքը հելլենացիներուն խելքը հասաւ որ՝ գոնէ հասարակաց ապահովութեանը համար մէկ տեղ ժողովրդի և ընկերական կանոնի տակ մըտնել պէտք է : Արքան մանր մունր ցեղեր ունէին նէ՛ այնքան ալ թագաւոր ունէին . ըսել է որ՝ այն ժամանակի թագաւոր ըսվածներն ալ

Հիմնական Արարիայի վրանով (չա-
 արբով) սլաւոստող ցեղերուն Շէյե-
 րոն սէս բաներ են եղեր . գէշն
 այն էր որ՝ միշտ իրարու հետ կըու-
 ուով ըլլալով՝ դրբսէն թշնամի մը
 ելէր նէ՛ չէին կըրնար իրենք զիրենք
 պաշտպանել : Ա՛րքջապէս տասն և
 երկու դիսաւոր քաղաք իրարու
 հետ դաշնակցութիւն մը բրին .
 այնքան գէշութիւններուն առաջը
 միայն ասանկ դաշնադրութիւնով
 մը կըրնար առնելիլ : Տարին երկու
 անգամ ասոնց կողմէն գործակալ
 (մուրախսաս) սլիտի երթար թեք-
 մոպիղէ կամ Ծ երմադրութիւնք ըսլած
 տեղը . և իրարու հետ վէճ մը կամ
 դատելու բան մը ունէին նէ՛ հոն
 կը խօսէին : Թէ որ ասոնց վճիռը
 մըտիկ չընող ապստամբ մը ըլլար նէ՛
 զէնքով անոր վրայ կելէին : Ամիսիկ-
 տիոնեան դաշնակցութիւն ըսլածը
 այս է . և այս սովորութեանս հիմ-
 նադիրը՝ Ամիսիկտիոն անուն մէկ
 մըն էր :

Ծ. Յատկապէս ասոնց խնամոցը

յանձնըլած էր Ղեղփեան տաճա-
րին պաշտպանութիւնը , որ Վստղո-
նի անունով այն տեղէն սրատգամ
արբութելուն համար անուանի եղած
էր : Վսանկ դաշնակցութիւն մը՝ որ
չատ մեծ օգուտ պիտի ընէր իրենց ,
և պիտի հասկըցընէր որ անմիաբա-
նութիւնը մարդոց գէշ կը բերէ .
և անոնք գէշութենէ ազատողը մի-
աբանութիւնն է . այս դաշնակցու-
թեանըս հաստատութիւն տուողը՝
կրօնքի անունն էր : Վնունը անգամ
մէկ սահմանադրութեանը վրայ իր-
բեւ հաստատութիւն դրովի նէ՝
օգուտ կ'ընէ . և օգտակար բաները
անգամ առանց ասոր հաստատու-
թիւն չեն գտներ : Արեմն ամէն
բանէն աւելի մարդուս գէշութի
սրատճառող և աղէկութենէն զրկո-
ղը՝ անկրօնութիւնը և անհաւա-
տութիւնն է :

10. Վզգը քանի երթար նէ քա-
ղաքական կրթութիւն և ուժ կ'ըս-
տանար . և ասոր նշաններն են թե-
բացւոց սրատերազմը , որ եօթն թա-

գաւոր մէկ եղան Ադէօկղէս թա-
 գաւորին վրայ ելան Ամիիկտիո-
 նին վճիռը չընդունելուն համար .
 Արգոնաւեան ընկերութեան Արդ-
 թիս ըրած ճամբորդութիւննին ,
 այն տեղ գտնելով ոսկի գեղմք
 վերցընելու համար . Տրովացւոց
 ծեծը , որ հելլենացւոց ամէն թա-
 գաւորները միաբաներ մէկ քաղա-
 թի մը վրայ ելեր էին . այն քաղա-
 թին թագաւորին տղան մէկ հել-
 լեննացիի մը կին փախցընելով սա-
 տուոյն անարգութիւն բերած ըլ-
 լալուն համար : Այս համառօտ յի-
 շած բաներնուս վրայ երկար խօսել
 պատմութիւնը չի վերցընէր . դիւ-
 ցաբանութեան կը վայէ , քանզի
 մէջը շատ առասպել խառնելով
 աւրրոված են : Առ այժմ այսբանս
 գիտնալը հերիք է որ՝ Տրովագայի
 առնելիլը՝ Քրիստոսէ 1209 տարի
 առաջ կ'ընայ . ըսել է՝ Իսրայէլաց-
 ւոց մէջ Յեսուէն ետքը դատաւոր-
 ներուն ժամանակը : Այն ատենը՝
 որ Իսրայէլացիք քաղաքական կառա-

վարութիւննին շիտկեր էին , և
հելէնացիներուն պատմութիւնը
տակաւին առասպելով խառն էր ,
եղած բաներուն կարգաւ պատմու-
թիւնը գրել չկար :

Այն ատենները որ ստորին ան-
ները կամ դիւցազն ըսվածները Տը-
րովագայի դէմ բան կը տեսնէին ,
տասն տարի իրենց երկրէն հեռու
մնալնին շատ շփոթութեւն և խառ-
նակութեւն պատճառ եղաւ : Աւթ-
սուն տարիի մը չափ ետքը շերակ-
լեան ըսվածները որ շերակլէսին
ցեղէն եկած էին , և Պեղոսպոնե-
սոսէն վըռնաբլեր էին , կուռով
և բուռն զօրութեամբ նորէն հոն
մտան , Միկենէի և Սպարտայի և
Արգոսի տիրեցին . և բոլորի մանր
տէրութիւնները վախցուցին :

11. Այն ատենը հելէնացիներ
ըր շատ մարդիկ մէկ տեղ իրենց ըն-
տանիքնին առին , նաւերը մտան .
ոմանք գացին ճերմակ ծովու կղզի-
ները մնացին , և ուրիշները Ասիայի
ծովերէրքը անցան իրենց բնակու-
թի

հաստատելու : Յունաց գաղթա-
 կանու թիւնք ըսլաճները ասոնք են :
 Այլ ասոնց մէջէն համբաւ ստացան
 Յոնիացիք , Աղլացիք և Վորացիք :
 Հանգիստ կեանք ապրելով խելք-
 նին բանեցընելու ալ ժամանակ ու-
 նեցան , և Հովերոս՝ որ այս գաղ-
 թականներէն էր , թէպէտ բուն որ
 տեղացի ըլլալը յայտնի չէ , իր խե-
 լացու թիւնը յայտնեց շինած երկու
 բանաստեղծութիւներովը , որոց մէ-
 կըն է Աղիոնական , որ մօտերս հա-
 յերէն ոտանաւ որ գեղեցիկ թարգ-
 մանութիւն տարլեցաւ Անէտիկ . և
 մէկայն է Աղիսական , որուն տակա-
 ւին թարգմանութիւն չկայ մեր մէ-
 ջը : Հովերոս՝ Տրովադայի պատե-
 ռազմէն երեք հարիւր տարիի մը չափ
 ետք էր , և ասոր ծաղկիլը՝ մարդ-
 կային մտաց յառաջադիմութեանը
 պատմութեան մէջ երեւելի բանե-
 րէն մէկն է : Այս տեսակ պատ-
 մութիւնս կարդացողներուն մտքին
 շատ լոյս կուտայ , և փափաքելի է
 որ մեր մէջն ալ ասանկ մէկ պատ-
 մութիւն մը գըտնելի :

12. Շատ ատենէ ՚ի վեր Արեւոյ
կղզիին թագաւորը Վինոս, որ բա-
նաստեղծները դժոխքի դատաւոր
ըրած են, նոր օրէնք հաստատելու
աստուծմէ ազդեցութիւն առած
կը կարծէր զինքը. բայց ասոր դրած
օրէնքները գլխաւորապէս պատե-
րազմի վրայօք ըլլալով՝ քաղաքական
չփոթել թիւները և անկարգութիւն-
ները չէին կրնար վերցընել: Արե-
տացիք իրաւ քաջ պատերազմական
եղան, բայց խռովասէր և չարածը-
ճի մարդ ըլլալնուն համբաւը Պօղոս
առաքելոյն օրն ալ մոռցըված չէր.
որ բանաստեղծի մը ըսած խօսք՝ իր
ատենը կրետացիներուն կըյարմար-
ցընէ, « Ստոյգ է վկայութիւն այս »
ըսելով (Տիմոթ. Ա. 12. 13): Ընոր
համար աղէկ օրինադրութեան օրի-
նակ ըլլալ՝ ասոնց բանը չէր:

13. Այդ դիւցազն ըսված մար-
դոց ժամանակի Յունաց բարբը
պարզ էին. մէջերնին կրթութիւն
մտած չըլլալով ուրիշ բարբարոս ըս-
ված ազգերուն կը նմանէին: Ասոնց

բարուցը հաւատարիմ պատկերը
 Հոմերոսի գրոց մէջ կը գրանեմք :
 Թագաւորնին՝ որ շատ զօրաւոր կը
 կարծրվին , խօսքերնին շատ առաջ
 քալեցընելու չափ հեղինակութի ,
 և իշխանութիւննին ամէնուն աչ-
 քին ցրցընելու չափ փառաւորու-
 թիւն չունէին : Արեւց ուտելու ա-
 նասունները իրեւց ձեռօքը կը մոր-
 թէին , կը քերթէին , կը կըտորտէին
 և կը խորվէին : Աղիոնականին մէջ
 կը գրանեմք որ՝ Ագամեմոն թա-
 գաւորը մէկ կովու մը Կէօշը իր ձե-
 ոքը կը պատրաստէ Այաքսի հա-
 մար : Միայն կուուիլ մը գիտէին ,
 այն ալ՝ զինուորական գիտութեց
 ամենեւին տեղեկութի չունենա-
 լով , և պինտ մեծ օրէնքնին այն էր՝
 որ ուժով եղողին կամացը կը հնա-
 զանդէին , մինչեւ որ մէկ ուրիշ ան-
 կէց ուժով մարդ մը ելլէր : Պատե-
 րազմի մէջ գաղան կը կըտորէին նէ՝
 յաղթու թիւն ընելէն ետքը գաղա-
 նու թիւննին չէին ձգեր , և թէ որ
 մէկը պատերազմի մէջ գերի բռնէ-

ին նէ՝ գերինին թէ՛ թագաւոր ըլ-
լար թէ՛ թագուհի, ամենեւին չէ-
ին խտրեր. ստորին վիճակի մարդու
մը սկէս կը նայէին : Թաւան ընելու
չատ կը փափաքէին . և ինչ որ կու
ղոպտէին նէ՝ զօրասպետներն ու զին-
ուորները հաւասար կը բաժնէին .
զինուորներուն առնելէքը ամէնը այս
էր . ռոճիկ (թային) ամսական չէին
գիտեր :

14. Այդ կըտրիճ մարդոց բազ-
մու թեանը մէջ իրարու ծանր խօս-
քեր և յիշոցք տալերնուն վրայ զար-
մանալ սկէտք չէ : Քանզի Հոմերոսի
սխտմածին նայելով՝ աստուածներ-
նուն իրարու հետ խօսելնին ալ ա-
մէն ատեն սփարկեչտու թեան և քա-
ղաքաւարու թեան կանոնով չէր եր-
թար : Մսէլ է որ՝ Յունաց կրօնքը
աստուածու թեան նախատինք բե-
րելու կրօնք մըն էր : Ալ յիրաւի
անոնց դիւցաբանուէն ալ անճոռնի
ինչ բան կըրնայ ըլլալ : Շատ դիւ-
րահաւան էին . կուռքերէն պատ-
գամ ելլելուն կը հաւատային . թէ-

պէտ տուած պատասխաննին երկ-
 դիմի (Թէճնիս) ըլլալովը պէտք էր
 որ խարդախութի կենալուն վրայօք
 կասկած մը ընէին : Հանդերձեալ
 կենաց հաւատալնին կը ցըցընէ որ
 մէջերնին էփ աղէկ խելացի մարդ
 կայ եղեր . որ նախնիքներէն մնացած
 հաւատոյ այս մասը չեն կորսընցու-
 ցեր : Մայց բուն իրենց խելքին աս-
 տիճանը այս բանիս վրայօք հասկը-
 նալ կ'ուզես նէ՝ Աղիւսեան դաշտ
 և Տարտարոս ըսլած տեղերուն ստու-
 րագբուծիւնը կարդա՛ . որոնց մէկը
 Աբբայուծիւնն է և մէկը՝ Վժոխքը .
 ասկէց ելել բանի կարօտ չես ըլլար :

15. Խաղեր հնարելը յունաս-
 տանի մէջ՝ առաջի բերանը շատ ա-
 ղէկ հնարք մըն էր : Շատ տեսակ
 վազելներ և ծեծկըվիներ , գօտէ-
 մարտութիւն (բէհլիվանութիւն) ,
 բռնամարտութի (եումրուք տէօ-
 յիւչիւ) , համայնամարտութիւն ,
 որ ամէն տեսակ ծեծկըվի կ'ըլլար .
 ասոնք ամէննալ մարմիննին կ'ուժուէ
 ցընէին և ճարպիկ կ'ընէին . և ա-

սով զինուորական աշխատութիւն
ներու դիմանալ կը սորվէին : Աւ
յաղթելու փափաքնին չէ՛ թէ բան
մը շահելու՝ այլ փառք և պատիւ
ստանալու վրայ էր : Անեւելքնին
տերեւներէ հիւսված պսակ մը , և
հասարակութեան ծափ զարները ,
և համբաւը զրուցիլն էր . բայց
անոնք այս բաներս արծաթէն և ոս-
կիէն վեր կը բռնէին : Այս խաղե-
րուս պատճառով որ տեղ Յոյն կար
նէ մէկ տեղ կը ժողովուէին , և քա-
ղաք քաղաքի հետ կամ տէրութի
տէրութե հետ հակառակութիւն
ուներին նէ՛ այս պատճառաւ կ'ըլ-
լար որ հաշտուէին : Վոնէ խաղը
որքան ատեն քըշէր նէ՛ այն թշնա-
մութիները խափանած կը մնային :
Աւ ամէնը մէկ կերպ զուարճութի
իմանալով՝ հաշտուելուն և խաղա-
ղութեամբ և բարեկամութեամբ ապ-
րելուն համը կ'առնէին . և ՚ի հարկէ
իրենք ալ անիկայ ձեռք ձգելու փա-
փաք մը կուգար մէջերնին : Ասանկ
ժողովքներուն մէջ իրենց աններուն

Հանդիսաւ որ պաշտօն կը մատուցա-
նէին . քաջերնուն ըրած քաջութիւ-
ները թէ՛ ոտանաւ որ թէ՛ արձակ՝
փառաւ որ խօսքերով կը պատմէին ,
և ասով երեւակայութիւննին կրակ
կը կրտրէր կը բըռնէր . և միտ-
քերնին կը բարձրանար :

16. Այց ատեն անցնելով այս
խաղերս առաջին աղէկութիւնները
կորսընցընէէն զատ՝ իրենց փղշուռն
ալ պատճառ եղան : Շատ ծախքով
պահած ըմբիշնին (բէհլիւանները)
քաղաքացւոց կարգ անցան , կրտ-
րուկ վաղելով իրենց տիրոջը համար
վարձք և պատիւ վաստրկելու բա-
ւականութի ունեցող ձիեր պահելու
խենթութիւնը մէջերնին մտաւ . և
տեսարաններու իրենք զիրենք տա-
լով՝ հասարակաց օգուտը հոգալը
մըտվընուն ելաւ : Ասոնցմէ ելած
գէշութիւնները ետքը կը տեսնեմք :

17. Այս խաղերուն ամենէն ե-
րեւելին էր Աղիմսլիական ըսվածը ,
որ Պեղոսոննեսոսի Աղիմսլիա քաղա-
քին քովերը կը կատարէին չորս տա-

րին անգամ մը : Այս միջոցիս Աղիմ
սխաղ կ'ըսէր . ըսել է որ՝ մէկ Ա
ղիմսխաղը չորս տարի էր . և ատեն
մը Յունաց մէջ իբրեւ թուական
բանեցաւ . միջոց տարիներն ալ հաշ-
ուելով , այսինչերորդ Աղիմսխաղին
առաջին կամ երկրորդ կամ եր-
րորդ կամ չորրորդ տարին այս բանը
եղաւ ըսելով : Այս թուականիս
սկիզբը կ'առնրի Քրիստոսէն 776
տարի առաջ : Ասկէց առաջ ալ Ա
ղիմսխական խաղ կար . բայց սխա-
մութիւնը անոնց վրայ շատ տեղե-
կութիւն չի տար :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Սպարսա Լ Ի խ-գորիսին օրէնքները :

1. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ գրեթէ ամէն
կողմը ընդհանուր փոփոխութիւն
մը ըլլալով՝ այն երկրին կերպարանքը
մէկ ուրիշ երեւոյթք մը առաւ , Յոյ-
ները բնապէս անհանդարտ , և ի-
րենց ազատութիւնը սաշտպան մար-

դիկ իրենց թագաւորներուն իշխաւ
 նու թենէն գլուխ քաջեցին, որ գու
 ցէ վրանին չափազանց բռնու թիւն
 կը բանեցընէին : Ապէ՛ թէ այն մա
 նրը մուներ թագաւորու թիւնները
 ամէնն ալ փոխվեցան հասարակա
 պետու թիւն եղան : Արկար ատեն
 մէկ անսանձ ազատու թիւն մը տի
 րեց մէջերնին, բայց քաջու թիւնն
 ու առաքինու թիւնը մէջերնին նու
 րէն փայլեցընելու համար միայն խե
 լացի օրէնք մը բաւական էր :

2. Աեղուպոննեսոսի Ապարտա քա
 ղաքը՝ որ Աակեդեմոն ալ կ'ըսվէր,
 ասոր առաջին օրինակ եղաւ : Ասոր
 թագաւորները շերակլի ցեղէն ըլ
 լալով շատ յարգի էին շերակլի յի
 շատակին համար, թագաւորական
 անունը չաւրեցին ու թիշներուն պէս
 ինն հարիւր տարի մը կար որ՝ շե
 րակլի ցեղէն երկու թագաւոր մե
 կէն կը տիրէին այս երկրիս վրայ : Ա
 սոնց երկուք ըլլալովը հակառակու
 թիւնը անոնց մէջէն վերնալիք չու
 նէր, վերջացընելու համար մէկ ի

մաստուէն և մեծ օրինադրի մը կա-
րօտ էր :

Յ. Այս օրինադիրս եղաւ Աւ-
նովիոս [Թագաւորին տղան] իւզոր-
կոս : Ասոր հայրը պատերազմի մը
մէջ մեռած էր : Իրեն մեծ եղբայ-
րը՝ որ հօրը տեղ [Թագաւորեց , ա-
ռանց զաւակի մեռաւ , կինը յղի
ձգելով : [Թէ որ Ա իւզորկոս խրղձ-
մըսանքը մէկ դի ձգէր նէ՝ Թագա-
ւորու [Թիւնը իրենն էր : Հարսը
ասոր ըսաւ որ , [Թէ որ զիս առնե-
լու յանձնառու կ'ըլլաս՝ տղուս աչ-
խարհքի երես չեմ ցրցընէր : Ասի-
կայ [Թէպէտ Ա իւզորկոսի շատ
գժուարը եկաւ , բայց կտրողական
պատասխան մը չի տուաւ . օրէ օր
ձգեց մինչեւ որ տղան աչխարհք
եկաւ : Տղան մանչ ըլլալով՝ Թագա-
ւորու [Թեան ժառանգ էր . Ա իւ-
զորկոս անոր խնամակալ եղաւ . և
ատեն մը այս կերպովս կառավարե-
լէն ետքը՝ որովհետեւ անիրաւու-
[Թեամբ վրան կասկածի գացողներ
եղան , ձգել երկրէն դուրս ելլելը

խոհեմութի սեպեց . Յունաստան ,
 և Յոնիա , գուցէ մինչեւ Ագիապոս
 ալ գնաց , այն երկիրներուն բարու
 ցը և սովորութեցը տեղեակ ըլլա
 լու համար : Այն ատենները գիրք
 քիչ ըլլալով՝ աղէկ կրթութիւն ու
 զողը ճամբորդութիւն ընելու էր :

4. Ալ որովհետեւ Վիզոնթիոսի
 հոն չեղած ատենը անկարգութիւն
 ները շատնալու վրայ էին , ետեւէն
 մարդ գնաց բերելու : Ակաւ . և ե
 ղած գէշութիւնները արմատէն
 վերցընելու համար՝ կառավարու
 թեան կերպը բոլորովին փոխել մը
 տածեց : Ասոր համար զինքը աւ
 տուածներէն ազդեցութիւն առած կար
 ծեց . կամ անանկ կրլեցուց : Վեղ
 փեան պատգամը ասոր համար մեծ
 օրէնսդիր մըն է ըսած ըլլալուն հա
 մար՝ հասարակութիւնը պատրաստու
 էր ասոր տալու օրէնքներուն կա
 տարեալ հնազանդութիւնելու : Վայց
 ինքն ալ ուրիշները իրեն հնազանդե
 ցընելու միջոցները ետ չի ձգեց :

5. Վլխաւ որ սպարապետները ը

նեւը նորոգութիւններուն հաւ-
 նեցան, և սլաշտպանեւը համար
 դէնք ալ առին. հասարակութիւնը
 այս տեսնելով՝ դէմ կենալու չի հա-
 մարձակեցաւ: Քաղաւորութիւնը
 մնաց, բայց իշխանութիւնը քիչ-
 ցաւ, և գործերը առաջարկելու և
 քննելու համար մէկ ծերոց ատեան
 մը հաստատուեցաւ: Դողովուրդն
 ալ մէկ տեղ պիտի ժողովուրդէր, և այն
 ատեանին առաջարկածը պիտի ըն-
 դունէր կամ հերքէր: Օրակոյտը
 քսան և ութը հոգի էին, և մին-
 չեւ մեռնէին նէ նոյն սլաշտօնը պի-
 տի ունենային, ուստի ասոնց հե-
 ղինակուիր շատ էր: Այլ դիէն եր-
 կու թագաւորներուն, և մէկ դիէն
 հասարակութեանը մէջը ըլլալով՝
 երկու կողմին ալ իշխանութիւնը
 կը բարեխառնէին:

6. Բայց որովհետեւ ասոնք ալ
 կ'ըրնային իրենց սահմանը անդին
 անցնիլ, ուստի հասարակութեան
 մէջէն հինգ հատ ալ ուրիշ սլաշտօ-
 նաւոր կ'ընտրէր ժողովուրդը, և ա-

ասոնց իշխանու թիւն կուտար որ ծե-
րակուտին անդամները վըռընտէ ,
բանտը դնէ , և մեռցընելու ան-
գամ կարող էր : Ասոնց իշխանու իր
մինչեւ թագաւորներուն վրայ կը
բանէր , և այս ահարկու գատա-
ւորներուս Ափոր կ'ըսէին : Մատե-
նագիրներուն մէջէն ոմանք կը կար-
ծեն թէ այս պաշտօնս հնարողը Աիւ-
գորկոսն էր , բայց ուրիշներուն
կարծիքը՝ որ ասոնց հաստատու թիւ
Աիւգորկոսէն 130 տարի մը ետքը
կը դնէ , աւելի հաւանելի է :

7. Աիւգորկոսին գերազանց գոր-
ծը այն եղաւ որ Սպարտացւոց հա-
սարակու թեան բարքը իր դրած օ-
րինացը հաստատու ի ըրաւ : Սպար-
տա քաղաքը և գաւառը մէկ գեր-
գաստանի մը պէս ընել կ'ուզէր , որ
ամէն քաղաքացւոց գործոյն նախ-
տակը՝ հասարակաց օգուտը ըլլայ .
ամէնն ալ հայրենեացը ծառայու թի-
ւնեն : Ասոր համար պէտք էր այն
երկրէն աղքատուին ու հարստու իր
մէկէն վըռընտել : Քանզի մարդոց

մէջ ասոնց երեսէն սլառճառած անհաւասարութիւն անմիաբանութիւն և ատելութիւն ալ կը բերէ հետը, և ժողովրդոց բարբը կ'աւրէ: Անոր համար գետինները մէջերնին հաւասար բաժնեց. ոսկին և արծաթը և զարդու վերաբերեալ արուեստները և ինչ բան որ մարդոյս կենացը ամենահարկաւոր չէ, անոնք ամէնն ալ խափանեց: Արկրին մէջ անցնող դըրամը երկաթ էր շատ ծանր. ասով հարստութիւնը անհնարի պէս բան մը ըլլալով՝ արծաթսիրութիւնը արմատէն չորցաւ:

8. Ամէն մարդ, և թագաւորները անգամ հասարակաց սեղանը ամէնը մէկ տեղ հաց կ'ուտէին. կերակուրնին թէպէտ սլարդ էր, շատ աղէկ արուեստով եփած չէր, բայց բնական փափաքը կը լեցընէր և հեշտութիւն կուտար: Սեղանին գլուխը զուարճալի և օգտակար բաներու վրայ կը խօսէին. և մարդոց պակասութիւնը շիտկելու համար բարակ և չիդըպչող զուարճախօսու-

Թիւններ կ'ըլլար : Անկէց ելելով
 ուրիշ տեղ կ'երթային , և աւելի
 ծանր նիւթոց վրայ կրխօսէին , կամ
 զինուորական կրթութիւն կ'ընէին ,
 կամ մարմնոյն ուժ տուող և փառա-
 սիրութիւնը գրգռող խաղեր կը
 խաղային :

9. Առանկ բաները մէկ օրէնսդիր
 մը աւելի ընդարձակ երկիր մը կամ
 աւելի փափուկ մեծցած ազգի մը
 մէջ մտցընել ուզէնէ՝ գլուխ եր-
 թալու բան չէ՝ բայց բոլոր սպար-
 տացւոց տէրութիւնը 39,000 հոգի
 են . 9,000 հոգին բուն Սպարտա
 քաղաքին մէջ , և մնացածները գա-
 ւառին ուրիշ տեղերը : Այլ հին ա-
 տենական պէս ապրելու պարզ եղա-
 նակը տակաւին մոռցըված չէր :

10. Օրէնսդիրը այս օրէնքնե-
 րովս աննման կտրիճներ հասցուց
 նէ՝ կրթութեան միջնորդութիւն է :
 Տղայքը մեծցընելը հասարակապե-
 տութեան գործն էր , և տակաւին
 օրոցին մէջէն չեւաճ՝ առոյգ և ու-
 ժով կ'ըլլային : Անուցիչ կնիկները

իրենց տղայքը լաթերու մէջ չէին
սրբութիւն . և մութ տեղը բանէ չիվախ
նալու՝ և ծանր հարկ մը չեղած ա-
տենը չիլալու և չիպօռալու կը սոր-
վեցընէին . տղայքը եօթն տարւան
ըլլային նէ՝ յատուկ վարպետներ ու-
նէին որ անոնք աշխատելու և համ-
բերութեան և չարքաշութեան և
չուտ մը հնազանդելու կը վարժե-
ին : Ամէնուն ալ միօրինակ բարք և
բնութիւն կը սորվեցընէին . որով-
հետեւ մեծնային նէ՝ ընելիքնին մի
և նոյն բանն էր : Մէկ բանի մը յա-
ռաջագէմ եղողները ուրիշներուն
վրան իշխանութիւն մը կը վաստը-
կէին . բայց միշտ ճերբերուն առա-
ջը . որ ինչ պակասութիւն տեսնե-
ին վրանին նէ՝ շուտ մը կը յանդի-
մանէին և կը խրատէին :

11. Սեղանի գլուխ օգտակար
խօսքեր խօսվելուն համար՝ տղոց
ալ տեղ կուտային որ իրենց հետ
համարձակ սեղանը նստին , և ի-
րենցմէ մեծերուն հետ հաց ուտեն :
Սեղանի գլուխ ըրած խօսքերնին՝ մէկ

երեւելի մարդու մը անձին կամ ը-
րածին վրայ քննութիւն էր : Մէկը
տղու մը բան հարցընելու ըլլար նէ՝
տղուն տուած պատասխանը պիտի
ըլլար շուտ, և քիչ և խելացի խօս-
քերով : Ասով կարճ խօսիլ կը սոր-
վէին, և ասոր համար կարճ և ազ-
դու և իմաստալից ոճով խօսելուն՝
հին իմաստունները Վ յիռնական ոճ կ'ը-
սէին, և այս անունս այս կերպ խօս-
քերու վրայ մինչեւ հիմա մընաց,
բայց կարճ խօսելը կարճըցած ըլլա-
լով՝ կարծեմ անունն ալ մօտերս կը
վերցըրի :

12. Կերակուրէն իրենց բաժի-
նէն աւելի բան գողնալը խելացի-
ութեան և ճարտարութեան նշան
մը բռնրված էր, բայց թէ որ մէկը
բան մը գողնալու ժամանակը բըռ-
նրվէր նէ՝ կը պատժըրվէր, և ասով
պատերազմական հնարքներու և ար-
թնութե և վտանգներու սորվեցը-
նել էր մտքերնին : Ասոնց այս գործ-
քերուն մէջ գողութիւն ամենեւին
չէր սեպիւր, որովհետեւ ազգին և

տէրու թեան օրէնքը ասիկայ ընդու-
նած էր :

13. Տեսական ըսլած լսկ գիտու-
թիւնները՝ զարդու վերաբերեալ
արուեստներուն հետ սկստու թեան
երկրէն դուրս ձգված էր : Այց ու-
րով հետեւ բանաստեղծու թիւնը
մարդոյս արթնու թիւ և կտրիճու թիւ
մը կուտայ , որով սլատերազմի մէջ
կրակ կը կըտրին . ուստի բանաս-
տեղծու թիւնը ընդու նվեցաւ : Ա-
սոնց կանչած խաղերուն մէկը՝ Ֆը-
ռանսայի Արողոս իններորդ թագա-
ւորին վարպետը Ամիոյ անուն՝ գաղ-
ղիարէն թարգմանեց , որուն իմաս-
տըն է այս :

Տերերուն խումբը :

Մենք ալ ատեն մը երիտասարդ
և ուժով և համարձակ սրտոտ էինք :

Երիտասարդները :

Մենք ալ հիմա անանկ եմք , ով
գայ նէ կրնայ փորձել :

Մենք ալ որ մը անանկ կ'ըլլամք ,
և ձեզ ամենքդ ալ կ'անցնիմք :

14. Եւ իւր գորկոս կնիկ մարդիկը
կրթելու ալ խելք տուաւ . քանզի
անոնց բարքը տղայոց բարուցը վրայ
չատ ազդեցու թիւն ունի : Անանկ
ճամբայ մը բռնեց , որ երիկ մար-
դոց վայելու ազէկու թիւններ վաս-
տըկին . և մարմնով ալ առոյգ ըլլան՝
որ ճնած տղայքնին ալ իրենց պէս
առոյգ ըլլայ : Այլարասացոց գործա-
ծած ու ժով գլուխ ելլելու վարժու-
թիւններուն կնիկ մարդիկ ալ հա-
ղորդ ըրաւ : Այլ իկները բռնամար-
տու թեան (ե ու մրուխ տէ ցիւ շիւ յի)
և ըմբ շամարտու թեան (կիւ լէ շի)
կը մըտնէին :

15. Արկար ատեն առաքինու իր
կրնիկ մարդոց մէջ ալ ծաղկեալ մը
նայ . և շատ զարմանալի բաներ կ'ը-
նէին . անոր համար շատ ալ յարգի-
էին . և իրենք ալ իրենց հեղինա-
կու թեամբը՝ երիկ մարդիկ քաջուէ
և արիու թեան կը յորդորէին : Մէ-

կը պատերազմի մէջ զարնելու լուծում
 քը սախտեր էր, կաղ կը քալէր .
 մայրը ասիկայ միտի թարեւու համար
 ըսաւ . քալէ՛ տղանս . ասկէց ետքը
 քանի անգամ ոտքըդ ոտքէ՛դ փոխես
 նէ՛ քաջութի՛ղ միտքըդ պիտի դայ :
 Արիկ մարդոց և կնիկ մարդոց իրա-
 բու հետ տեսութեան վրայօք ալ
 խիտ օրէնքներ կային . և ամուս-
 նական սէրը մարդը թուլցնել և
 ուժէ ձգել չունէր . աւելի արիու-
 թեան և ճարպիկութեան առիթ
 մը կ'ըլլար :

16. Չի կարգը լող մարդիկ մէ-
 ջերնին անարգ սեպւած էին . քան-
 զի կրօնքնին անանկ բան մը չէր ցը-
 ցնէր անոնց՝ որ կատարման համար
 կուսական մարբութիւն պահանջը
 վի . անանկ պարտականութիւն ու-
 նեցող մարդիկ չկային , որ կրնիկ և
 տղայք ունենալով իրենց պարտքը
 պէտքին պէս կատարելու արգելք
 ունեցած ըլլան : Ա՛յկ մարդ մը որ
 քան յարգի ըլլար , թէ՛ և զօրապե-
 տի պատիւ և աստիճան ունենար ,

Թէ որ կարգը վաճ չըլլար նե՛՛ կրի-
տասարդ մարդու մը առջեւէն անց-
նելու ատենը այն երիտասարդը ա-
նոր ոտք ելլելը իրեն անարդու թիւն
կը սեպէր . մէկը ասանկ զօրապետի
մը ըսաւ . դուն տղայ չունիս որ ետ-
քը այն ալ ինձի ոտք ելլէ . քեզի ը-
րած պատիւըս պարապ կ'երթայ :

17. | Իւզորկոս օրէնքները դը-
րած ատենը միտքը այն էր որ սպար-
տացիները ամէնն ալ անյաղթելի
պատերազմական ընէ : Աւղեց որ ա-
մէն ատեն բանակի մէջ կենան . և
պատերազմը իրենց հանդէսը ժա-
մանակի պէս ըլլայ : Պատերազմելու
ուրախութեամբ երթան . և անանկ
բըռնեն , որպէս թէ աստուածնե-
րէն մէկը իրենց զօրապետութիւն
կ'ընէ կոր : Հասկըցաւ որ ասանկ ա-
րիութիւնը անոնք փառասէր կ'ընէ ,
ասոր ալ առաջը առնելու ճամբան
խորհեցաւ : Իսելքը հասաւ որ ա-
սոնց երջանիկ ըլլալուն ճամբան՝ բա-
ւականասէր (խանահաթ էհի) ըլ-
լալն է . որ իրենց ազատութենէն

և աղքատութենէն գոհ ըլլան . ա-
նոր համար օրէնք դրաւ որ՝ միայն
իրենց վրայ թշնամի մը ելլէ նէ՝ ի-
րենք զիրենք անկէց սպաշտականելու
համար պատերազմին . և թշնամին
յաղթովի նէ՝ ետեւէն չիյնան չի
վըռնտեն , և կողոպուտ չառնեն .
և նաւական զօրք և նաւ չունենան .
որ ծովու վրայ իշխելու ձեռք չի
զարնեն :

18. Թէպէտ ասանկ իմաստուն
օրէնքներ դրովեցաւ , սակայն Սպար-
տա փառասիրու թեան ոգիէն ազատ
չի կրրցաւ մնալ : Վնչ որ է նէ՝ քանի
մը հարիւր տարի բարբը աղէկ մնաց .
և ասիկայ սպառմու թիւններուն մէջ
չատ զարմանալի բան է : Վրացի աղ-
գերը իրմէ այնքան չէին վախնար՝
որքան որ կը յարգէին . և քանի որ
աղէկ մնաց նէ՝ յունաստանի տէ-
րու թիւններուն մէջ եղած դատե-
րը կըտրելու խօսքը կ'անցնէր : Վէ-
տարեգիտ անուն արժանապատիւ
մարդ մը կար , որ տէրութե խոր-
հրդականներուն կարգը մըտնել

կ'ուզէր : Այս խորհրդականներս երեք հարիւր հոգի կ'ըլլային : Մտութեան օրը ուրիշ մարդիկ ընտրվեցան , ասիկայ ետ մնաց . բայց ասոր վրայ սիրտը ցաւելուն տեղը սրտին ուրախութիւնը յայտնեց . Սպարտայի մէջ ինձմէ աղէկ երեք հարիւր հոգի գլտնըվեր է , այս ինչ աղէկ բան է ըսելով կը խնդար : Սպարտացիներուն ինչ մտքի ծառայելուն ասիկայ բաւական օրինակ կրնայ ըլլալ :

19. Սպարտացիներուն առաքի նութիւններուն հետ խառն կատաղութեան պէս բան մըն ալ կար : Մէկ տղայ մը թէ որ ծնած ատենը տկար ըլլար , և մեծութեանը անկէց մէկ օգուտ մը քաղելիքնին խելիքնին չի կրտրեր նէ՝ անիկայ կը մեռցնէին : Աւրիշ տղայքը ցաւ քաշելու սորվեցնելու համար Մնահիտ կուռքին սեղանին առաջը կը տանէին . հոն պնքան կը ծեծէին որ՝ ցաւուն չի դիմանալով մեռնող ալ կ'ըլլար : Վերիներ ունէին որ Վրտոք

կ'ըսվէին . ասոնց հետ վարվէնուն
 եղանակը մարդկային բնութիւն
 կուգայ : Այլ երբոր կը շատնային
 այս գերիները , և իրենց սիրտը կաս-
 կած կը մըտնէր , չըլլայ որ շատնալ-
 նին տեսնելով գլուխ քաշեն և ա-
 պրտամբին , գաղտուկ անոնք ջար-
 դելու մեռցընելու և քիչցընելու ի-
 թաւունք ունեցած կը կարծէին զի-
 բենք : Արժ ըսեմ . ճշմարիտ իմաս-
 տութեան նշան եղած չափաւորու-
 թիւնն ու հեղութիւնը անձանօթ
 բան էր ասոնց մէջ , և թէպէտ քանի
 մը բանի նայելով զարմանալի էին ,
 բայց շատ երեսէ ալ ատելի եղան :

20. Արիշ Յայներուն պէս ա-
 լեւորդապաշտ չէին , կրօնքնին ալ
 իրենց կառավարութեան կանոննե-
 րուն յարմար էր : Իրենց կուռքե-
 րուն արձանները , և Այրոգիտէինը
 անգամ՝ զէնք ունէին . որ պաշտե-
 լու գացողները զէնքի յարգութի-
 տալ սորվին : Արած զսհերնին և նը-
 լէրքնին շատ սուղ բաներ չէին ըլ-
 լար , որով անօգուտ տեղ ծախք չը

նել կը սորվէին : Աղօթքնին շատ
կարճ էր . և աղօթած ատեննին խըն-
դիրքնին միայն այս էր որ ան աղէկ
մարդոց բանը յաջողէ : Այնուել թա-
ղելու արարողութիւններնին ալ
սրարդ ըլլալով՝ մեռնիլը աշիւներնուն
սրարդ և սրղտիկ բան մը կերեւէր :

21. Ահեան մըն ալ ունէին
Լըի-ի-ի անունով : Արդեօք ասիկայ
ինչո՞ւ համար էր : Անոր համար էր
որ սպարտացիները քաղաքական կա-
ռավարութեան մէջ վախը հարկա-
ւոր կը սէսլէին . և Պլուտարքոս կ'ը-
սէ որ՝ թշնամիի դէմ ամէնէն ա-
ւելի սրտոտները՝ օրէնքէն ամէնէն
աւելի վախցողներն են . և ուրիշ
ներէն պախարականք լըսելու շատ
վախցողները՝ չարչարանք ու տան-
ջանք քաշելու շատ չեն վախնար :
Վիտնար նէ Պլուտարքոս՝ իր ըսա-
ծը Վաւիթ մարգարէին խօսքովն
ալ կըրնար հաստատել . «Պահէ տէր
զանձինս երկիւղածաց իւրոց » ըսելը
աստուծմէ վախցողներուն անոր ա-
պաւինելով աշխարհքի նեղութիւն

ներէն չի վախնալնին հասկընալով :
 Ահա Ա իւգորկոսին Քրիստոսէն
 900 տարի առաջ հաստատած և այն-
 չափ համբաւ վաստրկած օրէնքներ
 ըր ասոնք են : Արկար ատեն այս օ-
 րէնքներս պահվելէն կը հասկըցի
 որ հաստատուն հիման վրայ դրոված
 էր : Ապարտացիներուն ուրիշներէն
 որոշվելու գլխաւոր յատկութիւն-
 ներն էին փառքն ու իրենց հայրե-
 նիքը սիրել, արիական քաջութիւն,
 օրէնքներու հնազանդութիւն, և
 ասոնցմէ ելած մեծամեծ առաքի-
 նութիւններ : Ալ ասոնց այս յատ-
 կութիւններուն օրինակներովը պատ-
 մութեան գիրքեր լեցուն են :

22. Ա իւգորկոս իր օրէնքները
 հաստատուն բռնել տալու ճամբան
 ալ մտածեց, և կը պատմըվի որ՝ ա-
 նոնք աւրել չի տալու համար՝ Աեդ-
 փեան պատգամէն հնարք սորվելու
 գնաց, և երթալէն առաջ իր քաղա-
 քակիցներէն երդում՝ առաւ, որ
 գոնէ մինչեւ ետ դառնայ գայնէ՝ օ-
 րէնքները բռնեն : Աեդփեան պատ-

դամէն լսեց որ, Սպարտա այն օրէնքները բըռնելով՝ աշխարհքի ամէն քաղաքներէն երեւելի պիտի ըլլայ. ուստի ետ դառնալու չի բըռնադատուելու համար անօթութիւնով ինքը զինք մեռցուց. և սպարտացիները իրենց բրած երգումովը կասկեցան՝ օրէնքը պահելու: Թէ որ իրաւ է ասիկայ նէ՝ Վիւզորկոսի խելքը ետքի ատենները աւրած պիտի ըլլայ. քանզի քաղաքը չի դառնալուն մէկ հատիկ հնարքը այն չէր՝ որ մեռնի. կրնար մէկ անծանօթ տեղ մը երթալ, ինքը զինք մարդու չի ճանչցընել, և հոն խաղաղութիւն իր կենացը բնական վախճանին սպասել: Վայց Յոյնք իրենց հին պատմութեց մէջ ասանկ զարմանք բերելու սուտեր կը խառնեն. կը կարծեն որ՝ պատմութիւնը ասանկով կ'անուշնայ, նոր պատմիչներն ալ լմանի կը կըլլեն և իրաւ եղածի պէս կը հրատարակեն:

23. Վիւզորկոսէն 200 տարիի մը չափ ետքը՝ Սպարտացիներուն

ու մեսենիացիներուն մէջ երկու
 անգամ սաստիկ պատերազմ բացվե-
 ցաւ : Սպարտացիները քանի մը ան-
 գամ յաղթը վեցան . բայց վերջա-
 պէս իրենց թշնամիները ձեռքի տակ
 առին, իրենց գերի ըրին : Հին պատ-
 միչները կ'ըսեն որ՝ առաջին անգամ
 յաղթը վեցուն վրայ պատգամ հար-
 ցուցին և պատասխան առին՝ որ Ա-
 թէնքէն իրենց զօրապետ մը բերեն :
 Աթենացիք որպէս թէ ասոնք ծաղ-
 րելու համար՝ իրենց քաղաքակից
 Տիրտէոս անուն բանաստեղծը խըր-
 կեցին, որ կաղ էր . և քաղաքին մէջ
 յարգութիւն ամենեւին չունէր :
 Այս ծաղրական զօրապետը իր բա-
 նաստեղծական երգերովը ասոնք
 քաջալերելով յաղթութիւն վաս-
 տրկցուց : Վասնաւորապէս ուշադ-
 րութեան արժանի բան այս ժամա-
 նակներուս համար այն է որ՝ սպար-
 տացիները Վիւգորկոսին իրենց ա-
 պրտաբարձ հեղութիւնը մոռնալու
 սկրսած էին :

Արեւիկ . և Սողոմոն օրհնահետրը :

1. ԱթեւնԱՅԻՈՅ գաւառը Ատտիկէ , մէկ անբեր երկիր մըն էր . և թէ որ բնակիչները ճարտար և խելացի չըլլային նէ՝ ծաղկելիք չունէր : Ղլխաւոր բերքն է ձիթենի . այն ալ իրենց մէջ Աթենաս չաստուածուհին պատիւը և պարգեւը սեպւած էր : Առաջ Ատտիկէ գաւառը 12 քաղաք բաժնւրւած էին . որ իրարմէ կախում չունէին : Տրուվադայ պատերազմին ատեններուն մօտիկ՝ Թեսէոս ասոնք ամէնը մէկ տեղ ժողվեց ազգ մը և հասարակապետութեան պէս բան մը ըրաւ . և մայրաքաղաք ըլլալու համար Աթէնք որոչեց : Քաղաքացիները երեք կարգ բաժնեց . ազնուական , երկրագործ՝ և արուեստաւոր : Ամէն քաղաքական աստիճանները ազնուականաց տուաւ . համբանքնին քիչ՝ բայց ուժերնին շատ էր :

2. Վերհատուսի թուականէն 1,095
 տարի առաջ Արդրոս թագաւորնին
 մեռնելէն ետքը՝ անոր երկու տղաքը
 իրար ինկան . աթենացիներն ալ ժա-
 մանակ գտան թագաւորական կա-
 ռավարութիւնը բոլորովին վերցը-
 նելու : Հրատարակեցին որ՝ անկէց
 ետքը Աթէնքի թագաւոր միայն՝ Աի-
 ոս չաստուածն է . և կառավարու-
 թիւնը իշխաններու ձեռք տրուե-
 ցաւ , որ Աքքոն ըսվեցան . յունարէն
 Արխոնդա : Այս իշխանուէս հաս-
 նողները մինչեւ ցմահ կը մնային . և
 իրենք մեռնելէն ետքը իշխանութիւնը
 իրենց տղոցը կ'անցնէր . ուստի թա-
 գաւորական իշխանութենէն տար-
 բերութիւնը լոկ անունով էր . այս սո-
 վորութիւնս 300 տարի քրչեց : Այտ-
 քը սահման դրին որ այս իշխանուէս
 ընտրութիւնները մինչեւ տասը տարի
 իշխանութիւն ընեն . անկէց ետքը
 մէկ տարիի ինջաւ : Աթէնքի մէջ
 ինը Աքքոն ընտրեցին , որ իշխանու-
 թիւնը շատի բաժնրովի . և բռնու-
 թեան փոխվելուն վախը վերնայ :

3. Աթէնք գրի առնելիս օրէնք մը չունէր, և պէտք ըլլալն ալ գիտէին. օրէնսդիր ընտրեցին՝ Վրակոն անուն մէկ մը, որ թէպէտ առաքիւնի, բայց շատ խիստ մարդ էր: Ամէն յանցանքի պատիժ՝ մեռցընել ասորսպրոց, և ասանկ օրէնք մը անհնար էր որ երկար ատեն քրչէ:

4. Այն ատենը աթենացիք առաջկունէն աւելի չափը անցունելով գէշցան: Վառավարուէ կերպը փոխել կ'ուզէին, բայց ամէն մարդիւր կամքը քալեցընելու ետեւէ իշնալով չէին կրնար որոշել թէ որ կերպի դարձընեն: Աղքատները առավապետութիւն կ'ուզէին, որով կառավարութիւնը բազմութեւքը կ'անցնի: Հարուստները ազնուապետութիւն կ'ուզէին, որ երեւելի քաղաքացիները ըլլան գըլուխ: Վեւացիները խառն և միջին կառավարութիւն կ'ուզէին, որ ամէնն ալ խօսքի խառնըլին, և մէկն ալ առանց մէկալին բան մը չի կրնայ վճռել: Սողոն շատ աղէկ համբաւ

ստացած ըլլալով՝ հասարակութիւնը
անոր կը վստահէին . ուստի հասարակապետութիւնը կարգադրելու
համար անոր ինկան :

5. Սողոնն ազնուական ցեղէ էր .
բայց խեղճովը և առաքինի վարքովը
աւելի մեծ համբաւ ստացեր էր :
Սամուէքով և ճամբորդութիւններ
ընելով՝ իր ժամանակի մեծ իմաստուններուն մէկն էր եղած : Հեղ
բնութե՛հ հետ՝ հասարակաց օգտին
վրայ ալ մեծ փափաք ունէր . ամե
նեւ ին իր օգտին չէր նայեր . որ թէ
որ ուղէր նէ՝ մինչեւ թագաւոր ան
գամ կրնար ըլլալ : Բայց դրած օ
րէնքները անկատար եղան . քանզի
աթենացիք անկէց աղէկը չէին վեր
ցրներ , ինչպէս որ ինքը կ'ըսէր :

6. Վերագոյն իշխանութիւնը հա
սարակութեան ձեռքը անցաւ , և
դատաւորական իշխանութիւնը ազ
նուականներուն տրվեցաւ : Բայց
նոր սահմանադրութիւնը ժողովուրդը
զսպելու չափ իշխանութի չի թու
ղուց այս ազնուազգի դատաւոր

ներունքով : Հասարակաց ժողովը վաճ ատեաններուն մէջ կ'որոշվէին մեծամեծ գործքերը . և դատաստանէ բողոքում ալ կրնար ըլլալ այս ատեանին . և ամէն քաղաքացի այս ատեանին մէջ իրաւունք ունէր իր գիտցածը խօսիլ և հասկըցընել : Ասանկով մէկ տգէտ ռամկի մը բազմութիւն կրնար ամէն բանի վրայ վճռել . որ կողմը շատ ըլլար նէ՛ աւնոնց խօսքը ըլլալով :

7. Ատեանը կամ ծերակոյտը առջի բերանը չորս հարիւր հոգի էին , որոնց վրայ ետքը երկու հարիւր հոգի ալ եվելցաւ . և այսքան շատութեան մէջ՝ մէկ բանի մը վրայ պէտքին պէս խորհելու բաւական խելք գրտնրվիլը շատ դժուար բան էր : Անոր համար բազմութիւն վրայ ալ խօսքը շատ չէր բաներ : Հասարակութեան ժողովրդիլը սովորաբար ամէն ութ օր կ'ըլլար . և հասարակութիւն մէջէն յիսուն տարին անցած ըլլալով ո՛ր որ ուղէր նէ կրնար հոն ատենախօսութիւն ը-

նել : Աւստի լեզուանի և խոռովա-
րար ատենաբան մը կըրնար այն
տեղ ծերակուտին խելքէն աւելի
առաջ քալել : Անաբարսիս սկիւ-
թացին անգամ մը Սողոմնի ըսաւ .
կըզարմանամ որ ձեր մէջը խորհիլը
խելացիներուն էք տուեր , բայց
վերջին վճիռը տալը խենթերուն է
մնացեր : Այլ յիրաւի ասկէց շատ
գէշութիւններ ելան . բայց սարա-
գայները Սողոմը ստիպեր էին որ ա-
մէն կողմն ալ բռնէ խոհեմութիւն :

8. Աղէկ բան մը այն ըրաւ որ՝
Արիստագոս ըսլած ատեանին իշ-
խանութիւնը նորէն հաստատեց .
որ Վրակոնէն ետքը շատ ինկած էր .
և ասոր ատենակալները միայն հին
Աբքոններէն գրաւ : Ասոր յատուկ
գործ եղաւ հասարակութեան վե-
րաբերեալ բաները , և աղայոց կըր
թութէ հոգաբարձութիւն : Քանզի
այն ատենը իմացված էր որ՝ աղգի
մը աղէկութիւն և յաջողութիւն՝
անոր տղոցը կըրթըվելու կերպէն
առաջ կուգայ :

9. Սողոն շատ մասնաւոր և գիտնալու արժանի օրէնքներ դրաւ : Արժէ համար որ պարապ կը պըտըտի ըսվէր , երեք անգամ այս ամբաստանու թիւնս մէկ մարդու մը վրայ կրկնըվէր նէ՛ այն մարդը անկէց ետքը վատահամբաւ կը սեպվէր : Մէկ տղայ մը որ ձեռքը անցած ըստաւ կը անօգուտ բաներու կը խարճէր , կամ իր հայրը չէր խնամեր , նոյն պատիժը կ'ընդունէր . բայց թէ որ հայրը տղուն արուեստ մը սորվեցունել տուած չէր նէ՛ տղան սարտական չէր հայրը պահելու : Աին մը երկանը օժիտ (ճէհէղ) պիտի տանէր երեք ձեռք լաթ . և քանի մը կտոր կարասիք (տան էշեա) աճան գնով , չըլլայ որ աղջիկ կարգողները աղջկանը օժիտին պատճառաւը աղքատանան : Մէկ քաղաքացի մը վատահամբաւ կանանց տունը մըտնէր ելլէր նէ՛ անիկայ չէր կըրնար ինչ և իցէ ժամանակ հասարակութեան ատեանը ատենախօսութիւն ընել , քանզի արժանի չէր

սեպիւնը հասարակաց հաւատարմու-
թեանը, որովհետեւ իւր սխառուոյն
և իւր անձինք յարդը չէր ճանչնար :
Արքուններէն մէկը գինովու թեամբ
բռնելէր նէ՝ մահապարտ էր, կը
մեռցընէին :

10. Պարտքի համար մարդ բան-
տը դնելը արդիւլիւս էր : Տղայ չու-
նեցողներուն թոյլտուութիւն ե-
ղաւ որ իրենց ինչքը կտակաւ որո՞ւ
ուզեն նէ անոր թողուն : Պատե-
րազմի մէջ մեռնողներուն տղոց աս-
րուստը հասարակաց սընտուկէն կը
տրվէր : Անոն մըն ալ այն դրվեցաւ
որ՝ քաղաքացւոց մէջ մէկ սաստիկ
խռովութի մը ելլէ և երկու կողմ
բաժնելին նէ՝ հարկաւորապէս ամէն
աղէկ քաղաքացի՝ կողմին մէկուն
կուսակից ըլլալու է, որ կողմն որ ի-
րեն աղէկ և իրաւունքի տէր կ'երե-
ւի նէ, որ խմաստուն մարդոց դիւ-
րին ըլլայ խաղաղութի գանեւ : Քան-
զի ասանկ բաներու մէջ չէզոք մնա-
լը՝ մէկ կողմին իրաւունքը ճանա-
չել և մէկալ կողմէն վախնալ ըսել

է . բայց իրաւունքը որ կողմին ձեռ-
քը ձանձնալը և որ կողմէն վախնա-
լը անյայտ մնալով՝ մէկ գէշ կեղծա-
ւորութիւն մըն է : Արնիկ մարդոց
ծախքին՝ և մեռելներու և կրօնական
արարողութիւններու համար եղած
ծախքերուն , չափ և սահման դըր-
վեցաւ :

11. () տարականները Աթէնք
քաղաքացի կրնային դըրովիլ . բայց
կառավարութեան գործքերուն մէջ
չէին կրնար մտնել : Խեցեկոյս Վէր-
ըսվածը՝ քաղաքացւոց փառամտութեանը
մէկ սանձ մըն էր : Շատ
յարգութիւն կամ մեծ իշխանութիւն
ունենալով կասկածելի եղող-
ները մինչեւ տասը տարի ետ չի
գառնալու գաշամբ աքսոր կը խոր-
կըվէին , թէ որ հասարակաց ժողո-
վոյն մէջ անոնց աքսորվելուն հաւա-
նութիւն տուողը վեց հազար հո-
գի ըլլար նէ . բայց այս աքսորս ա-
նոնց նախատինք մը չէր բերեր :
Շատ երեւելի մարդիկ այս կեր-
պով աքսորվեցան :

12. Աթենացիք թէպէտ շատ
խելացի էին, բայց թեթեւամիտ
և անհանդարտ մարդիկ ըլլալով շատ
մեծ պակասութիւններ և յանցանք-
ներ կ'ընէին, և իրենց պէտք եղած
բաները ընելու զանցառութիւն և
անհոգութիւն կ'ընէին: Արք որ
մէկուն պատուոյ արժանի որպիսու-
թիւնը աչիւնուն ծանր կ'երեւէր,
խեցեկոյտ վճռով անիկայ կ'աքսորէ-
ին, ետքը կը մեղքընային ետ կը
կանչէին, նորէն կառավարութեան
գործերու կը բանեցընէին, և ա-
ռիթ մը եղածին պէս առաջին անիւ-
րաւութիւն նորէն ձեռք կ'առնէին:

13. Սողոնի՝ աթենացիներուն օ-
րէնք տալը՝ Քրիստոսէ 594 տարի
առաջ էր: Ասանկ անհաստատ և
փոփոխամիտ ազգ մը օրէնքի տակ
խօթելը հրքան դժուար ըլլալը ինքն
ալ փորձով հասկըցաւ: Հաստատած
բաներուն վրայօք յաճախ փոփո-
խութիւններ կ'ուղէին, ուստի ձանձ-
րացաւ և քաղաքէն հեռանալ ու-
ղեց, անոնք ալ հրաման տուին որ

մինչեւ տասը տարի երթայ պտուղի :

14. Փոփոխու թեան սերմը որ իւրեն հոն եղած ատենը սերմանված էր, ինքը անկէց դուրս ելելէն ետքը սկըսաւ ծըլել : Ար ազգականնէրէն Պիսիատրատոս անուն մէկ մը, հարուստ, կըտրիճ, և հասարակութեան սիրելի, հասարակութե աչքը մոխիր փչելու և անոնք խաբելու ճամբան աղէկ գիտէր, և մըտքին մէջէն կը փափաքէր որ գերագոյն իշխանութիւնը ձեռք ձգէ : Փառամու մարդը խարդախութիւն բանեցընելու չամբնար : ()ը մը իր ձեռօքը ինքըղինք վերաւորեց, անանկ արիւնլուայ՝ հասարակաց ատեանը ելաւ, նայեցէք ժողովըրդեան թշնամիները ինձի ինչ ըրին ըսելով անոնցմէ պաշտպանութիւն ուղեց : Արնային փնտրուել թէ ընողը ո՞վ էր, բայց սերը թող չի արւաւ բարակ քննելու, քանզի ամէն մարդ՝ սիրած մարդուն խօսքին հաւատարմութիւն կ'ընէ : Անոր անձին պահպանութեանը համար զօրք տը

վին . բայց ինքը այն զօրքը իր միտքը
դրածը կատարելու գործածեց . բեր-
դին տիրեց . և այս ճամբով ինքնիշ-
խան պետութիւն մը ձեռք ձգեց :

15. Սողոն՝ որ այս միջոցիս իր
ճամբորդութենէն ետ դարձած էր ,
հասարակաց սրտին մէջ ազատու-
թեան սէրը արթնցընելու աշ-
խատեցաւ ալ նէ՛ խեր չի տեսաւ :
Պիսիստրատոս ասոր հարցուց . քու-
կին այդքան համարձակիլդ ո՞րկէ է .
Սողոն պատասխան տուաւ . ծեր-
ըլլալէս : Անկէց ետքը քաղաքական
գործքերէն քաշվեցաւ . և մինչեւ
մահուան ատենը իր միտքը կըր-
թելը իրեն մեծ զբօսանք էր ըրած :
Քանի ծերանամ նէ՛ ամէն օր նոր
նոր բաներ կը սորվիմ կ'ըսէր : Խո-
րին ծերութեան հասաւ ու մե-
ռաւ : Մեռնելէն չէր վախնար . Պի-
սիստրատոսի տուած պատասխա-
նէն յայտնի է . բայց Ա իւգորկո-
սի խենթութիւնն ալ չունենալով
երկար ապրեցաւ :

16. Աթէնքին պէս խռովայոյզ

քաղաքի մէջ գերագոյն իշխանու-
 թիւնը իրեն յափշտակող մարդ մը
 շատ երկար ատեն այն իշխանու-
 թեանը մէջ մնալը շատ դժուար
 բան էր : Պիսիստրատոսի երկու ան-
 գամ հարկ եղաւ քաղաքը ձգել
 փախչիլ : Արպետութիւնով նո-
 րէն ձեռք ձգեց իշխանութիւնը .
 և կենցաղագիտութիւնով ալ՝ ձեռքէն
 չի հանելուն ճամբան գտաւ : Վե-
 ղացիներուն օրէնք դրաւ որ միշտ
 երկրագործութեան սպարապին , ու
 բոլոր քաղաքական գործոց մէջ բան
 խառնելու ժամանակ չունեցան :
 Այս մարդիկ՝ որ անհանդարտ
 մարդիկ էին , խելիքն իրենց գե-
 տիններուն բերքին տալով՝ կառա-
 վարութեանը վրայ մտածելու ատեն
 չունեցան : Առաջկուց վարուցան
 չեղած տեղերը վարուցան ըրին .
 տէրութե՛ս պէտքին համար տասա-
 նորդը վճարեցին . բայց հանդարտ
 կեանք վարելնին անոնց անանկ մը
 խիթարութիւն էր՝ որ տուրք տա-
 լերնին բնաւ հոգերնին չէր :

17. Այս միջոցիս Պիսիստրատոս արուեստներու և գիտութիւններու ալ յառաջագիմու թեանը հոգ կը տանէր : Հոմերոսի բանաստեղծութիւները աթենացիներուն ասիկայ ճանչցուց . քաղաքական գրքքատուն մը և ուրիշ փառաւոր շէնքեր շինեց : Հասարակութեան միտքը ասանկ նորելուք բաներով բռնեց . որով սրբաբնին ինչաւ և հեղացան , լուծը քրչիկ քրչիկ թեթեւացաւ , և ոչ թէ միայն անդգալի , այլ ախորժելի ալ եղաւ :

18. Ասանկ անդուսպ ժողովուրդ մը կառավարելու ճամբան Պիսիստրատոսի պէս գիտցող թագաւոր քիչ եղած է : Ասոր երկու տղայքը Հիպարքոս և Հիպպիաս , որ հայրերնին մեռնելէն ետքը երկուքը մէկէն թագաւորեցին , անոր տեղը անցնելու արժանաւոր մարդիկ էին : Բայց քաղաքացիներէն երկու հոգի , Արիստոգետոն և Արմոգիոս՝ Հիպարքոսը մեռցուցին : Ասոր վրայ Հիպպիաս բարկացաւ , անգթու-

Թիւն մը ձեռք առաւ . որով հասարակութեան ատելի եղաւ : Արունաւոր է ըսելով քաղաքէն փախցուցին . ժողովըդական կառավարութիւնը նորոգեցին , և ամէն մարդու սիրտի մէջ ազատութեան ոգին մտաւ :

19. Հասարակութեան սրտին մէջ այս ոգին արծարծելու քանի մը մասնաւոր բաներ ալ սլատահեցան : Արիստոգետոն՝ Հիպպիասայ հրամանաւ տանջանքի տրուելեցաւ որ իրեն ընկերները զրուցէ . այն ալ Հիպպիասայ բարեկամներուն առնունը տուաւ թէ ասոնք են իմ ընկերս : Հիպպիաս անոնք ամէնն ալ շուտ մը մեռցրնել տուաւ : Այն ատենը Արիստոգետոն ըսաւ բրունաւորին . հիմա՝ ասոնք որ մեռան , քեզնէ զատ մահուան արժանի մարդ չի մնաց : Ահէնա անուն կին մըն ալ տանջանքի տրուելեցաւ : Ասիկայ վախնալով , չըլլայ որ տանջանքի չդիմանայ և խորհրդակիցները բերան տայ , առ զայովը լեզուն խածաւ

կորեց և դուրս թքաւ . որով ուզեր ալ նէ՝ մարդու անուն տալ անհրնար էր անկէց ետքը :

20. Ապարտացիք՝ որ առաջ աթենացիներուն օգնութե հասեր էին , հիմա Հիպպիասայ օգնութի տուին աթենացւոց դէմ : Պատճառն որ՝ աթենացւոց զօրութիւնը վրայ նախանձիլ սկսեր էին : Ար վախնային , չըլլայ որ օր մը այնքան զօրանան աթենացիք , որ բոլոր յունաստանի վրայ տիրելու ձեռք զարնեն . որովհետեւ այն ատենը իրենք զօրաւոր էին , և այն զօրութիւնը ձեռքէ չի հանելու համար անիրաւութիւն ընելու հաճեցան : Հիմակուց սկսաւ այն ժամանակը՝ որ այս երկու պրզտիկ տէրութիւները անանկ հրաշալի անուն մը ստացան հին պատմութեանց մէջ : Արկուքին ալ բարքը և քաղաքական սովորութիւնը իրարմէ շատ տարբեր ըլլալով՝ միաբանութիւննին սրտանց և հաստատուն չէր կրնար ըլլալ . երկուքն ալ մեծամեծ բաներու մէջ

զարմանալի գործեր ցըցընելու աւել
ունէին :

21. Սպարտացի մարդիկ խիստ
վարմունք մը ունէին . իրենց օրէն-
քը զիրենք չարքաշ ըրած էր . և որ-
քան քաղաքացի կար նէ՝ ամէնն ալ
մէկ մէկ անուանի կտրիճ էին : Հա-
սարակութե՛ն գործերէն ու զինուո-
րութե՛նէն զատ ուրիշ գործ կամ
արուեստ չունէին : Դատաւորները
և զօրապետները բան մը ըսածներ-
նուն պէս՝ նոյնհետայն ամէնն ալ
կը հնազանդէին : Արձ ըսեմ . օ-
րէնքնին և կառավարութեան կա-
նոննին աղքատութեան մէջ մնալու
համար շինված ըլլալով՝ աւրբլելիք
չունէր : Աթենացիք ասոր հակա-
ռակը արուեստաւոր և ճարտար և
իմաստուն մարդիկ էին : Ա՛ճաւ
ռականութիւն կ'ընէին . կը հարըս-
տանային . աշխարհքիս զուարճու-
թիւնները կը վայելէին . և շատ ան-
գամ զիրենք կառավարողը մրտքեր-
նին ինկած բանը , կամ կիրքերնին
էր : Այսու ամենայնիւ աթենաւ-

ցիններն ալ փառքը ու հայրենիք-
 նին կը սիրէին, թէպէտ ամէն մարդ
 ուղած արուեստը կը բանէր, բայց
 տէրու թեան պիտոյից ժամանակը
 ամէնն ալ ղինուորու թիւն կ'ընէին :
 Արքան որ խելացի էին նէ՝ այնքան
 ալ կը սորիճու թիւն ունէին, ղիրենք
 սիրել տալու ճամբան ալ գիտէին,
 ահարկու երեւելուն ալ : Ահա
 յունաստան անմահացընող աթե-
 նացիներն ու լակեդեմոնացիները
 ասանկ մարդիկ էին : Թէ որ լակե-
 դեմոնացիք քիչ մը ելլելէկ հեղու-
 թիւն ունենային, և աթենացիք
 ալ այնքան ղեղխու թեան և փախ-
 կու թեան և անկարգու թեան չի-
 նային նէ, ասոնք երկուքը ամէն աղ-
 գի օրինակ կը բնային ըլլալ :

Գ Լ Ո Ւ Խ Դ .

Պարսիկները յունաստանի վրայ կ'ելլեն .

և Սիւրիսիներն կը յարկուեն :

1. ԱՒԻՐՈՍԻՆ հիմնած ընդարձակ
 կայսերու թեան վրայ կ'իջխէր 'Պա-

րեհ Վ շտասպեայ . որ պարսիկները
 կ'ըսեն Տարաի Աիւշդասէպ : Ասիկայ
 իր թագաւորու թիւը մինչև Աւրու
 պա հասցընել և աթենացիներէն
 ալ վրէժ առնել ուղեց . քանզի յու
 նիացիները Պարսիկներէն ապստամբ
 բեցան նէ՛ աթենացիք անոնց օգ
 նու թիւն ըրին : Յոնիացիները յու
 նաստանէ գաղթական գացեր էին .
 և այս ապստամբու թեանս ատենը
 օգնու թիւնը լակեդեմոնացիներէն
 ուղեւով պարապ ելեր էին : Աթե
 նացիները ասոնց օգնու թիւն ընե
 լու առանձին պատճառ ունէին :
 Հիպպիաս Պարսից երկիրը փախած
 ըլլալով՝ Պարսից թագաւորը անի
 կայ նորէն թագաւոր ընելու խօսք
 էր տուեր . աթենացիները՝ որ ի
 րենց ցանկացած ազատու թիւը նոր
 ձեռք ձգեր էին , Վարեհ իրենց
 թշնամի ճանչցան , և հետը ան
 հաշտ ատելու թիւն մը ունեցան :
 Իայց Յոնիա քիչ ատենէն ետքը նու
 րէն Պարսից հնազանդու թեան տա
 կը մտաւ :

2. Ասոնց հնազանդութիւնն ան-
 միջապէս ետքը՝ Վարեհ մարդ խոր-
 կեց յունաստան . որ այն տեղացի-
 ներէն հող և ջուր ուղեն : Մտել է որ՝
 յունաստանցիները կը հրաւիրէր որ
 իրեն իշխանութեան տակը մըտ-
 նեն : Յունաստանի հասարակաց
 կառավարութիւն գլուխ այն ատենը
 լակեդեմոնացւոց տէրութիւնն էր :
 Այնքան ասոնց դժուարը եկաւ
 Պարսից թագաւորին հրաւէրը որ՝
 անոր կողմէն եկող մարդիկը շուտ
 մը սպաննեցին : Աթենքի դիմացը
 կղզի մը մէջ Ագինա անուն քա-
 ղաք մը կար . անոր բնակիչները ա-
 մէնն ալ տէրութեան մատնիչ էք
 ըսելով անկէց դուրս հանեցին . ու
 բովհետեւ ըսեր էին որ՝ բռնութիւն
 դէմ կենալ չըլլար : Հատ քաղաք-
 ներ վախնալով՝ Վարեհի անձնաւ
 տուր եղան . և ամէն կողմէն ա-
 նանկ կ'երեւէր որ՝ յունաստան Պար-
 սից տէրութեան ծառայ պիտի ըլ-
 լայ . այլ իրենց տանը համար պա-
 տերազմող ազատ մարդիկ իրենց

վրայ զէնքով ելլող խել մը գերինե-
րու գէմ գնելու շատ ուժ և հը-
նարք և վարպետութի կրնան գլու-
նել :

3. Հարիւր հազարէն աւելի զօրք
ծովէն կ'անցնին յունաստան , և Ատ-
տիկէի վրայ կը քալեն : Աթենացի-
ները լակեդեմոնացիներէն օգնու-
թիւն կ'ուզեն . և լակեդեմոնացիք
պատասխան կուտան թէ՛ օրէնքնիս
և հաւատքնիս չի ներեր որ լուսնի
տասն և չորսէն առաջ զօրք դուրս
հանենք . ուստի քանի մի օր ալ ըս-
պասեցէք որ ձեզի օգնութե հաս-
նիմք : Ալադէացիները հարիւր զի-
նուոր կը խորկեն օգնութե . մէկալ
քաղաքներուն մարդիկը տեղերնուն
չարժելու անգամ չեն համարձակիր :
Ասանկ մեծ վտանգ մը աթենացիներ
ըր տեսնելով՝ գերիներուն ձեռքը
զէնք տուաւ . քանզի անոնց հետ
անուշութեամբ վարվելուն համար
անոնց հաւատարմութեանը վրայ
կըրնար յուսալ : Ասոնց տեղը ըս-
պարտացիք ըլլային նէ՛ գերիներէն

խեր տեսնելու յուսալիք չունէին . որովհետեւ թշնամի մարդու պէս բռնած էին անոնք (Գե. Կ. 19) : Աթենացիներուն զօրքը ամէնը 10,000 հոգի էին . բայց զօրքերուն քիչու թենէն աւելի գէշը՝ զօրասպետներուն շատու թիւնն էր : Տասը զօրասպետ կային , ամէնն ալ կարգաւ մէկ մէկ օր բանակին ընդհանուր զօրավարութիւն պիտի ընէր : Արար չի քաշելնին և իրարու հակառակ միտք ունենալնին ամէն բան կրնար տակն ու վրայ ընել :

4. Այս զօրասպետներըս խորհուրդ ընելու վրայ էին , արդեօք թշնամիին վրայ յարձակին , եթէ քաղաքին մէջ կենալով սպասեն որ անիկայ իրենց վրայ յարձակի : Ասպասելը աւելի ապահով կ'երեւէր : Միլիաթէս ամէնուն կարծիքին գէմ ելաւ . վրան ելլելը աւելի ազէկ է ըսաւ , և թէ որ անոնք ալ կրնկալու թէ դուրս ատեն մը յանկարծակի բռնեմք նէ՝ անշուշտ յաղթութիւնը մերը կ'ըլլայ ըսաւ .

Արիստիդէս ալ Միլդիատէսին ըսածը հաստատեց : Այլ անկէց աւելի բան մըն ալ ըրաւ : Արովհետեւ գործոյն գլուխը մէկ մարդ մը ըլլալու էր , Արիստիդէս իրեն զօրապետութիւն ընելու կարգին օրը Միլդիատէսին տուաւ : Մէկալ զօրապետներն ալ ասոր ասանկ աղնիւ և օգտակար գործոյն հետեւող եղան : Թշնամիին դիմացը ելան , Միլդիատէս գնաց մէկ աղէկ տեղ մը բըռնեց . մարդոց քիչութիւնը զինուորական գիտութիւնով և կտրիճութիւնով լեցուց , և կատարեալ յաղթութիւն մը ըրաւ Սարաթոն :

5. | ակեղեմոնացիները ճամբայ ելած էին օգնութիւն հասնելու , և թէպէտ շատ արագութիւն ճամբայ ընելով՝ իրենց տեղէն երեք օրը Սարաթոն հասան , բայց կռիւը օր մը առաջ եղեր լըմընցեր էր : Այն ատենը հասկըցան որ ինչպէս այն աւելորդապաշտ սովորութիւնը խելքի դէմ է , որովհետեւ ասոր պահ

սլանուլթե՛նէն շատ մնասներ կրրնան
ծագիլ :

6. Պարսիկներն ալ սորվեցան թէ
արիուլթիւնը ինչ բաներ կրրնայ ը-
նել եղեր , երբ որ իմաստուն խոր-
հրդով առաջ տարիլ : Շղթանե-
րով կապելու և հետերնին գերի-
տանելու հրաման առած և հաս-
տատուն մըտքերնին գրած աթե-
նացիներուն առջեւէն արտորալով
սկըսան փախչիլ : Աթենացիները ա-
սոնց շատ նաւերը բըռնեցին կամ
այրեցին : Աիւնեգիր անուն կտրիճ
մը ծովուն եղերքը կեցած նաւուն
մէկը բըռներ թող չէր տար որ եր-
թայ . ձեռքին մէկը կրտրեցին , մէ-
կալ ձեռքովը բռնեց . այն ալ կրտ-
րեցին , առ զաներով բըռնեց . մին-
չեւ որ գլխուն չի զարկին չըսպան-
նեցին նէ՛ ձեռքէն չաղատեցան :

7. Հայրենիքը ազատողներուն
վարձք՝ իրենց վաստրկած փառքը
կրրնար ըլլալ : Մեռնողներուն հա-
մար փառաւոր մահարձան շինեցին .
սպատերազմին սպտկերը մահարձա-

նին վրան քանդակեցին , և Միլդի-
ատէսի կենդանագիր պատկերն ալ
հոն՝ իբրեւ սպարապետ : Միլդի-
ատէսին ալ ստացած փառքը այս
եղաւ , անկէց զատ ինչ որ ընէին
նէ՛ ըրածին յարգը չգիտնալէր . ու
բովհետեւ յիշատակը անմահացը-
նելու ճամբան այս էր :

8. Շատ չանցաւ աթենացիներ-
բուն ապերախտութեանը համը ա-
ռաւ Միլդիատէս : Աթենացիք ա-
նանկ մարդիկ էին որ՝ մէկուն վրայ
քիչ մը կասկած ունենալնուն սկս՝
անկէց տեսած աղէկութիւննին ա-
մէնն ալ կը մոռնային : Քանի մը կը զ-
ղիի բնակիչներուն հաւատարմու-
թիւնը պակաս գըտնելով՝ աթենա-
ցիներէն քանի մը նաւ և զօրք ու-
ղեց , որ երթայ անոնք պատժէ :
Մարտս կղզին գնաց պաշարեց . բան
մը չի կրրցաւ ընել , և վերաւորե-
ցաւ ալ : Արե՛ն համար ամբաստա-
նութիւն եղաւ , և դատաւարտը-
վեցաւ որ՝ նաւերուն գնոյն հաւա-
սար տուգանք (ճէրիմէ) տայ : Չի

կրրնալ տալուն համար բանտը դըր-
վեցաւ, և բանտին մէջը մեռաւ :
Տղան Աիմոն անուն՝ հայրը թաղե-
լու հրաման առնելու համար այն
տասկը քարեկամներէն փոխ առնե-
լով վճարեց : Եւ այց թէ որ Միլդի-
ատէս չըլլար նէ՛ Վճեմք ինչ կ'ըլ-
լար այն ատենը : Վճեմայիք Միլդի-
ատէսի արձանը մահարձանին վրայ
չինելով՝ անիկայ փառաւորեցին .
Միլդիատէս բանտին մէջ թողլով
որ մեռնի՝ կարծեցին որ իրենց ա-
պերախտու թեան յիշատակն ալ հե-
տը կը մեռնի . բայց հիմա՛ որ սատ-
մու թիներուն մէջ այս անիրաւու-
թիւնը կը կարդամք նէ՛ կանգնած
արձաննին ո՞ւր մնաց : Թուղթը քա-
րի չափ չի դիմանար, բայց թուղ-
թերուն սրահած յիշատակը՝ քարե-
րուն վրայ քանդակվածէն աւելի կը
դիմանայ, որովհետեւ շատ ձեռք
կ'անցնի :

Արիւնքիւնքս Է թե՛ Բարձրագոյն : Քերտուս
 Յոնաստանի վայ կ'ելլէ :

1. ՍԻՆՏԻՍՏԵՍԷՍԷՆ Եւրոպր կառաւ
 վարու թիւնը դարձրնող երկու մեծ
 մարդ երեւան ելան : Մէկն էր Ա
 ըխտիդէս . անանկ անկեղծ մարդ՝
 որ մէկն ալ իրեն գէշ չէր զրուցեր .
 անիրաւու թէց ամէն տեսակին ալ
 թշնամի . կատարեալ առաքինի . ա
 նանկ որ՝ օր մը Բարձրօի մէջ Աս
 քիւղէս բանաստեղծին մէկ տուն
 ոտանաւորը կարգացվեցաւ նէ՛ որ
 կ'ըսէր , արդար երեւնալ չուզեր՝
 ըլլալ կ'ուզէ . ամէնն ալ աչվնին
 դարձուցին ասոր նայեցան : Մէկալն
 էր թե՛ միտդոկղէս . որ շատ հանճա
 ըրեղ՝ բայց շատ ալ փառասէր մարդ
 էր . կրակոտ Է յանդուգն . մէկ բան
 մը ձեռք ձգել ուզէր նէ՛ միջոցնե
 թուն աղէկին գէշին չէր նայեր . իր
 հայրենիքին սպաշտական ալ կրնար
 ըլլալ՝ բռնաւոր ալ :

2. Արուհեան քաղաքացիք կողմ
 կողմ բաժնուներ էին իշխանութիւն
 ձեռք ձգելու համար, Արիստիդէս
 տեսնալով որ ազնուականները աւել
 լի խելացի են, ինքն ալ անոնց կու
 սակից եղած էր: Պեմիսդոկոէսին
 աւելի աղէկ եկեր էր հասարակուե
 կուսակից ըլլալ. քանզի անոնք ա
 նուշքերնելով ուղած կողմը կըր
 նար դարձնել: Այց ասանկ ակնա
 ծեղի հակառակորդ մը ունենալով
 ինքնիշխան տէր ըլլալու յոյս չու
 նէր, անիկայ կասկածելի ընելու հա
 մար վարպետութիւն բանեցուց:
 Խեցեկոյտ վճիռ ուղեց Արիստիդէ
 սի դէմ (պէս Ասան. ք. Վ. Գ. 19):

3. Հասարակութիւն ժողովրդած
 ատենը մէկ գեղացի մը՝ որ Արիս
 տիդէսը չէր ճանչնար, և գիր գրել
 ալ չէր գիտեր, Արիստիդէսին իրեն
 աղաչեց որ գրէ՝ թէ Արիստիդէսը
 քրջիլի: Ամէն մարդ իր կարծիքը մէկ
 խեցեմորթի կեղեւի մը վրայ կը
 գրէր և անանկ կուտար: Արիստի
 դէս ասոր հարցուց թէ այն մարդը

բեղի թնչ բրած ունի : Բան բրած
 չունի ըսաւ մարդը . և զինքն ալ չեմ
 ճանչնար բայց ուր երթամ նէ ար-
 դար Արիստիդէս կը լըսեմ . սիրտս
 նեղանալէն է որ ասոր բըշվիլը կ'ու-
 զեմ : Արիստիդէս գրեց իր անունը
 այն մարդուն համար : Բըշվելու ա-
 տենը աղօթք ըրաւ , և ըսաւ . ասու-
 ուած չընէ որ աթենացիք Արիստի-
 դէսի կարօտ ըլլան , և բրածներնուն
 զղջան : Բայց ասանկ մարդ մը աքսու-
 րելուն չի զղջալ և ասանկ մարդու
 մը կարօտ չըլլալ հնա՞ր է մի :

4. Թեմիսդոկդէս իրանիրաւ ուէր
 նախատինքը մեծ աղէկու թիներով
 և խոհեմու թեամբ գոցեց : Արանին
 գալու մնասը առաջկուց կը հասկը-
 նար . խելքը հասած էր որ Աթէնքի
 մեծ զօրութիւնը և փրկութիւնը
 ծովային զօրութեան կողմէն պիտի
 ըլլայ , որ մինչեւ այն ատենը մար-
 դու հոգ չէր եղեր : Հաճեցոյց ա-
 թենացիները , որ իրենց արծաթի
 հանքերուն բերքը ասոր համար պա-
 հեն , որ մինչեւ այն ատեն քաղաքա-

ցիբ իրենց մէջ կը բաժնէին : Ասով
հարիւր մանր նաւ շինեցին այն ժա-
մանակին սովորութիւնը, որ կառավա-
րութեանը շատ ուժ տուաւ :

5. Վարեհ թագաւորը մէկ մըն
ալ յունաստանի վրայ ելել կը մը-
տածէր, բայց մեռաւ . միտքը դը-
րածը կատարելու ժամանակ չունե-
ցաւ : Անոր տեղը անցաւ տղան
Քսերքսէս . բարկացող և ամբար-
տաւան մարդ, որ շատ մեծ պատ-
րաստութիւն տեսաւ առաջին յաղ-
թութեանը վրէժը առնելու : Այրու
դուռոս պատմիչին ըսածին նայիմք նէ՝
Պարսից զօրքին համբանքը քանի մը
միլիօնի կը հասնէր : Օ՞րքը Հել-
լեսպոնտոսէն անցունելու համար
նաւակներու վրայ կամուրջ շինեց .
բայց յանկարծակի մէկ սաստիկ մըր-
րիկ մը եկաւ, քակեց տարաըղնեց :
Քսերքսէս նեղանալով ծովը ծեծել
տուաւ . ասոր համար խենթ է ե-
ղեր պիտի ըսես . բայց թէ որ դոր-
ծը մէկ դի ձգես, միտքը նայիս նէ,
հիմա ալ ասանկ խենթ խիստ շատ

կը գտնեաս : Աստուծոյ շինողները մահուան դատապարտեց : Աստուծոյ մէկ գիէն մէկազ գին գիւրաւ անցընելու համար Աթոս լեռը ցամաքէն զատելու և նեղուց մը բանալու շատ աշխատեցաւ : Ասանկ պատմութիւնները գրեթէ միշտ սուտ բաներ են , և մեզի կը սորվեցընեն որ Յոյն պատմիչներուն շատ հաւատարմութիւն չընեմք . քանզի պատմաճնուն շիտակը չեն նայիր , կ'ուզեն որ կարգացողին զարմանք գայ : Այս պակասութիւնս հին պատմիչները շատը ունին , ինչ ազգ կ'ըլլան նէ ըլլան :

6. Այն օրերը լակեդեմոնացիք իրենց Աեմարատէս անուն թագաւորը աքսորեր էին , այն ալ գացեր Պարսից թագաւորին պալատը կը կենար : Քսերքսէս ասոր հարցուց թէ Յոյները իրեն գէմ գնելով իրենց ազատուէր պաշտպան կենալու կը համարձակին մի : Աեմարատէս մասնաւորապէս լակեդեմոնացուոց համար պատասխան տուաւ , ազատ են , բայց օրէնքը վրանին կ'իշխէ , և այս

օրէնքս է որ անոնց կը հրամայէ , որ
կամ թշնամիին յաղթեն՝ կամ մեռ-
նին :

7. Պարսից թագաւորին այս ա-
հագին պատրաստութիւները՝ Վեմարա-
տէս իմացուց աթենացիներուն և
լակեդեմոնացիներուն : Շուտ մը
ազգին իմաց տուին ազգապետները
որ ղէնք առնեն : Վախ սեպէ՛ , չի քա-
շել սեպէ՛ , դաշնակից տէրութիւներուն
չատրետ քաշվեցան . բայց մնացած-
ները կտրիճու թեամբ պատերազմի
պատրաստութիւն կը տեսնէին : Ա-
թենացիները իրենց զօրապետ թե-
միսդոկոէսը ընտրեցին . որ Վարա-
թոնի պատերազմին վըայ Միլդիա-
տէսին փառքին նախանձելով այնքան
կսրանցուցեր էր հանգստութիւնը ,
որ գիշերներն ալ քունը չէր տա-
ներ : Այլ հարցընողներուն պատաս-
խան կուտար . Միլդիատէսին ըրած
յաղթութենէն մնացած նշանները
հանգստութիւնս գլխէս առին :

8. Աւրիշ մըն ալ կար որ այս պաշ-
տօնիս աչք զարկեր էր . թէպէտ ա-

սանկ գործ՝ անոր բանը չէր . սար-
 գեւներ և ընծայներ տալով հաճե-
 ցուց որ այն բանէն ետ կենայ : Հա-
 սարակաց օգուտն ալ անանկ կը սա-
 հանջէր որ այս պաշտօնս անոր տրլի .
 և ինքն ալ փորձով ցրցուց որ՝ այս
 բանիս փափաքելը մէկ ճշմարիտ
 հայրենասիրութեան մը գործ էր .
 քանզի իբրեւ իրեն հակառակորդ
 բռնած Արիստիդէսին աքսորէն
 դառնալը ուզեց . որովհետեւ ա-
 սանկ վտանգաւոր ժամանակներ այն
 մարդը պէտք էր : Նաւերուն թէ-
 պէտ երեք մասին երկուքը աթենա-
 ցիներուն էր , բայց նաւական զօ-
 րութեանց զօրապետ ըլլալը լակե-
 դեմոնացիք կ'ուզէին : Նաշնակից-
 ներն ալ անանկ արժանի տեսան որ
 ծովու վրայ սրատերազմին հրամայողը
 լակեդեմոնացի ըլլայ . վիճակ ձգե-
 ցին , և վիճակը Նշւրիպիադէս անուն
 մէկի մը ելաւ , որ այս բանիս ամե-
 նեւին յարմարութի չունէր : Թե-
 միսդոկդէս կռիւ չի հանելու հա-
 մար ամէն բանի յանձնառու եղաւ .

բայց այս ալ ըսաւ աթենացիներուն, թէ որ պէտքերն պէս վարվիք նէ՛ ամէն մեծութիւն և հրաման ձեր ձեռքը կ'անցնի. ծովու և ցամաքի վրայ հրամայող դուք կ'ըլլաք :

9. Վերջապէս Քսերքսէս թերմոսլիդէ կամ Ծերմագրունք ըսված տեղը հասաւ. լեռներուն մէջ տեղէն նեղ ճամբայ մըն էր ասիկայ. որ յունաստան մըտնելու համար ասկէց անցնելու էր : Վահեդեմոնացւոց թագաւորը Վէոնիդաս չորս հազար մարդով այս ճամբաս կը սլահէր : Քսերքսէս ասոր մէկը խրկեց ըսելու որ զէնքերը թող տայ : Վէոնիդաս ըսաւ. թող ինք գայ առնէ : Պարսից զօրքը հետը ծեծկըվեցան և յաղթըվեցան. բայց տեղացիներէն մէկը մէկ ճամբայ մը ցըցուց, որ մարդ չի տեսած կըրնային անկէց լեռանը վրայ ելլել : Անկէց ետքը Վէոնիդասին կեցած տեղը պաշտպանելու տեղ չէր. բայց ինքը միտքը դրաւ որ հոն կենայ ու մեռնի : Հետը գտնելված զօրքերուն մէջէն

Ք. Ա.
480

սպարտացի չեղողները ետ խըրկեց .
ինքը հոն մնաց ամէնը երեք հարիւր
սպարտացիով . թշնամիներուն վրայ
յարձակեցաւ և շատ մարդ ջարդեց :
Իսկ թշնամեաց շատու թեր դէմ
չի կրնալով կենալ՝ ինքն ալ մեռաւ ,
քովի զօրքն ալ . միայն մէկ հոգի մը
ողջ մնաց , եղածին լուրը տանելու
համար :

10. Այս լուրը տանողը Սպարտա
արհամարհեցին պատերազմէ փա-
խած մարդու մը պէս . մարդ երե-
սը չէր նայեր . մինչեւ որ ետքը իր
քաջութեան գործքովը այն նախա-
տինքը վրայէն նետեց : Անկէց ետ-
քը թերմոպիղէ սա արձանագիրըս
դրուեցաւ , որ զարմանալի պարզու-
թեանը համար կ'արժէ որ հոս դը-
նեմք : « Ո՛վ ճամբորդ . գնա՛ Վակե-
դեմոն , ըսէ՛ , որ մե՛նք իրեն օրինա-
ցը հնազանդելու համար մեռանք » :

11. Բսերքսէս այն նեղ կիրճէն
անցած ատենը իրեն զօրքէն քսան
հազար հոգի կորսնցուց : Ասոր
վրայ կատղելով՝ դէմն ելող մար-

դիկը ջարդելով, շէնքերուս կրակ
տալով երեւով առաջ կերթար : Ար
հարցընէր որ Յոյները ինչ կ'ընեն .
անանկ կը կարծէր որ յուսահատած
են . սրտերնին կոտրած է : Բայց այս
կարծիքս հաստատելու լուր մը չէր
առնէր : Ասեց որ Ալիմպիական խա
ղերուն ստենն էր . ամէնն ալ այն
հանդէսին ներկայ էին . և իրարմէ
աւելի քաջութիւն ցըցընելու կ'աչ
խատէին . առնելու վարձքերնին ալ
ձիթենի ճիւղ մըն էր : Հետի մեծ
նախարարներուն մէկը ըսաւ . այդ
ինչ մարդիկ են , որ պատիւ առնե
լու համար կը կըռուին :

12. Բայց Աթէնք կործանման
մօտեցեր էր : Պեղոպոննեսոսի Ժողո
վուրդը իրմէ զատվէր՝ իրենց Արրն
թոսի կիրճը պահելու գացեր էին :
Սէկ պատգամ մըն ալ իրեն իմա
ցուցեր էր որ՝ աթենացիք կը փրո
կըվին , երբ որ փայտեղէն պատե
րու մէջ մըտնեն : Ա՛րեւելի որ այս
պատգամս Թեմիսդոկղէս զըուցել
տուաւ Ապողոնի քրմուհիին . և ա

սիկայ առ ի թ բըռնելով՝ այսպէս
մէկ սիրտ կոտորող բան մը իբրեւ
հարկաւոր ընդունել տուաւ ամթե-
նացիներուն :

13. Այլ որովհետեւ ատանկ ան-
համար զօրքի չէին կրնար դէմ դը-
նել, անոնց կամքը հաճեցոյց որ՝
պատգամին ըսած փայտէ պատը ի-
րենց նաւերն են. և փրկու թիւն
նին այս նաւերովս կրնայ ըլլալ. հոն
պատասպարելու են, և բոլոր ընտա-
նիքով նաւերուն մէջ մըտնելը՝ աստ-
ուածներուն հրամանն է : Արօնք-
նին անոնք բըռներ իրենց տանը և
մեհեաններուն և մեռելներուն գե-
րեղմաններուն հետ կապեր էր, և
Թեմիսդոկդէս թէ որ կրօնքի կող-
մէն ատանկ փաստ մը անոնց չի ցը-
ցընէր նէ՝ չէր կրնար անոնք այն տե-
ղերէն զատել : Ա՛ թէնք քաղաքը Ա-
թենաս աստուածու հիին պաշտպա-
նու թեանը յանձնեցին. հրաման ը-
րին որ զինուորական ծառայու թի
ընելու ուժը օգտող մարդիկ ամէն-
քրն ալ նաւերը մըտնեն, և ամէն

մէկը մասնաւորապէս իր ընտանիքը
 ապահովեցնելու ճամբան թող մըտ
 մըտայ : Արնիկ մարդոց և տղոց և
 ծերերուն շատերը Տրեզէն քաղաքի
 բնակիչները աղնուական հիւրասի
 լու թեամբ ներս առին : Ամանք ոտք
 կոխեցին , Աթէնքէն բնաւ դուրս
 չեմք ելլեր ըսին , և բերդը մըտան
 թշնամւոյն հետ անկէց կռուեցան
 մինչեւ մեռան : Քսերքսէս բերդը
 այրեց . և մէկ ուրախութիւն մը ի
 մացաւ սրտին մէջ . որպէս թէ ա
 թենացիներէն վրէժը առաւ . բայց
 շատ ատեն չանցաւ՝ որ այն ուրա
 խութիւնը քրթէն բերնէն եկաւ :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Պարսիկները ասէն փեշ կը յարկը վէն . և
 յոռնասփռեան տորս կը վաճառվին :

1. ԹԵՐՄՈՊՈՒՂԵՒԻ կռիւին օրը նա
 լու կռիւ մըն ալ Ալեքիա կղզիին
 Արտեմիսիոն հրուանդանին առա
 ջը եղաւ : Թէպէտ երկու կողմէն

ալ մէկ որոշակի յաղթութիւն մը
չեղաւ , բայց Յոյները իմացան որ
կրնան թշնամիին յաղթել . և ուժն
ու ճարտարութիւնը բազմութեան
տեղ կը բըռնէ : Ասոր փորձը ուրիշ
օր մը ըրին , որ աւելի երևելի եղաւ :

2. Պատերազմական նաւերը Սա-
ղամինա կղզիին նեղուցը ժողովրդած
կ'ըսպասէին . ծովապետն էր Ալ-
րիբիատէս , անպիտան մարդ մը ,
ազգաւ լակեդեմոնացի : Ա'ուղէր
հարկաւորապէս Աորնթոսի ծովը
մտնել , որ Պեղոպոննէսոս մըտնըվե-
լու կիրճը գոցելու կարող ըլլայ :
Թէմիսդոկղէս կը պընդէր որ հարկ
է յիշեալ նեղուցը մնալ . քանզի թըշ-
նամին՝ որ շատ նաւ ունէր , այն
նեղ տեղը չէր կրնար ուղածին պէս
խաղալ : Ա' էճը եվելցաւ . Ալրիբի-
ատէս այնքան բարկացաւ՝ որ գա-
ւազանը վերցուց Թէմիսդոկղէսին
զարնելու եղաւ : Թէմիսդոկղէս ը-
սաւ . զարկ , բայց խօսք մըտիկ ըրէ :
Այս արիական խօսքը մարդը ամըշ-
ցուց , ուստի հաճեցաւ որ ասանկ

խելացի և մոքի տէր մարդու մը
խօսքովն երթայ : թէ որ թէմիս-
դոկղէս այն ատենը նեղանար , և իր
սրտիւր սրահելու համար վրէժ-
խնդրու թիւն բողոքէր նէ՝ բանը
ինչի կ'երթար : Պատիւը աւելի կը
շատնար խելքով և աղէկ գործ տես-
նելով ըրած վրէժխնդրու թեանը ,
բայց կարճամիտ մարդոց խելքը ա-
նոր ալ չի հասնիր . թէ ասանկ վը-
րէժխնդրու թիւն կըլլայ մի :

3. Թէմիսդոկղէս Պարսիկները
դիւրու թիւ որոգայթը ձգելու հա-
մար՝ վարպետու թիւ մը գաղտնիիպէս
լուր հասցուց Քսերքսէսին ական-
ջը , թէ Վաղամինացի նեղուցը սի-
տի ձգեն , ու փախչին երթան : Այ-
լը տանողը խելք ալ սորվեցուց ըսե-
լով թէ՝ անոնք զարնելու և բոլոր
նաւերնին ոչնչացընելու մէկ առիթ
(Ֆրոսանտ) մըն է ասիկայ . և այս
առիթս անցնի նէ՝ ծովային ու ժեր-
նին չես կրնար կտորել : Քսերքսէս
չուտ մը սրտերազմելու հրաման
հանեց : Այն օրերը Արիստիդէս ալ

եկեր թեմիսդ ոկղէսին քով հասեր էր . և անոր հրամանին տակը զին ուորելու կամք ցըցընելով՝ հետը մտերմութիւն մը վաստրկեր էր : Հայրենիքը սիրող մարդուն համար՝ այս երկու հատ իրարու հակառակ մարդոց միաբանութիւնը շատ մեծ օրինակ է :

4. Առանց զօրապետի անունն ունենալու թեմիսդ ոկղէս՝ զօրապետութեան գործը կը կատարէր . և Սաղամինայի կռիւին ատենը հրաշալի քաջութիւններ ըրաւ : Հովին փրչվածքէն ալ կըրցաւ իրեն օգուտ քաղել . իր նաւերը անանկ մը շարեց որ՝ անոնց շառվորութենէն վախնալու տեղ չունեցաւ : Պարսից նաւերը ծանր էին . նեղուցին մէջ դժուար շարժելով՝ Յունաց նաւերուն շարժմունքին չէին կըրնար դէմ դնել : Յոյներուն նաւերը չորս հարիւրի չէր հասներ . բայց անանկով ալ մէկ նաւատորմիդ մը ցրուեցին՝ որ երկու հազարէն աւելի նաւունէր : Այս պատերազմիս մէջ Քը-

սեբբսէս ինքն ալ գըտնըվելու էր ,
բայց աւելի ապահով եկաւ իրեն
մէկ բարձր տեղ մը կենալ և անկէց
դիտել : Աղիկառնացւոց թագուհին
Արտեմիսիա՝ նաւուն մէջն էր , և
քաջութիւն պատերազմի կը խառնը-
վէր : Մտել է որ՝ յունաստանի վրայ
տիրելու ելլող Պարսից ամբարտա-
ւան թագաւորը պատերազմի մէջ
մէկ կնոջ մը չափ ալ ուժ չունի ե-
ղեր : Ասոր համար այն օրը ըսկեցաւ
որ՝ այս պատերազմիս մէջ կրնիկ մար-
դիկ երիկ մարդոց պէս՝ և երիկ մար-
դիկ կրնիկ մարդոց պէս եղան :

5. Քսեբբսէս՝ որուն մեծ թա-
գաւոր ըսկիլը իրեն աւելի խայտա-
ռակութիւն էր , կեցած տեղէն փա-
խաւ : Ալ վախնալով , չըլլայ որ նա-
ւակներու վրայ շինել տուած կա-
մուրջը քակվի , որ թեմիսդոկդէս յա-
տուկ դիտմամբ այսպէս ձայն մը
հրատարակեր էր , արտորաց Ասիայի
կողմը անցաւ . պատերազմը գլուխ
հանելու համար Վարդոնիոսին ե-
րեք հարիւր հազար մարդ ձգելով :

6. Ասիկայ աշխատեցաւ որ Հոյնները իրարմէ քակէ, և աթենացիները իր կողմը շահի: Արիատիդէս՝ որ այն ատենը գլխաւոր Արքոն էր զած էր, արհամարհու թեամբ մը ասոր հրաւէրը մերժեց, և Պարսից հետ բարեկամութիւն ընեմբ ըսողներուն դէմ նշովք կարդաց: Վաղաքացիներէն մէկը՝ Թշնամիին կողմէն երկրորդ անգամ խըրկըված պատգամաւորին ըսելու խօսքը մէկ մը մըտիկ ընեմբ ըսելուն համար նոյն տեղը քարկոծ ընելով մեռցուցին: Աննայք անգամ բարկութենէն կրակ կըտրելով՝ այս մարդոյս կինն ու տղաքն ալ քարկոծեցին:

7. Սարգոնիոս չի կրցած հաճեցուցած մարդիկը բռնութեամբ հնազանդեցրնելու մտքով վրանին քալեց: Աթենացիները առաջին անգամին պէս քաղաքնին պարսկեցին և Սողամինա քաջվեցան: Ալկեդեմոնացիները Պեղոպոննեսոսի երկրին պաշտպանութիւն ընելը աւելի աղէկ սեպելով՝ օգնութեան

չեկան : Ասիկայ թշնամու թեան և իրարմէ գանկտելու պատճառ մը կըրնալ ըլլալէքը լակեդեմոնացիք հասկընալով՝ հինգ հազար լակեդեմոնացի ալ իրենք խըրկեցին . ամէն մէկուն հետ եօթնական զինեալ գերի դնելով : Աշնակիցները ամէնը մէկ տեղ գալով վաթսուէն հազար հոգի մը եղան . աթենացի ամէնը ութը հազար հոգի կար մէջերնին : Ասոնք պատերազմի մէջ աւելի կըտրիճ ըլլալու և քաջութի պատերազմելու էին . քանզի Սարդոնիոսին միտքը՝ գալ և Աթէնք քաղաքին մնացած տեղերը փրկընելէր :

8. Ահուլտիա դաշտային և չորս Ք. Ա. 479
 դին բաց մէկ երկիր մը ըլլալով մեծ բանակներու և զօրաց բազմութե շատ աղէկ կուգար . Վարսիկները հոն գացին : Յունաց զօրացը սպասեցին : Այլ խելացի զօրապետ մը Սարդոնիոսի խրատ տուաւ որ պատերազմի ձեռք չի զարնէ : Վարդոնիոս խօսքը մըտիկ չըրաւ . Ալադէա

տեղը պատերազմեցաւ , և պատե-
րազմին մէջը մեռաւ , շատ զօրք կոր-
սընցընելէն ետքը :

9. Այն ատենը Յունաց ընդհա-
նուր հրամանատար էր Պաւսանիաս ,
որ լակեդեմոնացւոց թագաւորնե-
րուն մէկը տակաւին տղայ ըլլալով
անոր խնամակալ էր : Յաղթուածե-
նէն քանի մը օր ետքը մէկ հաց-
կերոյթ մը պատրաստեց ասիացիներ
ըուն մէջ սովորական եղած պեր-
ճուածիւնով , և ուրիշ հացկերոյթ
մըն ալ իրենց հին սովորութեանը
համեմատ : Ալ ասոնց երկուքին
տարբերութեանը վրայ խորհրդա-
ծելով ըսաւ , ասանկ կերակուրներ
ուտելու սորվող Պարսիկներունը
ինչ խենթութիւն է , որ ամէն բա-
նէ իրենք զիրենք զրկել գիտցող
մարդոց հետ կը պատերազմին :

10. Յունաց , և մանաւանդ լա-
կեդեմոնացւոց կերակուրի կողմանէ
քիչով բաւականանալը անշուշտ ա-
նոնց մէկ աւելի զօրութի մը կու-
տար իրենց փափկութե մէջ թուլ-

ցած թշնամիներուն դէմ : Բայց
 կրնամք ալ ըսել՝ որ ասիկայ իրենց
 գործը առաջ երթալուն պատճառ-
 ներուն մէջ պրզտիկ բան մըն է :
 Ասկէց աւելի զօրաւոր պատճառ-
 ներ կային , զինուորական կրթուե-
 վարժըված ըլլալնին , բարեկարգուի-
 նին , կտրիճուիւնին , աղատութիւր ,
 ազնիւ փառասիրութիւնը , և զօ-
 րապետներուն վարպետութիւնը :
 Ասոնցմէ զատ այն ալ կար որ՝ Յոյնք
 իրենց երկրին մէջ կը պատերազմե-
 ին . շատ աւելի զօրաւոր պատճառ-
 ներ ունէին դէմ դնելու , և թըշ-
 նամիները անոնք իրենց իշխանու-
 թեան տակը առնելէն մեծ օգուտ
 մը չի տեսնելով՝ այն սրտոտութիւր
 չունէին : Պարսիկները բարբարոս
 ազգերու հետ պատերազմելով շատ
 անգամ յաղթող գըտնըված էին ,
 բայց յաղթըվածնին ալ շատ էր . ա-
 նոնց դէմ պատերազմելով յաղթը-
 վող մարդիկ ասանկ կրտրիճ հասա-
 րակապետութիւններու դէմ ինչ-
 պէս կրնային պատերազմիլ և յաղ-

Թեւ : Ասիայի ծովերը Սիւկաղէ քաղաքին առաջն ալ ծովու վրայ յաղթը վեցան :

11. Քսերքսէս Սարգիկէ հասած էր . անկէց ալ փախաւ : Բայց չեւրած հրամանն ըրաւ որ Յունաց դաղթականներուն կռատունները այրեն : Ամէն ըրածներովը այս թագաւորըս հասարակութեան աչքէն կ'իյնար և ատելի կ'ըլլար : Ասիկայ յաղթողներուն ալ վեհանձնութիւն ամէն կողմէն յայտնի կ'երեւէր : Եւրոպայի պատերազմէն ետքը որովհետեւ յաղթութեան պատիւը հրապարակաւ պիտի տրուէր , ասոր վրայ լակեդեմոնացւոց և աթենացւոց մէջ վէճ ելաւ . և այս վէճիս ծայրէն գէշ բաներ կրնար հետեւիլ : Սուտի խելացի մարդիկ միջին ճամբայմը գտան՝ որ այս երկու ազգս իրարու ատելութիւն մը չընեն . և պատիւը վճռեցին որ բլադէացիներուն տրուի : Պաւսանիաս և Թեմիսդոկղէս , մէկը լակեդեմոնացւոց և մէկալը աթենացւոց զօրապետ ,

երկուքն ալ խելացիութիւնն ըրին ,
 որ ասոր հաճեցան : Տեմիսդոկղէսի
 փառքը Սաղամինայի պատերազմովը
 այն աստիճանը հասեր էր որ , երբ
 որ Աղիմսիական խաղերուն գնաց ,
 այն անհամար բազմութիւնը ասի-
 կայ տեսնելնուն պէս ոտքի վրայ ե-
 լան : Ինքն ալ այն ատենը վկայեց ,
 որ այս պատիւս իրեն ուղեւոր միտ-
 քը եկած պատիւներուն ամէնէն
 գերագոյնն էր : Ղշմարիտ կըտրիճ-
 ներուն վարձք՝ միայն պատիւը հե-
 րիք է :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Լ չիտեմնացոց եւ Արեւնացոց իբար
 չէ ասլէլին :

Արեւիտեմի իշտան-իտնը :

1. ՅՈՅՆԵՐԸ լլման այն ատենը որ
 իրենց միաբանութենէն տեսած օգ-
 տին վրայ նայելով պիտի խընդային ,
 մէկ նախանձ մը , մէկ իրար չիքա-
 շել մը մտաւ մէջերնին : Աթե-

Նացիները իրենց քաղաքը նորոգել
 և ուժովընենէ կ'ուղէին . և ասկէց
 ալ արդար և հարկաւոր բան չէր
 կրնար ըլլալ : Իայց լակեդեմոնա-
 ցիները ասոնց ծովային զօրութեան
 եվէնալը աչվընին չի վերցընելով ,
 և վախնալով ալ , չըլլայ թէ յունաս-
 տանի ընդհանուր հրամանատարու-
 թիւնը անոնց ձեռքը անցնի , այս
 բանիս արդեւքներ հանեցին : Սուտ
 պատճառանքներ գտան . որպէս թէ
 ասիկայ հասարակաց օգտին կը դըս-
 չի . Պեղոպոննեսոսէն դուրս պէտք
 չէ որ զօրաւոր բերդ գտնըվի , գու-
 ցէ թշնամիները անիկայ կ'առնեն և
 իրենց զէնք պահելու տեղ կ'ընեն
 նորէն յունաստանի վրայ ծեծ բա-
 ցած ատենը :

2. Թէմիսդոկղէս ասոնց անի-
 րաւութեանը դէմ խարդախութի
 բանեցուց , խօսակցութեան մտաւ
 լակեդեմոնացւոց հետը . կ'ըլլայ
 չըլլարի վրայ խօսքը ինք մէկ կող-
 մէն կ'երկընցունէր , մէկ կողմէն ալ
 արտօրալով օր առաջ լըմընցընելու

մտքով Աթէնքի պարիսպը կը շինե-
 ին : Ահեղեմոնացիները լսեցին և
 գանկտեցան . թեմիսդոկղէս սուտ
 է ըսաւ . և առաջարկեց որ բանին
 ստոյգը հասկընալու համար բուն
 այն տեղ մարդ խըրկըվի : Աթենա-
 ցիներուն ալ գաղտուկ գիր խըր-
 կեց , որ այս բանիս համար եկող
 մարդիկը իբրեւ պատանդ (ուհիին)
 վար դնեն ասպահովութե համար :
 Արբ որ քաղաքը ինքը ղինք պաշտ
 պանելու չափ զօրացաւ թեմիս-
 դոկղէս ամէն բան յայտնեց . աթե-
 նացիք իրենց իրաւունքը բանեցու-
 ցին . անոր դըրսէն մարդ չի կըր-
 նար խառնըվիլ ըսաւ : Այց մըտ
 քերնին ալ շիտակ ըլլալուն վրայ
 մտքերնին հանդարտեցոյց . որ այն
 քան աղէկ բաներ ընելէն ետքը ու-
 ըրիչներուն վնաս հասցընելու միտք
 չէին կրնար ունենալ : Ալ լակե-
 դեմոնացւոց ալ չէր իյնար որ իրենց
 դաշնակիցներուն տկարութիւնովը
 իրենք զօրանան : Մրաժ խարդա-
 խութիւնն ալ համարձակ կը գու-

վեր . հայրենեաց պաշտպանութե
 վրայ ամէն բան կրնայ ըլլալ կ'ըսէր :
 Այս վերջին բանիս վրայօք թեմիս
 գոկղէս գէշ կը խորհէր . և միտքը
 շիտկելու համար քրիստոնէական
 բարոյականի ալ կարօտ չէր : Իր տե-
 ղը Արիստիդէս ըլլար նէ՛ թէպէտ
 նոյն բանը առաջ կը տանէր , բայց
 մէկ դիէն բանը ստուգելու համար
 մարդ խրկել տալ , և մէկալ դիէն
 անոնք իբրեւ սլատանդ վար դնել
 տալ . ասիկայ չէր ընէր : Ահեղե-
 մանացիները թեմիսգոկղէսին ըրած
 յանդիմանութիւնները լսելու ար-
 ժանի էին . տրամեւնին չիմացուցին ,
 բայց սրտերնուն մէջ ատելութեան
 սերմը մէկ մըն ալ զօրացաւ :

3. Թեմիսգոկղէս իր բըռնած
 կանոնին հետեւելով՝ որ հայրե-
 նեաց օգտին համար բըռնըվելու
 միջոցին աղէկը գէշը չի նայվիր . մեծ
 անիրաւութեան մը մէջ քիչ մնաց
 կ'իյնար կոր : Միտքը դրած էր որ
 Աթէնք յունաստանի հասարակա-
 պետութիւններուն ամէնէն աւե-

լի զօրաւոր ընէ : Ասոր համար շատ
 մեծագործութիւններ ըրաւ , ինչ-
 պէս էր Պիրէոն ըսլած նաւահան-
 գըստին շինվելը , նաւատորմիղը տա-
 ըին քսանական նաւ եվելցընելու
 դրութիւնը , գալու յանձնառու ե-
 ղող արուեստաւորներուն և նաւա-
 վարներուն տեսակ տեսակ ազատու-
 թիւններ տալով անոնք իր քաղաքը
 քաշելը : Այց ուրիշ ճամբայ մըն
 ալ մտածեց , որ աղէկ քաղաքակա-
 նութեան վայլելու բան չէր : Ա-
 թենացիներուն ձեռքը ծովու վրայ
 ինքնիշխան զօրութիւնը ասլահով-
 ցընելու համար ուղեց դաշնակից
 տէրութիւններուն նաւերը ամէնն
 ալ բռնկցընել : Հասարակութեան
 ըսաւ որ մէկ բան մը մտածեր եմ ,
 որ ամենահարկաւոր մէկ բան մըն
 է , բայց ամէնուդ չեմ կրնար յայտ-
 նել , ուստի ձեր կողմէն հաւատա-
 ըիմ մէկը ընտրեցէք ինձի ցըցու-
 ցէք որ անոր հետ գաղտնի խորհրդ-
 դակցիմ : Ամէնը մէկ բերան Արիս-
 տիդէսը ցըցուցին իրեն , թեմիսդ ոկ

դէս միտքը անոր հասկըցուց : Արիստիդէս առաքինու թեան կուսակից ըլլալով հասարակութեան ըսաւ . թեմիսդ ոկդէսին խորհածը յիրաւի օգտակար բան է , բայց անիրաւու թիւն է : Ամէնը մէկ բերան՝ անանկ է նէ այդ չըլլար , չեմք ընդունիր ըսին : Բայց աղէկ քաղաքականութեան կանոնով խորհիմք նէկը գըտնեմք որ՝ ընդունէին ալ նէ մեծ բան մը չէին վաստըկեր : Աթենացիք իրենց յարգը կը կորսընցընէին . և բոլոր դաշնակիցները իրենց թշնամի կ'ընէին : Անիրաւ բանը ճշմարիտ օգուտ չունենար , ունեցածը լոկ երեւոյթ մըն է :

4. Աթէնք միայն իրեն արժանաւորութեամբը և քանի մը մարդոց յարգովը մեծ փառք վաստըկեցաւ , որ լակեդեմոնացիք ամենեւին չէին կրնար քաշել : Պարսիկները Ասիայի կողմէն Յունաց գաղթականներէն վըռընտելու համար Յոյները շատ մը նաւ և զօրք խըրկեցին : Ասոնց զօրապետն էր Պաւ-

սանիաւ . որ Նլադէայի յաղթու-
թեանը վրայ քիթը մեծցեր , և
փափկութեան ալ տուեր էր ինք-
զինքը : Առաջ որ ասիացւոց փափ-
կութիւնը կը քամահրէր , Վարդու-
նիոսի կողոպուտը ձեռքը անցաւ
նէ աւրրվեցաւ . և իրեն զեղխու-
թեանը (միւսէյէպութէր) և խըս-
տութեանը համար՝ ծովակալութէ
արժանի չի սեսրվեցաւ : Ասոր հա-
կառակ , Արիստիդէս՝ և Վիլզիաւ
տէսին տղան Վիմոն՝ հասարակութէ
չառ յարգի եղած էին իրենց իմաս-
տուն և խոհեմ վարմունքին համար :
Սուտի ամէն բան աթենացւոց
պաշտպանութէր յանձնրվեցաւ .
և զօրաց և ծովու մեծութիւնն ալ
անոնց տրրվելով՝ թէմիսդոկղէսին
ըսածը եկաւ ելաւ , որ վերը պատ-
մեցինք (Մասն . ք . Գլ . Ե . 8) :

5. Սպարտացիք խոհեմութք
կամ հեղութեամբ ասիկայ ընդու-
նեցին . Պաւսանիասէն կասկած ալ
ունենալով , որպէս թէ Պարսից հետ
խօսքը մէկ է , ետ կանչեցին : Սատ-

նիչ ըլլալը ստուգվեցաւ նէ՝ մէկ կը
 ռատուենի մը մէջ փախաւ ապաւի-
 նեցաւ : Ափորները հոն մեռցընել
 տալու՝ և մեհեանը արիւնով պրզ-
 ծելու խիղճ ըրին . դուռը վրայէն
 գոցեցին պատ հիւսեցին . քովը
 մարդ չի կըրնալով երթալ՝ անօթի
 մեռաւ : Անկանոն խղճմտանքը մար-
 դուն ասանկ խելք կը սորվեցընէ :

6. Թեմիսդոկղէս ամբարտաւա-
 նութերը համար աչքէ ինկած ըլլա-
 լով իրեն համար խեցեկոյտ վճիռ ըլ-
 լալու ատենը՝ ձայն մըն ալ ելաւ որ
 ասիկայ ալ Պաւսանիասի հետ մէկ
 է Պարսից կուսակից ըլլալուն կող-
 մէն : Չեռք ձգած ինչքերը պետու-
 թեան գանձը առին . և ինքը այն-
 քան քաջութիւններէն և մեծամեծ
 գործքերէն ետքը յունաստանէն
 փախչիլ ստիպվեցաւ . և երկրէ եր-
 կիր բարբարական կը պըտըտէր :

7. Թեմիսդոկղէսը անարգել
 տուողը անյագ արծաթսիրութիւնն
 էր : Արիստիդէս ամենեւին իր օգ-
 տին չինայելով շատ մեծ փառք ըս-

տացաւ . և բոլոր Յունաց տէրու-
 թիւններուն գլուխ և հրամանա-
 տար եղաւ : Վաշնակիցներէն հա-
 սարակաց պաշտպանութեւն պէտք
 եղած ծախքին համար ժողովրդած
 ստակներուն բաժնրվիլը շատ տրու-
 տունջներ հանած էր մինչեւ հիմա .
 որովհետեւ արդարութեամբ բաժ-
 նրված չէր : Արբ որ յունաստանի
 գլխաւորութիւնը աթենացւոց ան-
 ցաւ նէ՛ վճիռ ըրին որ եկամուտնե-
 րուն կարգ մը դնեն . ամէն քաղաք-
 ներուն ունեցած եկամուտներուն
 համեմատ տուրք ուղեն . և մէկ
 գանձ մը հաստատեն , որ միշտ պատ-
 րաստական ստակ ունենան իրենց
 ձեռքը : Այս բաներս գլուխ հա-
 նելը Արիստիդէս իր վրան առաւ :
 Տուրք ձգեց և եկամուտները ա-
 նանկ կարգի դրաւ որ՝ արդարութեւն
 հաւասար խելքի տէր ըլլալն ալ այս
 բանիս մէջ իմացուց : Արդարութեւն
 այնքան վստահ էին որ՝ ըրածին ա-
 մէն մարդ գոհ եղան : Չորս հա-
 ղիւր վաթսուն տաղանդ ըստակով

բողոր տէրու թէ՛ ծախքերը գոցեց .
 և մէկ տաղանդը հիմակվան ստակով
 17,200 զուռուշ կ'ընէ . որով ամբողջ
 ծախքը կ'ըլլայ 3,312,000 զուռուշ :

8. Յունաստանի եկամուտները
 ասանկ կարգի գնող Արիստիդէսը՝
 իր աղքատութիւնը կարգի մը գնել
 յանձնառու չեղաւ՝ որ հարուստ
 նայ : Ազգական մը ունէր շատ հա-
 բուստ , անունը Ալալիաս . ասոր յան-
 ցանք մը սեպեցին Արիստիդէսին
 աղքատ մնալը : Բայց Ալալիաս շատ
 անգամ ասոր շատ ստակ տուեր էր և
 շատ բռնադատեր էր որ առնէ , բայց
 ստակ մըն ալ չէր կրցեր ընդունել
 տալ : Արիստիդէս Ալալիասը արդա-
 րացընելու համար ինքը պատմեց ա-
 սիկայ . և ըսաւ որ՝ մէկ մարդ մը մի-
 այն ամենահարկաւ որ եղած ծախքե-
 րը ընելու ըլլայ նէ՝ շատ ստակի կա-
 բօտ չըլլար : Այս երեւելի մարդս մե-
 ռաւ նէ՝ մեռելաթաղին ծախքը հա-
 սարակապետութիւնը բրաւ . և ընտանի-
 քըն ալ կը նայէր : Այսքան առաքի-
 նութե՛ն ինչ պատիւ ընես նէ կ'արժէ ,

և օրինակի համար կը պատմըվի . սա-
կայն կիրքը մարդոյս միտքն ալ կը
գոցէ ականջն ալ . ասանկ օրինակ-
ները մարդու օգուտ չեն ըներ .
միայն այս մոլութիւնս տիրելէն ա-
ռաջ օգուտ կ'ընէ՝ որ զգուշանայ :

9. Ասոր աղէկութէ պատճառ-
ներուն մէկն էր Ալալիսթենէս, պատ-
ուական մարդ մը . որ Արիստիդէս
տղայութեան ատենը ասոր քովէն
չէր զատուեր : Այն ատենները տղայ
մը քիչ մը խելք և ընդունակութի
իր վրան ցըցընէր նէ՝ շուտ մը իրեն
պաշտպան մը կը գտնէր , որ բարուց
վարժապետութի ալ կ'ընէր անոր .
և ասիկայ իրեն պարծանք կը սեպէր :
Այն տղան իրեն աշակերտ կ'ըլլար
և անոր ըրածը իրեն օրինակ կը բըռ-
նէր : Քովէն չէր զատուեր , ամէն
բանի մէջ անոր խորհուրդ կը հար-
ցընէր . և անոր աշակերտութեան
արժանի երեւիլը իրեն փառք կը
սեպէր : Հիներուն մեզի ձգած աղ-
վոր օրինակներուն մէկը՝ ասանկ մեծ
մարդիկ իրենց օրինակ բռնելնին է :

Արմին՝ արեւմտեան ժամանակներէն =

1. ՍԻՆՏԻՍՏԵՍԻՆ տղան Արմին՝ տղայութեան ատենը անառակ էր . բայց անառակութեանը վրայ կանուխ սկսաւ ամբշնալ, ուստի խելացի խրատներու հետեւիլ սկսաւ : Արիստիդէս իր խրատներովը ասիկայ կրթեց . և իր տեղը անցնելու արժանաւոր մարդ մը ըրաւ : Այլ յիշրաւ ի անոր տեղը Աթէնքի կառաւ վարիչ ասիկայ եղաւ : Աթենացիներուն թեթեւութիւնը բռնելու համար հարկ էր անոնք դրսի թշնամիներու հետ ծեծով զբաղեցընել . Արմին ալ իրեն կենցաղագիտութեանը կանոն ասիկայ բռնեց : Աստ անգամ մանր կռիւներու մէջ Պարսից յաղթելով ուժերնին կոտորեց . որովհետեւ միշտ անոնցմէ վախ կար :
2. Քսերքսէս մեռած էր . և տեղը երկայնաձեռն ըսված Արտաշէսը անցեր էր : Թեմիսդոկէս ալ ասոր

պալատը գացած ըլլալով՝ թէ որ
 ձեռքը զօրք տրրվէր և յունաստան
 խորհրվէր նէ՝ յունաստանի գէշ ըլ-
 լալիքը խեղճէ դուրս բան չէր : Աւ-
 յիրաւի մէկ երկու տարի ետքը թա-
 գաւորը ուղեց ասիկայ հաճեցնել
 որ Ատտիկէ երթայ և Յունաց հե-
 տը պատերազմի : Թեմիսդոկէս աս-
 կէց ազատվելու՝ և իրեն հայրենեա-
 ցը հետ չի պատերազմելու համար ,
 կ'ըսեն թէ ինքզինքը թունաւորեց ,
 և անանկ մեռաւ : Այդ իպտացիները
 Պարսից տկարանալը տեսնելով գը-
 լուխ քաշեցին , և աթենացիներէն
 ալ օգնութիւն ուղեցին : Այս ան-
 գամիս ալ առաջկու պէս յաղթուե-
 ցան , քանզի Այգիպտոս բնաւ զօրք
 չըկար , և Աթէնքէն եկած զօրքերը
 հերիք չէին :

3. Արտաշէս լակեդեմոնացիներ-
 րը գրգռեց՝ որ աթենացիներուն
 դէմ ղէնք առնեն , բայց օգուտ մը
 չի տեսաւ : Սակայն երկու տէրու-
 թեանց մէջ եղած գժտութիւնը օ-
 րէ օր կը շատնար , և օր մը պիտի

յայտնելէր : Ապարտա քաղաքին վը-
րայ քանի մը փորձանք դալով կորըս-
տեան դուռը հասաւ : Ահագին
չարժ մը եղաւ , և գրեթէ բոլոր
տներնին փլան : Այն միջոցին գե-
րիներն ալ աստամբելով մեսենիա-
ցիներուն և լակեդեմոնացւոց ու-
րիչ թշնամիներուն հետ մէկ եղան :
Այս դժուար ատեններըս հասան
նէ լակեդեմոնացիք՝ հարկ եղաւ որ
աթենացիներէն օգնութիւն ու-
ղեն :

4. Այս ատեններըս Պերիկղէս
չատ յարգութիւն գտաւ , և ինքը
չատ փառասէր մարդ էր , ամէն բան
անանկ կարգի կը դնէր որ՝ իրեն
բարձրանալուն որպէս թէ սան-
դուխք (մերտիւլէն) մը կը շինէր :
Այս մարդուս համար պատմուէս
կարգովը շատկեկ սխտի խօսալի : Այ-
փիալթէս ատենաբանը՝ որ այս մար-
դոյս կուսակիցն էր , ատեննի մէջ
խօսեցաւ որ՝ այն տէրուիր որ աթե-
նացւոց հետ հաւասարութե՛ մէջ
(իտտիա) կը բըշէ , պէտք չէ՛ որ ա-

Թե՛նացի՛ններէ՛ն օգնուԹիւն գտնէ՛ ,
մանաւանդ թէ որ կործանի՛նէ՛՝ մե-
ղի ուրախուԹեան պատճառ բըռ-
նելու է : Բայց Աիմոնին միտքը
այսպէս չէր . դաշնագրուԹե՛ պայ-
մանները և ընդհանուր յունաս-
տանի օգուտը , և արիուԹեան և
պատուոյ կանոնները չաւրովելու
օրէնք կ'երեւէին իր աչքին . և ի-
րաւունք ալ ունէր կարծելու որ՝
աթե՛նացւոց օրինաւոր չափը չանց-
նելուն համար պէտք էր որ լակե-
դեմոնացւոց պէս տէրուԹիւն մը
քովը պատրաստ ըլլայ : Արսէր որ՝
Լակեդեմոն վերնայ նէ ԼԹէնք ի-
րեն հաւասար չունենար , և յու-
նաստան կաղ (Թօբալ) կ'ըլլայ : ԼԵՍ
պատճառներովս համոզեց որ աթե-
նացիք լակեդեմոնացւոց օգնու-
Թիւն տան :

5. () օգնուԹեան երթալու զօր-
քերուն զօրապետ ինք ընտրովե-
ցաւ , և գործը գլուխ հանելու ա-
ղէկ ջանք ըրաւ , և յաջողեցաւ :
Քիչ մը ետքը լակեդեմոնացիք նա-

րէն օգնու թեան կարօտ եղան, Ախմոն նորէն զօրք տարաւ: Վայց կասկած մը ունեցեր են լակեղեմոնացիք ասոր վրայ, որ ասոր պատուոյն կը դաշէր. ուստի ասիկայ ետ խորհեցին: Աթենացիները այս անարգանացս վրայ կատղելով՝ բարկու թիւննին երեւելի զօրապետիս վըրայ թափեցին. և Աթէնքին անունը փառաւորելուն վարձք՝ խեցեկոյտ վճռով արտօրվեցաւ: Արկուտերու թիւն պատերազմի մը բռնելուցան, որուն վերջը շատ գէշու թիւններ բերաւ:

6. Ախմոն եկաւ աթենացւոյ զօրացը հետ աշխատիլ ուզեց. անոնք չընդունեցին, և հրաման ւրին որ եկած տեղը երթայ: Ասակածը իրեն հետ իր բարեկամներուն վրան ալ տարածվեցաւ, որ հարիւր հոգի էին: Ասոնք կասկածը վըրանուն նետելու համար քաջութիւն պատերազմեցան, և ամէնն ալ մեռան. և այս ճամբով Վանակրա եղած յաղթութեանը որպէս թէ

ճամբայ մը բացին , որուն մէջ սպարտացիները յաղթովեցան : Հինգ տարիէն ետքը Աիմոնն աթենացիներուն պէտք ըլլալով աքսորէն ետ կանչեցին . և ետ կանչովիլը առաջարկողը նոյն իսկ Պերիկղէս էր , որ չէր քաշեր անիկայ : Ասանկով երբեմն հայրենասիրութիւնը վրայ կուգայ , անիրաւութեան ըրած գէշութիւնները կը գոցէ : Այս առաքինի քաղաքացիս եկածին պէս առաջին գործը այն եղաւ , որ աթենացիք լակեդեմոնացւոց հետ հաշտեցոյց :

7. Անկէց ետքը աթենացւոց զէնքը դուրսի թշնամիի դէմ դարձուց . կամ ասանկ փառաւոր միջոցով անոնց զօրութիւնը եվելցրնելու համար , կամ իրարու դէմ խարդախութիւններ բանեցընելու ժամանակ չի տալու համար : Պարսից վրայ յաղթութիւններ ընելով այնքան նեղը լըծեց անոնք , որ վերջապէս Արտաշէս թագաւորը ինքը հաշտութիւն ուզեց , Քրիստոսէն

449 տարի առաջ : Հաշտութեան պայման դրին որ՝ փոքր Ասիայի մէջ որքան Յունաց քաղաք կան նէ՝ աւելնն ալ ազատ ըլլան . Պարսից նաւերը չի տեսնուիլն Պամփիլիայի ծովեզերքէն մինչեւ Ալքսիսեան Պոնտոս (սեւ ծով) . և զօրքերնին ալ ցամաքի կողմէն մինչեւ երեք օր վան ճամբայ մնալով ծովեզերքին մօտենան . անկէց աւելի չի մօտենան : Ասանկով մէկ պատերազմ մը՝ որ յիսուն և մէկ տարի քշեց , վերջանալով Յունաց մեծ փառք բերաւ :

8. Աիմոն իրմէ առաջ եկած քաջերուն գործքին կատարում տուաւ . և մահը՝ տեղը չի լեցուցուցուց կորուստ մը եղաւ : Հարուստ էր . և իր շահը չէր նայիր . հարուստ առաքինիի մը օրինակ եղած էր : Այլ ուզեր նէ պարտեզները կրնար մտնել . ինչպէս որ իր բարեկամները , անանկ ալ աղքատ մարդիկ սեղանը պակաս չէին . և ասով ժողովըդեան սիրտը շահիլ չէր միտքը . ուստի ռամ

կապետուլթեան անկարգութիւնն
 ներքը միշտ ժողովրդեան երեսը կու-
 տար : Պերիկղէս ասոր պէս չէր :

Գ Լ Ո Ւ Խ Թ :

Պերիկղէս Լ. Բէնքը իւր հասարակէ :

1. Լ. Թեոստիւնեիւ կառավարե-
 լու յարմար խելք ունեցող՝ Պերիկ-
 ղէսին պէս չի կար : Յարգի ըլլալուն
 պատճառը աղնուազգի ըլլալը չէր ,
 խելացի ըլլալն էր : Լ'նաքսագորաս
 փիլիսոփային աշակերտը ըլլալով՝
 խորին գիտութիւններու հետեւեր
 էր , ունեցած տեղեկութիւնները
 գրեթէ անսխալ էին , և անանկ
 ճարտար զըուցվածք մը ունէր , որ
 ըստղին սիրտը հարկաւ կը յափըշ-
 տակէր : Այլ որովհետեւ ուրիշնե-
 րուն տիրելու շատ փափաք ունէր ,
 ուստի յատուկ մտադրութիւն սոր-
 ված էր մարդկային բնութիւնը , և
 անոնք ինչպէս ուզած կողմը քաշել
 տանելուն կերպը : Այլի բերանը

բանի խառնելի չուղել ցրցուց, որ ուրիշներուն կասկած չիտայ. և նա խանձող չունենայ : Անանկ կը ցրցընէր որ՝ զինուորական քաջութիւնով փառք վաստըկելէն զատ բանի աչք չունի : Բայց Աիմոն հոն չեղած ատենը, որովհետեւ անկէց զատ ուրիշ մարդէ չէր վախնար, թողութեան մէջը ինկաւ. սկսաւ շողոքորթութիւններ ընել, աղգաշին գործոց պարասել ցրցընելով հասարակութիւն գըտնելով զբօսանաց տեղերը չէր երթար. բոլորովին քաղաքական բաներու տուաւ զինքը :

2. Թէ միտդ ոկղէսին պէս հասարակութեւն աչքէն իյնալու բաներուն չէր մօտենար. հարկաւոր պէտք մը ըլլար նէ՝ միայն այն ատենը հասարակութեան ատեանը ինքը զինք կը ցրցընէր. և իրեն խօսելը պէտք չեղած ատենը բարեկամներուն խօսել կուտար : Շատ հարըստութիւն չունենալովը՝ պարգեւալ շատ տալու կարողութիւն չունէր.

բայց ասոր սակասը՝ հայրենիքին
կողմէն լեցուց . խաղերը և զբօսա-
րանքները շատցուց . ատենները և
դատաստանի տեղերը անսակաս
գացող գանձվող քաղաքացիներուն
ստակ տալ տուաւ . որպէս թէ ազ-
գին գործոյն համար իր գործէն ետ
մնալուն մէկ հատուցում մը ընելով :
Կարճ ըսեմ . հասարակութիւնը ի-
րեն կուսակից ընելու համար բար-
քերնին աւրեց :

3. Ասանկ վտանգաւոր փոփո-
խութիւններուն գէմ անդադար բռ-
նոք ընող Արմոնը մեռնելէն ետքը
օրէ օր Պերիկղէս իշխանութիւնը
եվելցընելու վրայ եղաւ : Յունաս-
տանի եկամուտը իր ձեռքը անցաւ .
և ասոնց մէկ մասը՝ Աթէնք քաղա-
քը շինվածքներով և արձաններով
զարդարելու խորճեց : Ասոր ա-
տենն էր որ Փիդիաս այնքան հրա-
շալի արձաններ շինեց . որ գեղեց-
կութեան կողմանէ եգիպտացիներ-
ուն շինածէն խիստ շատ վեր են :

4. Աաշնակիցները գանգատ կ'ը-

նէին որ՝ բոլոր յունաստանի պաշտ-
 պանու թեան պէտքին համար ժող-
 վրոված ըստակը միայն մէկ քաղաքը
 գեղեցկացընելու կը խարճըվի կոր .
 և իրաւունք ալ ունէին ասանկ
 գանգատելու : Մայց Պերիկղէս գե-
 ղեցիկ զըուցվածքով պարապ պատ-
 ճառներուն ուժ կուտար , կ'ըսէր
 որ՝ երբ որ աթենացիք իրենց դաշ-
 նակիցներուն ըրած խոսամունքը
 կատարեն նէ՛ սյս ըստակն ալ աթե-
 նացիներուն կ'ըլլայ . և հասարա-
 կու թեան համար պէտք եղած ծախ-
 քերէն մնացածը ասկէց աւելի ա-
 ղէկ բանի գործ չածվիր : Մայց հա-
 սարակու թենէն ժողվրովելու տուր-
 քին վրայ՝ առաջկու տուածներնուն
 երէք մասին մէկին չափ ալ եվել-
 ցուց . որ թէ որ հասարակաց պետ-
 քի ծախքէն եվելցածովը Մթէնք կը
 վարդարէր նէ՛ այս տուրք եվելցը-
 նելըս պէտք չէր . պակսեցընելու էր :

5. Մյս բանիս վրայօք հասարա-
 կու թեան գանգատը շատցաւ նէ՛
 ինքը յանձնառու եղաւ իրեն ձե-

ուօքը շինված բաներուն գինը իր քսակէն վճարելու . բայց ուղեց որ ամէնուն ալ վրան իր անունէն զատ ուրիշ անուն չի գրվի : Ասիկայ ա թենացիներուն ծանր եկաւ . ուստի իրենց անունն ալ գրվելու համար թոյլտու ու թիւն բրին որ պէտք եղածին չափ ըստակ հասարակաց գանձէն թող առնէ : Շինել տրւած բաներուն գինը իր քսակէն վճարելուն խոստմունքը կը ցրցընէ որ՝ մինչեւ այն ատենը շատ հարստու թիւն դիզած պիտի ըլլայ : Սակայն ընդհանրապէս պատմիչները կ'ըսեն որ՝ այնքան իր շահուն ետեւէն իյնող մարդ չէր :

6. Հարուստները Պերիկղէսի դէմ մէկը հանէր էին . ինքը խեցեկոյտ վճռով անիկայ նետեց : Այն ատենը խիստ շատ զօրացաւ . ժողովուրդը առաջկու պէս շողոքորթելէն ետ կայնեցաւ . խորհուրդներու մէջ կը մըսանէր և կը վըճռէր : Իր փառամոլութեան սահմանը և չափը եվելցուց . վարպետութիւնով

իրեն աղէկ մարդ ըլլալուն յարգը՝
իր ճարտար զրուցվածքովը և քա-
ղաքականութեամբը վաստրկած զօ-
րութիւն եւկեցրնելու գործածեց :
Քանի մը սպառերազմի ելլելով և
գործը յաջողելով՝ այն կողմէն ալ
զօրութիւն ստացաւ . բայց թշնա-
միները ասոր վրայ աւելի կատողե-
ցան , կորսընցրնել կ'ուզէին . ուստի
սկսան բարեկամներուն գրաչիլ :

7. Փիղիասի համար ամբաստա-
նութիւն ըրին , որ Աթենասայ ար-
ձանը զարդարելու համար իրեն
արբված ոսկիին մէկ մասը գողցեր
է : Այս ամբաստանութեանս իրա-
ւը սուտը չի նայվեցաւ . Փիղիասը
բանտը գրին , և հոն մեռաւ :

8. Պերիկղէս մեծամեծ մոլու-
թիւններ ալ ունէր : Միլետացի
Ասպասիա անուն կին մը կար , որ
թէ կարգացող և ճարտասան ըլլա-
լով , և թէ գեղեցիկ կանանց յա-
տուկ եղած մոլութեամբը՝ անուա-
նի էր : Ասիկայ Պերիկղէսին բնաւ
կան պարտականութիւնները մոռցուց ,

և գլխէ հանեց : Այս կինը՝ որ բա-
 րի վարուց և սրբկեշտութե լուծը
 վրայէն նետելու չէր ամբշցեր, կը-
 րօնքն ու հասարակաց մէջ ընդու-
 նելի եղած աստուածսաշտութե
 ճամբան իրմէ հեռու ձգէր էր :
 Անհաւատութե և անառակութե
 համար ասոր վրայ ամբաստանու-
 թիւն ըրին : Ասպասիային ճարտա-
 սանութիւնը և Պերիկղէսին ար-
 ցունքը հաղիւ կրրցան Ասպասիան
 գլխուն եկած վտանգէն ազատել :
 Եւ այց ազատուելու արժանի կին չէր :
 Քաղաքակիցները Սամոս կղզին բը-
 նակիչներուն հետ աղէկ չէին . ա-
 թենացիներն ալ սամոսացւոց հետ
 թշնամի ըրաւ և պատերազմ բանալ
 տուաւ : Իրեն սպասաւորներէն եր-
 կու աղջիկ հաճեցուցեր զատեր
 էին մեգարացիները . ասիկայ աթե-
 նացիք հաճեցոյց որ մեգարացւոց
 հետ ծեծ բանան . և Պեղոպոննի-
 սական ըսված անուանի պատերազ-
 մին սկիզբը այս եղաւ :

9. Աթենացւոց մէջ առաջ բար-

քերը աւրըվեցան , ետքը բարոյա-
կանի և կրօնքի կանոնները , և գոր-
ծով անանճները օրէ օր կը շատնա-
լին : Վանի մը խելացի մարդոց ա-
ղէկ մը խելվընին հասած էր , որ
անանճու թիւնը թէ որ արմատանայ
նէ՝ թագաւորու թիւններ կը կոր-
ծանէ , ուստի յայտնի անանճները
պատժելու օրէնքներ դրին : Պերիկ-
ղէսի յայտնի բարեկամներէն մէկ
փիլիսոփայի մը համար յայտնի ամ-
բաստանու թիւն եղաւ , որպէս թէ
անաստուած է : Մսիկայ Պերիկղէ-
սին թշնամիներուն կողմէն հընա-
րուած մէկ զուր զըպարտու թիւն
մըն էր : Վայց անանկ վարպետու
թիւնով որոգայթնին լարեր էին որ՝
Մնաքսագորաս՝ որ ամբաստանած
մարդերնին էր , աւելի խոհեմու
թիւն սեպեց փախչիլը , քան թէ
կենալով իր կեանքը վտանգի մէջ
ձգելը : Վճիռ եղաւ որ՝ որ տեղ
տեսնելի նէ մեռցընեն :

10. Մբաստանողները տեսնե-
լով որ խօսքերնին կը բանի կոր՝ հա-

մարձակու թի առին . հասարակու
 թեան գանձին հաշուոյն համար
 մինչեւ Պերիկղէսին վրայ ամբաս-
 տանու թիւն ըրին , որպէս թէ շատ
 ստակ իր վրայ անցուցած ըլլայ : Հա-
 շիւ ուղեցին . և Պերիկղէս հաշիւ
 տալու պատրաստուլած ատենը Ալ-
 կիբիադէս՝ որ այն ատենը սղայ էր ,
 և ետքը անուանի եղաւ , ըսաւ .
 Պերիկղէս հաշիւը տալուն կերպը
 փնտրուելուն տեղը չի տալուն կեր-
 պը փնտրուէր նէ շատ աղէկ կ'ընէր :
 Ասոր Պերիկղէսին խելքը շուտով
 հասաւ . ինչպէս որ անկէց ետքը
 մինչեւ հիմա և մինչեւ աշխարհքիս
 վերջը շատերու խելք կը հասնի . և
 հաշիւ տալու աշխատելուն տեղը
 հաշիւ չի տալու կ'աշխատին . թէ և
 ուրիշներուն մեծ փասս ըլլայ . ինչ-
 պէս որ Պերիկղէս ալ պեղոսպոննի-
 տական պատերազմով հաշիւ տալէն
 ազատեցաւ : Մինչեւ այն ատենը
 պատերազմը բացվելուն դէմ կը դը-
 նէր . այն ատենը դիմադրու թիւնը
 թուլցուց . ոմանք կ'ըսեն թէ լակե-

դեմոնացիները գրգռեց ալ, իր օգտին համար :

11. Այս քաղաքական պատերազմը՝ որ յունաստանի գլխուն եկած վնասակար դիպուածներուն մէկն է, շատը աթենացիներուն յանցանքովը եղաւ : Իրենց գործքերուն և ուժին վրայ ամբարտաւանելով՝ իրենց ձեռքը յունաստանի զօրութիւնը ամբողջ անցնելուն պատճառ եղող հեղութիւնը կորսընցուցին : Իրենց ըրած բաներովն ուրիշները նախանձ շարժեցին, և ամէնուն ատելի եղան : Այն ատենները Պատիդէա ըսված քաղաքը պաշարելու վրայ էին, որ կորնթացւոց գաղթականն էր : Կորնթացիները՝ և ուրիշ մարդիկ որ աթենացւոց թշնամի էին, աթենացւոց համար լակեդեմոնացիներուն գանգաւեցան, աթենացիներուն փառամոլութիւնը պախարակեցին, հարկ է ըսին միաբանիլ՝ որ սա ամբարտաւան մարդոց քիթը կտարեմք : Ա՛ճուեցին որ զէնք առնեն, սակայն առաջկուց

դէսպան խորրկեցին . որ պէտք եղած
 պատրաստութիւնները ընելու մէկ
 դիէն ժամանակ ունենան : Վասնա-
 ւորապէս ուղածնին այն էր որ՝ ա-
 թե՛նացիք Պատիդէայի պաշարումը
 վերցընեն : Պերիկղէս ասոր դէմ
 կեցաւ . և մէջ բերած պատճառ-
 ները՝ աթենացիներուն առաջկուց
 վաստրկած փառքն ու հիմա պատե-
 րազմելու ունեցած կարողութիւն
 էր . ըսելէ որ՝ օրինաւոր պատճառ
 մը չունենալով բռնութիւն կը ցը-
 ցընէր : Առաջարկութիւնը չըն-
 դունվելով՝ շուտ մը ծեծը սկսաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Պեղեդոննիստիան պատերազմն «իւրէն :

Աւիւրիտէն :

1. ՍՊԱՐՏԱ , և դրեթէ բոլոր Պե-
 դոպոննեսոս , Փովկիտէ , Տէովտիա ,
 և ուրիշ մանր տէրութիւններ Ա-
 թե՛նքի դէմ մէկ ահաւոր դաշնակ-
 ցութի մը ըրին : Օ՞րքերնին վաթ-

սուն հազարի կը հասնէր : Աթէնքի բոլոր ուժը՝ տասն և հինգ հազար սլատերազմող զօրք ունէր . քաղաքին պաշտպանութեանը համար զէնք առնողներէն զատ : Այսքան քիչ մարդով բանակ դուրս հանել չէր կրնար ըլլալ : Անոր համար Պերիկղէսին խրատը և բրուսած ճամբան այն էր որ՝ գետիները անանկ բացը ձգեն . որ թշնամին դայ նէ բերքը կողոպտէ . մարդիկնին վրտանգի չի ձգեն . միայն Աթէնքի պաշտպանութեանը նային . գլխաւորապէս ծովային զօրութիւնը ուժովընեն . որ աթենացիներուն որպէս թէ հոգին էր : Շատ աշխատութիւն քաշեց , և վերջապէս կրցաւ համոզել , որ Աթէնք քաղաքին սլարիսպէն դուրս չելեն . թող երթայ Ատտիկէ կործանի , ոտքի տակ երթայ : Ալ ունենալովնին՝ սեղոպոննե սացիք Ատտիկէի ինչ մաս հասցընէին նէ , իրենք ալ ծովու կողմէն սեղոպոննե սացւոց նոյն վրնասը կը հասցընէին :

2. Այս պատերազմիս մէջ գիտուած թեանց օգուտը ճանչցրվեցաւ : Արեւը խաւարելով՝ աթենացիք վախու մէջ ձգեց . քանզի անանկ սորվեր էին որ՝ ասիկայ աստուածներուն բարկանալուն մէկ նշանն էր : Պերիկղէս ասանկ բաներու տեղեակ ըլլալով՝ արեգական խաւարումը ինչէն պատճառիլը հասարակութեան հասկըցուց . որ սրբտերնին հանգչեցաւ , և նորէն ուժ առին :

3. Այն տարւան բանակը լըմնցաւ նէ՛ պատերազմի մէջ մեռնողներուն վրայ գերեզմանական ճառ խօսելը անոր յանձնեցին : Աթենացւոց այս սովորութիւն մէկ յորդոր մը և գըրգիռ մըն էր երիտասարդներուն՝ որ հայրենիքին վրայ մեռնելու յանձնառու ըլլան : Տէրութեան համար արիւն թափող կըտրիճները գովելէն ետքը ատենաբանը անոնց եղբարցը և տղոցը ըտաւ . դուք անոնց փառացը հասնելու համար շատ մեծ աշխատութիւներ քաշելու էք . մեռ-

Նողներուն համար ամէն մարդ շիտակը կը դրուցէ . բայց ողջերը նախանձողներ և թշնամիներ ունին . շիտակը դրուցել չըլլար : Մեռնողներուն կնիկներն ու մայրերը ուրախու թեամբ լեցվելով և հայրենեաց սիրով վառվելով՝ ատենաբանը մեծ հանդէսով տարին մինչև իր տունը :

4. Պատերազմին երկրորդ տարին՝ հասարակաց նեղութիւնը վրայ մէկ մըն ալ ժանտախտ եվելցաւ : Այս հիւանդութիւն հասարակութիւնը շատ դրդուեց . Պերիկղէսին վրան թափեցան . անոր համար ամբաստանութիւն ըրին . և այս դիւրափութիւն և սնհաստատ ժողովուրդը տուգանք (ճէրիմէ) տալու դատապարտեց Պերիկղէսը , և իշխանութիւնը կամ զօրապետութիւնը ձեռքէն առաւ : Շատ շանցաւ իրենք ալ իմացան որ՝ քանի որ հասարակութեան վրայ ատանկ գէշութիւններ կուգան , այնքան ալ աւելի ասանկ մարդ մը պէտք կ'ըլլայ :

Թողու թի ուղեցին անկէց , և քաղաքական գործքերը նորէն անոր ձեռքը յանձնեցին : Քիչ մը ետքը ժանտաստէն մեռաւ :

5. Թէ որ Պերիկղէսին բուն գիտաւորութիւնը աթենացիներուն բարքը աւրել և իրեն իշխանութիւն այս ճամբով երկար ատեն ձեռքէ չի հանել չըլլար նէ՝ գիտութեանց և արուեստից և վաճառականութեան և ծովային զօրութեան առաջ ելլալուն վրայ բրած հոգը յիրաւի իրեն մեծամեծ գովութեց նիւթ կ'ըլլային : Արիստիդէս և Վիմոն իրենց հայրենեացը ասկէց աղէկ ծառայեցին . որ հեղութեամբ և արգարութեամբ յարգութիւն և պատիւ վաստրկցուցին անոր : Թէ որ ողջ մնային նէ՝ այս սոսկալի պատերազմն անոնց օրովը չէր ըլլար . որ քսան և եօթն տարի քշեց , և ամէն տարւան մէջ մէկ մէկ կերպ գէշութիւն կայ :

6. Սպարտայի և Աթէնքի իրարու դէմ թշնամութիւննին ամէն

չափ անցաւ : Մէկը մեկալին դեւ-
 սան կը խըրկէր . և երկուքն ալ
 ճամբան իրարու դեսսպանին վրայ կը
 հասնէին կ'ըստաննէին : Ասկեդե-
 մոնացիները Պարսիկներէն օգնու-
 թիւն անգամ ուղեցին . կիրքերնին
 կըշտացընելու համար պատիւնին
 մինչեւ այն աստիճան ոտքի տակ
 առին : Աղէոն ատենաբանը , որ ա-
 մենեւին ըստակ մը չէր ըներ , ա-
 թենացւոց կառավարիչ ըլլալով , ի-
 րեն խենթութիւնը անոնց ալ պը-
 լըչկեց : Տասն տարի պատերազմե-
 լէն ետքը զինադուլ (միւթարէքէ)
 ըրին մինչեւ յիսուն տարի . բայց
 ասիկայ հաշտութեան և հանդար-
 տութե մէկ սուտ երեւոյթ մըն էր :

7. Աղկիբիադէս անուն երիտա-
 սարդ մը կար այն ատենները , բնիկ
 աթենացի , ազնիւ ճնողաց զաւակ ,
 գեղեցկութեան կողմանէ շատ ան-
 ուանի . խելքը սովորականէ ելել .
 և Սոկրատ փիլիսոփային դասերը մը-
 տիկ ընելով սուաքինի գործքերը ը-
 նելու յօժար . բայց իրեն բնական

բերմունքը զինքը գէշի կը տանէր .
 շողոքորթող մարդիկ ալ ունէր , որ
 ինչ որ ընէր , թէ աղէկ թէ գէշ , շատ
 աղէկ ըրիր , աղնիւ և հարուստ աղոց
 ատանկ կը վայլէ կ'ըսէին : Ասիկայ շատ
 կը փափաքէր հասարակապետու թէ
 կառավարու թիւնը ձեռք ձգելու ,
 Նրեն փառասիրու թեան հիմը՝ սաւ
 տերազմին էր ըրած . և կ'աշխատէր
 պեղոպոննիսական սլատերազմին կը
 բակը նորէն բըռնկցընել , որ տա
 կաւին աղէկ մը մարած չէր : Ալ ու
 բովհետեւ հասարակու թիւնը ու
 զած կողմը դարձընելուն ճամբան
 գիտէր , ուստի հարկաւ մտքինը
 պիտի ընէր :

Տ. Բարբը քիչ մը անառակ ըլլա
 լով հասարակու թեան լեզուն էր
 ինկած : Սինքը բամբասողներուն
 լեզուէն ազատելու համար՝ հետը
 պըտըտցուցած աղվոր սլըզտիկ շանը
 պոչը կըտրեց : Այս գործըս նոյն օ
 րը Աթէնքի բոլոր հասարակու թեր
 խօսքին նիւթ մը եղաւ : Նրեն ի
 մացուցին որ՝ այն գեղեցիկ շունը

անանկ առանց պոչի տգեղ բան մը
ընելուդ վրայ ամէն մարդ գէշ կը
զրուցեն քեզի : Շատ աղէկ , ըսաւ .
ես ալ կուզեմ որ աթենացիք ինձի
համար զիս բամբասելուն տեղը շա-
նքս համար զիս բամբասեն : Ասի-
կայ նշան էր որ իր թեթեւամիտ
քաղաքակիցներուն բարքն ու բը-
նութիւնը շատ աղէկ կը ճանչնայ
եղեր :

9. Թէ Սպարտա և Թէ Աթենք
իրարմէ կը գանգտէին , որ զինա-
դուը աւրըվեցաւ : Ալկիբիադէս
ասիկայ պատճառ բռնեց բոլորովին
վերցընելու : Ալ Թէպէտ ասոր կա-
մացը հակառակ էր Աիկիաս , որ ա-
ղէկ մարդ մըն էր , և խոհեմ զօրա-
պետ , բայց Ալկիբիադէս խօսքը քա-
լեցուց : Աիկիասի ալ կուսակիցներ
կային . ըսել է որ քաղաքացիք եր-
կուքի բաժնրված էին : Խեցեկոյտ
վճիռը այս անմիաբանութիւնս կըր-
նար վերցընել : Հիւպերբողոս ա-
նուն վատահամբաւ մարդ մը՝ ա-
սոնց երկուքին ալ գէշ կը զրուցէր .

որ երկուքն ալ ելլեն , և ինքը անոնց
տեղը անցնի : Հասարակուէ սիրտը
նեղանալով՝ խեցեկոյտ վճիռը ոչ
Մկիբիադէսին և ոչ՝ Աիկիասին , այլ
Հիւպերբոզոսին ելաւ , որ աքսորը
գնաց , և որովհետեւ մինչեւ այն
ատենը՝ խեցեկոյտ վըճուով երեւելի
և մեծամեծ մարդիկ կը քրշվէին ,
հիմա այս անգամին Հիւպերբոզո-
սին ելլելով մընտրուեցաւ . այս պատ-
ճառիս համար խեցեկոյտ վճիռն ալ
վերցուցին :

10. Մթէնք քաղաքը Սպարտայի
վրայ ծեծ հանելը Մկիբիադէս հե-
րիք չէր սեպեր : Արեւակայու թիւր
կրակ ու բոց էր . ինքնիրեն բաներ
կը գտնէր . և իր սնունդը անոնցմէ
կ'առնէր : Խորհեցաւ Միկիլիա կըղ-
զին առնել , և այս խորհուրդս ա-
թենացիներուն յայտնեց և ընդու-
նել տուաւ . թէպէտ Աիկիաս շատ
գէմ կեցաւ : Միկիլիայի բնակիչները
Յունաց ազգէն գացած գաղթա-
կաններ էին , և ստոնց մէջ առաջին
կը սեպվէր Միրակուսա քաղաքը :

Այս երեւելի քաղաքիս մէջ՝ Քր-
 սերքսէս Թագաւորին ատենը Վե-
 ղոն անուն մէկ մը՝ Թագաւորի ա-
 նուն կրելու արժանի էր եղեր :
 Անկէց ետքը իրեն երկու տղայքը
 Թագաւորեցին , որ են Հերոն և
 Թրասիբուղոս , բայց իրենց հօրն ա-
 առաքինու թեանը նման չի գըտնը-
 վեցան : Թրասիբուղոս բռնաւորու-
 թեանը համար Թագաւորու թեանէն
 վըռնտըվեցաւ ալ : Սիրակուսա՝
 Թագաւորներուն լուծը վրայէն նե-
 տելով՝ կղզիին մնացած տեղերը հա-
 սարակասկետու թիւնը հաստատուե-
 ցաւ : Ատքը իրենց մօտ երկու աղ-
 գի հետ կռիւ բացին , որ են Վէոն
 տինք և Ագիստեանք ըսլածները :
 Այս ազգերը աթենացիներէն օգ-
 նու թիւն խնդրեցին :

11. Նիկիաս պարապ տեղը աշ-
 խատեցաւ աթենացւոց հասկըցը-
 նելու , որ այս ատենըս որ չորս դի-
 երնին թչնամիները առեր էին , ա-
 նանկ հեռու տեղ իրարու հետ
 պատերազմողներուն մէկուն կու-

սակից ըլլալ և անոնց օգնութեան հասնիլը մէկ յանդուգն խենթութի մըն է : Ալկիբիադէսին շնորհօք դէմքը , զրուցվածքը և առատաձեռնութիւնը ամէն մարդու սիրտ իրեն կը քաշէր . անոր համար ասոր խօսքը քալեց : Ա՛ճիռ եղաւ որ Սիւրակուսայի դէմ ղէնք առնեն . և սրատերաղմին հոգը Ալկիբիադէսի և Նիկիասայ յանձնեցին . հետերնին ուրիշ ընկեր մըն ալ տալով , որ կ'ըսվէր Ամաքոս : Ա՛թենացիներուն շատ ատենէ ՚ի վեր մըտքերնուն կ'անցնէր որ Սիկիլիայի տիրեն . բայց Պերիկղէսին խոհեմութիւնը՝ որ այն ատենը մեծ զօրասլետ էր , այս բանէս անոնց միտքը դարձուց :

12. Պատրաստութիւնները քիչ ատենի մէջ ըրին . զօրքը ճամբայ Բ. Ա.
415 ելլելու վրայ էին , որ յանկարծակի դիպուած մը սրատահելով քաղաքին մէջ մեծ խռովութի ձգեց : Հերմէս կուռքին արձանները ամէնն ալ կոտորուած գտնելեցան : Ա՛սիկայ ա

նանկ մէկ ամբարշտու թի մըն էր՝ որ բոլոր աթենացիները դազանական կատաղութեան մէջ կը ձգէր : Արեւի է որ Ալկիբիադէսին թըշնամիները ըրած ըլլան ասիկայ , Ալկիբիադէսը աչքէ հանելու համար : Անանկ չէր ալ նէ՝ ասկէց առիթ առին Ալկիբիադէս անհաւատ է ըսելով վրան ամբաստանութիւն հանելու :

13. Ալկիբիադէս տկարութիւն և վախ մը չի ցուցունելէն զատ՝ ոտք կոխեց որ շուտ մը դատաստան ըլլայ : Այլ որովհետեւ այն օրերը զօրքերը ժողոված գըտնըվելով ամենըն ալ իրեն կըռնակ էին , ուստի ամբաստանութիւն ընողներուն ըրած ամբաստանութիւննին քալեցընելը շատ դժուար բան էր : Աւստի զօրքերով հոն կենալ ու շանալ չըլլար , օր առաջ ճամբայ ելլել պէտք է ըսելով՝ դատաստանը ետ դառնալուն ձգեցին , և նաւերը ճամբայ ելան : Բայց Աիկիբիա հասածներնուն պէս Ալկիբիադէս

սին ետեւէն մարդ եկաւ , որ Ա-
 թէնք դառնայ , և այն դատաստա-
 նը տեսնելի : Ս՝ շնամիները ինքն եր-
 թալէն ետքը այնքան բան տեսած
 էին , որ ժողովուրդը Ալկիբիադէ-
 սին ուրիշ գործերը մոռցեր էին ,
 անհաւատ և ամբարիշտ է ըսելով
 նրատած ելած տեղերնին կը բամ-
 բասէին , որ մը իրենց պիտանի ըլ-
 լալու չափ խելացի ըլլալը չէին մը-
 տածեր : Ա՝ ախցաւ որ թշնամինե-
 րուն ձէռքէն մնաս մը տեսնէ ,
 ուստի զինքը բերող մարդոց ձեռ-
 քէն ճամբով մը ինք զինքը ազա-
 տեց , Սպարտա գնաց , և հոն եր-
 դում ըրաւ հայրենիքին թշնամու-
 թիւն ընելու մինչեւ յետին շուն-
 չը . անանկ ցրցուց որ ինքն ալ ըս-
 պարտացուոց վարմունքին շատ է
 հաւներ , անոնց ըրածին պէս կ'ընէր .
 ասանկով անոնց սիրտն ալ իրեն քա-
 շեց : Ա՝ թենացուոց քուրմերը ասի-
 կայ բանագրեցին , և կառավարու-
 թիւնն ալ մահուան վճիռը տու-
 աւ՝ թէ որ տէրու թեանը սահման-

ներուն մէջ երեւի : Այս վճիռներ
ըստ ընդ նէ ըսաւ . տակաւին կեն-
դանի ըլլալըս ես անոնց կը սորվե-
ցընեմ :

14. Ալկիբիադէս թէպէտ շատ
յանդուգն էր , բայց Սիկիլիա գլու-
նըվէր նէ շատ հնարքներ և վարպե-
տութիւններ բանեցընելով ամէն
բանին ճարը կը գտնէր : Սիկիլիաս մէկ
մտքի վրայ հաստատուն չէր կենար
և վախկոտ էր . ուստի Սիկիլիայի
վրայ գացողներուն վիճակը գէշցաւ :
Պատերազմին հաճութիւն չի տալ
և չի հաւնիլը զօրքը ամէնն ալ գի-
տէին . և հիմա որ զօրապետութիւն
ասոր ձեռքն անցաւ , անոնց ալ
սիրտը վախ մըտաւ : Բայց Սիրա-
կուսայի պաշարումը քաջութեամբ
առաջ կ'երթար : Սիրակուսացիներ
ըր հարստութեամբ թուլցած ըլ-
լալով , թէ որ կորնթացիներէն և
աթենացիներէն օգնութի ուզած
չըլլային , և Ալկիբիադէս ալ անոնց
համար միջնորդ եղած չըլլար նէ ,
կը կործանէին , և թշնամիներնին կը

զօրանային : Ախիլիասի ըսածը մըտիկ
 չընելով գիշեր մը պատերազմ ըրին .
 այն պատերազմին մէջ երկու հազար
 աթենացի մեռան : Արանին հա-
 սած հիւանդութիւնը , սրբութենուն
 մէջ ինկած վախը , և նոյն իսկ Ա-
 թէնք քաղաքին վտանգի մէջ իյնա-
 լը , որ լակեդեմոնացիք չորս կողմէն
 պաշար գալու ճամբաները գոցեցին ,
 հարկ ըրին որ Սիրակուսայի պաշա-
 րումը վերցընէ :

15. Յանկարծ բանակնին վեր- Բ. Ա.
 ցընելով՝ սիրակուսացիներուն մին 415
 չեւ աչվըներնին բացվելու և բըռ-
 նեցէք սրվոնք ըսելու ատենը՝ ա-
 թենացիք ամենեւին մարդ չի կոր-
 սընցուցած կրնային ճամբայ ելլել :
 Առանի խաւարում մը վրայ եկաւ .
 ամէնն ալ վախցան , անոր համար
 ճամբայ ելլելնին միւս օրվան մը-
 նաց : Սիրակուսացիները պատերազ-
 մի պատրաստութե՛ ժամանակ ու-
 նեցեր են , լակեդեմոնացիներուն
 կողմէն ալ Վիւլիպպոս իրենց օգ-
 նութեան եկած ըլլալով թէ ծո-

վու և թէ ցամաքի վրայ կրցան ա-
 թենացիները աւրել : Օջորապետ-
 ները շատ մեծ քաջութիւնները
 ներով և օգուտ մը չի տեսներով
 գերի բըռնելեցան և սպաննելե-
 ցան . և ասանկ անգթութե գործ-
 քերով սիրակուսացիները իրենց
 յաղթութիւնը աղտոտեցին : Արկի-
 լիայի խումով թեանց վերջը հռո-
 մայեցւոց սրատմութեան մէջ կը
 գըտնես :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ա .

Պէշպոսեանի ասիան պատերազմին շարունա-
 իր-նի-նը : Անի-ն քաղաքին պըշպոսեան-
 ւը և արար-նի-նը :

1. ՍԻՐԱԿՈՒՍԱ քաղաքին տիրելու
 յոյսը այն աստիճան խենթեցուցեր
 էր աթենացիները , որ իրենց զօրացը
 յաղթելու լուրը Աթենք հաս-
 ցընող մարդը՝ սուտ խօսելով խռո-
 վութիւն հանող մարդու մը տեղ
 գներով սպաննեցին : Բայց այս յոյսը

շուտով տրամուլթեան և յուսահա-
 տուլթեան փոխակցաւ : Ատանգը
 քանի երթար նէ կը մեծնար . մէկ
 դիէն ալ լակեդեմոնացիները Ալկի-
 բիադէսին խորհրդով 'Աեկելիա
 բերդը ամրացուցին որ Աթէնքի մօտ
 էր : Թէ որ լակեդեմոնացիք ծանր
 շարժելու սորված չըլլային նէ՛ Ա-
 թենացւոց բանը շատ գէշ էր :
 Աինչեւ անոնք շարժեցան նէ՛ աթե-
 նացիները շունչ առնելու և իրենք
 զիրենք գտնելու ժամանակ ունե-
 ցան : Քաղաքացիք քաղաքին կառա-
 վարուլթեան հոգը ծերերուն յանձ-
 նեցին : Աէկ գանձ մը ունէին , որ
 պատերազմին սկիզբէն արգելված էր
 անոր դրաչիլը , և մինչեւ հիմա դրա-
 չըված չէր . հիմա վճիռ եղաւ այն
 գանձին ստակն ալ պատերազմին պի-
 տոյից գործածել : Աւ ասով որքան
 որ հնար էր նէ՛ տէրուլթեան նաւերը
 նորոգվեցան , և եկամուտին պա-
 կասուլթիւնը լեցվեցաւ : Աայց տա-
 կաւին վախնալու բան շատ ունէին :

2. Աթենացւոց գրեթէ բոլոր

դաշնակիցները իրենց թշնամի դարձեր էին : Ալկիբիադէս իրեն գրգռու թեամբը անոնք ամէնն ալ ոտք կը հանէր : Աղէկը այն եղաւ որ՝ ըստարտայի մէջ Ալկիբիադէսին ունեցած յարգը առաջինը չի մնաց , չէնէ՛ հայրենեացը շատ փնաս կը հասցընէր : Առաքինու թեան սուտ կերտարանք մը դըրսէն ցըցընելով՝ անոնց Արգիս անուն թագաւորին կինը գըլխէ հաներ էր , գլխաւոր քաղաքացիներուն մէջն ալ երկտառակու թիւն կը ձգէր : Ասանկ բաները տեսնելով՝ անկէց սաղեցան , տեսած օգուտնին մոռցան : Ինքը Յոնիա գնացեր էր լակեդեմոնացիներուն նոր ուժ ճարելու համար , լակեդեմոնացիք հոն հրաման իրըկեցին Ալկիբիադէսը մեռցընելու :

3. Ալկիբիադէս այս դաւաճանու թեան (խայրնու թէ) հրամանը լսելով Տիսափեռնէսի քով փախաւ , որ Պարսից տէրու թէ կողմէն կուսակալ կը նստէր Սարգիկէ քաղաքը . և քիչ մը առաջ Ալկիբիադէս զին-

քը յորդորեր էր աթենացւոց վրայ
 ծեծ բանալու : Բիչ ատենի մէջ
 Պարսիկները ասոր մէկ յարդ մը տալ
 սկսան . քանզի բարուց կողմանէ ալ
 Պարսից նման էր . և աթենացիներէն
 քաշածները մտածելով՝ անոնց
 դէմ տուած խորհուրդը յօժարուք
 մտիկ կ'ընէին : Տիսապեռնէսը հա-
 մոզէց որ Յոյները երկպառակութե-
 մէջ սրահէ . որպէս զի մէկը մէկալը
 ոտքին տակը ձգելով ինքը մնացած-
 ներուն վրայ չտիրէ : Ասիկայ ամէն
 քաղաքականութէն աւելի ճարտար
 և աւելի ապահով և անվնասն էր :

4. Այն միջոցին Աթենքի մէջ
 երկպառակութիւր տիրած էր : Աա-
 ռաւարութեան կերպը փոխեցին .
 չորս հարիւր հոգի ընտրեցին , և ա-
 մէն կառավարութի անոնց ձեռքը
 տրվին : Անոնք ալ ծերակոյտը վեր-
 ցուցին . օրէնքները ոտքի տակ ա-
 ռին . և բռնաւորութիւնովնին ա-
 մէնուն ատելի եղան : Օրքը Սա-
 մոս կըղզիին քովերն էր . այս փոփո-
 խութիւնս անոնց ընդունելի չըլ-

լայտով Ալկիբիադէսը աքսորէն ետ
 կանչեցին . ամէն զօրաց վրայ ընդ-
 հանուր զօրապետ դրին աղաչելով
 որ այն բռնաւորները վերցընէ : Ալ-
 կիբիադէսի շատ ասորժեւի բան էր
 այս անգամիս ալ աթենացւոց հրա-
 մայող ըլլալ . բայց առաջին գործը
 եղաւ լակեդեմոնացիներուն և ա-
 նոնց դաշնակիցներուն հետ սա-
 տերազմիլը : Օտլու մեծութիւնը
 նորէն ձեռք ձգեց , և փառաւոր
 կերպով հայրենիքը դառնալու պատ-
 րաստութիւն տեսաւ : Ներք աասնկ
 երեւելի գործեր ընել սկսած էր՝
 երբ որ աթենացիք ալ ասոր աքսորէ-
 ետ դառնալը վճռեցին , և ասիկայ
 քաղաքը չիմտած՝ քաղաքին հարրս-
 տահարութեւ պատճառ եղող չորս
 հարիւր բռնաւորները վաւրնտեցին :

5. Այս արտառոց մարդս , որ
 շատ գէշութիւններ ըրաւ , և շատ
 աղէկութիւններ կրնար ընել , մեծ
 ուրախութիւն քաղաքը ներս առնը
 վեցաւ : Աթենացիք ալ ասոր ետե-
 ւէն իյնալնուն և մեռցընել ուզել

նուն վրայ զղջացան . և քուրմերուն
 հրաման ըրին՝ որ ասոր վրայ ըրած
 նղովքնին վերցընեն : Այլ որ նզու
 վելու հրաման եղեր էր նէ քուրմե-
 րուն՝ թէանով քրմուհին ըսեր էր
 որ՝ իմ պաշտօնս օրհնել է , նղովել
 չէ : Այս ատենըս քրմուհին ըսա-
 ծը խելացիութիւն ըլլալք իմացվե-
 ցաւ : Այլիք իադէս նորէն ժողովը-
 դեան աչքը մտաւ , և առաջիկու պէս
 անոնց սիրելի եղաւ : Վաւական նե-
 ղութի քաշելով կենցաղական գի-
 տութիւնը (բօլիգիքան) աղէկցաւ .
 իրեն համար անհաւատութեան ամ-
 քաստանութիւնը որ ըրեր էին՝ բո-
 լորովին մոռցընելու համար դրսէն
 ելելը կրօնասիրութիւն մը ձեռք
 առաւ : Վե՛հարի խորհրտածո՛ւնի-ն
 ըսված տօնախմբութիւնը՝ որ կռա-
 պաշտներուն երեւելի տօներուն
 մէկն էր , մեծ հանդէսով կատարեց :
 Վայց ինչ ճամբայ բռնելու էր որ ա-
 թենացիներուն թեթեւութիւնը վնասը
 մէկ մըն ալ չի քաշեր : Այլ թշուառ
 ատենաբանի մը խօսքի բռնրվելով՝

լակեղեմոնացիներուն առաջարկած հաշտութիւնը չընդունեցին . և այս անխոհեմութենէս ուրիշ գէշութիւններ ծագեցան : Վակեղեմոնացիներուն սպարապետը Վիւսանդրոս՝ Պարսիկներէն օգնութիւն ուղեց . և նաւաւարներուն ամառկան վարձքը եվելկէկ տալու համար անոնցմէ ըստակ առաւ : Աթենացւոց նաւաւարներուն շատը իր կողմը քաշեց : Ալկիբիադէս ըստակ գըտնալու համար Յոնիա գացած , իրեն հոն չեղած ատենը՝ Անախորոս լակեղեմոնացւոց հետ ծեծկըլեցաւ և յաղթըլեցաւ : Աթենացիք իրարու ետեւ յաղթութիւններ վատրկելու կը յուսային . և երբ որ այս ձախորդութիւնս լսեցին՝ կատուեցան . Ալկիբիադէս սպաշտօնէն ձգեցին . և անոր տեղը տասն զօրապետ դրին :

6. Վակեղեմոնացիք ալ Վիւսանդրոսի փառասիրութենէն վախնալով ետ կանչեցին անիկայ : Անոր յաջորդը Ալկիբիադիտաս , որ առա-

քինի և աներկիւղ մարդ մըն էր ,
 առջի բերանը շատ մեծ յաջողու-
 թիւն գտաւ : Բայց աթենացիք ի-
 բենց Արնոն զօրավարին օգնութիւն
 հասնելու համար՝ որ Մետիլինէ
 կղզին նաւահանգստին մէջ սրաշար-
 ված մնացեր էր . քիչ ատենի մէջ
 հարիւր տասը նաւ շինեցին ծովը
 ձգեցին նէ , լակեդեմոնացւոց զօ-
 րապետը տեսնելով որ անոնց ուժը
 իրենինէն աւելի է՝ խոհեմութիւն
 բանեցընելով չի համարձակեցաւ
 հետերնին սրատերաղմելու . բայց
 հարկ ալ եղաւ : Օւեճկրվեցաւ Ար-
 գինուսայի ջուրերը , յաղթըվեցաւ
 և մեռաւ : Բաշնակիցներուն նա-
 ւերը՝ որ լակեդեմոնացւոց կողմէն
 եկած էին , այն տեղը շատ մեծ վը-
 նասի հանգիստեցան :

7. Աթենացիները այս յաղթու-
 թեանս վրայ անլուր անիրաւութի
 մը ընելով սրատիւնին կորսընցուցին :
 Մեռելները փառօք և սրատուով
 թաղելու համար աթենացւոց զօ-
 րապետները յիսուն նաւ որոշէր

էին : Արթիկ մը ելաւ , թող չի տը
 ւաւ որ այն հրամանը կատարվի :
 Երբ ժողովուրդը կարծելով որ մէկ մար-
 դու մը մարմին պատուով չի թաղ-
 վի նէ՝ անոր հողին անդի աշխարհ-
 քը բարբարական կ'ըլլայ , մեռել-
 ներուն վրէժը առնել ուղեցին ող-
 ջերէն : Օօրապետներուն վեցին
 համար ամբաստանութիւն եղաւ՝
 և մահուան դատապարտեցան . ը-
 բաժ յիշատակաց արժանի քաջուի-
 ներուն փոխարէն վարձք առնելու
 տեղ՝ ասանկ մտացածին յանցանքի
 մը համար սպաննելեցան : Ահա՛ ա-
 սանկ կ'ըլլայ որ ամէն աւելորդա-
 պաշտութիւն՝ բնական զգացմունք-
 ները մարդոյս մոռցրնել կուտայ :

8. Վաշնակիցներուն ուղեւոր՝
 ընդհանուր հրամանատարութիւնը
 նորէն Վիւսանդրոսի տունին լա-
 կեղեմոնացիք . քանզի Արգինուսա
 եղած վնասին տեղն ալ լեցրնելու
 ճամբան ասիկայ կրնար գըտնել :
 Հելեսպոնտոսի ծովեղերքներէն
 Վամբսակոն քաղաքը առաւ՝ աթե-

նացիները շուտ մը ետեւէն հաս-
 նելով՝ պատերազմ առաջարկեցին :
 Երարու վրայ քանի մը օր պատերազ-
 մէն հրաժարեցաւ . անոնցմէ վախ-
 նալ ցրցուց , որպէս զի անզգոյշ
 գլտոնըվին . և ինքը զանոնք շուտով
 որոգայթի մէջ ձգէ : Արովհետեւ
 այն կողմերը ասոնք ո՛չ քաղաք ու-
 նէին և ո՛չ նաւահանգիստ , ասանկ
 ապահովուիր և անզգուշութիւնը
 անոնք կը կորսընցընէր : Աթե՛նացիք
 առտըվընէ մինչեւ իրկուն լակեդե-
 մոնացւոց խօսք նետել և սիրտերնին
 ծակելէն ետքը՝ իրիկվան դէմ տեղ
 մը ցամաքը ելլել , և գիշերը ցամա-
 քի վրայ անցընելը սովորութիւն
 ըրեր էին : Ալկիբիադէս՝ որ Թրա-
 կիա քաջված էր , յատկապէս եկաւ
 վտանգը անոնց հասկըցընելու հա-
 մար . բայց չի կրըցաւ մըտիկ ընել
 տալ : Արջապէս Ալեսանդրոս ա-
 նանկ ատեն մը ձեռք ձգեց՝ որ աթե-
 նացիք ցրուած էին . Ագոս Աոգա-
 մոս կամ Այծաղբերք ըսված տեղը
 նաւերնուն վրայ ինկաւ տիրեց . զօր-

քերինին թուրէ անցուց , և երեք
հազար գերի բռնեց :

9. Հրաման եղաւ , որ ասոնք
ամէնն ալ ըսպաննելին , ինչպէս որ
աթենացիներուն զօրապետներուն
մէկը Փիլոկղէս անուն՝ լակեդեմո-
նացիներէն բռնելոված գիրիները
ջարդել տուեր էր : Այս Փիլոկղէս
ալ բռնելոված գերիներուն մէկն էր .
Վիւսանդրոս ասիկայ առաջը բե-
րել տուաւ և ըսաւ , ես քեզի հի-
մա ինչ ընեմ : Փիլոկղէս պատաս-
խան տուաւ . « դուն յաղթող ես .
ձեռքդ անցած իրաւունքը բանե-
ցուր , մենք յաղթող ըլլայինք նէ
ձեզի ինչ կ'ընէինք , դուք ալ մեզի
նոյնը կրնաք ընել » : Արդարութե՛
և գթութեան օրէնք չի ճանչցող
մարդը ինչ գաղանութե՛ մէջ կ'իյ-
նայ , այս օրինակս յայտնի կը ցըցը-
նէ : Վերին գերի ըլլալով բան չի
կրնար ընել , ուստի անիկայ մեռ-
ցընելը՝ առանց յանցանաց մարդ
մեռցընել ըլլալով մարդասպանու-
թիւն է : Արանի թէ վերջին պա-

տերազմին մէջ ալ Յոյները սասանկ
դէշ բաներուն օրինակը չինորոգէ-
ին : Վժռութեան օրէնքը քրիստո-
նէից վրայ աւելի տիրելու է , ար-
դարութիւննիս հեթանոսներուն
արդարութիւնէն աւելի ըլլալը ա-
սանկ կ'ըլլայ :

10. Վժե՛նացւոյ զօրքը այս կեր-
պովս յաղթովէն քիչ մը ետքը Վ-
ժէնք քաղաքը ծովով և ցամաքով
պաշարվեցաւ : Վյս ամբարտաւան
հասարակապետութիւն ձախորդու-
թիւններ կրելով և տկարանալով
առաջ որքան յանդուգն էին նէ ,
հիմայ ալ այնքան պրզտիկցուցին ի-
րենք զիրենք : Վռանց պատերազմի
խօսք տուին ուղածնին տալու , մի-
այն թէ կեանքերնին և նաւահան-
դիստնին (որ երկիրը անբեր ըլլա-
լուն համար այս ալ կեանքերնին ը-
սել էր) , իրենց մնայ : Վսոնց առա-
ջարկութեանը վրայ Սպարտա քա-
ղաքը խորհուրդ եղաւ . կորնթա-
ցիները և թեբայեցիները կ'ըսէին
որ աթենացիք ջարդելու և աշ-

խարհքին երեսէն վերցընելու է :
 Վակեդեմոնացիները այն ատենը
 յիշեցին որ աթենացիք որքան ա-
 դէկուսթիւն ըրած ունին Յունաց
 ամէնուն ալ, և այս բանիս համար
 ջարդելու յանձնառու չեղան :

11. Աթենացիներուն հետ հաշ-
 տուսթիւն եղաւ . որուն պայման
 ները ասոնք են : Պիրէոն նաւահան-
 գիստը ամրացընելու համար չին
 ված շէնքերը փրլ չին, նոյնպէս քա-
 ղաքէն մինչեւ նաւահանգիստ քաշ-
 ված պատը փրլ չի : Աթենացիները
 իրենց համար տասն և երկու նաւ
 պահեն, ուրիշ նաւերը ամէնն ալ
 լակեդեմոնացիներուն և դաշնա-
 կիցներուն տան : Այն պատերազ-
 մին մէջ որքան տեղի տիրեր էին նէ՛
 ամէնն ալ ետ տան : Աքսորած մար-
 դիկնին ետ կանչեն : Արու հետ պա-
 տերազմ ունենան նէ՛ լակեդեմոնա-
 ցիներուն հրամանաւը ըլլայ : Պե-
 ղոպոննիսական պատերազմը քսան
 և եօթն տարի քշելէն ետքը ասանկ
 լըմընցաւ : Վկիղբը փառասիրուսթիը

եղաւ . և այնքան տարի անցնելէն
 ետքը՝ փառասիրութիւն այն թշուա-
 ռութիւններուն պատճառ եղողը
 բողբոլիւն փառքը կորսնցընելով՝
 ուժը եւկելցուցած ատենը յաղթը-
 վեցաւ : Մարդ չէր յուսար ամիս
 մը առաջ՝ որ լակեղեմոնացիները
 պիտի յաղթեն և աթենացիները
 պիտի յաղթըվին : Ասանկ բաներու
 մէջ յայտնի կ'երեւի որ աշխարհքիս
 կառավարը Աստուած է : Այլ այս
 յաղթութիւնս չէ՛ թէ միայն ա-
 թենացւոց միաս բերաւ , այլ բո-
 լոր Յունաց միաբանութիւն վաստը-
 կած ուժը տարարդնեց :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ :

Սպարապետ Գրեգորի = Արեւիկի Կարապետ
 Բիւնը = Սիլվանոս Կարապետ :

1. Արեւիկի Կարապետ փառասէր մէկ
 մը ըլլալով ամէն տեղ տիրել կ'ու-
 ղէր : Օտլային պատերազմին մէջ
 ըրած յաղթութիւն ետքը շատ քա-

ղաքներ անանկ մարդոց ձեռք յանձնեց՝ որ ինք կրնար ուղածին սէս դարձնել : Աթէնքի կառավարութիւնն ալ փոխեց . երեսուն Աբբոն դրաւ . որ իրենց կատաղի դաժանութեանը և խօսք և աղաչանք մըտիկ չընելնուն համար երեսուն բռնաւոր ըսվեցան : Սպարտայի մէջ հարստութիւն մըտցընելով լակեդեմոնացիներուն բարքը աւրեց : Այն իսկ Վիւլիպպոս՝ որ Սիրակուսա ազատեր էր , գըրսէն առնըլած արծաթին մէկ մասը իրեն առնել ուզեց , և ասանկ խայտառակ յանցանքի մը համար գլխին գալէքը գուշակելով փախաւ . ու անարգ մահուանէն անով ազատեցաւ :

2. Աթէնք բռնութեան տակ ճընչըլած ատենը՝ Սպարտա գոնէ իր ազատութիւնը կորսընցուցած չէր : Քսենոփոն կ'ըսէ որ՝ Աթէնքի երեսուն բռնաւորները խաղաղութեան ատենը ութն ամսըլան մէջ այնքան մարդ մեռցուցին , որ գուցէ թշնամիները երեսուն տար-

վան պատերազմի մէջ այնքան աթե-
նացի չէին մեռցուցած : Ասիկայ
չափազանցութեան ձեւով զրուց-
ված ալ բռնեց նէ՝ ասանկ չափա-
զանցութեան տեղի տուող բռնու-
թիւնը պզտիկ բան չի կրնար ըլլալ :
Ալկիբիադէս թէպէտ աքսորված
էր , բայց իր հայրենիքը ազատել
ուղեց . ուստի ելաւ Պարսից թա-
գաւորին դնաց . և առաջարկեց որ
աթենացուց ու Պարսից մէջ մէկ
դաշնադրութիւն մը ընէ :

3. Սպարտացիները ասոր վար-
պետութիւն բան խառնելէն վախ-
նալով՝ Փառնաւազ կուսակալը ի-
րենց կողմը բռնեցին , որ Ալկի-
բիադէսը մեռցընել տայ : Տօպան-
նելու մարդիկ եկան գըտնելու
տունը պաշարեցին . բայց վրան եր-
թալու վախնալով՝ տունը բըռնկ-
ցընելը աւելի կարճ ճամբայ գտան :
Ալկիբիադէս թուրը քաշեց , կըրա-
կին մէջէն անանկ դուրս ցաթկեց ,
դէմն ելլողը փախցուց . բայց ետե-
ւէն առջեւէն քովերէն նետի բըռ-

ներլով՝ անանկ վէրքերով մեռաւ Աւ
 կիբիադէս, որ թէ որ առաջ մեռ-
 նէր նէ՝ աթենացիք իր երեսէն տե-
 սած վնասները չէին տեսներ, թէ
 որ ետքը մեռներ նէ՝ ըրած վնաս
 ներուն դէմ աղէկու թիւն ընելով
 Աթէնքի ազատարար կրնար ըլլալ :
 Աստուած աթենացիք պատժեց՝ Աւ
 կիբիադէսը անոնց տալով, աթե-
 նացւոց պատիժէն ազատվելու ժա-
 մանակը չէր եկած, Աւկիբիադէս
 անոնց օգուտ ընելու ատենը ինքն
 ալ ըրածներուն փոխարէնը դտաւ
 չարաչար մահուամբ : Աւկիբիադէ-
 սի խելքին հետ առաքինու թիւն
 ալ ըլլար նէ՝ երեւելի մարդոցմէն
 կ'ըլլար, խելք չունենար նէ՝ մեծու-
 թեան չի կրնալ հասնելով մեծ վնաս
 ալ չէր կրնար տալ, մեծամեծ գէ-
 շու թիներ ընելուն պատճառ՝ խելա-
 ցի մոլի ըլլալը եղաւ :

4. Աթէնքի վրէժխնդիր մէկ ու-
 ըրչ մը ելաւ՝ թրասիբուղոս ա-
 նուն : Փախչողները գլուխը ժող-
 վեց ասիկայ, եկաւ բռնաւորները

քաղաքէն վաւրնտեց : Վակեղեմոսն
նացիները ասոնց իշխանութիւնն ու
րէն հաստատելու շատ հոգնեցան ,
բայց անօգուտ տեղը : Վախնալու
բան էր . չըլլայ որ այս փոփոխու-
թիւնը շատ արիւնհեղութեւ պատ-
ճառ ըլլայ . քանզի քաղաքին մէջ
շատ մարդ կը գլտնըվէին՝ որ ամէնը
մէկ մէկ գէշուի ըրած էին : Վայց
նոր իշխանութիւնը անցած գացած
բաները ջնջեց , և թրասիբուղոսին
յիշատակը աւելի փառաւորեցաւ
ասով :

5. Վաս ինասներուն և գէշու-
թիւններուն փորձը բաւական չե-
ղաւ ասթե՛նացիները խելօքցընելու :
Սոկրատայ վրայօք եղած անուանի
դատաստանը անոնց նոր անիրաւ-
ութիւնն ընել տալով՝ զիրենք բոլոր
աշխարհքի մէջ խաղբ ու խայտա-
ռակ ըրաւ : Սոկրատ՝ թէ որ քանի
մը պակասութիւնները մէկ դիւառ-
նեմքնէ՛ (որոնց գլխաւորն էր խա-
բեքայութիւնը , որ մէկ ոգիի մը
հաղորդութի՛ ունեցած ցրցընելով

զինքը՝ մարդարէի տեղ անցնիլ կ'ուզէր), ճշմարիտ փիլիսոփայութեան մէկ կենդանի օրինակն էր. մարդուն սիրտը առաքինութեան սերմունք մըտցընելու համար միտքը բանալով. քանզի անմիտ մարդոյն առաքինութիւնը անկանոն է. ըսել է որ առաքինութիւն չէ՛. որովհետեւ առաքինութիւնը՝ ինչպէս որ ամէն աղէկ բան, կանոնի համեմատ պիտի ըլլայ: Մարդկային պարտականութենէն՝ ձեռքէն եկածին չափ և խելքը հասածին չափ պակաս բան չէր թողուր: Վէշ և լեզուանի և անհամբեր կին մը ունէր. բայց ինքը անոր հետ կը վարվէր. սատերազմերու մէջ կըտրիճ էր և սըրտոտ. անգամ մը Ալկիբիադէսը մահուանէ ազատեց ձեռքէն բռնելով և սատերազմին վտանգաւոր տեղէն դուրս քաշելով: Վարենախանձ քաղաքացի էր. գործքերու մէջ ամենեւին կաշառք և աղաչանք չէր ընդուներ. աղքատ էր, բայց հարըստանալու ալ սէր չունէր, աւ

ղէկ մարդոց ամէնուն հետ ալ բա-
 րեկամ էր . սոց կըթուէ ինքըզինք
 տուած էր՝ որ քաղաքին մէջ խելա-
 ցիներ շատցնէ . ուստի իր հայրե-
 նեացը կողմէն փառք և շնորհակա-
 լութիւն ընդունելու արժանի էր :
 Փիլիսոփայութեան կողմանէ՝ ամէն
 բան բարոյականի կապած էր . ինքը
 ալ միութիւնը կը ճանչնար բաղ-
 մաստուածից քաղաքի մը մէջ , բայց
 մարդու չէր ըսեր որ ան մէկ է .
 մանաւանդ թէ ինքն ալ կռապաշ-
 տութիւն կ'ընէր : Ասանկ հաւատքի
 կողմանէ անտարբեր ըլլալուն հա-
 մար է որ՝ անցեալ դարու փիլիսո-
 փայներուն կամ վոլդեռեաններուն
 մէջ շատ գովողներ ունեցաւ : Ա-
 ղանդաւորներն ալ ըսելու համար-
 ձակեցան , թէ արքայութիւն գնաց
 Սոկրատ . թէպէտ մեռնելու ատենը
 կտակ ըրաւ որ Ասկղեպիոս կուռ-
 քին խոստացած աքաղաղի (խօրօզի)
 զոհը կատարեն ու չի մոռնան : Սոկ-
 րատ իր ատենը եղած իմաստակնե-
 րը բանի տեղ չէր դներ . որ ամէն

բանի վրայ վճիռ կը կըտորեն, և իւրենք բան մըն ալ չեն գիտեր, և պարսպ խօսքերը գիտու թեան տեղ կը ծախեն: Անոր համար իմաստակները Սոկրատայ թշնամի եղան: Աշակերտներուն նոյ վրայ աղէկ տեղեկու թիւններ կուտար, բայց ինչպէս որ ըսինք՝ կուսպաշտու թիւնը ինքն ալ ձեռքէ չէր ձգեր, աշակերտներուն ալ կը խրատէր որ ձեռքէ չի ձգեն: Արեն թշնամիները շատցան, մեռցընելու որոգայթ լարեցին, աւելորդապաշտ ուամիկին աչքէն հանել կ'ուղէին Սոկրատ: Ասիկայ գէշ, և մարդու թեան չի վայելլու բան մըն է, բայց կրիւք կուրացողները իրենց ուղածը ընելու համար ասկէց գէշ բաներու ալ կը զիջանին (իր թիքեայ կ'ընեն):

6. Անոր թշնամիներուն գլուխ եղաւ Արիստոփանէս բանաստեղծը, քանզի Սոկրատ չէր ներեր ասոր լրբու թեանը, անոր համար Արիստոփանէս ալ սկսաւ Բեպթոյի խաղերու մէջ վարպետու թեամբ ասի-

կայ վար զարնել, որ հասարակու-
 թեան աչքէն հանէ : Անիտոս և
 Մելիտոս՝ ուրիշ թշնամիները գը-
 լուխնին ժողվեցին և մէկ դիէն ալ
 ասոնք կը զըստարտէին : Արջապէս
 Մելիտոս յայտնի ամբաստանու թի-
 րաւ Սոկրատայ դէմ : Սաւ որ՝
 տղայքը գլխէ կը հանէ, նոր ասու-
 ուածներ մէջ կը բերէ, կամ մանա-
 ւանդ՝ աստուածները չի ճանչնար :
 Սոկրատ միայն իր վարքը պատմելով
 պարզապէս՝ ինքըզինքը արդարացոյց,
 բայց մեռնելու դատապարտեցին :
 Տուգանք մը տալու յանձնառու ըլ-
 լալով մեռնելէն կրնար ազատիլ .
 բարեկամներն ալ ստակը տալու ե-
 ղան, բայց ինքը չուզեց . ըսելով որ՝
 տուգանքը տամնէ՝ ես զիս յանցա-
 ւոր խոստովանած պիտի ըլլամ : Ալ
 հասարակութեանն ալ ըրած աղէ-
 կութիւնը երեսնին տուաւ ըսե-
 լով, ինձի կ'երեւի որ՝ հասարակաց
 գանձէն իմ ապրուստըս տրուիլը ա-
 ւելի իրաւունք է : Այս մեծապէս
 գովելի խելացին խոնարհութիւն

ըսված բանը չէր գիտէր . ինչ որ
կ'ընէր նէ՝ իրեն սարտականու թիւ
նրն էր . և մէկ մարդ մը իրեն սար-
տականու թիւնը կատարելու հա-
մար իր հայրենիքը սարտական չը-
նէր զինքը սընուցանելու , թէ որ
իր սարտքը կատարելը՝ իրեն աս-
րուստ ճարելուն արգելք չըլլար
նէ : Սոկրատայ այս անխոհեմ խօս-
քը դատաւորները շատ նեղացոյց .
որ մոլեխինդ խմելու դատապար-
տեցին զինքը , այսինքն՝ մեռնելու .
քանզի մոլեխինդը (սալտորանը)
թունաւոր խոտ մըն է . ուտողը
կամ քամուկ ջուրը խմողը կը մեռ-
նի : Այբ որ դատապարտու թիւնը
խնայաւ՝ ըսաւ . « Այս պիտի մեռ-
նիմ . բնու թիւնը զիս ծնած ատե-
նէս դատապարտած է մեռնելու .
բայց շատ չանցնիր ճշմարտութիւն
ալ իմ թշնամիներս խայտառակ ըլ-
լալու կը դատապարտէ » :

7. Մարեկամները զինքը բանտէն
հանել ուղեցին . և փախչիլ յորդո-
րեցին . սպատասխան տուաւ , որ ա-

սիկայ օրէնքը ոտքի տակ առնել կ'ըլ-
 ւայ : Անոնելու օրը հետերնին հոգ-
 ւոյ անմահու թէր վրայ խօսեցաւ .
 որ առաքինի մարդը շատ կը մխի-
 թարէ : Արջապէս իրեն մահուանը
 պատճառ ըլլալու մտեխինդը խը-
 մեց՝ մէկ բժշկարար դեղ մը խմածի
 պէս : Անոնելէն ետքը աթենացի-
 ներուն աչքը բացվեցաւ . իրենց ա-
 նիրաւու թենէն իրենք գանեցան .
 յիշատակը պատուեցին . և թշնա-
 միները սաստիկ պատժեցին : Այս
 ամբաստանու թիւնը և անիրաւու-
 թիւնը այնքան ծանր էր որ , Սոկ-
 րատ անսոսու թեան համար մեռցը-
 նող դատաւորները բանաստեղծնե-
 րուն կը ներէին որ աստուածներուն
 խայտառակու թիւնը Քրիստոսի վրայ
 հանեն :

8. Արեսուն բռնաւորները Սոկ-
 րատայ բան մը չըրին . թէպէտ Սոկ-
 րատ միշտ անոնց դէմ կը խօսէր :
 Անոնք Աթէնքէն վրոնտըվելէն ետ-
 քը՝ Քրիստոսէ 400 տարի առաջ՝
 Ժողովրդեան վճռով այս մարդըս

սպաննելուցաւ : Մայց փիլիսոփայնե-
 րէն ասոր օրը և ասկէց ետքը ա-
 ռաջինէն ելել շատցան : Մղանդ ա-
 ղանդ բաժնելուցան , իրարու հա-
 կառակ ամէն կերպ կարծիք հնարե-
 ցին , մէկին ըսածը մէկալին դէմ
 էր , ամէնն ալ իրենց խելքին հա-
 սածը կը սորվեցընէին , և աշակերտ-
 ներ ալ ունեցան , որ ամէնն ալ
 մեր խելքին հասածին կը հեռուիմք
 ըսելով սուտ կ'ըսէին , ուրիշի խելք
 էր որ իրենց կ'առաջնորդէր : Մայց
 թէ ուրիշին թէ իրենց , խելքն էր
 առաջնորդնին , և մարդկային խել-
 քը ինքնին ճշմարտութիւն գըտնե-
 լու իրքան տկար ըլլալը՝ այս աղանդ-
 ներուն իրարու չի նմանելէն յայտ-
 նի է : Ղճմարիտ իմաստութիւնը ,
 որն որ հին ատենական իմաստունները
 սորվելու համար ճամբորդութիւններ
 կ'ընէին , հին ազգերէն կը հարցը-
 նէին , և անանկով ալ կատարեալը
 չէին կրնար ձեռք ձգել , բոլորու-
 վին մոռցըլուցաւ , այս աղանդները
 անոր տեղը անցնելով՝ իմաստութե

անուներ ասոնք յափշտակեցին : Այս
 աղանդ հնարող իմաստուններուն
 մէջ մէկն ալ չկար որ իր տգիտութիւնը
 խոստովանէր . Սոկրատ ասիկայ կ'ը-
 նէր , բայց այն ալ ինչպէս կ'երեւի
 անկեղծաբար ես չեմ գիտեր ըսել
 չէր . գիտեմ ըսողները խայտառա-
 կելու համար որոգայթ մը լարել
 էր . թէպէտ ինքը այս որոգայթը
 գէշի չի բանեցուց : Քանզի միշտ
 այս ճամբով իր աշակերտները և
 խօսակիցները կը հարկադրէր , որ
 իրենց գիտցածին չասլաւ ինին , ճըշ-
 մարիտը փրնտրուեն , և առաքինի
 վարուց տէր ըլլան :

Գ. Յոյները այն ատենները մէկ
 երեւելի արշաւանք մը ըրին : Պար-
 սից տէրութիւնը հաստատուն օ-
 րէնք մը չունէր . թագաւորին կամ-
 քը օրէնքի տեղ կ'անցնէր . և այն
 օրերը փոփոխութիւններ շատկէկ
 ըլլալով սլարսկաստան՝ խռովութիւն
 անսպասելի էր : Այրկու եղբայր , թա-
 գաւոր ըլլալու համար մէկը մէկալը
 կ'ըսպաննէր , կամ թագաւորութե՛

կը մերժէր : Այն ատեննական թագաւորնին՝ Արտաշէս ուշեղ ըսլածն էր : Այլբայրը Աիւրոս՝ որ սպարապետութեան սրաշտօնով փոքր Ասիա կը կենար , զինքը եղբօրմէն աւելի արժանաւոր տեսաւ Պարսից թագաւոր ըլլալու . սպարտացիներուն բարեկամ ըլլալով՝ անոնցմէ իրեն օգնութիւն առաւ . տասն և երեք հազար Յոյն ետեւէն ինկան կ'երթային . չէին գիտեր թէ ո՞ւր և ի՞նչ բանի համար կ'երթան :

10. Ասոնք տարաւ դէպ ՚ի Ռաբելոն , և հոն հանդիպեցաւ իր եղբօրը , որ անթիւ բաղմութեամբ վրան կուգար . ծեծկրկեցաւ և սատերազմի մէջ մեռաւ : Ռայց Յոյները իրենց քաջութիւնովն ու սատերազմական կրթութիւնովը թշնամեաց այսքան բաղմութիւնը բանի տեղ չի դնելով՝ երբ որ զէնքերնին ուզվեցաւ նէ , կը մեռնիմք՝ զէնք չեմք տար ըսին : Այտ դարձան , և միշտ ճամբու վրայ սատահած թըշնամի ազգաց հետ սատերազմելով

և յաղթելով՝ հինգ վեց հարիւր
 ժամու ճանապարհ ընելէն ետքը
 տասը հազար հոգի Հելլենաստոս
 եկան : Ասոնց ետ դառնելու ատե-
 նը քանի մը հոգիէն ետքը Քսենո-
 փոն զօրապետու թիւն ըրաւ . և ետ
 դառնալնուն ալ ճանապարհորդու-
 թեան պատմու թիւնը գրեց գեղե-
 ցիկ ոճով և լեզուաւ : Արտսեր Աիւ-
 րոսը շատ կը գովէ Քսենոփոն :
 Իայց որքան աղէկ մարդ ըլլայ նէ՝
 ըրած գործը և փառասիրու թիւնը
 շատ գէշ է :

Գ Լ ՈՒ Խ Ժ Գ .

Ագեաի շայոս Ասիա կ'անցնի : Պարսից հեթ
 ամօթալի հաշար-թիւն : Թեթի հասարա-
 կապեար-թիւն :

1. ՏԱՍՆ հազար հոգիին փառօք
 ետ դառնալը՝ Յունաց սրտին մէջ
 պատերազմի եռանդ մը ելլելցուց :
 Ասիա գտնելող գաղթականները ո-
 րովհետեւ Աիւրոսի ապստամբու-

Թեան հաղորդ գտնելեցան՝ վտանգի մէջ էին : Անոր համար Յոյները զէնք առին որ այս գաղթականները պաշտպանեն , և Պարսից ուժը աւելի տկարացրնեն : Սպարտայի թագաւորը Ագեսիդայոս՝ ասոնց զօրապետ տրուեցաւ :

2. Այս մարդս ճշմարտապէս քաջ մարդոցմէն մէկն էր . իր հայրենեացը հին օրէնքէն և սովորութենէն ամենեւին զատւած չէր . օրինաց հնազանդ , ամէնուն սիրտը շահելու վարպետ , ուստի ամէնն ալ զինքը կը յարգէին : Իրեն խորհրդակից երեսուն զօրապետ ուղեց , քիչ ատենի մէջ իր կտրիճութիւնը Ասիայի մէջ գտնելով թշնամիները դողացուց : Պարսից թագաւորին զօրապետները հետը դաշնադրութեան մտնել ուղեցին , և խօսակցութեան մէջ ո՛չ շողոքորթութիւնին իրենց ազդեց , և ո՛չ սպառնալիքներէն վախցաւ : Իրեն արիական պարզութիւնովը անոնց փառքը յաղթեց :

3. Սխտքը դրած էր որ Պարսից կայսերուն էրկիրները ներս մտնէ . այլ Պարսից տէրութիւնը վարպետութիւն բանեցընելով՝ Սպարտայի դէմ ահագին դաշնակցութիւն մը հաներ էր յունաստանի մէջէն : Թեբէ , Աորնթոս , Արգոս և Աթէնք գլուխ քաշեցին . լակեդեմոնացւոց հնազանդիլ չէին ուղեր : Ալիւսանդրոս՝ որ Հելլէսպոնտոսի կողմերն էր , շուտով ետ դարձաւ այս թշնամութեանը առաջը առնելու և խափանելու համար : Ասիկայ թէ պէտ աղքատ՝ բայց իշխանութեան ետեւէ ըլլալով Ագեսիդայոսի դէմ թշնամիներ հանած էր . դաշնակցաց հետ ծեծկրօլելով մեռաւ . և մահն ալ լսողներուն շատ ցաւ չի տուաւ :

4. Ալիւսանդրոս մեռնելէն ետքը իմացվեցաւ որ Ագեսիդայոսի ետ դառնալը հարկաւոր էր : Ափորները հրաման խրրկեցին որ ետ դառնայ . և ինքը առանց ուշանալու դարձաւ . թէպէտ յաղթութե գեղեցիկ յոյս ունէր , բայց հնազանդութե համար

ամէնն ալ ետ ձգեց : « Վիտեմ ըսաւ , որ օրինաց հնադանդ եղողը ուրիշին հրամայելու իշխանութիւն կ'ունենայ » : Օ, օրքը Ռէովտիա բերաւ . պատերազմի պատրաստութեամբն իմացաւ որ՝ լակեդեմոնացւոց նաւատորմիցը թշնամիներու նաւերուն հետ կռուելով յաղթը վեր և ցրուեր է : Չի գիտնալու եկաւ . ծովային զօրքը յաղթելին լըսածի պէս հրապարակաւ գոհութեան զոհ ըրաւ . և ասանկ զօրացը սիրտ տալէն ետքը Կորոնէա ըսված տեղը թեքայեցւոց հետ ծեծկրկեցաւ : Յաղթեց . բայց ծեծի մէջ վիրաւորվեցաւ :

Ք. Ա.
587

5. Ի այց Կոնոն՝ աթենացւոց զօրապետը , Վակոնիայի ծովեղերքը զարկաւ աւրըշտրկեց . և Պարսիկներէն ըստակ առած ըլլալով՝ Աթենքին պարիսպը նորէն շինեց : Սպարտա ուրիշ բանէ այնքան չէր վախնար , որչափ որ աթենացւոց նորէն ուժովնալէն , Պարսից հետ աւժօթալի հաշտութիւն ընելուն խայ-

տառակու թէր յանձնառու եղաւ ,
 ասոնք չիզօրացընելու համար : Վեւ
 պանու թեան պաշտօնը տրուեցաւ
 Նդալկիդաս անուն մեկուն , որ Ն
 գեսիղայոսի թշնամի էր : Հաշտու
 թեան գլխաւ որ պայմանը այն եղաւ ,
 որ փոքր Նսիայի Յունաց քաղաք
 ները Պարսից ձեռքը մնան : Յու
 նաստանի համար ատեն մը ազատու
 թեան և փառաց սէրը որքան օգ
 տակար էին նէ՝ հիմայ ալ անմիաբա
 նու թիւնը անանկ մնասակար եղաւ :
 Նյս դաշինքս հաստատուեցաւ Սա
 րաթոնի ծեծէն 107 տարի ետքը .
 Քրիստոսի թուականէն 387 տարի
 առաջ :

6. Վակեդեմոնացիք այս ճամ
 բով նորէն բոլոր յունաստանի վրայ
 իշխեցին , բայց բռնու թիւ : Փեբի
 դաս՝ որ զօրապետներուն մէկն էր ,
 Թրակիայի ոլինթիացի ըսլաճ ժո
 ղովուրդը հնազանդեցընելու հա
 մար հետը շատ մը զօրք առաճ էր :
 Ղամբու վրայ Թեբէի մօտ ինջաւ
 բանակ դրաւ . քաղաքին մէջն ալ

երկու կողմ բաժնւրլած էին, և խը
 ուովու թիւն կար: Վլխաւ որն երուն
 մէկը եկաւ ասիկայ հետը առաւ,
 քաղաքին բերդը ասոր յանձնեց,
 որ խարդախու թեան ճամբով տի
 բեց: Խաղաղութե՛ ատեն այս բըւ
 նու թիւնս ըլլալու բան չէր: Բայց
 երբ որ Սպարտա գանգատ եղաւ
 ասոր համար, Վգե սիղայոս պարզա
 պէս ըսաւ. առաջ այն նայելու է
 որ Փեբիդասին ըրածը օգտակար է
 մի: Վյս երեւելի մարդը պատե
 ըազմը շատ կը սիրէր, և հասարա
 կապետութե՛ սկզբունքներով տու
 գորլած էր միտքը. կը կարծէր որ՝
 ինչ բան որ օգտակար է՝ ներեալ
 է: Ղճմարիտ օգուտը գիտնար, և
 մէկ բանին օգուտը ամէն կողմէն
 նրկատեր նէ՝ սկզբունքը գէշ չէր.
 Բայց այն ինչ օգուտ է որ՝ համ
 բաւնին կը կոտրէ. անիրաւութի
 նին գիտնալով ամէն մարդ անոնց
 մէ կը կասկածին. և մէկ մարդէ
 մը ուրիշները կասկածին նէ՝ ուրիշ
 ներէն տեսնելու օգուտը ետ կը

մնայ : Այլ այսքան մնասներու փո-
խարէն ինչ է տեսած օգուանին .
մէկ բերդ մը և մէկ քաղաք մը ձեռք
ձգել . այն ալ՝ առանց բնակչացը
սրտին վրայ տիրելու : Մասնաւոր
օգուտը ընդհանուր օգտէն զատ
վի նէ՝ անունը միայն օգուտ կը մը-
նայ . ինքը կ'ըլլայ մնաս : Ագետի զա-
յտին առաջարկու թեանը վրայ լա-
կեղեմոնացւոց դատաստանը զար-
մանալի է : Փեբիդաս դատապար-
տեցին որ տուգանք տայ . և վճիռ
ըրին որ թեբէի բերդը ձեռքէ չի
հանէն , պահասպան զօրք դնեն : Ա-
սով Փեբիդասին ըրածը արդարա-
ցաւ . որովհետեւ տիրած բերդը
ընդունեցին . միայն ուրիշ օգուտ
մըն ալ կար Փեբիդասին դատա-
պարտութենէն . այն ալ ըրին՝ որ
ձեռվընին ստակ անցնի :

7. Չորս հարիւր թեբայեցի Ա-
թէնք գացած ասպաւինած էին . ա-
ռանձին վճռով մը արսորվեցան :
Ասոնց մէկն էր Պեղոպիդաս . երե-
ւելի մարդ՝ թէ աղնուականութե

կողմէն՝ և թէ՛ իր արժանաւորութիւնը
համար . թէպէտ այն ատենը շատ
պըզտիկ էր , բայց իր հայրենիքը
բռնու թէ՛ ազատելը միտքը դրաւ :
Քաղաքին մէջէն իրեն կուսակից
մարդ վաստրկեցաւ . և ետքը տասն
և մէկ կտրիճ մարդով գաղտուկ քա-
ղաքը մտաւ : Քաղաքացւոց զըկանք
ընողները ջարդեց , և ժողովուրդը
ազատութեան հրաւիրեց : Շուտ
մը աթենացի մէկ խումբ մը զօրք
ալ եկաւ , աքսորվածները ամէնն ալ
մէկ տեղ . բերդը պաշարվեցաւ . և
լակեղեմոնացիները ստիպվեցան
պարպելու . օգուտ կարծածնին ալ
ձեռվընին չի մնաց :

8. Թէ որ Թեբէի մեծերը քիչ
մը աւելի արթնութիւն ունենային
նէ՛ այս գէշութիւնս գրլխընուն
չէր գար : Մէկ հացկերոյթի մը ժող-
վըված էին . անոնց մէկին նամակ
մը տրըվեցաւ , որուն մէջը այս ըւ-
լալու բանս գրված էր : Մարդը՝
գործոյ վերաբերեալ գիրերուն ժա-
մանակը չէ՛ ըսելով գիրը բանալ

անգամ չուզեց . բայց գործոյ վերաբերեալ բաները ձգած և հացկերոյթի գացած ատեննին այս բանը եղաւ :

9. Պեղոպիդասի պէս մէկն ալ կար . որ քաղաքացիք չի ճանչնալով ինչ մարդ ըլլալը՝ քաղաքը թողեր էին : Ասիկայ էր Ասլամինոնդաս . ալնուական՝ բայց աղքատ . իմաստուն և փիլիսոփայ՝ բայց խօսիչ չէր սիրեր ուրիշ բան գիտցողներուն պէս : Չէին յուսար որ ասկէց իրենց մնաս մը հասնի : Ասիկայ Պեղոպիդասին հետ միանալով՝ բանը առաջ երթալուն շատ օգնեց : Արկուքը ազգասիրութիւն և առանձին բարեկամութեամբ իրարու կասկած ըլլալով՝ թեբայեցւոց փառք և սարժանք եղան : Աթենացիք իրենց բնական թեթեւութիւնը շուտ մը այս հասարակապետութիւն ձգեցին : Բայց Սպարտայի զօրապետ մը Աթենքի նաւահանգստին տիրելով՝ շուտ մը իմացան ատենալիք որ տակաւին թեբայեցւոց կա-

բօտ են եղեր, և անոնց օգնուէր
դիմեցին :

10. Ագեսիղայոս Մէովտիա խոր-
կըվեցաւ : Շատ ծեր ըլլալով՝ դէմ
առ դէմ պատերազմի երես չունէր,
մանր մուկնր կռիւներ ըրաւ հե-
տերնին, որով թեբայեցիք լակե-
դեմոնացիներէն վախնալուն տեղը՝
անոնց կռուելու կերպը սորվեցան,
որ ետքը իրենց ալ անոնց հետ կրու-
ուիլը դիւրին եղաւ : Ագեսիղա-
յոս վերաւորլած ետ դարձաւ : Ան-
դալկիդաս ըսաւ, տեսա՞ր վարպե-
տու թէ՞ դ վարձքը, որ գնացիր թե-
բայեցիներուն պատերազմիլ սորվե-
ցուցիր, դուն չըլլայիր նէ՝ անոնք
պատերազմը ո՛չ կրնային և ո՛չ ալ
կ'ուզէին սորվիլ : Այլ յիրաւի թեբա-
յեցիք Տեգիւրայի պատերազմին ե-
րեւելի քաջութի՛ ըրին, որ Պեղոսի-
դաս իր զօրքին երեքին չափ բազմու-
թեամբ թշնամեաց զօրքին մէջէն,
մէկ դիէն մտաւ մէկալ դիէն ելաւ :

11. Մայց յունաստան այսքան
երկպառակութիւն հոգնելով մէկ

ընդհանուր խաղաղութեան մը կը
 փափարէր : Վաշնադրութեան խօ-
 սակցութիւնը Սպարտա բացվե-
 ցաւ . Այսամինոնդաս այն տեղը իր
 հայրենեացը անկախ և ազատ մնա-
 լուն վրայ հաստատուն կեցաւ :
 Ազեսիդայոս՝ որ թեբայեցիներուն
 շատ նեղացեր էր , ընդհանուր
 հաշտութեան պայմանագիրէն ա-
 նուննին աւրեց : Աւրիշ Յոյները
 վախերնուն ստորագրեցին : Թե-
 բէ հազիւ շունչ առնելու սկսած
 ատենը մէկ ահագին մրրիկ կը սպառ-
 րասարվէր , որ գլխուն վրան պիտի
 ճաթէր :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ .

Թեբայեց-ոյ յաջողութիւնը Ռինէ-

Այսամինոնդայ մահը :

1. ԱՆԱՆԿ կը կարծրվէր որ Թե-
 բէ բողորովին աշխարհքիս վրայէն
 պիտի վերնայ : Ահեղեմոնացիները
 ասոնց վրայ պատերազմի կու գային .

յունաստանի ամէն ժողովուրդ ալ
 ասոնց հետ մէկ տեղ էր : Եւ այց հայ-
 րենասիրութեան ոգւով վառված
 ազգի մը համար Պեղոպիդաս և Ա-
 պամինոնդասի պէս երկու հոգի հե-
 ըիք եղան , որ ոտքի տակ չերթան :
 Ապամինոնդաս՝ մեծ սպարապետ ե-
 ղաւ , Պեղոպիդաս յատուկ պաշտօն
 մը չունէր . սրբազան գոնդ ըսվածնե-
 րուն գլուխ եղաւ : Այս գունդիս
 մարդիկն էին երեք հարիւր կտրիճ
 երիտասարդ , որ մինչեւ մեռնելու
 աստիճան իրար պաշտպանելու եր-
 դումով խօսք կուտային : Տրնէն
 դուրս ելլելու ատենը մայրը լալով
 աղաչեց իրեն որ անձինը զգուշա-
 նայ : Պեղոպիդաս ըսաւ , այդ խը-
 ըատը սա երիտասարդներուն տունը :
 Աս անոնց գլուխն եմ , ինձի ալ ա-
 պրսպրէ որ անոնք պահեմ իմ
 պաշտպանութեամբս :

2. Ապամինոնդաս ճամբայ ելած
 ատենը եկան իրեն ըսին որ՝ հմայու-
 թեան նշանները աղէկ չեն ցրցրնէր
 կոր : Ասանկ երեւելի մէկ բան մը

ըլլար նէ՝ քու բմերը մէկ անասուն մը
կը զոհէին , և անոր փորը նշաններ
կար որ իրենք կը ճանչնային . անոնց
նայելով այն բանին աղէկ կամ գէշ
ըլլալը կը հասկընային : Հմայութեան
նշան ըսվածը ասոնք են : Ապամի-
նոնդաս ըսաւ Հոմերոսին ըսած խօս-
քը . հայրենիքը պաշտպանելէն աղէկ
հմայութեան նշան չըլլար : Վայց զօ-
րաց սիրտը ապահովցընելու համար
յաջող և աղէկ նշաններու ձայն հա-
նեց : Անլացի մարդը՝ հասարակաց
խեղճութեանը պատճառ եղած ա-
ւելորդապաշտութենէն ալ հասա-
րակաց օգուտ կըրնայ հանել :

3. Աւելորդ պատերազմը բա-
նը որոշեց : Ապամինոնդաս մինակ
վեց հազար չորս հարիւր մարդով
քսան և վեց հազարի չափ թշնա-
մեաց զօրքերուն վրայ վաղելը իրեն
հարկ սեպեց : Վիտէր որ լակեդե-
մոնացւոց դաշնակիցները անոնցմէ
գոհ չէին . ազատութեան սէրը և
բռնութենէն սոսկալը թերայեց-
ւոց ինչ աստիճան սիրտ և կտրիճու-

Ք. Ա.
370

Թիւն տրված էին , այն ալ կը տեսնէր . ուրիշ ատեն այսքան զօրքով այնքան բազմութեան դէմ ելլելը յանդգնութիւն էր ալ նէ՛ հիմակ վան այս պարագայներուս մէջ խոհեմութիւն և արիութիւն էր : Ինքն ալ անանկ աղէկ կարգադրութիւն բրաւ , և զօրքը անանկ կատարեալ հնազանդեցան իրեն , որ կատարեալ յաղթութիւն վաստրկեցաւ : Այն օրվան չափ մարդ մեռած չէր լակեղեմոնացիներէն պատերազմի մէջ : Թագաւորնին Աղէոմբրոզոս՝ և հազար չորս հարիւր կտրիճ երեւելի մարդիկ բուն Սպարտա քաղաքէն , հոն զարնրվեցան մեռան : Այլ մէկ Փեբիդասի մը խարդախութիւն , և լակեղեմոնացւոց անիրաւութիւնը բանը ո՞ր տարաւ : Իաչնակից զօրաց համար պատմութիւնը բան չըսեր : Այսամինոնդասին խորհածը խոհեմութիւն էր ալ նէ՛ յաջողուածը հարկաւորապէս աստուծմէ լակեղեմոնացւոց անիրաւուէր պատիժ ճանչնալու է , որովհետեւ պատմու

Թեանը բան չըսելուն նայելով կրը-
նամք ըսել՝ որ Թեբայեցիք քիչվոր՝
և Թշնամիներնին շատվոր մնացին .
և աստուած յաղթուԹիւնը քիչ-
վորին տուաւ :

4. Ահեղեմոնացւոց յաղթը
վելուն բօթը Ապարտա հասաւ նէ՝
քաղաքին մէջ հանդիսաւոր տօնա-
խրմբուԹիւն կար : Ափորները չու-
ղեցին հանդէսը դադրեցընել : Ա՛ե-
ռած մարդոց անունը ցանկ ըրին՝
պատերազմի գացողներուն տունը
խրրկեցին : Արձ տընէն որ պատե-
րազմին մէջ մեռած կար նէ՝ շատ
ուրախուԹիւն ըրին անոնք . որպէս
Թէ իրենց այրը կամ հայրը կամ զա-
ւակը ասանկ փառաւոր մահուան
արժանի են եղեր : Փախչողներուն
տէրերը անմխիԹար սուգի մէջ մը-
տան : Պատերազմէ փախչողներուն
պատիժ կար . այս անգամիս այն պա-
տիժը վերցուցին . քանզի Թէ որ ա-
սոնք պատժըվէին նէ՝ քաղաքը պահ-
պանելու մարդ չէր մնար : Ագեսիւ
ղայոս ըսաւ . Թող օրէնքնիս օր մը

քնանայ՝ որ ետքը ուժով արթննայ :
 Այս դիպուածիս Սպարտա իրեն
 հին համբաւոյն արժանի գլանըվե-
 ցաւ . բայց օրէնքին քունը՝ ձե-
 րութեան քուն էր :

5. Պատերազմէն ետքը լակեդե-
 մոնացւոց դաշնակիցները սկըսան
 քիչ քիչ անոնցմէ հեռանալ : Թե-
 բայեցիները այս տեսնելով Վակո-
 նիա մտան . որ Սպարտայի դաւառն
 է . սկսան երկիրը զարնել : Սպարտա
 մայրաքաղաքը պարիսպ չունէր . և
 կ'ըսէին որ՝ պարըսպի ասպաւինիլ
 կրնիկ մարդու գործ է . մէկ տե-
 րութեան մը պարիսպ՝ իրեն զօրքը
 ըլլալու են : Ագեսիլայոս՝ քաղաքը
 մըտաւ պաշտպանելու համար . բայց
 Ասպամինոնդաս թէ որ ուզերնէ՝ քա-
 ղաքը նեղը կը ձրգէր : Չուզեց ա-
 նանկ անուանի և հռչակաւ որ քա-
 ղաք մը կործանել . այլ միայն մեսե-
 նիացիները լակեդեմոնացւոց ձեռ-
 քէն աղատեց . որ բռնութեան տակ
 մնացեր էին : Մեծ փառօք իր տե-
 ղը դարձաւ :

6. Պեղոսպոննեոսի վրայ երթալ
 լուն սլառձառաւը զօրապետութիւն
 Ապամինոնդասին վրայ որոշվածէն
 չորս ամիս եվել մնացեր էր . որով
 հետեւ հասարակաց օգուտը ասանկ
 կը սահանջէր : Ասիկայ իրեն վրայ
 յանցանք մը սեպելով՝ ետ դարձած
 ատենը վրան ամբաստանութիւն ըրին
 նէ՛ ինքը խօսեցաւ իրեն համար .
 և ըսաւ որ՝ թէ որ այնքան ժամաւ
 նակ ըրած բաներըս իմ վրաս կը ձը
 գէք , հասարակապետութիւն անանկ
 բաներ ըլլալուն կամք չունէր կ'ը
 սէք նէ՛ ես մահուան սլառիժը կա
 մաւ կ'ընդունիմ : Աստասպարտե
 լուն տեղը զարմացան ըսածին վրայ :
 Օրինաց հնազանդ ըլլալուն համար
 աւելի կը յարգէին զինքը , բան թէ
 ըրած յաղթութեւն համար : Թ՛չնա
 սիները ասոր մէկ սղտիկ սլաշտօն մը
 տալ տուին , որպէս թէ զինքը սրղ
 տիկցընէլու համար : Այն սլաշտօնն
 ալ աղէկ կատարեց . և ըսաւ . յիրա
 ւի քաղաքացիք սլաշտօնով սլառիւ
 կը գըլտնեն . բայց երբեմն ալ սլաշ

տօնը՝ իր պաշտօնատարին երեսէն պատուական կ'ըլլայ :

7. Աթէնք և ուրիշ քանի մը տէրութիւններ այս նոր ծաղկած հասարակապետութեւս դէմ նորէն լակեդեմոնացւոց հետ դաշնակից եղան , քանզի ասոր մեծնալը ամենեւին աչքերնին չէր քաշեր : Պարսիկներուն ալ ինկան անոնցմէ օգնութիւն խնդրելու համար : Թեւ բայեցւոց կողմէն ալ Պեղոպիդաս գնաց , և քիչ ատենի մէջ շատ յարգութիւն ստացաւ Արտաշէսին առաջը , և դիւրաւ համոզեց անիկայ՝ որ Սպարտայի և Աթէնքի օգնելէն աւելի թեբայեցւոց օգնելը Պարսից տէրութեանը աղէկ է . քանզի թէ՛ աթենացիք և թէ՛ լակեդեմոնացիք երկար ատեն թշնամութիւն ըրին Պարսից տէրութեանը :

8. Անկէց ետքը Թեասաղիայի Փերէս քաղաքը տիրող Աղէքսանդրոս անուն բռնաւորին դէմ խրրկրվեցաւ : Անիկայ քաղաքէն փախցընելէն ետքը ինքն ալ անխոհեմութիւն

մը ընե լով անդգոյշ բըռնելեցաւ :
 Եւ թէպէտ բռնաւորին ձեռքը գե-
 րիի պէս էր՝ զանիկայ պատժելու ըս-
 պառնացաւ : Եւ բռնաւորը հարցուց .
 ինչո՞ւ ատանկ բաներ խօսելով զիս
 կը գրգռես որ քեզ մեռցընեմ : Պե-
 ղոպիդաս պատասխան տուաւ . անոր
 համար ատանկ կ'ընեմ որ , դուն ալ
 օր առաջ զիս մեռցընելովդ անձե-
 րուն և մարդիկներուն աչքէն իյնաս .
 և քու կորուսող ալ շուտով ըլլայ :
 Եւ պամինոնդաս ասիկայ ազատեց .
 բայց այս իր վրէժը առնելու արտու-
 ըալով՝ և իր ձեռքը բռնաւորը
 մեռցընել ուզելով՝ անխոհեմութի
 վտանգի մէջ ինկաւ : Օ՞րքըր յաղ-
 թու թիւնը ձեռք ձգած ատեննին
 ինքն ալ վէրքերէն մեռաւ : Եւ սկէց
 կ'իմացվի որ՝ ամէն ատեն ասոր կըրա-
 ըրի՞ծու թեանը առաջնորդ իր խելքը
 չէր . և այս պահասուիս անոր վրայ
 թեթեւ պահասութի մը չէր . որով
 հետեւ ինքը հասարակապետութե
 պիտանի մարդ էր :

9. Թեբայեցւոց ու իրենց թըշ

նամիններուն մէջ կուիւր նորէն բոր-
 բոքեր էր : Այսպէս մանաւանդ աս
 գամն ալ փորձ մը ըրաւ Սոսորտայի
 դէմ, բայց երկու կողմէն թշնա-
 մեաց զօրքերուն մէջ մնալէն վախ-
 նալով ետ գառնալու ստիպվեցաւ :
 Թշնամիները ետեւէն ինկան, և
 սպատերազմի բռնըվեցան Մանտէ-
 նիա ըսլած տեղը : Հոն բոլոր իր
 զինուորական գիտութիւնը և ա-
 ներկիւղ քաջութիւնը ցրցուց Ա-
 սպամինանդաս, այլ կուրծքէն գէշ և
 վտանգաւոր վէրք մը առաւ կարճ
 աշտէով (շիշով) մը : Ապելու ե-
 կող բժիշկները ըսին որ՝ աշտէն վէր-
 քէն դուրս հանածնուն պէս կը
 մեռնի : Այն ատենը հարցուց թէ
 սպատերազմը ինչ վիճակի մէջ է, և
 իր զէնքէրը ո՞ւր մնացին : Մերին
 վահանը (խալխանը) ցրցուցին, և
 ըսին որ թեբայեցիները իրենց թըշ-
 նամիններուն կը յաղթեն կոր : Այն
 ատենը սկսաւ իր բարեկամները մը
 խիթարել, այս օրըս ըսաւ իմ կե-
 նացս վերջին օրը մի սեպէք, աւե-

լի իմ երանու թեանս և փառացս սկզբնաւորութիւնն է : Տեբէ յաղթող, Սպարտա խայտառակ, և յունաստան ազատ կը ձգեմ կոր : Աւորովհետեւ անոր կը ցաւէին որ զաւակ չունի, ըսաւ որ՝ ինձի զաւակի տեղ Ալեկտրայի և Վանտիւնէայի պատերազմերն են, որ իր աւնունը աշխարհքի վրայ անմոռաց կը պահեն : Այս ըսաւ, ու իր ձեռքքը աշտէն վէրքէն քաշել հանելն ու մեռնելը մէկ եղաւ :

10. Աիկերոն Ապամինանդասը յունաստանի մեծ մարդոց ամենէն վեր կը բրոնէ : Աւ յիրաւի այս մարդոցս վրայ չէ թէ միայն քաջութի, այլ և ուրիշ շատ աղէկութիւններ ալ կ'երեւէին, որով գովեստի արժանի կ'ըլլար : Ավելօք փափաքածը միայն իր հայրենեացը օգուտն ու պայծառութիւնն էր : Ար այնքան յաղթութիւններուն մէջ՝ որդիական ակնածութիւնը չէր կորսնցուցած : Աւ Ալեկտրայի պատերազմին վրայ ամենէն աւելի անոր

Համար կ'ուրախանայր , որ իր ճնող-
 քը ասոր լուրը առնելով եվելօք
 պիտի զուարճանային : Վիտուն էր՝
 բայց պարկեշտ . ոչ ասոր պէս շատ
 գիտցող կար՝ կ'ըսէ Վիկերոն , և ու-
 ալ ասոր չափ քիչ խօսող : Արբնար
 հարստանալ , բայց կեանքը մինչեւ
 վերջը աղքատութեամբ անցուց :
 Իր բարեկամներուն մէկուն ըստակ
 պէտք ըլլալով՝ եկաւ ասկէց ուղեց .
 այս ալ իրեն մէկ ուրիշ բարեկամին
 խորհեց որ երթայ անկէց ուզէ իր
 անունովը : Ըստակը տալու մարդը
 տալէն առաջ հասկընալ ուղեց թէ
 այն ըստակը ինչո՞ւ իրմէն կ'ուզվի
 կոր : Այսամինոնդաս պատասխան
 տուաւ , անոր համար՝ որ այս մար-
 դը աղքատ է , դուն հարուստ ես :
 Ասոր պէտքին գըտնելու է :

11. Թեբէ քաղաքը՝ որ Պեղո-
 պիդասի և Այսամինոնդասի միջնոր-
 դութեամբ քիչ մը ատեն երեւելի
 եղաւ , ասոնք մեռնելէն ետքը նո-
 թէն պղտիկցաւ առաջինին պէս : Աե-
 ռեւի որ՝ այս տկար քաղաքիս և պե-

տու թեանս ու ժողովնալը՝ ամբարտա-
 ւան լակեղեմոնացիներուն ըրած
 անիրաւու թիւնը պատժելու հա-
 մար էր . որ սորվին՝ թէ իրաւունք
 պահելու համար մեծի պղտիկի նա-
 յիլ պէտք չէ : Յունաստան գրե՛-
 թէ բողոք՝ լակեղեմոնացւոց հետ
 մէկ ըլլալով թեբայեցւոց թշնամի
 դարձան : Թեբայեցիք միայն իրա-
 ւունքը իրենց կողմը ունենալով՝
 այն դաշնակիցներէն աւելի զօրու-
 թիւն ունեցան . և յաղթող ըլլալ-
 նին իրենց զօրապետներուն խոհե-
 մութիւնն ու ուժը չէր . իրաւուն-
 քն ու անիրաւութիւնը իրարու
 հետ պատերազմեցան , իրաւունքը
 ուժով ելաւ , անիրաւութիւնը
 յաղթւիլեցաւ :

12. Թեբայեցիք առաջկուց
 տխմար և ապուշ ազգ մը սեպւած
 էին . նոյն համարումը ասկէց ետքն
 ալ մնաց վրանին , և ասոր պատճառ-
 կը տրվի սովորաբար՝ Վէովտիա գա-
 ւառին թանձր օդը : Վայց կրթու-
 թիւնը և աշխատութիւնը ասանկ

Թանձր կամ նուրբ օդ չի նայիր .
 Պինդարոս բանաստեղծը և Պլու-
 տարբոս պատմիչը բէովտիացի են :
 Թէպէտ տեղ տեղ օգը և կլիման
 անանկ է բնապէս՝ որ շատ խելացի
 մարդ չի բերեր , բայց բնաւ անանկ
 երկիր չի կրնար ըլլալ որ այն տեղ
 ամենեւին խելացի մարդ երեւան
 ելած չըլլան : Թէ որ երկրին պարա-
 գայները միշտ նոյն կը մընան նէ՝
 ասլշու-Թեան և տխմարու-Թե պատ-
 ճառ աստնք չեն ըլլար . որովհետեւ
 Թէովտիայի օգը նոյն մնալով՝ վար-
 պետ և խելացի մարդիկ ալ ելեր են :

13. Սանդինէի պատերազմը
 Յունաց սիրտը մէկ միաբանու-Թե
 սէր և փափագ մը արթընցուց , որ
 բնաւ երբէք ձգած ըլլալու չէին :
 Միաբանեցան՝ որ ամէն քաղաք իր
 ազատու-Թիւնը պահէ : Ակեդեմո-
 նացիները միտքերնին դրած ըլլալով
 որ Մեսենիացիները իրենց իշխա-
 նու-Թեան տակը առնեն , այն ընդ-
 հանուր դաշնակցու-Թեանը մէջ չի
 մտան : Ազխպտացիները Պարսից

Դէմ ապրտամբած ըլլալով՝ ասոնք
 եգիպտացիներուն ալ օգնութիւն
 խորհեցին . որ թէ որ Պարսիկները
 մեսենիացիներուն օգնութի խոր-
 հել ուղէին նէ՝ ասոնք չէին թող
 տար : « Օ, որ ինչ կամիք թէ արաս-
 ցեն ձեզ մարդիկ՝ զնոյն արասջիք և
 դուք նոցա » . այս օրէնքս որ բնա-
 կան ալ է՝ մէկդի ձգած գտնուեցան
 լակեդեմոնացիները , բայց օգուտ
 մըն ալ չի կրցան քաղել : Օ, օրքը
 Վգեսիղայոս տանողը Վգեսիղայոս թա-
 գաւորն էր , ծեր մարդ . որ ետ դար-
 ձած ատենը ճամբան մեռաւ : Սե-
 սենիացւոց վրայ ունեցած խոր-
 հուրդնին կատարելու ժամանակ
 չունեցան . բայց մըտքերնուն դար-
 ձած չէին : Վակեդեմոնացւոց զօ-
 րութեան ժամանակը մինչեւ այս
 ատեններըս քչեց : Վգեսիղայոս
 մեռնելէն ետքը Վակեդեմոն օր ա-
 լուր վրայ տկարանալու երես բըռ-
 նեց . թէքէի զօրութիւնը անկէց
 ետքը բանի պէտք չըլլալով՝ այն ալ
 տկարացաւ . լակեդեմոնացիք ալ :

14. Այս ատենէս ետքը Յու-
նաց պատմութեան մէջ մինչեւ հի-
մայ տեսածներուդ պէս մեծամեծ
բաներ տեսնելիք չունիս մինչեւ
Փիլիսոսոս մակեդոնացիին թագա-
ւորութեան ատենը : Ապարտայի
ուժը կտորեցաւ . թեբէ մոռցրվե-
ցաւ . Աթէնք օրէ օր տկարանալու
վրայ էր . շատ քաղաքներ անոր դէմ
ապստամբեցան . ներսէն երկպառա-
կութիւնները զինքը կըտոր կըտոր
կ'ընէին . ատենախօսները ամէն մէկը
հասարակութիւնը իր ուզած կողմը
կը քաշքըշէր . և բըռնութիւնը ան-
գամ օրէնքի տեղ անցաւ . ըսել է
որ՝ քաղաքականութեան տեղ բար-
բարոսութիւն և անկրթութիւն
մտաւ : Պատմութեան մէջ ստանկ
չատ օրինակներ կան , որ ազգերը
մէկ մէկ պատճառով կը պրզտիկնան .
առաջին ատենականն ո՛չ ուժերնին կը-
մնայ , ո՛չ գիտութիւննին և ո՛չ օ-
րէնքնին : Անկէց ետքը նորէն կա-
մաց կամաց առաջին աստիճանը
հասնելու ճամբայ կ'ելլեն : Աւստի

զարմանք է որ՝ անցեալ դարու փիլիսոփայները կրօնացան շատ մարդու հաւտացընել թէ բարբարոսութիւն մարդոյս առաջին վիճակն է . ետքը կրթութեան կը հասնի : Այդամինսն դասէն ետքը Յունաց ազգերը կամաց կամաց բարբարոսութեան մէջ ինկան ըսելը՝ թէ որ ասոնց դրութեանը հաւատալու ըլլայինք նէ՝ Յոյները այն ատենը նոր ազգ ըլլալ սկըսան ըսել պիտի ըլլար :

15. Վիիկրատէս մէկ մը՝ որ այն ատենական ազէկ զօրավարներուն մէկն էր , իրեն համար ամբաստանութիւն եղած ըլլալը ըսելով , որով պիտի դատապարտըվէր , խել մը կըտրիճ երիտասարդներու ձեռք զէնք տուաւ . և զինքը դատապարտողները զօրաց ձեռքի դանակը տեսածնուն պէս ստիպվեցան դատապարտութիւնը վերցընել : Այլ ինքը այն աստիճան յանդգնեցաւ , որ աներեսութեամբ ըսաւ . թէ որ միայն աթենացիներուն համար պատերազմէի և իմ անձինս համար չի

սլատերազմէի նէ՝ խենթերուն կարգը կ'անցնէի . այս զրուցվածքս Պերիկղէսի և Ալքիատիդէսի ատենները չի կար : Աիրքերուն վրայէն սանձը վերնայ նէ՝ ամէն բան կը գէշնայ . աղէկութիները կը կորսըվին :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե :

Փիլիպպոս Տակեդոնացիին Լագարոս
Լեան սիլիբը :

1. ԹԻՆՊԵՏ Մակեդոնիայի թագաւորները իրենց ցեղին գլուխ շերակղէսը կը դնեն . բայց Յոյները ասոնք իրենց ազգէն չեն սեպեր . Պարսից սէս ասոնք ալ բարբարոսներուն կարգը կը դնեն : Չորս հարիւր տարի մը կար՝ որ այս թագաւորութիւնս հաստատված էր . և այնքան ատենէ ՚ի վեր գրեթէ միշտ կամ լակեդեմոնացւոց կամ աթենացւոց պաշտպանութեանը կարօտ էր : Յունաց երկպառակութեան ատենը այս թագաւորութիւնս ալ

Ժամանակ գտաւ զօրանալու . մա-
նաւանդ Փիլիպպոսի պէս վարպետ
և հնարագէտ մարդ մը թագաւոր
ըլլալով :

2. Ամինդաս թագաւորը մեռնե-
լէն ետքը , Քրիստոսէ 375 տարի ա-
ռաջ , տղայքը Մակեդոնիայի թա-
գաւորու թեան վրայ իրարու հետ
կռիւ բացին : Ասոնց իրարու հա-
կառակիլը՝ կըրնար թագաւորու իր
տակնու վրայ ընել : Այն ատենները
թեբայեցիք իրենց Պեղոպիդաս զօ-
րապետը Փերէսի բռնաւորին վրայ
խրկել էին : Ասոնց մէջի վէճն ալ
խաղաղելու համար այս զօրապետը
մէջ ձգեցին . որ ամէն բան հան-
դարտեցոյց , և գլխաւոր ազնուա-
կաններէն շատ պատանդ առաւ . ա-
նոնց մէկն էր Պերդիկկաս թագա-
ւորին եղբայրը Փիլիպպոս . ասոնք ա-
մէնն ալ թեբէ խրկեց : Պերդիկկաս
մեռնելէն ետքը տղայ մը թողուց , որ
թէ որ ստարիքը քիչ մը առած ըլլար
նէ՛ թագաւորը այն պիտի ըլլար .
բայց շատ սղտիկ ըլլալուն համար՝

Պերդիկկասայ երկու եղբարց մէջ
 Ժառանգութե՛ կռիւը նորոգեցաւ :
 Այն ատենը Փիլիպպոս՝ որ քսան և
 չորս տարւան կըտրիճ էր , և Ասպա
 մինոնդասի պէս մարդու աշակեր-
 տութիւնն ըրած էր , (Թեբէէն փա-
 խաւ , Սակեդոնիա եկաւ . և թա-
 գաւորութիւնը ձեռք առաւ եղբօրը
 տղուն խնամակալ (վասի) ըլլալու
 պէս : Քիչ մը ատենէն ետքը բա-
 ցարձակ թագաւոր ըսվեցաւ . քան
 զի մակեդոնացիներուն գործքերը
 կարգի դրվելու համար տղայ թագա-
 ւոր ձեռք չէր տար . մարդ կ'ուզէին :

3. Փիլիպպոս բացարձակ իշխա-
 նութիւնը ձեռք առնելուն պէս
 մեծամեծ բաներու վրայ խելք հոգ-
 նեցընել սկսաւ : Ամէնէն աւելի
 հարկաւոր սեպածն էր աղէկ զօրք
 ունենալ : Օրքերը ձեռք ձգելէն
 ետքը գլխաւորապէս հոգ տարաւ
 անոնք վարժելու . և մակեդոնեան փա-
 շանգ ըսվածը ասոր հնարքն է . որ
 ետքը շատ զօրութիւն ստացաւ և
 քովի տէրութիւնները վախցուց :

Այս փաղանգը վեց եօթն հազար մարդէ կը բաղկանար . տասն և վեց մարդ իրարու ետեւէ կայնելով բանակին մէկ խորութի մը կուտային . որուն ճակատը կ'ըլլար 375 մարդ . ամէնուն ձեռքն ալ կարճ տէգ (մըզրախ կամ խըշտ) . սինտ վերջի կարգին մարդոց ձեռքը բռնած տէգերը երկանկէկ ըլլալով՝ առաջին կարգը կայնողներէն առաջ կ'երկրննային . և ամէնը մէկէն ասով մէկ ձուլած սլառի մը պէս անբակտելի կ'ըլլային . և թշնամին վրանին երթալու չէր համարձակեր : Օ ինուորներուն հետ շատ գթով և սիրով կը վարուէր Փիլիպպոս , իրեն ընկեր կ'ըսէր , ինքն ալ անոնց օրինակ կ'ըլլար . և ասով շատ երեւելի կրտրիճներ հասցուց :

4. Օ ինուորական կրթութեան և կրտրիճութեան հետ շատ աղէկ կենցաղագիտութիւն (բօլիթիքա) ունէր . որ իր ուզածը առաջ տանելու դիւրին ճամբայներ գտնել կուտար իրեն : Ասոր յաջողութի գլուխներուն գլխաւոր գործիքները եղան

խարդախու թի, ուրիշներուն մէջ
խռովու թիւն սերմանել, դաշնա-
դրու թիւնները միշտ իրեն դին քա-
շել. և զէնք ձեռք առնելու համար՝
յարմար պարագայներու սպասել:
Մակեդոնիայի մէջ ոսկիի հանք գը-
տաւ. և ասիկայ գործածեց անանկ
կուսակիցներ գըտնելու՝ որ իրենց
հայրենիքը ասոր ծախելու ամէն կեր-
պով պատրաստ էին: Ա՛րսէր որ՝ ոսկի
բեռցած ջորի մը առջեւէ քալելէն
ետքը՝ աշխարհքի վրայ բերդ չի կայ
որ չառնրվի: Ասանկ ատենները ըս-
տակը ասանկ զօրաւ որ կ'ըլլայ: Ասց
նկատելու բանը այս է որ՝ մակեդո-
նացւոց տէրու թեան տկարանալուն
հիմն ալ ասիկայ ձգեց: Տղան Աղէք-
սանդը՝ տէրու թեան ուժը տարա-
ծելով նօսրըցուց. տղայ չունենա-
լով՝ խռովուի ինկաւ յաջորդու թե
վրայ. մինչեւ որ հռոմայեցիներուն
ձեռքը անցաւ Մակեդոնիա, լըմըն-
ցաւ: Ասոնք ետքը պիտի տեսնես,
մենք հոս համառօտ մը յիշեցինք,
անիրաւու թեամբ վաստրկված մե-

Տուժեան որքան ուժ ունենալը
հասկըցընելու համար :

5 Փիլիսպոս ուժովնալ և բոլոր
յունաստանի վրայ տիրել կ'ուզէր :
Եւ որովհետեւ Յոյները այն օրե-
րը իրենց կենցաղագիտութիւն շիտ-
կելու գլխաւոր առաջնորդ մը չու-
նէին, և Փիլիսպոս ինքը իր ընելի-
քը կենցաղագիտութե՛ կանոններու
վրայ կարգի դրած էր, և խոհեմու-
թեամբ առաջ քալեցընելու վրայ
էր. ուստի մըտքին դրածը հարկա-
ւորապէս պիտի յաջողէր : Առջի բե-
րանը իրեն արգելք եղաւ Ամիսպօ-
լիս քաղաքը, որ աթենացւոց գաղ-
թական էր. բայց երբ որ այս քաղա-
քիս տիրեց՝ թշնամիներուն իր եր-
կիրը կոխելուն վախէն ազատեցաւ :
Թեոսաղիա բռնաւորներու տակ
կ'էզմըվէր կոր. ասիկայ անոնք այն
նեղութենէն ազատեց : Անկէց ետ-
քը Թեոսաղիայի ձիաւորները իր զօր-
քին հետ խառնեց, որ մակեդո-
նեան փաղանգին հետ մէկ ըլլալով
տէրութե՛ ուժը եվելօք շատցուց :

6. Թե սաղիայի երեւելի քաղաքները իրեն իշխանութեան տակը առաւ : Ամէնէն աւելի՛ Աղիւն թոս քաղաքին տիրել կ'ուզէր . որ ասթենացիներուն շատ զօրաւոր մէկ գաղթականն էր : Գնաց պաշարեց : Աթենացիները օգնութիւնի զօրք խորհեցին . բայց քաղաքը պաշտպանելու չէր օգտեր : Այլու մատնիչ ելան՝ քաղաքը Փիլիպպոսին ձեռքը տուին : Փիլիպպոս թէպէտ մատնիչները աղէկ մարդ չէր սեպեր , բայց անոնցմէ տեսնելու օգուտն ալ ետ չէր ձգեր : Ասկեդոնացիները այս մատնիչներուն երեսն 'ի վեր գէշ կը զրուցէին . ըրած գէշութիւննին երեսնին կուտային : ()ը մը ասոնց սիրտը նեղանալով գնացին թագաւորին գանգտեցան : Այն ալ պատասխան տուաւ . « Դուք անոնց պակասութեանը մի մտաք . անոնք կուպիտ են . ամէն բան իր անունովը կը զրուցեն » : Գտելու խօսք չի կար . քանզի նոյն իսկ իրենց գործքովը այն նախատինքները լսելու արժանի էին :

7. Փիլիպպոսի թընամիներուն
 մէջ ամէնէն աւելի վախցրվելու
 մարդը՝ Վեմոսթենէս ատենաբանն
 էր : Ասոր սէս ճարտասան մարդ
 եկած չէ : ճարտասանութիւնը այն
 ատենը և անկէց առաջ ալ՝ աթե-
 նացւոց վրայ իշխելու մէկ միջոց
 մըն էր . ուստի ամէն մարդ կ'ու-
 ղէր ճարտասանութեան մէջ կրը-
 թըվիլ : Օ՛նած ատենէն բնական
 սպախասութիւն ունէր Վեմոսթե-
 նէս . ձայնը նուազ և լեզուն թո-
 թով (բէբէյի) էր : Առաջին ան-
 գամ ատենաբանութիւն որ բրաւ՝
 հասարակութիւնը խնդալով զինքը
 ծաղրեցին : Մէկ կատակերգակ բա-
 նաստեղծ (քօմէտիաճի) մը իրեն
 սիրտ տուաւ . բսելով որ՝ յօջողու-
 թիւնը ճառը զրուցելուն եղանա-
 կէն և զրուցած ատենը բրած շարժ-
 մունքէն կախված է . և աշխատե-
 լով կրնաս շքտկրվիլ և կատարելու-
 թեան հասնիլ : Ասոր վրայ գընաց
 Վեմոսթենէս մէկ այրի (մաղարա-
 յի) մը մէջ գոցվեցաւ . ամիսներով

հոն մնաց , և ինքը ղինք կը կրթէր :
 Այրբեմն ծովուն եղերքը կ'երթար ,
 որ ալիքներուն ձայնին ականջը սոր-
 վի , և հասարակութե ժողովրդած ա-
 տենը ելած շրջնկոցէն չի վախնայ :
 Այրբեմն քալած ատենը , կամ ճան-
 կելով դարձեր տեղեր ելած ատենը՝
 բերանը մանր քարեր առած ըլլա-
 լով անանկ կը խօսէր , որ բերնին
 պակասութիւնը շիտկէ : Ա երջա-
 պէս բնութեանը վրայ բռնութիւ-
 նը քալեցուց . թէ խօսքի ու ժով՝
 և թէ մըտիկ ընողներուն կիրքը
 շարժելու կողմէն ունեցած վար-
 պետութիւնը շարժմունքով ելել-
 ցուց : Աստակերգակը այս աղէկու-
 թիւներըս վրան տեսեր էր . թե-
 րութիւն միայն վարժութե կողմէն
 ըլլալը հասկըցեր էր . անոր համար
 սիրտ տուաւ : Արքան մարդիկ կան
 որ աղէկ ձիրք ունին , սիրտ տուող
 և ձեռք բռնող չըլլալուն համար՝
 անանկներուն աղգայինները անոնց-
 մէ տեսնելու աղէկութէն կը զըր-
 կրվին : Հակառակորդներուն վրայ

ասոր խօսքը կայծակի պէս կը քա-
նէր . սաստիկ զրուցվածքը ժողո-
վուրդին խելքը որպէս թէ կը կա-
պէր . ուղած տեղը կը քաշէր կը տա-
նէր : Փիլիպպոսի ալ յայանի թըշ-
նամի էր . և անոր ամէն խորհուրդ-
ներուն առաջը կ'ելլէր կ'աւրէր :

8. Թէ որ Վեմոսթենէս մէկ փա-
ռասիրութէ ատեն մը ծնած ըլլար,
հարկաւ որպէս մակեդոնացւոց ու-
ժին դէմ դնելու ամէն աթենա-
ցիները կը գրգռէր . և ասիկայ քա-
նի որ կար՝ մակեդոնացիները շատ
առաջ չէին կրնար երթալ : Վայց
Մթէնք բոլորովին աւրրված էր .
շատ մը արծաթասէր մարդիկ կը
նայէին որ՝ ո՞ր կողմէն իրենց աւել-
լի կաշառք պիտի գայ . իշխաննե-
րը ամէնն ալ խարդախութեամբ
և անիրաւու թիւնով բան կը տես-
նէին : Քաղաքացիները հանգիստ
կը քրնանային . զինուորները ըս-
տակով բռնրված ըլլալով՝ ամէն
մէկը իրեն օգտին համար կը պա-
տերազմէր : Հասարակու թիւնը թէ

որ գովող ըլլար, և ատեն անցընելու զբօսանքնին և խաղերը ժամանակ ժամանակ պակաս չըլլային նէ՝ անկէց աւելի բան չէր ուզեր: Թեաքրօնէրոն անանկ ծախք կ'ըլլար՝ որ Պարսից պատերազմին ատենը գացած ստակէն եւել, մէկ կատակերգու թի մը խաղալու կ'երթար:

9. Ի ոլոր աթենացիներուն օրական ըստակ կը բաժնըվէր. և պատերազմի ատեն անգամ այս ըստակս բաժնըվելու էր. օրէնք դրված էր որ՝ չի բաժնըվի ըսողը մահապարտ կ'ըլլար: Աեմոսթենէս երկու անգամ անուղղակի փորձեց այս գէշ և վնասակար սովորութիւնը վերջացընելու. ըսելով որ՝ մէկ անգամ մը օրէնքները փորձըվին, և վնասակար և անպիտան օրէնքները վերնան: Իր ճարտասանութիւնը բանեցընելով ալ ասոր չի կրցաւ ժողովուրդը հաճեցընել: Իսկէ որ՝ արծաթը խօսած տեղը ճարտասանութեան խօսքը չանցնիր: Ասկէց հասկրցաւ որ՝ Աթէնք մեծ բաներ ը-

Նեղու կարողու թիւն չունի . նեղու
 թեան պիտի չի կրնայ դիմանալ :
 Հասարակու թեանը բնաւ որու թիւ
 ասանկով հասկընալէն ետքն ալ՝ ա-
 նոնք գրգռել և Փիլիսոսի դէմ
 հանելը՝ չափազանց ազգասիրու թի
 մըն էր , բայց խելացիու թիւն չէր .
 քանզի պարագայները չէին յարմա-
 րեր անանկ մէկ թշնամի մը հետ
 պատերազմ բանալու :

10. Փիլիսոս վերջապէս յու-
 նաստան մըտնելու առիթ գտաւ :
 Տասն տարիէ ՚ի վեր յունաստանի
 մէջ կըռիւ մը կար՝ որ սրբալան պա-
 փերազ՝ անուկով կը ճանչցըվի . և
 պատճառը սանկ բան մըն էր : Ղեղ-
 փիս քաղաքը՝ ուր որ Ապողոնի ան-
 ուանի մեհեան մը կար , փոկէաց-
 ւոց երկրին սահմանակից էր . փո-
 կէացիներն ալ՝ յունաստանի քա-
 ղաքական և կրօնական օրէնքները
 ոտքի տակ առնելով՝ Ապողոնի մեհ-
 եանին ստացուածքը եղած գետին
 ներուն տիրեր , և իրենց համար վա-
 րուցան ըրեր էին : Ղրացի մանր տէ-

բու թիւնները՝ իրենց կրօնիցը դէմ
 եղած անարգութեանը վրէժը առ-
 նելու համար ամէնքը մէկէն ասոնց
 դէմ զէնք առին : Ամփիկտիոններուն
 ժողովքը փոկէացիները ամբարըշ-
 տութիւններնու համար դատա-
 պարտելով՝ հարկ եղաւ որ ասոնք
 պատժուին : Բայց սպարտացիներն
 ու աթենացիները փոկէացւոց տէր
 ելան . թեքէ՛ թշնամիներուն կողմն
 էր . սաստիկ պատերազմ կ'ըլլար ,
 գերի բռնածնին կ'ըսպաննէին :

11. Ասկեդոնացւոց թագաւորը
 կերեւէր որ այս վէճիս մէջ մտած
 չէ . բայց հեռուէն կը նայէր որ ա-
 սոնց այս անմիաբանութենէն իրեն
 օգուտ մը քաղէ : Արբ որ թեքացե-
 ցիները իրմէն օգնութիւն ուղեցին՝
 այն ատենը ինքն ալ երեւան ելաւ .
 թերմոպիղէ կամ Տերմադրունքը
 եկաւ , այն նեղ և դժուար Արճին
 տիրեց , մինչեւ Փոկիղէ մտաւ , ա-
 մենեւին դէմ կեցող չեղաւ : Այլ
 սասանկով տասն տարվան սրբազան պա-
 փերազը միայն իւր ներկայութիւն

լամբնցուց առանց թուր հանելու :
 Ասով կրօնասէր թագաւորի անուն
 ալ վաստըկեցաւ . և այս համբաւս
 իր միտքը դրածին և իր քաղաքաւ
 կան նպատակներուն շատ յարմար
 էր : Ամփիկտիոններուն ատեանին
 վրայ ալ իշխանութիւն ձեռք ձը-
 գեց . վճիռ մը հանել տուաւ փո-
 կեացիներուն վրան, որով ասոնք ամ-
 փիկտիոններուն ժողովքէն դուրս
 մնացին . ասոնցմէ մարդ չէր առնը-
 վեր հոն : Անոնց տեղը իրեն համար
 ուզեց ու առաւ : Վիթեան խաղե-
 րուն նախագահութիւնն ալ ձեռք
 ձգեց կորնթացիներէն առնելով .
 քանզի կորնթացիներն ալ փոկեա-
 ցիներուն կուսակից եղեր էին : Ա-
 սով բոլոր յունաստանի տէր եղաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Փիլիպպոսի Լագա-որո-Լեան Չերջը :

Փոլիոն Վեմուլեմէսի Դէմ կը խօսի :

1. ՓԻԼԻՊՊՈՍ երբ որ յունաս-
 տան այնքան յարգ ունեցաւ, իրեն

վախ տուող արգելքներուն պինտ
մեծը վերցուց : Ատեն մըն ալ իր
միտքը ծածուկ բռնեց . յարմար ժա-
մանակի սպասելու համար Աակեդո-
նիա դարձաւ : Իր երկրին քովերէն
տեղեր առնելով աւելի զօրացաւ . և
զօրքը պատերազմի մէջ աւելի եփե-
ցան : Աերջասպէս Աւբէա կղզիին
մէկ մասին ալ տիրեց . և ասոր՝ պա-
պերազմի ուսնակապ կ'ըսէր . որովհետեւ
ցամաքին կրցվածի սէս կղզի մըն է :
'Իեմոսթենէս փիլիպպեան ճառերը
խօսելով՝ աթենացիները ասոր դէմ
իր ճարտասանութիւնը ոտք հանեց :

2. Իայց Փիլիպպոս գիտնալով՝
որ Աթէնք գրեթէ իր բոլոր ասպ-
րուստը թրակիայէն կը քաշէ , աթե-
նացիները անօթութեան մէջ ձգե-
լու համար Իիւզանդիոն պաշարեց :
Աէկ դիէն ալ հաւտըցընել կ'ուզէր՝
որ դաշնադրութեանց դէմ ամենե-
ւին բան ըրած չունի . մանաւանդ
ուրիշները դաշինքը աւրելով իրեն
մնաս կը հասցընեն : Ամենեւին սուտ
խենթ ըլլալով՝ յանցանքը աթենա-

ցիններուն վրայ կը ձգէր . որպէս թէ Պարսից տէրու թիւնը իրեն դէմ հանելու կ'աշխատին : Այլ յիրաւի 'Վեմոսթենէս յորդորերէր աթենա-ցիններուն ասանկ ընելու , որ իրենց խայտառակու թիւն էր : Այլ ատենախօսու թէն չի դադրեցաւ , մինչեւ որ ծեծը բանալ տրվաւ : Անանկ կը կըլլեցընէր որ՝ Փիլիսպպոսին բանը գէշ է : Բիւզանդացիներուն օգնելու համար 'Քարէս անուն զօրապետը խրրկեցին . ասոր անունը այնքան գէշ ելած էր՝ որ բիւզանդացիք ասիկայ չընդունեցին :

3. Բայց Աթենքի մէջ խելքի և բարուց աղէկու թէ կողմանէ անհամեմատ մարդ մը կար , որ էր Փուկիոն : Ասիկայ ճշմարտապէս փիլիսոփայ մըն էր . ճարտար զօրապետ . աղէկ ատենաբան և իմաստուն կենցաղագէտ : Շատ անգամ 'Վեմոսթենէսի դէմ կը խօսէր , և 'Վեմոսթենէս ասոր համար՝ իմ խօսքերուս կացինն (պալթան) է կ'ըսէր : Աթենացիներուն շողոքորթու թիւն չը-

նելէն զատ՝ գրեթէ միշտ անոնց մրտքին դէմ կը խօսէր : ()ը մը՝ որ բոլոր մրտիկ ընողները խօսածին հաւնելով ծափ զարկին , ասիկայ իր բարեկամներուն մէկուն ըսաւ . արդեօք մէկ խենթի խօսք մը բերնէս փախա՞ւ մի՛ որ ասոնք ամէնքը մէկէն հաւնեցան : Իր ժողովուրդին բնութիւնը աղէկ գիտէր :

4. Փոկիոնի խելքը կարելով որ սպատերազմին ետքը իրենց գէշ պիտի բերէ , ժողովուրդը միշտ խաղաղութեան կը յորդորէր : Միշտ զօրքը ասոր ձեռքն էր , քանզի ասոր պէտքի մարդ ըլլալը ամէնն ալ գիտէին : Քարէս ետ խրրկլվեցաւ նէ՛ անոր տեղը աս խրրկեցին Վիւզանդիա : Ասոր հրամանին տակը աթենացիները գրեթէ ուրիշ մարդ կ'ըլլային : Փիլիպպոս խոհեմութի բանեցընելով ետ քաշվեցաւ , և թրակիայի քաղաքները՝ որ ամէնն ալ վախու մէջ ինկեր էին , վտանգէն ազատեցան : Բայց Յոյնք իրենց կրօնական օրէնքները չի սեպելու սոր

ված ըլլալով՝ մէկ նոր սրբազան պա-
պէրազմ մըն ալ բացվեցաւ . որ Փի-
լիպպոս ասիկայ ալ վարպետութիւն իր
օգտին դարձուց : Ամէն տեղ մարդ-
ունէր որ ամսական կուտար . անոնց
ձեռօքը՝ Վեղփեայ տաճարը պղծող-
ներուն դէմ աթենացւոց հանած
զօրքերուն զօրապետներուն որպի-
սութիւնը սորվեցաւ : Շուտ մը ե-
րեւան ելաւ , և Աղատէ ըսված տե-
ղին տիրեց . որ փոկէացւոց երկրին
մէկ ամուր բերդն էր :

5. Թեբէ քաղաքը Աղատէի մօտ
ըլլալուն համար՝ այն տեղին ալ տի-
րելը իրեն դիւրին էր : Վեմոսթե-
նէս աթենացիներուն իմացուց որ
միտքը Թեբէի ալ տիրել է : Արե-
ւակայութիւննին բռնակցուց . և
թէպէտ թեբայեցիները իրենց թըշ-
նամի՝ և Փիլիպպոսի ալ դաշնակից
էին , վճիռ ըրաւ որ Փիլիպպոսի դէմ
անոնց հետ միաբանութիւն ընեն :
Ղաշնադրութիւնը ընելու համար
զինքը խրկեցին , որ ելաւ Թեբէ
գնաց , անոնք ալ բռնակցուց իր ճար-

տասանու թեամբը, և դաշինքը հաս-
տատեց :

6. Այն ատենը մէկ մարդ մը
լրբու թեամբ հարցուց Փոկիոնի թէ
ինչ կ'ըսես . հիմա ալ խաղաղուի
կ'ուզե՞ս մի : Հրամեբես՝ ըսաւ Փո-
կիոն . թէսկէտ գիտեմ ալ՝ որ սա-
տերազմի ատեն ես քեզի պիտի հը-
րամայեմ , և խաղաղութեան ա-
տեն դուն ինձի , բայց անանկով
ալ խաղաղութիւն կ'ուզեմ : 'Եւ-
մոսթենէս անոր վրայ կը խնդար որ՝
կուիւր Ատտիկէ չըլլար , 'էովտիա
կ'ըլլայ : Ասոր վրայ Փոկիոն ըսաւ .
սպատերազմին տեղը մտածելէն ա-
ւելի հարկաւոր է յաղթելուն կեր-
պը մտածելը : Թէ որ յաղթը վինք
նէ՝ ամէն գէշութիւն մեր ոտքը
կ'ուզան : 'Այց ասոր խոհեմութիւր
մտիկ ընող չկար . ամէնն ալ իրենք
զիրենք անմտութք վտանգի մէջ կը
ձգէին : Քանի մը ձախորդ սատ-
գամներ ալ եղան , բայց սպատերազմ
ուղողները ասով ալ չի պաղեցան :
'Եւմոսթենէս սպառգամներն ալ

կը ծաղըէր . և կ'ըսէր որ՝ Ապողոսնի
բրմուհին Փիլիպպոսէր է : թէ որ այս
խօսքըս ըսողը տկար Սոկրատը ըլլար
նէ՛ անհաւատ է կ'ըսէին :

7. Աթենացիները արտորնօք
կ'երթան թեբայեցւոց հետ մէկտե-
ղելու : Փիլիպպոս հաշտու թի առա-
ջարկեց . բայց չի կրնալով մըտիկ
ընել տալ՝ Վէովտիա մտաւ : Այրիու
կողմին զօրքը գրեթէ հաւասար ը-
լլալով՝ Վերոնիա տեղին քովերը պա-
տերազմ եղաւ : Աղէքսանդր՝ որ այն
ատենը տրղայ էր , թեբայեցւոց
նոտրական ըսլած գունդը տարտրղ-
նեց . աթենացւոց զօրապետներուն
մէկն ալ՝ մակեդոնացւոց մէկ երկու
խումբը ցրուեց , և առանց իր զօր-
քը կարգի դնելու ետեւնին ինկաւ .
որպէս թէ կռիւը վաստրկածի պէս :
Փիլիպպոս ասոր անխոհեմութիւնը
տեսնելով ըսաւ . աթենացիները
թշնամի յաղթել չեն գիտեր կոր :
Սակեդոնեան խաղանգը առաջ քալե-
ցուց . ինկաւ թշնամիին վրայ՝ որ
զինքը ամէն վտանգէ ազատ կը կար-

ծէր . և կատարեալ յաղթուի ըրաւ :

Տ . 'Նեմոսթե՛նէս' որ այս սրտե-
րազմիս գանձվեցաւ , ատենախօսու-
թեան մէջ որքան կրակոտ էր 'նէ'
այնքան ալ սրտերազմի երես չու-
նէր . երբոր տեսաւ որ բանը գէշի
գնաց՝ զէնքերը ձգելն ու փախչիլը
մէկ ըրաւ : Այս անգամ զօրապետ
Փոկիոնը չէր . և աթենացիներուն
մեծ սխալներուն մէկն ալ այս եղաւ :
Յաղթը լողներուն հետ Փիլիպպոս
սի վարվելուն կերպը Փիլիպպոսին
փառքը ելեց լցուց : Աթենացիներէն
որքան գերի բռնած ունէր 'նէ' ա-
մէնն ալ ետ խորկեց , առանց փոխա-
րէն բան մը ուղելու . և աթենա-
ցիներուն հետը առաջկուց ըրած
գաշնադրութիւնը 'նորոգեց : (Թե-
բէ քաղաքը սահասպան զօրք գնելէն
ետքը թեքայեցւոց հետն ալ հաշ-
տեցաւ : Օյնքը բարբարոսի տեղ
գնեցով անարդող Յոյներէն որքան
վեր էր , որ ասոնք իրարու հետ կրու-
ուելով չի լրաված բարբարոսութի-
կ'ընէին :

9. Փիլիպպոս յու՛նաստանի տե-
 րու թիւ ձեռք ձգելէն ետքը միտքը
 անանկ բան մը դրաւ որ իրեն փա-
 ռասիրութեանը և քաղաքական խո-
 հեմութեանը և գուցէ եվելօք ա-
 նուն վաստըկելու վրայ ունեցած
 փափաքանացը ամէն կերպիւ յար-
 մար էր . և այն ատենը այս բանըս
 գլուխ հանելու անկէց զատ մարդ
 չէր գըտնուել : Աւժը Պարսից գէմ
 դարձընել ուզեց . կը յուսար որ՝ ա-
 նոնց տէրութիւնը չի վերցընէ ալ
 նէ՛ կըրնայ կըտոր կըտոր բաժնել :
 Յոյներն ալ այս բանիս յորդորեց .
 որ իրենց ամբարտաւանութեւնը շատ
 աղէկ կուգար : Այս այս մեծ գործիս
 ղինքը մեծ զօրասպետ ընել տուաւ :
 Սոլորութեան համեմատ այս բա-
 նիս վրայօք ալ Ապողոնի պատգամ
 հարցուցին, որ ըսաւ . « Յուլին գը-
 լուխը պսակը դըրոված է . վերջը մօտ
 է . շատ չերթար պիտի մորթըվի » :
 Ասանկ զրուցվածք մը կ'ուզես Փի-
 լիպպոսի վրայ ա՛ռ , կ'ուզես Պարսից
 թագաւորին վրայ . մորթըվին ալ

կ'ուզես սարգ յաղթելի սեպէ ,
 կ'ուզես մեռնիլ . որն որ ըլլայ նէ
 պատգամը կատարած կ'ըլլայ . սուտ
 ելլելիք չունի . և ասանկ պատգամ
 ներուն մեծ վարպետութիւն՝ ասոր
 պէս երկդիմի խօսքեր գրտնելն է :
 Փիլիպպոս անանկ հասկըցաւ , կամ
 հասարակութեան անանկ կրկեցուց՝
 որ պատգամին սպառնալիքը Պար-
 սից թագաւորին վրայ պիտի կա-
 տարվի :

10. Ասիայի պատերազմը սկսե-
 լէն ետքը ուրիշ հոգ մը չունենա-
 լու համար՝ այս միջոցիս իրեն Ալ-
 դէոպատրա անուն աղջիկն ալ կար-
 գեց . բայց հարսանիքին հանդէսին
 մէջ բաղմութեան աչքին առջին
 Պաւսանիաս անուն կրտրիճ ազնւ-
 լական մը զինքը զարկաւ մեռցուց .
 քանզի Ալդէոպատրային քեռիներուն
 մէկը Պաւսանիասին պատուոյն գրաւ-
 չելու բան մըն էր ըրեր . Պաւսա-
 նիաս ասոր վրայ թագաւորին գանգ-
 տեր էր , և մրտիկ չէր եղեր գան-
 գատը : Փիլիպպոս քսան և չորս տա-

րի թագաւորու թիւն ընելէն ետքը՝
 կեանքը ահա այս կերպովս վերջա-
 ցաւ : Ա՛րսէն որ ամօթալի կիրքեր
 և անժուժկալու թիւն և որկրամո-
 լու թիւն և խորամանկու թիւն ու-
 նէր : Ա՛ղէկ որսխսու թիւններ ալ
 այս գէշու թիւններուս հետ վրան
 կ'երեւէին . և ասոնք չըլլային նէ՝
 մըտքին դրածը չէր կրնար գլուխ
 հանել : Անչպէս էին խորունկ խելք ,
 կատարեալ խոհեմու թիւն , անյաղ-
 թելի արիու թի , և իր կենաց պատ-
 մու թեան շատ կըտորները կրնան
 իբրեւ օրինակ կարդացիլ :

11. Պալատը մէկը կար՝ որ ինչ
 պակսու թիւն տեսներ նէ՝ կը բամ-
 բասէր . ըսին որ այս մարդըս պա-
 լատէն վըռընտէ : Մաւ . առաջ
 ան նայինք , չըլլայ որ գէշ խօսելուն
 մէնք պատճառ տուած ըլլանք : Ա՛յս
 մարդս աղքատ մարդ մըն էր . թա-
 գաւորը ասոր ըստակ տուաւ , և
 գէշ խօսքերը կտրեցան , գովու թե
 դարձան . անոր վրայ Փիլիպպոս ը-
 սաւ . ինքրդինք գովել կամ պախա-

բակել տալը մարդուն իրեն ձեռքն
 է եղեր : Ասց չէր գիտեր որ ստա-
 կով գովու թիւ՝ թէ որ ուրիշ հիմն
 չունենայ նէ՝ շուտով կը փճանայ .
 պարսաւելու առիթ տուող մոլու-
 թիւնները ետ ձգելէն ապահով գո-
 վելի ըլլալու ճամբայ չի կայ . ասոր
 համար ծախք պէտք չըլլալով՝ աղ-
 քատ և հարուստ միապէս գովելի
 կրօնան ըլլալ : Փիլիպպոսի բռնած
 ճամբով միայն հարուստները կը
 գովվին , անոնք ալ գովողները երե-
 սին կը գովեն , ընելու պարսաւնին
 ետեւէն կ'ընեն : Աերի մը ծախելու
 որ կը տանէին՝ թագաւորին համար
 գէշ կը զրուցէր բարձր ձայնով , Փի-
 լիպպոս ասիկայ աղատ ընել տուաւ
 ըսելով , չգիտէի որ այս մարդը իմ
 բարեկամս է եղեր : Ալ յիրաւի
 մէկ մարդուն պակասու թիւնը երե-
 սին զրուցելը մեծ բարեկամութի
 է . բայց ասանկ բարեկամութիւն
 ճանջողքի կը գրտնրվի : Մէկ մեծ
 հացկերոյթէ մը ելլելու ատեն մէկ
 կին մը դատապարտեց : Աինը ըսաւ .

ճում Փիլիպպոսին կը բողոքեմ : Փիլիպպոս խելքը գլուխը ժողովեց . բանը նորէն քննեց , հասկըցաւ որ անիրաւութեամբ դատապարտեր է , և առաջին դատաստանը փոխեց : խելք մտածեց որ իր տղուն կըրթութիւնը այն ժամանակին պինտ մեծ և երեւելի փիլիսոփային յանձնելու է . ուստի Արիստոտէլին գըրեց . « Տղայ մը ունիմ , և աստուածներէն շնորհակալ եմ չէ թէ անոր համար որ ինձի տղայ տուին , այլ անոր համար որ քեզի պէս խելացիի մը ատեն այս տղայս ինձի տըվին : Արյուսամ որքու ձեռօքդ անիկայ ինձի արժանաւոր յաջորդ կ'ըլլայ և Մակեդոնիա կը կառավարէ » : Փիլիպպոս ասանկ մտքերու տէրըլլալով՝ ՚ի հարկէ իր հպատակներուն սիրելի պիտի ըլլար . և իրեն զինուորական և քաղաքական ճարտարութիւններովը ահարկու մէկ թագաւորութեան մը գրեթէ հիմնադիր եղաւ . և իր օրինակովը իմացուց որ՝ աղէկ կանոնով կառավար

վաճ թագաւորու թիւն մը՝ անկարգ
անկանոն հասարակապետութենէն
չատ աղէկ է :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Աղէքսանդրի Բագարանի-նը Ռէնէ-
Արքեւայ պատերազմը :

1. ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԸՆԵԼՈՒ ՄԵԾԱՒ
ՄԵԾ ԲԱՆԵՐՐ ԵՊԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆ-
ՆԷՆ յայտնի էին : Ինչ բանով որ
խելքն ու միտքը կըրնային բացվիլ
նէ՝ անոնք ամէնն ալ հօրմէն և Ա-
րիստոտէլէն սորված էր . և ինքը
բնապէս շատ փառասէր էր : Օ՛ ին-
ուորութեան ունեցած սէրը կա-
նուխ երեւան հանեց . Հոմերոսի
եղիոնականը կարգալը շատ կը սի-
րէր . որովհետեւ հին ատենվան
դիւցազունքներուն ըրած պատե-
րազմներուն պատմութիւնը կար մէ-
ջը : Քանի որ իրեն հօրը ըրածնե-
րը իր քովը պատմէին նէ՝ հառաչե-
լով կ'ըսէր . ամէն բան հայրս պիտի

ընէ լումրնցընէ , ինձի ընելու բան
 պիտի չի ձգէ : () Ը մը Պարսից թա-
 գաւորին գեասաններուն հետը
 խօսքի մըտնելով՝ անոր պալատին
 մէջ եղած զուարճութիւնները և
 պայծառ զարդերը և հարստութիւ-
 ները հարցընելուն տեղը՝ քաղաք-
 ներուն իրարմէ հեռաւորութիւնը
 և բերդերուն շատութիւնը և ու-
 ժը և ազգին զօրութիւնը և կառա-
 վարութեանը կարգադրութիւնը և
 որպիսութիւնը և թագաւորին ինչ
 բարբի տէր ըլլալը կը հարցընէր :
 Աեսպանները զարմանալով իրարու
 ըսին . « Սա տղան մեծ մարդ է .
 բայց մեր թագաւորը հարուստ է » :
 Այն ատենէն ասոր վրայ կ'երեւէ-
 ին սրտոտութիւն , իշխանութեան
 և տիրելու սէր , քաղաքականութիւն ,
 և վտանգաւոր բաներու մէջ նետ-
 վիլ մը : Շատ ատեն պատերազ-
 մերու մէջ Փիլիպպոսի հետ գրու-
 նըվելով շատ մեծ քաջութիւններ
 ըրեր էր : Թագաւոր եղած ատենը
 քսան տարւան էր , կրնար դրացի-

ները վախցընել և զարմացընել :

2. Աթենացիք երբ որ Փիլիսոսպոսի մեռնելը խմացան՝ շատ ուրախութիւն ցրցուցին . որ անվայել բան էր , չէ՛ թէ ուրիշին մնասուն վրայ խնդալ ըլլալուն համար , այլ մանաւանդ անոր համար որ անոր յաղթելու յոյսերնին կըտորած ըլլալնին կ'խմացուէր : Բայց ամէնէն առաջ այս անվայել ուրախութեանս օրինակը Աեմոսթենէս ցրցուց իր վրայ : Հանգիսաւոր զոհ գոհութեւնել տուաւ կուռքերուն , և թագաւորը մեռցընող Պաւսանիասին պսակ մը տալ վճուեց : Աղէքսանդրի համար մէկ անխելք տղայ մըն է ըսելով՝ և մակեդոնացւոց թագաւորութիւնը կործանման մօտ հասածի պէս ցրցընելով՝ աթենացիները և ուրիշ Յոյները նորէն մակեդոնացիներուն դէմ գրրգռեց : Փիլիսոսպոսի իշխանութեան տակը մտած ազգերը՝ թէ՛ Յոյն և թէ՛ բարբարոս , կարծեցին որ տղուն ձեռքէն դիւրին կ'ըլլայ ազատիլը , ա-

սլքատամբեցան և զէնք առին :

3. Սակեդոնացիները ասոնց ոտք ելլելը տեսնելով վախցան , և իրենց թագաւորին աղաչեցին որ անուշու թեան ճամբայ բռնէ , և դաշնագրու թիւնով և խօսքով բանը լըմընցընէ : Սայց Սղէքսանդր իր ուժը չի գիտցող չէր , միտքը հաստատուն դրաւ որ սլատերազմով իր թշնամիները տարտըղնէ : Սրակացիները և լիւրիկեցիները և ուրիշ բարբարոս ազգերը շուտ մը իրենց սպստամբու թեան սլատիժը առին : Անկէց ետքը Սղէքսանդր Սեբէի առաջ եկաւ , քանզի թեբայեցիք Փիլիպպոսի հոս ձգած սահասլան զօրաց մէկ մասը ջարդած էին : Սեբայեցիներուն մարդ խըրիկեց , խոստանալով որ՝ թէ որ յանցանքին տէրերը իրեն ձեռքը տան՝ մնացածներուն բան չընէր : Սեբայեցիները մըտիկ չըրին , սլատերազմի ելան , և յաղթըվեցան : Յաղթողը քաղաքը զինուորներուն ձեռքը ձգեց որ յափշտակեն և կողոպտեն , բնակիչները ա-

մէնն ալ գերի ըրաւ . միայն քուր
մերը՝ և Պինդարոս բանաստեղծին
ցեղէն գտնելոյները ազատ թու
ղուց : Աղէքսանդրի զօրապետներուն
մէկը կին մը բըռներ էր՝ և իր գէշ
կամբին հաճեցընելու կը բըռնա
դատէր . կինը երբ տեսաւ որ ձեռ
քէն ուրիշ կերպ ազատելիք չունի՝
զարկաւ մեռցուց : Աղէքսանդրի ի
մացուցին . որ կինը առաջը բերել
տուաւ , և գերութենէ ազատեց :

4. Թեբէի պատահմունքը աթե
նացիները լըսելով սրբտերնին վախ
մտաւ . հաշտութեան համար դես
պան խրկեցին . և դեսպաններուն
մէկն էր՝ Աեմոսթենէս : Ղամբան
վախը սիրար մտաւ . անանկ որ՝ իր
ընկերներէն զատկեցաւ : Շատ մարդ
կը գըտնելին ասոր պէս , որ խօս
քով առիւծ են , գործքի գան նէ
կատու կը դառնան : Աթէնք քաղա
քը շատ երեւելի մարդոց հայրե
նիք ըլլալով՝ և մէջը շատ վարպե
տաշէն բաներ ըլլալուն համար՝ Ա
ղէքսանդր չէր ուզեր այս քաղաքս

փրկւցընել : Աերեց . միայն մէկ տղայ-
ման մը դրաւ , որ Վարիդեմոս ա-
նուն մարդը աքսորեն :

5. Միայն այս մէկ հատիկ պա-
տերազմը Աղէքսանդր իր հօրը չափ
ուժով երեւցուց : Ամէն հասարա-
կապետու թիւններէն մարդ կանչեց,
Աորնթոս քաղաքը ժողովեց . և միտ-
քը յայտնեց , որ Պարսից թագա-
ւորու թիր վերցընել և անոնց երկ-
րին տիրել էր : Վանակին մեծ սպա-
րապետ ինքն եղաւ : Արեւելի քա-
ղաքացիները և փիլիսոփայները գա-
ցին աչքը լոյս ընելու : Միայն Վիո-
զինէս շնական ըսլած փիլիսոփայն
չերեւեցաւ . որ հարստու թիւննե-
րը բանի տեղ չի դնելովը անուն
վաստըկեր էր : Աղէքսանդր ինքը
գնաց անիկայ տեսնելու . և խրոխտ
ազատու թիւնը տեսնելով ըսաւ կ'ը-
սեն պատմիչները . թէ որ Աղէք-
սանդր չըլլայի՝ Վիոզինէս ըլլալ
կ'ուզէի : Վայց այս խօսքս անխելքի
զրուցվածք կը նմանի . որովհետեւ
փիլիսոփայու թիւնը իշխաններու և

ընկերու թէ կանոններու չի հաւ-
նիլ սորվեցունէ նէ՝ սուտ և ծաղ-
րական բան մը կ'ըլլայ :

6. Աղէքսանդր ընելու պատե-
րազմին պատրաստութիւները տես-
նելու համար իր երկիրը դարձաւ :
Կարգ վիլ չուղեց. քանզի կը վախնար
որ հարսնիքի պատճառանօք պա-
րապ ժամանակ կ'անցնի : Ատքը պի-
տի տեսնեմք որ՝ ժամանակին յարգը
այնքան գիտցողներէն չէր . որովհե-
տեւ շատ երկար ժամանակ կ'անցը-
նէր խրմտութի , մանաւանդ կենա-
ցը վերջին ատենները : Բայց ասանկ
աղէկ սկզբունքներ շատ անգամ ե-
րիտասարդաց միտքը կուգան , ճամ-
բորդի մը պէս քիչ մը կը կենան ու
կ'անցնին կ'երթան : Ար զօրավարնե-
րուն առատ պարգեւներ տուաւ :
Սէկը հարցուց թէ քեզի ինչ մնաց :
Աղէքսանդր պատասխան տուաւ .
յոյս : Բաղդաւ որ գլտնըվեցաւ որ
յոյսը պարապ չելաւ : Մակեդոնիա
պահպանելու համար Անտիպատրոս
ձգեց տասն և երեք հազար մարդով :

Թագաւորին բոլոր զօրքն էր երեւ-
սուն և հինգ հազար հոգի , բայց ա-
մէնն ալ կըտրիճ մարդիկ . զօրավա-
րերնին ալ պատերազմերու մէջ ե-
փած մարդիկ էին : Ղամբայ ելաւ
նէ՛ հետը միայն եօթանասուն տա-
ղանդ , և մէկ ամսըվան ճամբու
պաշար ունէր : Յոյսը բոլոր իր բազ-
դին և թշնամիին տկարութեանը
վրայ դրած էր :

7. Ալ յիրաւի երկար ատենէ ՚ի
վեր Պարսից թագաւորութիւնը կոր-
ծանելու մօտեցեր էր : Տեղը շատ
ընդարձակ , կառավարութե՛ կար-
գադրութիւններուն մէջ պակա-
սութիւն շատ , ժողովուրդը գերիի
պէս , և մեծերուն բարբը շատ աւ-
րըված , որ կերուխումի մէջ թուլ-
ցած էին . այս ամէն պատճառնե-
րըս թագաւորութիւնը կործանման
դուռը հասցուցեր էր : Վաւառ-
ներուն կուսակալները որ Վաստայ
կ'ըսվէին՝ թագաւորին գըտնըված
տեղէն շատ հեռու ըլլալով՝ գրե-
թէ ամէն մէկը մէկ մէկ ինքնիշխան

Թագաւոր եղած էին : թագաւորին պալատը չի լրաված գէշու թիւն ներու և ապստամբութիւններու մէկ տեսարան մըն էր : Արտաշէսին յաջորդը Աբոս՝ իր եղբայրները և իր քոյրը մեռցրնել տուեր էր : Բագու ներքինին Աբոսը մեռցուց, տեղը Արշէղը նատեցուց : Արշէղ ալ մեռցուց, տեղը Վարեհ՝ Աողոմա նոսր դրաւ . այս ալ պիտի մեռցրնէր . բայց Վարեհ անկէց վարպետ փրթաւ . և Բագու մեռաւ : Աղէքսանդր Ասիա անցած ատենը՝ Պարսից վրայ Վարեհ կը թագաւորէր :

Ք. Ա.
334

8. Աղէքսանդր Փոխուգիա անցաւ . և հոն Աբիւլլէսին գերեզմանը պատուելէն ետքը թշնամիներուն աչքին առաջը Վրանիկոս գետին վրայէն անցաւ , և թշնամիները փախցուց : Այս գործըս մեծ յանդգնութիւն էր . բայց թշնամիները փախցրնելու համար հարկաւոր սեպեց : Յանդգնութիւնը յաջողեցաւ :

9. Մեմնոն հռոդացի, որ Վարեհի սպարապետներուն ամէնէն աղէկն էր, խորհուրդ տուաւ որ ծեծկրօնէն փախչին, և Մղէքսանդրի ճամբուն վրայի երկիրները աւրըշտրկեն, ու տելիք բան չիթողուն, որ Մղէքսանդր կարող չըլլայ առաջ երթալու: Բսածը մտիկ ընող չեղաւ: Թէ որ Փաիւգիայի կուսակալը ասոր խօսքը մըտիկ ընէր նէ՝ Մղէքսանդրի զօրքը ինքնին կը ցրուէր: Մնկէց ետքը Պարսիկները Մակեդոնիա զօրք թափելու էին, որ Մղէքսանդրի հարկ ըլլար ետ դանալ իր երկիրը պաշտպանելու համար: Թէ որ ասանկ բան մը ըլլար նէ՝ Մղէքսանդրի յոյսը զինքը շատ խաբած կ'ըլլար: Ասոր Վարեհ ալ հաճութիւն տուաւ, և գլուխ հանելուն գործը Մեմնոնի յանձնեց: Բայց Պարսից տէրութեան վերջը հասած էր. Մեմնոնի խորհրդովը՝ Աստուծոյ խորհուրդը չէր կրնար աւրըվիլ. Մեմնոն մէկ քաղաքի մը պաշարման ատենը մեռաւ, և տէ-

բուժիւնը վաանդէն ազատելու այս մէկ հատիկ ճամբան գլուխ հանելու մարդ չիմնաց :

10. Քիչ ատենի մէջ փոքր Ասիա ամբողջ Աղէքսանդրի հնազանդեցաւ : Արիւնկիայի կիրճերէն անցաւ Աղէքսանդր . Պարսիկները այն տեղ վանք երեւնալու չի համարձակեցան : Մակեդոնացիները Տարսն քաղաքը առին և կողոպտեցին . որ աշխարհքիս հարուստ քաղաքներուն մէկն էր . և կրակ կուտային կոր : Աղէքսանդր թող չիտուաւ որ քաղաքը այրեն : Այլ ինքը հոգնած և ծով քրտինքի մէջ ըլլալով՝ անխոհեմութիւնով Արիւնկոս գետը մտաւ լուացիլեցաւ . դուրս ելած ատենը վրան սաստիկ մէկ հիւանդութիւն մը եկաւ . որ զօրքը շատ վախցան կենացը վրայ : Սուտ գիր մը հասաւ այն օրերը Աղէքսանդրու ձեռքը . որպէս թէ իր բժիշկը Փիլիպպոս՝ Պարսիկներէն կաշառք է առեր , զինքը պիտի դեղէ : Փիլիպպոս ասոր համար շինած դեղը բերած ատենը՝

Աղէքսանդր իր ձեռքը հասած գի-
րը Փիլիպպոսի ցրցուց . և անոր լը-
ման կարդալուն անգամ չըստասե-
լով՝ բերած գեղը խըմեց : Ասանկ
անկասկած միտք ունենալը՝ իրեն
բժշկրութիւնն շատ մեծ օգուտը
բաւ : Բժիշկէն կասկած ունեցող
հիւանդի պէս գէշ վիճակի մէջ
մարդ չըլլար :

11. Դարեհ ալ առաջ կուգար
կռուելու մրտքով : Ասորեստանի
գաշտերը կենալով Յունաց զօրա-
ցը հոն ստրասելուն տեղը եկաւ ա-
նանկ նեղ տեղ մը ինկաւ՝ որ չէր
կրնար ուղածին պէս շարժիլ և
զօրքը կարգին դնել : Ինքնիրեն ա-
պաւինած ըլլալով՝ խեղացի մարդոց
տուած խորհուրդը մտիկ չըրաւ . և
ասով որքան վտանգի մէջ ինկաւ :
Իստոսի սրատերազմովը սորվեցաւ
որ՝ զօրքը աղէկ կրթըլած չըլլայ ,
և խեղացի զօրապետի իշխանութե-
տակ չըլլայ նէ , անթիւ անհամար
ըլլայ ալ նէ բան մը ըսել չէ , քաջ
սպարապետի և կրտրիճ զօրապետ

ներու ձեռքին տակը եղած աղէկ
 և կրթեալ զինուորներուն քովը :
 Վարեհի զօրաց մէջ երեսուն հազար
 Յոյն զինուոր կային , որ վարձքով
 բռնած էր . քիչ մը ատեն անոնք
 կրրցան Մղէքսանդրի դէմ գնել :
 Բայց վերջապէս Մղէքսանդր ասոնք
 ցրուեց , և պատերազմին յաղթու-
 թիւնը վաստրկեցաւ :

12. Վարեհ գտնէ սրբոտու թիւր
 ցրցուց : Աինչեւ որ իրեն հեծած
 կառքին ձիերը ամէն մէկը քանի մը
 տեղաց զարնրվելով ու ժերնին կտր-
 օրնցուցին նէ՛ հոն մնաց . անկէց
 ետքը կառքէն ինչաւ փախաւ : Պար-
 սից կողմէն մեռնողները հարիւր
 տասն հազար հողի կ'երլեն կ'ըսեն
 պատմիչները : Վարեհին մայրը , կի-
 նը , և տղայքը գերի ինկան : Մղէք-
 սանդր քովերնին գնաց մխիթարե-
 լու . և հետերնին ազնուաբար վար-
 վեցաւ : Անգամ մը քովերնին գնաց
 նէ՛ իրեն Հեփեստիոն անուն բա-
 րեկամը հետն էր : Վարեհի մայրը՝
 որ Մղէքսանդրը տակաւին չէր ճանչ-

նոր, Հեփեսոսիոնին փառաւոր հա-
 գուտը տեսնելով՝ անիկայ թագա-
 ւոր կարծեց, և թագաւորին վայե-
 լուչ երկրպագու թիւնը անոր ըրաւ :
 Այոքը երբոր իմացաւ՝ վախցաւ,
 չըլլայ որ թագաւորը այս սխալմանս
 վրայ իրեն նեղացած ըլլայ : Աղէք-
 սանդր ըսաւ, մի վախնար, մեր մէ-
 ջը խտրութիւն չիկայ, Աղէքսանդր
 մին ալ ասիկայ է : Այոքը գնաց Ա-
 ղէքսանդր՝ ասոնց բանելու բան
 խորկեց, որ սրտերնին չինեղանայ :
 Այս բանս Պարսից թագուհինե-
 րուն շատ դժուարը գնաց, իրենց
 անանկ եկաւ, որպէս թէ ասով ի-
 րենց գերութեան վիճակը յիշեցը-
 նել կ'ուզէ, լալ սկսան : Աղէքսանդր
 ասիկայ իմանալով խորկած բաները
 ետ առաւ, և թողութիւն ուզեց,
 սխալմամբ ձեզ ալ ըսաւ մեր թա-
 գուհիներուն պէս բան բանելու
 սորված, և բան չունեցած ատեն
 նիզ սրտերնիդ նեղացող կարծեցի :

13. Կուինդոս Կուրտիոս պաա-
 միչը ուրիշ քանի մըն ալ ասանկ բա-

ներ կը պատմէ . բայց ասոր պատ-
 մու թեանը շատ հաւատարմութի
 չըլլար . քանզի Աղէքսանդրի ժամա-
 նակներէն շատ ետ է . և իրմէ ա-
 ուաջ եկող պատմիչները անանկ բա-
 ներ չեն զրուցած : Ա՛նք ալ պատ-
 մութիս սուտ բաներով խառնել
 չուզեցինք : Իստոսի պատերազմէն
 ետքը Աղէքսանդր Ասորոց երկիրը
 անցաւ : Իարեհի գանձը Վամաս-
 կոս քաղաքին մէջ պահված ըլլալով՝
 Աղէքսանդրի զօրապետներուն մէկը
 երբ որ Վամասկոս առաւ՝ գանձը
 մակեդոնացւոց ձեռքը անցաւ :
 Այս քաղաքիս մէջ Վարեհ երեք
 հարիւր կնիկէն աւելի ունէր . չորս
 հարիւր մըն ալ պալատական զօրա-
 գլուխներ ձգեր էր : Իտած ինչ-
 քերնին եօթն հազար ձիու բեռ
 եղաւ : Ահա Պարսից թագաւոր-
 ները խելվընին ասանկ բաներ շատ
 ցընելու տուած ըլլալով՝ միանգա-
 մայն տկար և ամբարտաւան կ'ըլ-
 լային :

14. Իարեհ՝ Աղէքսանդրի մէկ

նամակ մը գրեց ամբարտաւան խօս-
 քերով, որպէս թէ Վաստի պատե-
 րազմը ինք վաստրկածի պէս : Ասով
 կը յորդորէր Վղէքսանդր՝ որ այս ա-
 նիրաւ պատերազմէն ետ կենայ, և
 մայրը և կինը և տղայքը ետ կ'ու-
 ղէր : Վղէքսանդր պատասխան կը
 գրէ թէ՛ Վսիայի տէրը ես եմ, և
 կ'ուզեմ որ դուն ալ զիս անանկ
 ճանչնաս : Բայց այն ատենը Պարսից
 ետեւէն շինկաւ : Վէպ ՚ի Տիւրոս
 գնաց, գուցէ միտքը այն էր որ՝ ծռ-
 վու տէրու թիւնը այս ճամբով ձեռք
 ձգէ, և թէ որ Յոյները ծովու կող-
 մէն իրեն դէմ բան մը ընելու խոր-
 հին նէ՛ առաջը առած ըլլայ : Վանդի
 անոնց մտքին վրայ կասկածելու
 պատճառներ ունէր, որովհետեւ
 Վամասկոս առնրված ատենը՝ աթե-
 նացւոց և սպարտացւոց և թեբա-
 յեցւոց կողմէն Վարեհի կողմը խըր-
 կրված դեսպաններ գտաւ հոն : Բայց
 բուն պատճառը, որ Վղէքսանդր
 ինքն ալ չէր գիտեր, Աստուծոյ վը-
 ճիւղը կատարել էր, որ շատ առաջ

մարդ արե՛նեբուն բերանովը խոստա-
ցեր էր որ Տիւրոս պիտի կործանէ :
Աղէքսանդր Տիւրոսի առաջ գնաց ,
հոն գրանբլած Հերակլի մեհենին
մէջ զո՛հ ընելու պատճառանօք ներս
մտնել կ'ուզէր : Տիւրացիները քա-
ղաքին դուռը գոցեցին , Աղէքսանդր
ալ բռնի ներս մըտնել միտքը դնե-
լով քաղաքը պաշարեց :

15. Այս Տիւրոս՝ հին ատենական
փիւնիկեցւոց երեւելի Տիւրոս մայ-
րաքաղաքը չէր : Հին քաղաքին ա-
ւերակներուն դիմացը ծովուն մէջ
մէկ պրզտիկ կըզգի մը վրայ շինված
էր այս նոր Տիւրոսը : Առանց նաւու
կ'երեւէր որ այս քաղաքս առնել
անհնար է : Աղէքսանդր՝ որ ասանկ
արդէլք չէր ճանչնար , կըզգին ու
քաղաքին մէջ տեղի ծովը որ քիչ
մը բան էր՝ լեցընել ուզեց , որ ցա-
մաքէն քաղաքը երթալու ճամբայ
ըլլայ : Անխոնջ աշխատելով բանը
առաջ կ'երթար , բայց մէկ դիէն
տիւրացիք , մէկ դիէն ծովուն ալիքը՝
մակեդոնացւոց շինածը կ'աւրէին :

Մակեդոնացիները չէին յուսահա-
տեր . աւրբվածը նորէն կը շինէին :
Յամաքի կողմէն քանի մը ժողո-
վուրդ , և մանաւանդ սիդոնացիներ-
ըր , որոնց հետ Աղէքսանդր անու-
շութիւնով կը վարվէր , Աղէքսանդ-
րի նաւ ալ տուին : Վաղաքին սա-
շարումը սաստկացուց : Այն ատե-
նը քաղաք սաշարելու ինչ մեքենայ-
ներ կային նէ՝ երկու կողմէն ամէնն
ալ գործի դրովեցան : Աօթն ամիս
ասանկ յամառութիւ պաշարելէն
ետքը՝ մակեդոնացիք վրայ վազելով
քաղաքին տիրեցին . այն օրը ութը
հազարի չափ տիւրացի ջարդեցին .
երեսուն հազար մըն ալ գերի բռ-
նեցին և ծախեցին : Աղէքսանդր
այնքան արիւն ընելէն ետքը գնաց
Հերակլի մեհեանը , և ուխտած
զոհը ըրաւ :

16. Յովսէպոս սրտով չին ըսա-
ծին նայլի նէ՝ Արուսազէմ ալ Տիւ-
րոսի սէս սխտի ընէր : Վայց ան-
գամ մը երազին մէջ Հրէից քահա-
նայապետը տեսած էր . և ետքը երբ

որ ճիշդ զինքը տեսաւ՝ ճանչցաւ .
 ոտքը ինկաւ երկրպագութիւն ընե-
 լու Աստուծոյ անուանը՝ որ քահա-
 նայապետը գլուխը դրած խոյրին
 ճակատին վրայ գըրոված էր : Միտ-
 քը եկաւ որ՝ նոյն մարդն էր որ Ա-
 սիայի տիրապետելէքը իրեն գուշա-
 կած էր :

17. Ասդողոնիմոսի պատմութիւնը
 յիշելու արժանի մէկ բան մըն է :
 Ալուինգոս Ալուրտիոս կ'ըսէ թէ՛ այս
 մարդս Սիդոնի թագաւորական ցե-
 ղէն ծնած էր . բայց ետքը աղքա-
 տութեան մէջ իյնալով սարտիզ-
 սկանութեամբ ապրելու աստիճանն
 էր հասեր : Սղրատոն թագաւորը
 Վարեհի կուսակից ըլլալուն համար
 թագաւորութենէ հանվեցաւ , և
 ասոր հրաւիրեցին որ աթոռը նստի :
 Յանձնառու եղաւ , բայց չուզե-
 լով : Աղէքսանդր ասոր հարցուց թէ
 այն խեղճ վիճակին ի՞նչպէս կը դի-
 մանայիր : Ասդողոնիմոս ըսաւ . ե-
 րանի թէ թագաւորութիւնն ալ
 կրելու սցնքան ուժ ունենայի : Աւ-

զածս ամէնն ալ իմ ձեռքս ինձի
կը ճարէր : Իսն մը չունէի , բայց
բանի մըն ալ կարօտ չէի : Այս պատ-
մու թեանս ստուգու թիւնը կասկա-
ծելի ալ է նէ՝ բարոյականը շատ ա-
ղէկ խրատ է մարդու :

18. Աղէքսանդր՝ Վազա քաղաքը
առաւ . որ Պեդիս քաջութեամբ
կը պաշտպանէր : Տասն հազար մարդ
թուրէ անցուց . մնացածները ամէնն
ալ՝ կրնիկ մարդիկ և տղայք անգամ
ծախեց . և քաջ Պեդիսը ոտվըներէն
մէկ սայլի մը կապելով քաշկրուտել
տուաւ քաղաքին բոլորը , մինչեւ
մեռաւ : Աղէքսանդր եղիոնականը
կարդացած ըլլալով՝ ասով կ'ուզէր
Աբիւլէսի նմանիլ , որ Հեկտորին
ասանկ ըրաւ : Արկուքին ալ ըրածը
անգթութիւն էր :

19. Անկէց Ագիպոսս անցաւ :
Պարսիկները հոն ատելի եղած էին .
քանզի եգիպտացւոց կրօնքը կը նա-
խատէին : Աւստի Աղէքսանդրը իբ-
րեւ ազատարար ներս առին , այն
ալ անոնց սիրտը շահելու համար

ներեց որ իրենց կրօնքով և օրէնքով և սովորութիւնովը վարվին :

20. Սէկ անխելք փառամտութեան մը գլուխը փրչեց . որ Վիոս Մանն ըսլած կուռքին մեհեանը երթալ ուղեց : Ղամբան աւազուտ էր . որ ատեն մը Պարսից Վամբիւս թագաւորին զօրքը այն ճամբէն երթալով՝ ամէնը մէկէն աւազին տալը թաղվեցան : Պատմիչներուն ըսածին նայինք նէ՝ Մղէքսանդրի այս վտանգէն ազատվիլը հրաշքի պէս բան մը եղաւ : Վ՛ուղէր որ զինքը իբրեւ Վիոսի զաւակ հրատարակէ : Պատգամը այս անունը ասոր շնորհեց . և պատմութիւններու մէջ կը գրանեմք որ՝ կռոց պատգամները շատ սովորութի չունէին թագաւորներուն ուղածին գէմ գնելու : Մղէքսանդրի մայրը Աղիւմբիա այս որ լսեց նէ ծաղրելով գիր մը գրեց տղուն և ըսաւ . այդ համբաւը հանելդ աղէկ չըրիր . քանզի Վիոսի կինը Հերա՝ ատով ինձի թշնամի կ'ընես : Մտով կրնար հասկընալ որ

իրեն իբրեւ պատիւ փափայրած ա-
նունէն թէ իր մօրը և թէ իրեն ա-
նարգանք և խայտառակութիւն կ'ել-
լէր : Բայց որովհետեւ ինքը չէր
հաւատար, միայն զօրացը աչքին մեծ
մարդ մը երեւիլ կ'ուզէր . ուստի
ասանկ խորհրդածու թիւնները շատ
հոգը չէր :

21. Այդ խպտացւոց երկիրը ծովե-
ղերքը մէկ քաղաք մը շինեց , որ Ա-
ղէքսանդրիա ըսվեցաւ , և ետքը
աշխարհքիս սինտ ծաղկեալ քա-
ղաքներուն մէկը եղաւ : Այս կող-
մէն Աղէքսանդրու ճշմարտապէս
մեծ մարդ ըլլալը կ'երեւէր : Յաղ-
թու թեամբ անուն վաստրկելու
փափայրելով մարդիկ ջարդու բուրդ
ընելուն յիշատակը մարդու սու-
կում կը բերէ . ասանկ օգտակար
և երկար ատեն մընալու յիշատակ-
ները մարդուն փառքը կ'ելեցընեն :

Այլևս անհրաժեշտ է հասկանալ Վերջը :

1. ՎԱՐԵՆ՝ Այլևս քսանդրու նորէն գեասպաններ խրկեր էր , իր աղջիկը անոր կին տալու համար , թէ որ առնելու յօժարի նէ . և անոր օժիտ (ճէհէզ) սկիտի տար Ափրատ գետին ու Հելեասպանտոսին մէջ տեղը ինկած բոլոր Պարսից ձեռքը եղած երկիրները : Աերեւի որ՝ ասոր չէ ըսելը խոհեմու թիւն չէր : Պարմենիոն ըսաւ . թէ որ ես Այլևս քսանդր ըլլայի նէ՝ ասիկայ կ'ընդունէի : Այլևս քսանդր սլատասխան տուաւ . ես ալ՝ Պարմենիոն ըլլայի նէ՝ ասոր չէ չէի ըսեր : Վայց որովհետեւ Այլևս քսանդր էր , աչքը ամէնուն մէկէն տիրելու ըլլալով այս հրաւերըս չընդունեց , ամէնն ալ ձեռքէ հանելու վտանգին յանձնառու եղաւ : Ասոր այս յանգգնու թիւնս էր որ՝ չի գիտնալով՝ Վանիէլի մարգարէու թեր կատարող եղաւ (Վանիէլ . Ը . 4=10 .

20=22) : Վարեհ այս միջոցիս կրք-
ցաւ եօթն կամ ութ հարիւր հա-
զար հոգիի չափ զօրք ժողովել :

2. Աղէքսանդր առանց արգելք Ք. Ա.
351
մը գրտնելու Ափրատ և Տիգրիս
գետերը անցաւ : Արկու զօրք Ար-
բեղա քաղաքին քովի դաշտին մէջ
իրար դիմաւորեցին : Սակեդոնաց-
ւոց զօրքին ձախակողմեան թեւը
վտանգի մէջ ինկաւ : Ասոնք փախ-
չելու և Պարսից զօրքը բանակին
այս կողմը կողոպտելու սկըսած էին :
Աղէքսանդր աջակողմեան թեւին
մէջ գլտնելով՝ այն տեղի զօրքը
յաղթող եղան . մարդ խըրկեց որ՝
զօրքերը բանակին կողոպտուելը հոգ-
չընեն . միայն թշնամիները յաղթե-
լու նային : Աստի ամէնն ալ նորէն
սիրտ առնելով՝ թշնամիին զօրաւոր
կողմը ուր էր նէ այն տեղին վրայ
ուժերնին թափեցին : Հատ ատեն
չանցաւ , պատերազմը վաստըկեցան .
և իրենց մէջէն մեռնողները հազար
երկու հարիւր հոգիէն քիչ եղան :
Վարեհի կողմէն երեք հարիւր հա-

զարի չափ մարդ մեռաւ : Ա՛նացած զօրքը փախան , ինքն ալ հետերնին . և Վեասոս անուն մէկ մը՝ որ իր նախարարներէն էր , զինքը մեռցուց ճամբան փախած տաներ : Ասանկ զօրաւոր թագաւոր մը՝ որ իր նախորդներուն շատէն աւելի յարգութե արժանի էր , ասանկ վախճան ունեցաւ : Պարսից թագաւորութիւնն ալ ասով վերջացաւ :

3. Աղէքսանդր այս յաղթութիւնս գլխաւոր քաղաքներուն ինքնիշխան տէր եղաւ , մէջերնին անհատնում հարստութիւն գտաւ , որով մակեդոնացիները փափկութեան ինալով աւրելեցան . խեղք չըրին որ իրենց թնամիները աւրողներն ալ այս հարստութիւներս էին : Վաղդին յաջողելուն՝ թագաւորը ինքն ալ չի կրցաւ դիմանալ , խրմտութի և սընափառութե ինալով ինքրզինք այնքան մոռցաւ՝ որ ասպերախտութե գործքեր ալ ըրաւ : Պերսեպօլիս քաղաքը թագաւորաց փառաւոր պալատը այրեց , և կ'ըսեն որ՝ գինով

էր երբ որ այս հրամանս ըրաւ : Իրեն
 ազգին սովորական եղած թագաւո-
 րական հանդերձները չի հաւնելով
 վրայէն հանեց, Պարսից թագաւոր-
 ներուն հանդերձները և զարդերը
 վրան առաւ առաւել փառաւոր ըլ-
 լալու համար . բայց մակեդոնացի-
 ներուն սիրտը ասոր շատ նեղացաւ :
 Այնքան ասիացի ազգաց սովորու-
 թիւնը իրեն աղէկ երեւցաւ, որ
 ուղեց որ իր հպատակները իրեն եր-
 կրրպագուի ընեն . ինչպէս որ Պար-
 սիկներուն սովորութիւն էր, որ ի-
 րենց թագաւորին երկրրպագու-
 թիւն կ'ընէին :

4. Իննակին մէջ բանի մը երե-
 ւելիներ մէկ եղան, թագաւորը ըս-
 տաննելու խօսք ըրին : Պարմենիո-
 նին տղան Փիլոդաս ասիկայ իմա-
 ցաւ . բայց սուտ բան մը երեւնա-
 լով իրեն՝ բան չի խօսեցաւ : Աղէք-
 սանդր երբ որ իմացաւ՝ Փիլոդաս
 մեռցրնել տուաւ : Անկէց քիչ մը
 ետքը անոր հայրը Պարմենիոնն ալ
 մեռցրնել տուաւ : Պարմենիոն ը-

սածնիս՝ Աղէքսանդրու շատ սիրելի էր առաջկուց . որովհետեւ ըրած յաղթութիւններուն շատը՝ թէ որ այս մարդս չըլարնէ՝ կամ չէր կըրնար ընել, կամ շատ մարդ կը կորսընցընէր և շատ դժուարութիւն կը քաշէր : Օ՞րբքը ոտք ելան . բայց ինքը անանկ իշխանութի մը ունէր զօրացը վրայ, որ մէկ խօսքով ամէնքն ալ հանդարտեցուց : Ետսոս՝ Դարեհը մեռցընելէն ետքը բակտրիացւոց և սոգդիացւոց կողմերը գացեր՝ որ Պարսկաստանի հիւսիսային կողմը կ'իյնան, և թագաւորի անունն առեր էր : Աղէքսանդր ետեւէն ինչ կաւ և մինչեւ այն տեղները գնաց . Ետսոս ալ չարաչար սպաննըլեցաւ : Այլիւ թացիներուն ալ յաղթեց : Այսքան պատերազմերը մէկիկ մէկիկ պատմելով՝ խօսքերնիս շատ կ'երկըննայ :

5. Աղէքսանդր՝ Ալլիդոս անուն մէկն ալ մեռցուց . և ասոր պատմութիւնէն մարդոյս սոսկալի խրատ մը ելլելուն համար ասիկայ հոս

պատմեմք : Աղիդոս՝ պատերազմի
 մէջ եփած զօրապետ մըն էր , և աւ
 տեն մըն ալ Աղէքսանդրը պատե
 րազմի մէջ ծանր վտանգէ մը ազա
 տեր էր : Անոր համար թագաւո
 րին ալ սիրելի էր , և ինքը իր ազ
 դին հին սովորութիւնները չէր ու
 ղեր ձգել : Մէկ հացկերոյթի մը
 մէջ համարձակութիւնը չափէն ա
 ւելի փախցընելով՝ մահուանը պատ
 ճառ եղաւ : Վինին թագաւորին
 գլուխը տաքցուցած ըլլալով՝ թա
 գաւորը իր ըրած բաներուն վրայ
 խոշոր խոշոր կը բրբդէր , և զինքը
 իր հօրմէն Փիլիպպոսէն վեր ցըցը
 նել կ'ուզէր : Աղիդոսին սիրտը նե
 ղացաւ՝ և թագաւորին դրպչելու
 խօսք խօսեցաւ : Աղէքսանդր կատ
 ղեցաւ նստած տեղէն ցաթկեց ,
 ղէնք առաւ որ զարնէ . Աղիդոս սե
 նեակէն դուրս հանեցին : Միջոց
 գտաւ Աղիդոս , նորէն ներս մտաւ .
 բան մըն ալ ըսաւ . այն ատենը թա
 գաւորը իր ձեռքովը զարկաւ Աղի
 դոսին , այն տեղը մեռցուց : Շատ

չանցաւ զղջացաւ, և սիրտը իրեն
 դատախազ ըլլալով՝ այս սպանու-
 թեանս վրայ շատ կը ցաւէր : Այն-
 քան իրեն ցաւ եղաւ որ՝ իր վրանը
 մտաւ կուլար . քովն ալ մարդ չէր
 հանդիպցընէր, և ինքն ալ յուսա-
 հատելով ապրիլը աչքէն ելաւ : Պա-
 լատականները ճամբան դտան մխի-
 թարելու և զինքը հանդարտեցընե-
 լու, և շողոքորթութիւնը մինչեւ
 այն աստիճան հասցուցին, որ վրձ-
 ուով հրատարակեցին թէ Վղիդոսի
 մեռնիլը արդարութեւն էր : Այց մե-
 ղապարտ մարդուն խիղճը՝ ասանկ
 վճիռ մըտիկ չընէր, միշտ ներսէն
 կը տանջէ, ըրածը արդարութիւն
 չէր ըսելով : Անկէց ետքը Աղէք-
 սանդրի բանակին մէջէն արդարու-
 թիւնն ու համարձակութիւնը մե-
 կէն անցայտ եղան :

6. Այլ ցած պալատական մը
 խօսք հաներ էր՝ որ Աղէքսանդրու
 անձական պատիւ տալ կը վայելէ : Արա-
 լիսթեանէս փիլիսոփայն ասոր դէմ
 կենալով թագաւորին աչքէն ին-

կաւ . Թագաւորին կենացը թշնա-
միներուն հետ խորհրդակից է ըսին .
Թէպէտ ըսածնին առանց ապացոյցի
մնաց , բայց փիլիսոփայն բանտը դը-
րին , որ հոն մեռաւ : Ասանկով կ'ե-
րեւէր որ մակեդոնացիները կամաց
կամաց բռնաւորական իշխանու թե-
տակ պիտի մնան :

7. Թէ որ Աղէքսանդր իր հօրը
չափ խոհեմու թիւն ունենար նէ՝
Թագաւորու թիւը մեծցընելու տեղը
ու ժովցընելու կը նայէր : Այց քա-
նի որ բաղդը յաջող կ'երթար նէ՝
ինքն ալ այնքան կը հպարտանար :
Իրեն անանկ եկաւ որ՝ Հերակլէս
և Վիոնիսոս ըսլած չաստուածնե-
րուն նման կըրնայ ըլլալ . անոնց ը-
րածը ինքն ալ կըրնայ ընել . ուստի
Հնդկաց երկրին տիրել ուղեց : Աը-
նաւ վտանգ մտիկ չընելով մտաւ
հնդկաստան : Արկրին Թագաւորնե-
րուն մէկը Վաքսիլաս անուն՝ ըն-
ծայներով քոյն եկաւ , և հետը բա-
րեկամ եղաւ :

8. Այլ ուրիշ Թագաւոր մը Պո-

ուս անուն՝ աւելի խրոխտ և սրբ
 տոտ՝ Աղէքսանդրի գէմ կենալու
 կը սլատորաստըվէր : Աղէքսանդր Ն
 դոս գետը անցաւ , Հիւտասայ գե
 տին քովերը հասաւ . անոր մէկալ
 երեսն ալ Պոռոս կեցած էր իր բազ
 մաթիւ զօրքովը : Օ ինուորական
 հնարքով մը թշնամին խաբելով՝ ա
 նոնք չիմացած ինքը գետէն անդին
 անցաւ : Հնդիկներուն թագաւորը
 որքան կտրիճ էր ալ նէ՝ Աղէքսանդր
 հնդիկներուն յաղթեց . թէպէտ
 հնդիկներուն զօրացը հետ շատ ալ
 պատերազմի վարժըված փիղ կար .
 ամէն մէկուն վրայ ալ աշտարակի
 նման շէնքեր , և մէջերնին զինուոր ,
 որ կը ծեծկըվէին : Պոռոս ալ գերի
 բըռնըվեցաւ , որ Աղէքսանդրի ա
 ռաջը տարին : Աղէքսանդր ասոր
 հարցուց , ինչպէս կ'ուզես որ հե
 տրդ վարվիմ : Պոռոս ըսաւ . թա
 գաւորի մը հետ ինչպէս վարվիլ
 պէտք է նէ : Աղէքսանդր ըսաւ . շատ
 աղէկ . իմ պատուոյս համար ատոր
 կը հաճիմ : Այլ յիրաւի հետը շատ

աղէկ վարվելով՝ անիկայ իրեն բա-
րեկամ ըրաւ :

9. Շատ աշխատանքներէն և ան-
հաւատալի արշաւանքներէն ետքը
զօրքը իրենց չի ճանչցած երկիրները
իրենց թագաւորին ետեւէն իննալ
երթալ չուզելնուն համար՝ իրեն ալ
հարկ եղաւ ետ դառնալ : Ինդոս
գետին վրայէն նաւ հեծաւ՝ Ավիւ-
անոս ծովը տեսնելու համար : Տե-
ղատու թիւն և մակընթացու թիւն
ըսված երեւոյթքը՝ որով ծովը քը-
սան և չորս ժամը երկու անգամ
դէպ ՚ի ցամաքը կուգայ և ետ կը-
քաշվի, նաւապետները վախցուց,
որովհետեւ ճերմակ ծովուն մէջ իր
գիտցած տեղերը ասանկ բան տես-
նող չի կար : Բայց Աղէքսանդր իր
հետաքրքրու թիւնը լեցընելու հա-
մար երկու սրղտիկ կրղղի ելաւ սր-
տրտեցաւ : Հնդկաստան երթալովը
ասկէց աւելի մէկ շահ մը չըրաւ :

10. Կըսեն որ՝ Հիւտասալ գետը
անցնելու ատենը իր զօրացը ըսած
ըլլայ, մակեդոնացիք, ինչ կը կար-

ծէք . միայն ձեր գովեստը լրսելու համար այսքան վտանգներու մէջ մըտնել ելլել կըլլայ մի : Այն ալ կը պատմեն որ շատ կը փափաքի եղեր հասկընալու թէ ինքը մեռնելէն ետքը իր պատմութիւնը կարդացողները իրեն համար ինչ կ'ըսեն : Խեղճը յոյսը կըտրեր է քանի որ կենդանի էր նէ իրեն համար շիտակ դատաստան ընելուն վրայ . և յիշուի այս կողմէն մեծ մարդիկ անբաղդ են . հասարակութիւնը իրենց վրայօք ընելու դատաստանը չեն կրնար լսել , քանի որ անոնք կենդանի են և մեծութեան մէջ կը վայելեն : Մանաւանդ՝ Աղիգոսը և Աալիսթեմէսը մեռցընող Աղէքսանդրը՝ իր վրայ եղած դատումը իր կենդանութեանը ատենը լսելուն դըռները գոցեր էր :

11. Աղէքսանդրի ասանկ անհաւատալի բաներու մէջ մըտնելուն պատճառ՝ սովորաբար կ'ըսվի թէ իրեն անյագ փառասիրութիւնն էր . բայց կրնայ ալ ըլլալ որ իր խիղճը

միշտ իրեն դահիճ ըլլալով անիրաւ սպանութիւններ ընելուն համար, ասանկ մեծամեծ բաներով պարապիլ կ'ուզէր որ խղճին տանջելը քիչ մը մոռնայ: Ա՛մէն ատեն փորձով կը տեսնեմք, որ մէկ մարդուն խիղճը մէկ բանի մը վրայ զինքը տանջէ նէ՛ անիկայ միշտ իրեն մէկ գործ մը կը փրնտրուէ՛ որ անով զբաղի. սրտին քաշած տագնապը և նեղութիւնը մոռնայ՝ թէ որ հնար է նէ:

12. Թէ որ Ա՛ղէքսանդր փառքի ետեւէ էր նէ՛ չէր գիտեր որ փառք ստանալուն սպասով ճամբան՝ օգտակար բաներ ընելով գովելի ըլլալն է: Ա՛րոստրատոս անունով խենթ մը անուն վաստրկելու համար Ա՛փեսոսի մեհեանը բլուրնկցուց, որ աշխարհքիս հրաշալի շէնքերուն մէկըն էր: Փառք վաստրկելը սրատեւրաղմով և մարդ ջարդելով և քաղաքներ առնելով կ'ըլլայ կարծիք ընող մարդն ալ Ա՛րոստրատոսին խելքէն է:

13. Ա՛ղէքսանդր հնդկաստան պը-

տըտած ատենը՝ պարսկաստանի մէջ
անկարգութիւնը և խառնակու-
թիւնը կ'ելեւէնար : Այտ դարձած ա-
տենը հարկ եղաւ գէշցած կուսա-
կալները և կառավարիչները պատ-
ժել . և զօրքերուն մէջ ելած խռ-
վութիւնը հանդարտեցընել : Պար-
սից թագաւորական ցեղէն երկու
աղջիկ առաւ . որոնց մէկուն անու-
նըն էր Հոռքսան : Այլ երկու ազ-
գը իրար խառնելու համար ուրիշ
մակեդոնացիներուն ալ ստիպեց որ
Պարսից աղջիկ առնեն : Այլ այս քա-
ղաքականութիւն հարկաւոր էր : Օ՛ր-
վային զօրութիւնը և վաճառակա-
նութիւնը ծաղկեցընելու համար
մեծ բաներ մտամտաց : Ռաբիլոնի ա-
ռաջ մեծ աւազան մը բանալ կ'ու-
զէր . որ մէջը շատ մը պատերազմա-
կան նաւ սրղմի : Այլէոս գետով
մէկ մըն ալ Ափիանոս ինջաւ : Ռայց
կենսոր վերջն ալ մօտեցած էր :

14. Հեփեստիոնի մահուանը
պատճառ եղած էր այնչափ կերու-
խու մը : Այս օրինակս իրեն խրատ

չեղաւ . ինքն ալ նոյն գէշու թիւնով
 նոյն ախտին տէր եղաւ և մեռաւ
 Վաբիլոնի մէջ , երեսուն և երեք
 տարւան : Հիւանդութիւնը երկան
 քրչեց . աւելորդ սպաշտութիւնը ցը-
 ցընելու չափ տկարութիւն իրեն
 տիրած ըլլալը ցըցուց : Վստղերէն
 գուշակութի հանող քուրմերուն
 սպաւինեցաւ . որ առաջ անոնց
 գուշակութիւնը բանի տեղ չէր դը-
 ներ : Վրեն յաջորդ ըլլալու մարդ
 մը չի ցըցուց . հարցուցին ալ նէ՝
 ո՞վ արժանի է նէ այն ինձի յաջորդ
 թող ըլլայ ըսաւ : (Թագաւորութե
 աւելի մօտաւոր իրաւունք ունե-
 ցող իրեն չորս դայեակորդիները
 թողուց . որովհետեւ ինքը դեռ աշ-
 խարհք եկած զաւակ չունէր . միայն
 Հռոքսան յղի էր : Վյն ալ հասկը-
 ցաւ որ իր մեռնելէն ետքը շատ
 պիտի չանցնէր , արիւնհեղութիւն
 պիտի ըլլար : Վյնքան աշխատու-
 թիւններուն և պատերազմերուն և
 յաղթութիւններուն պտուղը՝ քաղա-
 քական պատերազմեր , և տէրուէ
 կրտոր կրտոր ըլլալը եղաւ :

Ա՛րեհէ՛ւ Լ Սալեդոնի տէր ի շա՛հ Բահեդը :

1. Ա՛րեհէ՛ւ ՍԱՆԵԴԻ պատերազմի պա-
 րապաճ ատենը յունաստան իրեն
 առաջին աղէկութիւնը ձեռք ձգե-
 լու համար քիչ մը աշխատեցաւ :
 Սպարտացիք Պեղոպոննեսոս ցամաք
 կղզին ոտք հանեցին . բայց Ա՛նտի-
 պատրոս մեծ յաղթութիւն մը ընե-
 լով անոնք հանդարտեցուց : Վարի-
 ընի կուսակալը Հարբաղոս խել
 մը անիրաւութիւն և զրկանք ընե-
 լէն ետքը վախնալով հետը անհատ-
 նում գանձ առաւ՝ Աղէքսանդրու
 հնդկաստանէն ետ գառնալու ա-
 տենները Աթէնք փախաւ . և ստա-
 կի ուժով՝ ժողովրդեան խօսք ան-
 ցընելու ուժ ունեցող ատենաբան-
 ները իրեն կողմը շահեցաւ . բայց
 Փոկիոնի միտքը չի կրցաւ հաճե-
 ցընել : Վեմոսթենէս դիւրաւ զի-
 ջաւ . չէ՛ թէ այնքան կաշառքով ,
 որքան իր հնացեալ ատելութեամբը

մակերդոնացւոց տէրու թեան դէմ ,
 և Աթէնքի աղատու թեան եվելօք
 նախանձախնդիր ըլլալովը . և երբ
 տեսաւ որ իրեն ուղած բանը քա-
 լեցընել տալու համար իրեն ստակ
 ալ տուող կայ՝ առնելու դժուա-
 րու թիւն մը չի քաշեց : Վայց Ա-
 թիսպագոսի ատեանը այս կաշառք
 առնելը անոր յանցանք սեպելով՝ որ
 իրօք անանկ ալ էր , ղինքը դատա-
 պարտեց : Հարբաղոս թէպէտ այս
 բաներու սպատճառը ըլլալը յայտնի
 էր , բայց աթենացիք անոր ձեռքի
 ստակը քաշելու համար թող տուին
 որ քաղաքը մնայ : Ատքը խորհելով
 թէ կրնայ ըլլալ որ Աղէքսանդր գայ
 ղիրենք պատժէ այդ խռովիչը ըն-
 դունն ընուն համար , ճամբայ տալը
 հարկ սեպեցին :

2. Աղէքսանդրու մեռնելը լաած-
 նուն պէս աթենացիները մեծ ու-
 րախու թիւն ցրցուցին : Սելվընին
 և խօսքերնին բոլոր՝ պատերազմի վը-
 րայ կը պըտըտէր : Թէպէտ Փոկիոն
 ասոնք կը խրատէր որ բանը աղէկ

մտածեն , բայց անոնց ականջը այսպիսի խրատ մըտնելու տեղ չկար . յունաստանի բոլոր ազգաց մարդ խրրկեցին մէկ ընդհանուր նիզակակցութիւն մը ընելու և ծառայութեան լուծը իրենց վրայէն թօթվելու : ‘Վեմոսթենէս’ որ այն ատենը աքսորված էր , լակեդեմոնացիները գրգռելով ոտք հանեց : Վթենացիք զինքը փառաւորապէս աքսորէն ետ կանչեցին , քանզի իրենց արդարութիւն և իրաւունք ճանչցընող վախը վրանուն վերցած էր . եկաւ նէ շատ մեծ պատիւ ըրին , և ամէնը մէկէն մակեդոնացւոց գէմ պատերազմ հրատարակեցին : Վռջի բերանը գործերնին քիչ մը յաջող երթալով՝ աւելի սիրտ առին : Փոկիոն ետքի ըլլալիք գէշութիւնները մտածելով կ’ըսէր . սա յողթելները երբ պիտի լըմընցընեմք :

3. Մաշնակիցներուն բանը ձախորդ երթալով՝ մակեդոնացւոց հետ հաշտութիւն ըրին . բայց աթենացիները այս հաշտութենէս ետ

ձգեցին : Աթէնք ալ շատ չանցաւ
 այն հարկին տակը ինկաւ : Անտի
 պատրոս պատերազմին ծախքը աթե-
 նացիներէն առաւ , որ Հարբաղո-
 սին ձգած ստակէն աւելի էր . և
 ասով կ'արդարանայ ռամկօրէն ըս-
 վածը թէ «Անիրաւ վաստակը կու-
 գայ , օրինաւոր վաստակն ալ հետ
 կ'առնէ կ'երթայ » : Երկուրդ ասպե-
 տական կառավարութիւննին փո-
 խեց . և իր կողմէն Աթէնքի նաւա-
 հանգիստը զօրք դրաւ : Աւելց որ
 Ղեմոսթենէս իր ձեռքը տան . բայց
 Ղեմոսթենէս փախաւ . և անոր
 ձեռքը իյնալէն վախնալով ինքրզինք
 թունաւորեց մեռաւ : (Թ՛չնամինե-
 լուն ձեռքը անցնէր ալ նէ՛ ընելու
 սինտ գէշ բաներնին այս էր . գուցէ
 թունաւորելով չէին մեռցընէր .
 բայց մեռնելը աչքը առնող մար-
 դուն համար մեռնելուն կերպը բըն-
 տրուել պէտք չէ : Աթենացիները
 Ղեմոսթենէսին փառացը համար
 արձան մը անկեցին , որպէս թէ ի-
 րենց ազատարարը եղած ըլլայ . ա-

դէկ խորհէին նէ՝ ասոր անխոհեմ
 ատենաբանութիւններուն երեսէն
 քաշած փնասնին մտածելով՝ անունը
 անգամ քաղաքացւոց անուանը ցու-
 ցակէն քերելու հանելու կը վայ-
 լէր . բայց աթենացւոց խելքը հով
 կը նմանէր . ուստի Ղեմոսթէնէսի
 հովի պէս խօսքերուն արձան տըն-
 կելը յարմար տեսան և վրան ալ
 գրեցին . « Ղեմոսթէնէս , թէ որ
 դուն ունեցած դատմանդ չափ ու ժ-
 ալ ունենայիր՝ մակեդոնացւոց Ղրէ-
 սը յունաստանի տիրելիք չունէր » :
 Չեմք գիտեր թէ՛ դատմանը հա-
 լասար ու ժ ունեցող Փոկիոնը ին-
 չու ձգեցին , և անոր վրայ դտած-
 նին Ղեմոսթէնէսի վրայ կը փընտը-
 ուէին . որուն դատումն ալ ունե-
 ցած ու ժէն շատ եվել չէր , որ աթե-
 նացւոց տկարութիւնն ու մակեդո-
 նացւոց զօրութիւնը չի կրնալով
 ճանչնալու՝ իր ատենախօսութեամբ
 բը աթենացիները ոտք հանեց . ո-
 բով մեծ փնասի հանդիպեցան : Թէ
 որ խոհեմութեամբ յաջող ժամա-

նակի սպասել դիտնար նէ՝ այն ա-
տենը կըրնային աթենացիք ըսել
թէ դատումը ուժէն աւելի է . և
մենք ալ դէմ ըսելիք բան չունէինք :

4. Մղէքսանդրու զօրասկտնե-
րունն ամէն մէկը մէկ մէկ մեծամեծ
երկիրներու կուսակալ ըլլալով՝ եր-
կար ստեն չի կըրցան իրարու հեա
միաբան մնալ : Մղէքսանդրու յաջորդ
ճանչցան Մղէքսանդրու մէկ եղբայ-
րը , որ այս գործոյս ամենեւին բա-
ւականու թի չունէր . և անոր ընկեր-
րին Մղէքսանդր մեռնելէն ետքը
Հուրսան կնոջը ծնած տղան : Թա-
գաւորական մատանին Պերդիկկասի
քով ըլլալով՝ այս երկուքին փոխա-
նորդու թի անիկայ կը կառավարէր
Թագաւորու թիւնը : Մայց նախանձ
մտաւ բանին մէջը , և իրեն ընկեր-
ները սկսան ասոր վրայ այս իշխա-
նու թիւնը չի քաշել : Թագաւորի
խնամակալ ըլլալու սպասիւք մէկուն
ձեռքէն մէկալին կ'անցնէր . բայց
մէկն ալ չէր կըրնար հասարակու-
թեան անզուսպ և անհնազանդ բար-

քը զսպել : Պերդիկկասէն և Անտի-
պատրոսէն ետքը խնամակալ եղաւ
Պոլիւսպէրքոն : Ասիկայ Յոյները ի-
րեն միաբանել ուզեց . քաղաքնե-
րուն կառավարութեան հին կերպը
նորոգեց . որով Աթէնք մասնաւո-
րապէս առաջին ռամկասպետական
կառավարութիւնը ձեռք ձգեց :
Ասոր հանած վճիռը ուժ մը տուաւ
աթենացիներուն՝ իրենց առաջին ա-
նխրաւութիւնները նորէն սկըսելու :

5. Աթէնքի մէջ Փոկիոնի չափ
յարգութիւն ունեցող մարդ չկար :
Ասոր առաքինի վարքը , ծերութիւնը ,
և հայրենեացը օգտին համար քա-
չած աշխատութիւնները ամէնն ալ
ասիկայ իրեն ազգին սիրելի ըրեր է-
ին զինքը : Ասոց ինքը ազնուական-
ներուն կուսակից էր . հասարակու-
թեան և ռամկին անխոհեմաբար
բըռնած ճամբաներէն առաջ եկած
գէշութիւններուն առաջը առնե-
լու համար կ'ուզէր որ խօսքի տէր
ազնուականները ըլլան : Արիստիդէս
ալ այս մտքիս վրայ էր . քանզի ազ-

նուականները իմաստուն չէին ալ
 նէ՝ իմաստուն մարդոց խօսքը մտիկ
 ընելու յարմար էին . և անոնց թե-
 լադրելովը՝ խոհեմութիւն ալ կը
 բանեցընէին : Ասոր համար էր որ
 ռամիկները Փոկիոնի շատ կը նեղա-
 նային , անամօթ ատենաբանները ա-
 սոր դէմ կըխօսէին . կասկածելի կ'ը-
 նէին զինքը . մինչեւ անգամ մը ժո-
 լովուրդը ոտք կոխեց , ասիկայ ըս-
 տարապետութենէ հանել տուաւ :

6. Հայրենեաց մատնիչ և դա-
 ւաճան է ըսելով ասոր համար ամ-
 բաստանութիւն ալ ըրին և ռամիկ-
 ներէն բաղկացեալ խառն 'ի խուռն
 ժողովքի մը մէջ զինքը դատապար-
 տեցին . և առաջին սովորութիւններուն
 համեմատ՝ քաշելու պատիժին ընտ-
 րութիւնը իրեն յանձնեցին : Ան-
 նիլ ուզեց . բայց այս պայմանով որ՝
 իրեն հետ ամբաստանված ուրիշ
 անմեղները չի դատապարտուին :
 Այց աթենացիք ամէնը մէկէն դա-
 տապարտեցին որ մոլեխինդի (պալ-
 տրանի) ջուր խրմեն : Փոկիոն խը-

մէլէն առաջ իր տղուն համար կարգադրու թիւններ ըրաւ . և յատուկ պատու իրեց որ աթենացիներուն իրէն դէմ ըրած անիրաւու թիւնը մոռնայ . չըլլայ որ վրէժ առնեմ ըսելով հայրենեացը մնաս մը բերէ . և այն ամբաստանու թիւնը որ հօրը վրայ զըպարտու թի էր , տղուն վրայ իրաւ եղած ըլլայ : Աթենացիները ասիկայ մեռցրնելէն քիչ մը ատեն ետքը արձան մը տնկեցին ասոր փառաւ որ անուանը յիշատակ . քանզի սովորաբար ասանկ անիրաւ և ատելի դատողու թիւններէն ետքը եկողը՝ ամբշնալ ու զղջալն է : Այս է ռամիկներուն՝ « Վլուխ կըտրելէն ետքը մօրուք սանտրել » ըսածը : Փոկիոնի առաքինի վարուցը օրինակ ըլլալու համար հոս մէկ բան մը պատմեմ : Ասիկայ փեսայ մը ունէր , որուն համար ամբաստանուի եղաւ որ Հարբաղոսէն ստակ է առեր (Գե՞ Վէրը Վլ. ժ/թ . 1) : Փոկիոն անոր համար միջնորդու թիւն ընել չուզեց . և ըսաւ . « Աս քեզ ինձի

փեայ ըրի . ատանկ անվայել բանե-
 ռու մէջ գրտնրվիլըդ չեմ ուղեր ։
 Այս մարդս որքան մեծ համբաւ
 ունէր նէ՛ այնքան ալ աղքատ էր .
 տունը սպասաւոր մըն ալ չունէին .
 տանը մէջ պէտք եղած գործքերը
 ինքն ու իր կիներ կը կառավարէին ։
 Աղէքսանդր մակեդոնացին ասոր
 հարիւր տաղանդ ստակ խորրկած էր .
 ասիկայ առնել չուղեց ։ Ստակը բե-
 րողները ըսին . « Վուկին մէկ հա-
 տիկ աղէկ մարդ ըլլալըդ գիտնա-
 լով քեզ շատ կը սիրէ ։ — Անանկ է
 նէ՛ ըսաւ Փոկիոն . թող ինձի թող
 տայ որ աղէկ մնամ . և աղէկու թիս
 սմէնն ալ իմանան ։ »

7. Աթենքի մէջ անմիաբանու-
 թիւնը տիրած էր . ըլլալէքը մըտա-
 ծելը և գալիքէն զգուշանալը անոնց
 բանը չէր ։ Ասոնց ասանկ անխոհե-
 մու թենէն օգուտ քաղել ուղեց Աա-
 սանդրոս , որ Պոլիւսպերքոնի թըշ-
 նամի էր , և իշխանու թիւնը անոր
 ձեռքէն յափշտակելու էր ելեր ։
 Վաղաքին նաւահանգստին տիրեց .

ուղած օրէնքը դրաւ ասոնց վրայ .
 աղնուապետութիւնը նորէն հաս-
 տատեց, կառավարութիւնը աղնուա-
 կաններուն ձեռքը յանձնելով . և
 կառավարութե՛ն գլուխ դրաւ 'Վե-
 մետրիոս փալերացին՝ որ իմաստուն
 և խոհեմ մարդ մըն էր . և թէ որ ա-
 թե՛նացիք բնութիւնին փոխելին նէ՝
 ասոր օրովը շատ աղէկ կ'ըլլային : Ասի-
 կայ տասն տարի անոնք կառավարեց :

8. Վայց 'Վեմետրիոս պաշարող
 ըսլածը՝ որ փառասէր Անտիգոնոս
 սին տղան էր, և Փոքր ասիային մէկ
 մասը ասոր հօրը ձեռքն էր, Աթէն-
 քի առաջը եկաւ ըսելով որ՝ հայրս
 զիս յատուկ անոր համար խըրկեց,
 որ աղնուապետութիւնը վերցընեմ .
 ռամկապետութիւնը նորէն հաս-
 տատեմ : Հատ ուրախութեամբ
 զինքը ներս առին . քանզի ռամիկնե-
 րուն սրտէն խօսեցաւ . և անունը
 դրին Սոգիւր, որ փրկիչ ըսել է . և
 աստուծոյ պէս պաշտեցին : Վերդին
 մէջ մակեդոնացի պահապան զօրք
 պահելը 'Վեմետրիոս փալերացին

յանցանք սեպեցին, որ ոչ այն զօր-
քը կրնար անկէց հանել, և ոչ ալ
անանկ ընելու պարտական էր: Ա-
ռաջկուց փալերացիին անունովը
չստ արձաններ տընկեր էին. ամէնն
ալ կործանեցին և վճիռ հանեցին
որ՝ թէ որ Աթէնքի սահմանին մէջ
տեսնելի նէ մեռցընեն: Քանզի՛ Վե-
մետր պաշարողը ժամանակով ասոր
խմացուցեր և օգնութիւն ալ ըրեր
էր որ քաղաքէն փախչի: Այրբ իմա-
ցաւ որ արձանները կործաներ են՝
ըսաւ. « Այն արձաններուն ինչ
առաքինութիւնով արժանի եղայ նէ՛
այն առաքինութիւնները չեն կրը-
նար ձեռքէս առնել »: Այդիպտոս
գնաց Պաղումէոսի քով, և գիրքեր
չինելով՝ մարդոցմէ տեսած անի-
րաւութեցը վրայ կը մխիթարուէր:
Սինչեւ հիմա յաղագս պերճախօսութեան
գիրք մը կայ ասոր շինածը:

Անէսանդիտի հայտերո-
վեան բաժնեւէլը :
կեղաց ազգին յո-
նաստան երկիւր
հիւսիսը :

1. Անէստանդիտի մեծ զօրապետ-
ները շատ փառասէր էին , իրար չէին
կրնար քաջել . ուստի իրենց յանձ-
նըված երկիրներուն կառավարուիլը
աջիւնին չէին կրնար կշտացնել .
հանդարտ չէին : Թագաւորու թիւն
ընելու արժանաւոր մարդ մըն ալ
չէր կրնար դիւրաւ ասոնք զսպել :
Արկու տղու վրայ թագաւորի անուն
կար . բայց ասոնց օրը մեծամեծներ
ըն անսանձ մնալով խռովու թիւնը
եվելօք կը շատնար : Անջերնին սա-
տերազմ ելաւ . այնքան դժնդակ՝ որ
բնական զգացմունքները անգամ
խափանեց : Ասոնք մէկիկ մէկիկ
սլատմելը օգուտ մը չունի . կարգա-
ցողն ալ կը ձանձրանայ : Այսքանս
միայն գիտնալը բաւական ըլլայ որ՝
Աղէքսանդրի մայրը , կինը , եղբայրը

և տղան չարաչար սպաննելեցան . Ա-
ղէքսանդրի ցեղէն ողջ մարդ չի մը-
նաց . և անոր հիմնած ընդարձակ
կայսերութիւնը որ այնքան պատե-
րազմով և արիւն թափելով ձեռք
ձգեր էր , կտոր կտոր եղաւ : Թաւ-
գաւորութիւնը մեծցընել ուղեւով
անիրաւ պատերազմ բացողներուն
գրեթէ ամէն ատեն վերջը ասանկ
եղած է : Փռիւգիա գաւառին մէջ
Իսսոս ըսված տեղին քովերը եղած
պատերազմը որոշեց թէ ո՞վ մեծ պի-
տի ըլլայ . և ո՞ր գաւառ որո՞ւ պիտի
իյնայ : Ամէնն Անտիգոնոսի դէմ
ելեր էին . և Անտիգոնոս այն պա-
տերազմին մէջ մեռաւ :

Ք . Ա .
501

Չ . Անացող իշխանները՝ տէրու-
թեան երկիրները իրենց մէջ բաժնե-
ցին : Պտղոմէոսի ինկաւ Ագիպոսս ,
Արաբիա , Պաղեստին . և այլն : Ալ-
սանդրոսի՝ Մակեդոնիա և Յունաս-
տան . Աիւսիմաքոսի՝ Թրակիա ,
Իլիթանիա , և այլն : Սելեւկոսի՝
Ասիայի ուրիշ տեղերը մինչեւ Ին-
դոս գետը : Այս չորս թագաւո-

բուժեան ամէնէն զօրաւորը՝ Աւելակոսինը եղաւ, և Ասորոց թագաւորու թի ըսվեցաւ. քանզի թագաւորները իրենց բնակարան՝ Անտիոք քաղաքը որոշեցին. որ Ասորոց երկրին մայրաքաղաքն էր:

3. Անտիգոնոս մեռնելէն ետքը՝ անոր տղան՝ Վեմետրիոս սաշարողը գրեթէ ամէն բանէ զրկւիլով՝ աթենացւոց երախտագիտու թեանը ապաւինեցաւ. Վեմետրիոս փախւրացիին այնքան աղէկու թիւնները մոռնալով անիկայ մահուան դատաւարտող թեթեւամիտ ապերախուներէն երախտագիտու թի յուսալը՝ աթենացիները չի կրնալ ճանչնալէն առաջ կուգար: Այբ որ այս յուսով Աթէնք գնաց՝ աթենացիները զիրենք անոր ճանչցուցին, և իմացուցին թէ երախտագիտու թիւն ըսված բանը իրենց սրտին վրայ ուրբան իշխանու թի ունի: Քաղաքին դրուները գոցեցին. անանկ մարդու մը գէմ՝ որ քիչ մը ատեն առաջ իբրեւ իրենց սարսափ և իրիշ պատուեր էին

(«Է» Քրչ. Վ. ԺԹ. 8). քանզի գերիի պէս որ տիրոջ ձեռքը անցնէին նէ՝ մարդահաճու թիւննին միայն անոր կ'ըսէին : Վ ճիւ մըն ալ հանեցին թէ՝ որ քաղաքացի որ հասարակաց առաջարկէ թէ պէտք եղաւ սալ մանները առաջարկըվին և անանկ ներս առնըվի՝ Վեմետրիոս, այն մարդը մահապարտ է : Հարբաղոս ներս կ'առնեն, անոր երեսէն այնքան վընասներ կը քաշեն, այս մարդս հասարակու թեան փափաքանացը օգտակար սահմանադրու թիւ ըրած ըլլալով ալ ներս չեն առներ : Սէ որ ազնուապետական կառավարու թիւ մնար նէ՝ Վեմետրիոս պաշարողին Վ թէնք մտնալը այնքան դժուար չէր ըլլար, ռամիկները իրմէն առած իշխանու թիւնը իրեն դէմ բանեցընելնին դիտելու արժանի խրատ մը կուտայ մարդուս, սլ որ զօրաւորի մը խաթերը համար անիրաւու թէ կը զիջանի՝ իրեն գլխաւոր ատեցող և թշնամի կ'ընէ այն զօրաւորը : Ատքը աթենացիք զիջան Վեմետր

բիտար ներս առնելու . այն ալ ամե-
 նեւին աթենացւոց ապերախտու-
 թիւնը և անհաւատարմութիւնը
 երեսնին չի տուաւ :

4. Կասանդրոս Առնելէն ետքը՝
 Սախիւրոյ թագաւորութիւնը վրայ
 ասոր երկու տղայքը սկսան իրարու
 հետ կռուիլ : Ասոնց մէկը՝ Վեմետ-
 բիտար իրեն օգնութեան կանչեց :
 Վեմետբիտոս գնաց . անոր օգնեց
 աշխարհքէս ելլելու և օր առաջ
 հօրը քով հասնելու . և թագաւո-
 րութիւնը իրեն առաւ : Վիւսի-
 մաքոս ալ եկաւ ասիկայ թագաւո-
 րութենէ վըռնաեց . որ իրեն ար-
 ժանի եղածին պէս խեղճ վիճակի
 մէջ ինկաւ , անանկ մեռաւ : Վայց
 իրեն կենդանութեանը ատենը քա-
 նի մը աղէկ գործքերով փառաւոր
 համբաւ մը վաստըկեր էր : Հոռ-
 դոս կղզին տարի մը ամբողջ պաշա-
 րելով շատ մեծ անուն ստացաւ :
 Պրոտոգինէս պատկերհանին՝ որ
 քաղաքին արուարձաններուն մէ-
 կուն մէջը կը բնակէր , պաշարման

ատեննը իր գործին կը պարապէր .
 ամենեւին նեղութիւն մը տուող
 չեղաւ : Աեմետրիոս ասոր կը զար-
 մանար որ ինչպէս առանց վախու-
 քաղաքէն դուրս մնաց . քաղաքը
 փախչել չուզէց : Պրոտոգինէս ը-
 սաւ . ես գիտէի որ քու կռիւըդ
 իմ բանած արուեստիս հետ չէ .
 հռոգացւոց հետ է : Աեմետրիոս
 տուած պատասխանին շատ հաւնե-
 ցաւ . և զօրացը պատուէր ըրաւ
 որ անոր բնաւ նեղութիւն չիտան :

5. Այսքան փառասիրութեան
 և քաղաքական կռիւներու և սպա-
 նութիւններու մէջ կարդալ գրելը
 և գիտութիւնները կրօնային մար-
 դոյս գլուխը եկած փորձանքներուն
 և վտանգներուն մէջ անոր մխիթա-
 րութիւն ըլլալ : Պտղոմէոս Սոգիր՝
 որ Աղէքսանդրի յաջորդներուն ա-
 մէնէն աղէկը և ամէնէն աւելի յար-
 գութեան արժանին էր , այս աղէ-
 կութիւն հոգաց : Աղէքսանդրիայի
 մէջ մէկ թանգարան կամ Սուղայ-
 արան մը հաստատեց , որ տեսակ մը

Ճեմարանի պէս բան էր . այս տեղաց
 գիտութեան լոյսը ծագեցաւ , և
 բոլոր Ազգիպտոս լուսաւորեց : Ա-
 ղէքսանդրիայի հռչակաւոր գրա-
 տանն ալ հիմնարկողը ասիկայ է . ու
 բուն մէջ գիրքերը մինչեւ 700,000
 հատոր եղան : Փարոսի փառաւոր
 աշտարակը շինեց , գիշերները բազ-
 մաթիւ կանթեղներ կը վառէին՝ նա-
 ւերուն նաւահանգստին ճամբան
 սորվեցընելու համար : Ալ այս գոր-
 ծըս՝ Ազգիպտոսի հին թագաւորնե-
 րուն շինել տուած ահագին և ան-
 պիտան բուրգերէն շատ աղէկ էր :
 Յոյները սկիզբէն իրենց տեղեկու-
 թիւնները Ազգիպտացիներէն առե-
 րէին . հիմա գացին անոնց չի գիտցած
 նոր գիտութիւններն ալ անոնց սոր-
 վեցուցին :

6. Պտղոմէոս Փիլատելիոս կամ
 եղբայրասէր՝ որ Պտղոմէոս Սոգիրին
 տղայն ու յաջորդն էր , իր հօրը
 ճամբան բրոնեց : Քիչ ատենվան
 մէջ վաճառականութիւր և գիտու-
 թիւնները շատ ծաղկեցան Ազգիպ-

տոսի երկիրը . բայց ուրիշ տեղերը
 տիրող թագաւորներուն օրը առա-
 ջին անկարգու թիւնները և գէշու-
 թիւնները նորէն երեւան ելան :
 Վիւսիմաքոս գարշելի մարդ մը ե-
 լաւ . բուն իսկ իրեն նախարարնե-
 րը Սելեւկոսին ազաչեցին որ զէնք
 առնէ ասոր դիմացը ելլէ . և Վիւ-
 սիմաքոս պատերազմի մը մէջ մե-
 ռաւ : Աերաւնոս մէկ մըն ալ ելաւ
 Սելեւկոսը մեռցուց , որ անկէց շատ
 մեծ աղէկու թիւններ տեսեր էր :
 Թագաւորելու փափաքը , թագա-
 ւորական իշխանու թիւնը գէշի բա-
 նեցընելը , պալատականներուն մո-
 լու թիւնները , այս ամէն գէշու-
 թիւններուս աղբիւրն էին : Եւ այց
 Աստուծոյ արդարու թիւր մըտածող
 մարդը՝ « Ար զսուր առնու՝ սրով ան-
 կանի » խօսքին կատարումը , այս
 մեռնողներուն և մեռցընողներուն
 վրայ կը տեսնէ , և ինքն ալ կը կրկնէ
 սր գրոց մէկալ խօսքը . « Ար հեղու
 զարիւն մարդոյ՝ հեղցի արիւն նր » :

7. Աեղտք ազգէն խել մը մար . Բ. Ա.

դիկ այն միջոցին յունաստանի վրայ
 վազելով՝ կրրնային հասարակաց քա-
 շած նեղութիւնները վերջին աս-
 տիճանի հասցընել : Արեւելք որ՝
 այս անկիրթ և զօրաւոր ազգը ներ-
 սէն դրոյող և անհանգիստ ընող
 բան մը կար , որ իրենց երկիրը չէ-
 ին սրղմեր , դուրս ելլել և նոր եր-
 կիրները ստանալ կը փափաքէին : Ի-
 դալիայի մէջ ասոնց ինչ ընելը հը-
 ուովմայեցւոց պատմութեան մէջ
 կը տեսնես : Երեննոս՝ որ ասոնց
 գլխաւոր զօրապետներուն մէկն էր ,
 Հռոմ քաղաքը առեր էր : Աւրիշ
 Երեննոս մըն ալ թերմոպիղէ կիր-
 ճէն անցաւ . Երզնիս գընաց Այու-
 ղոնի մեհեանը կողոպտելու համար :
 Արսէր . « Աւելի իրաւունք է որ աս-
 տուածները իրենց ունեցած հա-
 ըրստութիւնը մարդոց տան , քան
 զի իրենք ըստակի կարօտ չեն , մար-
 դիկ կարօտ են , և մարդոց ձեռքը
 ստակ անցնի նէ՛ աստուածներէն
 աղէկ գիտեն գործածելուն կերպը » :
 Օլարմանք է որ՝ ընութիւնն ալ ազ-

գային կ'ըլլայ կոր . և այն աղգը՝ ու
 բուն՝ զօրասպետը Ապողոնի մեհեանը
 կողոպտելու համար այս խօսքս գը-
 տաւ , քրիստոնէութեանն ալ
 տասն և վեց դարուն մէջ վանքերը
 կողոպտելու համար նոյն միտքը գործ
 կ'ածէր : Աւրոպա վանքերուն և ե-
 կեղեցիներուն հարստութիւնը ձեռք
 ձգելու փափաքող աղանդաւորնե-
 րն ալ կառավարողը այս խօսքս է :
 Իրեննոս՝ որ ասանկ խօսքերով Ապո-
 ղոնը կը նախատէր , անոր երկրպա-
 գութի ընողներն ալ իրեն առաջը գո-
 ղացընելու կարող մարդ էր : Իայց
 Ա՛ճ՝ որ սուտ անեցուն երկրպագութի
 ընելը արգիլած է , որպէս զի ճշմա-
 րիտ Աստուած միայն զինքը ճանչ-
 նան , նախատինքի գայնէ՝ թէ՛ սը-
 տութիւն թէ՛ ճշմարտութեամբ Ա՛ճ
 անունը ունեցող բան մը պաշտող
 ներուն կողմէն անարգանք մը ըլլայ
 նէ՝ անական պատուոյն անարգութի
 ըլլալով իրեն կը վերագրէ և կը
 պատժէ . ինչպէս որ իմաստունը
 յայտնի կը խօսի . « Յանչունչ կուռ-

սըն յուսացեալք երդնուն սուտ, և պատժի ոչ ունին ակն: Արդ երկուքեան յիրաւի եկեցեն ՚ի վերայ նց. զի չարաչար խորհեցան զԱստուծոյ՝ ունկնդիր լեալ կոոցն, և սուտ երդուան ՚ի կուռսն՝ արհամարհեալ զսրբունին: Սի ոչ եթէ երդնլեացն զօրութիւն, այլ մեղուցելոցն դատատան հանէ ընդ գլուխ զանիրաւացն յանցանս» (Իմաստ. Ժգ. 29. 30. 31): Ապողոնն ան չէր. բայց որովհետեւ արհամարհողները իբրեւ աստուած բռներ էին, արհամարհութեանը վրէժխնդիր Աճ կ'ըլլար. ինչպէս որ այս անգամիս Աեղոսաց վրայ յայտնի երեւցաւ:

8. Յանկարծակի մէկ անագին փոթորիկ մը և մէկ գետնաշարժ մըն ալ ելաւ գիշեր ատեն, այս բարբարոսներուն սիրտը անանկ վախ մը մտաւ՝ որ քունն ալ գլուխնին ըլլալով ինչ ընեւնին չգիտցան, թուրերը քաշեցին սկսան իրար ջարդել: Յոյները ասկէց աղէկ առիթ չէին կրնար գտնել, վրայ հասան և

աղէկ ջարդ մըն ալ ասոնք տուին :
 Պատմիչները կ'ըսեն որ՝ ասոնք հա-
 բիւր յիսուներ հինգ հազար հոգի
 էին . և բնաւ մարդ ողջ չի մնաց
 իր երկիրը դառնալու : Այն Աեղ-
 տաց աղգէն խել մը մարդիկ շեղ-
 լեսպոնտոսէն անցնելով գացին բիւ-
 թանացւոց Աիկոմիդէս թագաւո-
 ըին ծառայութեանը մտան : Այս
 ալ Վաղատիա ըսված երկիրը ասոնց
 տուաւ որ երթան հոն իրենց բնա-
 կարան շինեն : Այն ատենէն ետքը
 երկրին անունը Վաղատիա ըսվե-
 ցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա .

Այստեան նիւախի ցո-լի-ն : Ագի- Ե
 Կը-Պէ-նէ-ն :

1. Ք. 2 ատեն մնացեր էր որ
 հռոմայեցւոց տէրութիւնը յու-
 նաստանն ալ կըլլէ : Աւստի հիմա
 Յունաց հայրենասիրութեան և ա-
 ըրիութեան վերջին ճիգերուն պատ-

մութիւնը մնաց տեսնելու : Պեղա-
 սոննեւսոսի Աբայիայ գաւառէն տա-
 սըն և երկու աննշան քաղաք՝ շատ
 հին ատենէ ՚ի վեր իրարու պաշա-
 սպան կենալու համար գաշնակցուի
 ըրեր էին մէջերնին : Ասոնց գործը
 կառավարելու և կարգի գնելու հա-
 մար մէկ ծերակուտի ատեան մը
 սահմանված էր , և ասոնց նախա-
 գահ երկու հոգի կ'ըլլային՝ որ տարվէ
 տարի կը փոխվէին , և զօրապետու-
 թիւնը և զինուորութիւնը ասոնց
 յանձնուած էր : Խորհրդակից ալ
 տասն հոգի ունէին , որ առանց ա-
 սոնց հաճութեանը բան չէին կր-
 նար ընել : Այս գաշնակցութիւնը՝
 որ պատերազմական ըլլալուն հա-
 մար նիզակակցութիւն ալ կ'ըսվի ,
 առանց խռովութեան մնաց մինչեւ
 Աղէքսանդրու յաջորդ մակեդոնաց-
 ւոց թագաւորներուն գրէթէ բռ-
 լոր յունաստանի կառավարութե-
 կերպը և վիճակը փոխած ատենը :
 Այն ժամանակը ամէն մէկ քաղաք
 զատվեցաւ , ոմանց մէջ մէկ մէկ

բռնաւոր սկսան տիրել, և ուրիշները մակեդոնացւոց ձեռքն անցան, և պահապան զօրք առին աւսոնցմէ: Վայց ազատութեան սէրը արթընցաւ. նիդակակցութիւնը նորէն առաջինին պէս հաստատուել ուզեցին: Վքայեցիները օտար իշխանութեան լուծը իրենց վրայէն նետեցին. մէկ գլուխ մըն ալ ունեցան, որ անոնց ուժը եւթըցընելով պատճառ եղաւ որ յարգի և պատկառելի բան մը եղան:

2. Վրաստոս՝ բարենախանձ և մեծանձն երիտասարդ մը, իրեն հայրենիքը եղած Սիկիոն քաղաքը՝ Նիկոլէսին բռնութէն նոր ազատեց, և դաշնակից քաղաքներուն կարգը խօթեց: Վաշնակիցներն ալ այս մարդըս յարմար դատեցին գործոց կառավարութիւնը ուղածնուն պէս գլուխ տանելու: Վսիկայ մինակ նախագահ ըրին. և իշխանութիւնը վրան մշտնջենաւոր մնաց: Սիտքը դրաւ որ բոլոր Պեղոսպոննեսոսի ազատութիւն տայ, և յունաստանի

առաջին ազատութիւնը կատարելապէս հոն հաստատէ . և այն տեղը մակեդոնացւոց զօրութեանը անգամ դէմ դնելու կարող ըլլայ : Օգրապետութիւն ըրած ատենը ծանրաչարժ և վախկոտ էր . բայց պատերազմական հնարքներու կողմանէ ճարտարութիւր զարմանալի էր : Թէ որ վախկոտութիւն չունենար նէ՝ մարդ հետը գլուխ չէր կրնար ելլել , ամէն գործոց մէջ յաջողութիւն կը գրտնէր :

3. Վեմեարիոս պաշարողին տըղայն Մետիգոնոս Վոնատաս՝ մակեդոնիայի թագաւոր էր եղած : Արրնթոս քաղաքին բերդը , որ կըրճին երկու կողմին ալ վրան կը նայէր , ասոր ձեռքն էր . և քանի որ այս տեղս իր ձեռքն էր՝ բոլոր յունաստան իրմէ կը վախնար : Մրատոս միտքը դրաւ որ այս բերդը անոր ձեռքէն առնէ , այս խորհուրդըս շատ մեծ արիութիւն , և մանաւանդ յանդգնութիւն կ'ուզէր . բայց Մրատոս հնարագիտութիւն

ունէր ասոնց երկուքին ալ տեղը .
 ուստի չի յուսահատեցաւ : Մարդ
 մը գտաւ , որ բերդին մինչև առա-
 ջը զինքը տանելու գաղտուկ ճամ-
 բայ գիտէր . միայն կ'ուզէր որ մէկ
 ապահով տեղ մը վաթսուն տաղանդ
 ըստակ աւանդ դրովի , որ թէ որ
 անվտանգ զինքը հոն հասցընէ նէ՝
 երթայ այն ըստակը առնէ իրեն ա-
 ռաջնորդելոյն վարձք : Արատոս ու
 բովհետեւ իր քսակէն այնքան ըս-
 տակը չէր կրնար տալ , իր տունը
 ինչ պատուական և սուղ բաներ
 կային , և իր կրնկանը ականակուռ
 զարդերը գրաւ (ուէհին) դնելով ըս-
 տակը ճարեց . և ինչպէս որ Պլու-
 տարքոս կ'ըսէ՝ բոլոր ունեցածը ծա-
 խեց , փոխարէն իր գլխուն ահա
 գին վտանգ առաւ . մարդու ալ
 զրուցած չէր մտքին գաղտնիքը . բո-
 լոր յոյսը՝ իր հայրենեացը օգտա-
 կար մէկ ծառայութիւն մը կրնալ
 ընելն էր : Վժուար ելլովելու ա-
 պառաժ քարի մը վրայ շինված էր
 բերդը . և անանկ կը կարծըվէր որ՝

քարին վրայէն բերդը ելլել անհր-
նար է : Սակայն ելաւ Արատոս վեր-
բերդը առաւ , և մէջի պահապան
զօրքը անկէց վըռընտեց : Արինթացի-
ները ասոր շատ պատիւ ըրին , իրենց
ազատարար սեպեցին , և իրենք ալ
աքայեան նիզակակցութե անդամ
գրվեցան : Արատոս շատ ուզեց Ար-
գոս քաղաքն ալ նոյն նիզակակցութե
մէջ խօթել , բայց չյաջողեցաւ : Ա-
սոր փոխարէն՝ Սեգաղոսպօլիս քա-
ղաքին թագաւորը հաճեցոյց թա-
գաւորութիւնը կամաւ ձգելու՝ որ
բռնուք յափշտակեր էր , և այս քա-
ղաքս ալ մտաւ նիզակակցութե մէջ :

4. Սպարտա մէկ խռովութիւն
մը ելլալով՝ Պեղոսպոննեսոսի գոր-
ծերը ուրիշ կողմ դարձան : Այլ-
գորկոսին օրէնքին գրեթէ հետքը
անգամ չէր մնացեր լակեդեմոնաց-
ւոց մէջ : Հարստանալով՝ բարբեր-
նին ալ բողոքովին աւրբվեր էր : Ա-
մէն մտրդ իր ինչքը իրեն ուղածին
պէս կըրնար տնօրինել : Վետիննե-
րուն առաջկու հաւասար բաժա-

նու մը վերցած ըլլալով՝ լակեդեմու
 նացիներուն մէկ անկշտանալի ա-
 գահու թիւն մը տիրած էր : Աամի-
 կը խեղճութեան և աղքատութե
 մէջ կը չարչարուէր . ձեռագործ ար-
 ուեստներ բանիլը հարկաւոր էր ե-
 դած . քանզի առանց անոր չէին կրը-
 նար ապրուստ գըտնել . ուստի զին-
 ուորական վարժութիւնը ետ մնացեր
 էր . անոր համար արիութիւն և զին-
 ուորական բարեկարգութիւն ալ չէր
 մնացեր մէջերնին : Ագիս անուն թա-
 գաւորնին աղէկ մէկ երիտասարդ
 մըն էր . որ իր երկրին աղէկ ըլլալուն
 և առաքինութե ճամբան բռնելուն
 շատ եվելօք կը ջանար : Աւստի հին
 կարգադրութիւները ամէնն ալ նորո-
 գելու ձեռք զարկաւ : Ա իւր գորկոսի
 օրէնքները ուժովցընել ուղեւով՝
 ինքը առաջ ՚ի գործ դնել սկսաւ :

5. Արիտասարդները՝ որ թէ՛ աղէ-
 կի և թէ՛ գէշի շուտ մը կը բըռննկին
 կրակ կը կըտորին , ասոր մտքին յարմա-
 րեցան . բայց գէշ սովորութեց մէջ
 հինցած և քաղ կըտորածները՝ իրենց

կիրքը զսպելու փոփոխուի մը միայն
 մտքերնին որ գար նէ կը դողային :
 Ասանկով ալ թագաւորը ասոնց գըւ-
 խաւորներուն մէկ քանիին սիրտը
 շահեցաւ : Մէկալ թագաւորը Աէ-
 ոնիդաս՝ որովհետեւ այս նորոգու-
 թեանս դէմ էր՝ թագաւորու թէն
 հանեցին : Ագիս կ'ուզէր որ ամէն
 մարդ իր հողը ձգէ , ամէնը մէկ ըլ-
 լայ . և նորէն հաւասար չափով ա-
 մէնուն բաժնըլի : Այփորներուն մէ-
 կը ասիկայ խաբեց . ըսաւ որ՝ ասկէց
 առաջ սէտք է , որ մէկը մէկին պարտք
 ունի նէ՝ այն պարտքերուն համար
 վճիռ ըլլայ որ չի տրըլի , թողուի ըլ-
 լըլի : Այս եփորը ինքն ալ պարտքի
 տակ ինկած էր , և պարտքը վճարելը
 իրեն ծանր էր : Խօսքը քալեց . պար-
 տուց մուրհակները քղքին հրապա-
 րակը բերին դիղեցին , և կրակը տը-
 լին այրեցին նէ՝ յիշեալ եփորը շատ
 զուարճանալով և խնդալով ըսաւ .
 ասանկ ալ աղվոր կրակ կենացս մէջ
 տեսած չունէի : Բայց գետինները
 բաժնելու որ եկաւ նէ՝ բանը օրէ

որ ձգելու պատճառ կը գըրանէր, ի-
 բրեն վրան առնելիք ունեցողներուն
 վնաս հասցընելու մտօք ամէն առ-
 նելիք ունեցողներուն ալ վնասը հա-
 սաւ, բայց երբ որ վնասը իրեն պի-
 տի հասնէր նէ՛ այն ատենը ետ կե-
 ցաւ : Մտքէդ մի հաներ՝ որ պատ-
 մութեան մէջ գրված բաները ա-
 մէն տեղ ամէն ատեն եղած բանե-
 րուն օրինակաւ հաստատու թիւնն
 է : Ասիկայ այս պատմու թեանս մէջ
 կարդալով եփորին վրայ սիրտերնիս
 կը նեղանայ, թագաւորը կը մեղքը-
 նամք որ խաբվեր է : Ասոր պէս ա-
 ուիթ մը մեր ձեռքը անցնի նէ՛ ու-
 րիչները մեր վրայ կը նեղանան եւ
 մեզնէ խաբվողին վրայ կը ցաւին ե-
 ղեր՝ հոգերնիս ալ չեմք ըներ : Ա-
 նանկ է նէ՛ այս Ագիսը խաբող ե-
 փարին որքան նեղանամք նէ՛ իրա-
 ւունք չունիմք նեղանալու, որով-
 հետեւ նման պարագայներու մէջ ա-
 նոր ըրածը ընելէն շատ հեռու չեմք :

6. Այս միջոցիս աքայեանները՝
 որ լակեղեմոնացւոց հետ ալ դաշ-

նակցուի և բարեկամուի ունէին ,
 ետողացիներուն դէմ ասանցմէ օգ-
 նութիւն ուղեցին : Այս զօրքերը
 ժողովեց ճամբայ ելաւ . իր հայրե-
 նեացը հին ատենական զինուորական
 կրթութիւնը զարմանալի կերպով
 ցրցուց . սակայն քանի որ ինքը հոն
 չէր՝ թշնամիները ասոր դէմ որո-
 գացթ կը լարէին . և ասոնց մէկն ալ
 ՚ի հարկէ մուրհակները այրել տը-
 վող եփօրը պիտի ըլլայ : Այս դար-
 ձաւ Սպարտա մտաւ՝ որ թշնամի-
 ները շատ զօրացեր էին : Աննի-
 դաս նորէն աթոռը նստեցուցեր է-
 ին . Այս քաղաքը մտածին պէս շե-
 տակ բանտը տարին խօթեցին իբ-
 րեւ հայրենեաց դէմ յանցաւոր :
 Ափօրները ասիկայ դատաստանի քա-
 շեցին . ընելու նորոգութիւններուն
 վրայ իրեն հարցուցին թէ այդպէս
 քանի ձեռք զարնելուդ վրայ զղջա-
 ցած ես մի : Պատասխան տուաւ .
 ասոր համար մեռնիլըս աչքով ան-
 դամ տեսնեմնէ՝ ասանկ աղէկ գոր-
 ծի մը վրայ զղջալու յանձնառու չեմ

ըլլար : Այն ատենը թագաւորա-
կան պատիւը բնաւ բանի տեղ չի
դնելով՝ մահուան դատապարտե-
ցին : Դահիճներուն մէկը մեղքը-
նալուն կուլար . Ագիս տեսնելով ք-
սաւ . « Իմ մեռնիլըս անիրաւու թի-
վճուրված է , իմ վրաս մի լար . թըշ-
նամիներուս վրայ լաց որ անիրա-
ւութիւն գործելու հարկի մէջ են
ինկեր » : Մայրն ու մամը զինքը տես-
նելու համար բանտը եկեր էին .
դահիճները ասոնք ալ ներս խօթե-
ցին , խեղդեցին , և Ագիսին մարմ-
նոյն քովը ասոնց մարմինն ալ պառ-
կեցուցին : Ասանկ գէշութիւննե-
րու վրայ Սպարտա քաղաքը գողե-
րու և աւազակներու բնակարանի
պէս բան մը եղած էր : Բիչ մը ետ-
քը | էննիդաս ալ մեռաւ :

7. Ագիսին այրի կինը՝ Վէսնի-
դասին տղան Աղէոմենէսը առեր-
էր : Թագուհին՝ որ թէ մեռած այ-
րը և թէ հիմակվանը շատ կը սի-
րէր , նորոգութիւնը գլուխ հանե-
լու յորդորեց Աղէոմենէսը : Աղէո-

մենէս թէպէտ աւելի փառասիրու թիւն ունէր քան առաքինուի , բայց կրնականը աղաչանքէն չի կրննալով ելլել՝ այս գործքիս ձեռք զարկաւ : Արեւի է իրեն անանկ եկաւ որ՝ փառք և զօրութիւն ստանալու աղէկ ճամբայ մըն է ասիկայ :

8. Այս բանս գլուխ հանելու համար ուժ պէտք էր գործածել . քանզի ազգը այս բանս ամենեւին չէր ուղեր : Աքայեցիները կ'ուզէին որ Սպարտա ալ աքայեան նիզակակցութեան անդամ ըլլայ , և խօսքերնին չանցաւ նէ՝ թշնամութի ընելու ձեռք զարկեր էին : Ասիկայ մէկ առիթ մը եղաւ Աղէոմենէսին որ զէնք առնէ : Հետը միայն հինգ հազար հոգի ունենալով աքայեանները պատերազմի հրաւիրեց : Արատոս թէպէտ հետը քսան հազար հոգի ունէր , բայց ետ քաշվեցաւ : Այս առաջին յաջողութեանս վրայ Աղէոմենէս խրոխտալով՝ լակեդեմոնացւոց հին ժամանակի թագաւորներուն մէկին ըսածը կ'ըսէր իր զօրա-

ցը . « Վաղեգեմոնացիները իրենց
 թշնամիներուն քանի ըլլալը չեն
 հարցներ , ուր ըլլալը կը հարցնեն » :
 Մնկէց ետքը յաղթու թիւն մըն ալ
 ըրաւ , որով աւելի սիրտ առաւ :

9. Այս դարձած ատենը որ ու
 հակառակու թիւնէն որ կը վախցը-
 վէր նէ՝ անոր դէմ բռնու թի բա-
 նեցուց : Ափորները ամէնն ալ ըս-
 պաննեց . քաղաքացիներէն ալ ու թ-
 սուն հոգի աքսորեց : Մնկէց ետքը
 կրնար վիճակընկէցու թիւնը իր ու-
 զածին պէս դարձընել . բայց ասանկ
 ատելի դիտաւ որ ու թիներով մարդ-
 չի կրնար օրէնքը հասարակու թեան
 սիրելի և ակնածելի ընել : Մմէնէն
 առաջ Աղէ ոմէնէս իր ունեցած եր-
 կիրները հասարակու թեան տուաւ .
 բարեկամներն ալ ասանկ ըրին , և
 հին ատենը գետինները ինչպէս քա-
 ղաքացւոց մէջ բաժնըլած էին նէ՝
 հիմայ ալ նոյնպէս բաժնըլեցան :
 Վիւգորկոսի ատենական պէս կրու
 թու թիւնները և հասարակաց սե-
 ղանը նորոգեց : Վրեն ընկեր առաւ

իր Ալկղիդաս եղբայրը . թէպէտ մինչեւ այն ատենը թագաւորները մի և նոյն Հերակլեան ցեղէն էին՝ բայց բնաւ երկու եղբայր չէին կրընար ըլլալ : Այս ալ իրեն ուժը եւ վերջնելու ճամբայ մըն էր :

10. Աղէ ոմենէ սին բուն նպատակը այն էր որ՝ ատեն մը լակեդեմոնացիք ինչպէս որ բոլոր Հունաց ազգերուն գլուխ էին , նորէն այն գլխաւորութիւնը ձեռք ձգէ : Աբայեան գաշնակցութեան մեծ սպարապետ և հրամանատար ըլլալ ուղեց : Թէ որ այս ըլլար նէ՝ Արատոս ասոր իշխանութեանը տակը մտնելու կ'ըլլար , ասոր ալ կը հաճէր Արատոս , բայց քովը չափաւորութիւն մը չէր տեսներ : Արտաւճեց որ լակեդեմոնացիները իր վրայ պատերազմ պիտի բանան , և անոնց դէմ դնելու չափ ուժ չունիմ կարծելով մակեդոնացւոց թագաւորին գնաց ինկաւ , որ մինչեւ այն ատենը իրեն իբրև անհաշտ թշնամի բռնած էր : Ասով իր շինածը որպէս թէ

իր ձեռօքը քակած կ'ըլլար . բայց արայեան նիզակակցութեանը առջին լակեղեմնացիները այնքան գէշ էին երեւցեր՝ որ անկէջ զատ մնալու համար թէ որ այս ճամբաս չի բռնէին նէ՝ հարկաւորապէս սիւտի ցրուէին : Աւստի Արատոս զինքը ժամանակին բերմունքին յարմարցուց :

11. Այլ որ Անտիգոնոս Գոսոն մակեդոնացւոց թագաւորը Պելոպոննէսոսի օգնութիւն հասնելու կանչուեցաւ նէ՝ Աղէոմենէս Աորըն թոս քաղաքին տիրած էր : Աքայեանները իրենց հաւատարմութիւնը գրաւ՝ Անտիգոնոսի ձեռքը տուին Աորնթոսի բերդը, որ Արատոս մակեդոնացւոց իշխանութեան ձեռքէն խլեր առեր էր : Աքայեանները այս նոր օգնութեամբս զօրացան ալ նէ՝ Աղէոմենէս չի կրրցան վախցունել, որ եկաւ գրէթէ աչքերնուն առաջը Սեգադուպօլիս քաղաքը առաւ : Սակայն պատերազմը շարունակելու միջոցները

քիչ էին , անոնք ալ քիչ մը ատե-
նէն ետքը հատան . ուստի իրեն
հարկ եղաւ միայն լակեդեմոնացւոց
երկիրը պաշտպանելը հերիք սեպել :
Ստեղծքն ու ստակը հատած ըլլա-
լով՝ Սելասիա տեղը յուսահատա-
բար պատերազմեցաւ , որ բանը
ինչ պիտի ըլլայ նէ ըլլայ . և Մն-
տիգոնոսէն յաղթը վեցաւ :

12. Սեգաղուպօլիս քաղաքը ծը-
նած մէկ երիտասարդ մը կար Փի-
լոպեմէն անուն , որ գրեթէ մեծա-
մեծ բաներու համար ծնած ըլլալը
վարմունքէն յայտնի էր : Մսիկայ Մն-
տիգոնոսին շատ օգուտ ըրաւ լա-
կեդեմոնացիները յաղթելու : Պա-
տերազմի ատենին խորհրդականնե-
րուն ալ խրատը մըտիկ չըրաւ , թա-
գաւորին խօսքին ալ ականջ չի դը-
րաւ , լակեդեմոնացւոց մէկ խում-
բին հետ զատ զարնը վեցաւ : Մնտի-
գոնոս այս զօրքերուն զօրապետը
յանդիմանել ցըցուց : Օջրապետը
յանդիմանու թէն ազատելու հա-
մար յանցանքը Փիլոպեմէնի վրայ ձը-

գեցնէ՝ ըսաւ թագաւորը. «Այդ երիտասարդը առ թի սպասելով ճարտար զօրասպետի գործ տեսաւ. և դուն որ զօրասպետ ես՝ երիտասարդ զինուորի մը գործ ըրիր » : Աւրեմն Փիլոսպեմէն սպարապետին դիտաւ ու ըուծիւնը հասկըցեր էր : Բրած բանին յաջող երթալովը միայն կըրնար Անտիգոնոսին առաջը արդարանալ :

13. Աղէոմենէս յաղթը վէլէն ետքը գնաց սպարտացիներուն համոզեց որ Անտիգոնոս ներս մտնելու թող տան, որովհետեւ չէք կըրնար ըսաւ անոր դէմ գնել : Բայց ինքը Անտիգոնոս իշխանութեան տակը մտնել չուզելով նաւը մտաւ Ագիստոս գնաց : Բարեկամներուն մէկը զինքը կը յորդորէր որ ինքը զինք մեռցընէ. Աղէոմենէս սպատասխան տըլաւ որ՝ ինքը զինք մեռցընելը ցածու թիւն և վախկոտուի է. քանզի մէկ սուտ ամընալէ մը՝ կամ փառք վաստրկելու սուտ ցանկութենէ մը առաջ կուգայ, ես ըսաւ անանկ կը

սեպեմ որ՝ հայրենեացս ծառայելու համար որքան երկար ապրիմ՝ այնքան աղէկ է . և երբ որ ամէն յոյսըս հատնի նէ՝ ես զիս մեռցընելը գըժար բան մը չէ՝ : Այս տուած պատասխանը շատ խելացի պատասխան չէ . յոյսը հատած ատենն ալ ինքքզինք մեռցընելու պատճառը սուտ ամօթէն և սուտ փառասիրութէն զատ բան չէ . և թէ որ այս պատճառներուս համար անձնասպանութիւնը ցածութիւն և վախկոտութիւն է նէ՝ միշտ անանկ է . յոյսը կըտրելով ուրիշ բան չըլլար : Աղէտ մենէսին քաջութիւնը բնաւ չի պակասեց . բայց գրեթէ խոհեմութիւնն ու չափաւորութիւնը քովը բնաւ չի մօտեցան :

14. Ագիպտոսի թագաւոր Պըտղոմէոս Աւերգեասէն օգնութի գըրանելու յոյս ունէր : Այս ալ Արդէոմենէսին վեհանձնութիւնը տեսնելով յիրաւի անոր օգնութի տալ կը խորհէր . բայց մահը վրայ հասնելով՝ խորհածը կատարելու ժա

մանակ չի տուաւ : Անոր յաջորդը
 Պտղոմէոս հայրասէր՝ հեշտու թիներու
 րու և զուարճութիներու ինկաւ .
 և Վղէումենէս մըտքէ ելաւ մոռցը
 վեցաւ : Աւստի թագաւորին մար
 դիկը իրեն նեղութիւն ալ տուին .
 և թագաւորին ալ գէշ հասկըցու
 ցին , որ ըրածը թողածը դիտելու
 մարդ գրաւ : Այն ատենը հետը
 ունեցած քիչ մը բարեկամներուն
 հետ միաբանելով վարպետութիւն
 բանեցուց , իրեն պահպանութիւն
 ընողները խաբեց , դուրս ելաւ , Ա
 ղէքսանդրիայի փողոցները պըտըտե
 լով հասարակութիւնը թագաւո
 րէն ապըստամբելու կը յորդորէր :
 Սարգ տեղէն չի խախտեցաւ , խու
 ըերու քարոզ տուած դարձաւ : Ա
 կեդեմոնացի տասն և երեք հոգի
 կային ամէնը , և միայն իրենք զիրենք
 կամ իրար սպաննելով կրնային Պըա
 ղոմէոսի ձեռքէն ազատվիլ , ըսել
 է որ՝ կամ թագաւորը պիտի մեռ
 ցընէր ասոնք , կամ իրենք զիրենք
 պիտի մեռցընէին : Թագաւորը աչ

խատու թե՛նէ՛ն խնայելը աւելի ազէկ
դատելով՝ իրար սպաննեցին . դուցէ՛
խե՛ն թեցեր է՛ն ըսել տալու համար .
քանզի հիմա այս սխառմու թիւնս
կարդացողին մտքէ՛ն ասանկ ըսել
կ'անցնի : Աղէ՛ ոմե՛նէ՛սին մարմինը
կախազանի մը վրայ կախվեցաւ :

15. Աղէ՛ ոմե՛նէ՛ս Ապարտայի մէջ
ինչ որ ըրեր էր՝ ամէ՛նն ալ աւրրվե-
ցաւ : Անտիգոնոս Ապարտա ամե-
նեւին խատու թիւն չըրաւ . քաղա-
քացիներուն թող տուաւ որ իրենց
օրէնքովը կառավարվին : Ափորները
նորէ՛ն հաստատվեցան : Քիչ մը ժա-
մանակ ետքը՝ հերակլեանց ցեղը
հատաւ : Յունաստանի շատ ժողո-
վուրդներուն սէս լակեդեմոնացի-
ներն ալ բռնաւ որ ունեցան . և բռն-
նաւ որ կ'ըսվէին թագաւորական ցե-
ղէ չըլլալով թագաւորու թիւննող-
ները , թէ՛ և բռնու թիւն ամենեւին
չի բանեցընէին . լակեդեմոնացւոց
անցած ատենվան փառքին միայն
յիշատակը մնաց գիրքերու մէջ :
Ալակեդեմոնացւոց հին սահմանա-

դրութիւնները նորոգելու վրայօք
 Ագիսին և Աղէոմէնէսին խորհած
 ներքը ըլլալու բաներ չէին . քանզի
 անանկ ատեն մը ելան ասիկայ ընե-
 լու՝ որ գէշուիր շատ զօրացեր էր :

16. Աքայեան նիզակակցութե
 հոգին՝ Արատոս էր : Անտիգոնոս
 Դոսոն ասոր շատ հաւատարմութի
 ունէր : Յաջորդը Փիլիպպոս ալ առ-
 ջի օրերը անանկ էր, բայց ետքը շո-
 ղքորթ մարդոցմէ խաբւեցաւ, Ա-
 րատոսին վրայ կասկած ըրաւ, և վեր-
 ջապէս դեղեց մեռցուց :

17. Փիլոպեմէն՝ Արատոսէն վար-
 պետ էր զօրապետութեան մէջ . և
 յունաստանի հին ատենները երեւ-
 ցած երեւելի զօրապետներուն հա-
 ւատար կըրնար ըլլալ : Ասիկայ յու-
 նաստանի մէկ հատիկ կըտրիճը մը
 նայ . հռոմայեցիք յունաստանի
 տիրելու սկսելէն ետքն ալ ազատու-
 թեան սէրը ասոր սրբտէն չի պաղե-
 ցաւ : Արքոր Սուամիոս Աորնթոս
 քաղաքը առաւ՝ իմացվեցաւ որ յու-
 նաստանի վրայ մեծ փոփոխութիւն

պիտի ըլլայ . բոլոր յունաստանն հը-
 ռոմայեցւոց իշխանութեան տակը
 պիտի մտնէ : Բայց յունաստան
 յաղթըված ատենը իր յաղթողները
 ուրիշ կողմէն իր տակը առաւ ա-
 նանկ յաղթութեամբ մը՝ որ ամէն
 յաղթութիւններէն պանծալի է .
 քանզի գրագիտութիւն մտցուց շնորհիւ .
 և անոնց խելքին ու մտքին վրայ տի-
 րեց : Անոնց ճանչցուց բանաստեղ-
 ծութեան և ճարտասանութեան և
 պատմութեան և բարոյական փիլի-
 սոփայութեան ճշմարիտ գեղեցկու-
 թիւնները : Ասոնց պտուղներն են
 Տերենտիոս , Աիկերոն , Ա իրգիլիոս ,
 Ավրատիոս , և ուրիշ այնքան երեւե-
 լի մարդիկ որ քաղաքական և իմաս-
 տասիրական կրթութիւնով երեւեւի
 եղան , և աղէկ բաներ ըրին : Յու-
 նաց իմաստուններն ալ յետագայ
 յաւելուածիս մէջ պարունակելով
 համառօտ մը անոնց վրայ ալ խօ-
 սիմք :

ՅԵՒԵՒՈՒԸՕ՝

ՅՈՒՆԱՅ ԱՐՈՒԵՍՏՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

ՅՕԴՈՒԱԾ Ա՝

Արտատպութիւն :

1. Երկրագործութիւնն : Քանի որ
յուսաց խելքը միտքը լուսաւորվե-
ցաւ նէ՛ այս արուեստիս պիտուա-
կանութիւնը ճանչցան . որ առաջ ի-
րենց տգիտութեան ժամանակը ա-
մենեւին բանի տեղ չէին դներ :
Արկրի բերքը չեղած տեղը ուրիշ
հարստութիւնները ստակ չընելքը
խմացընելու համար Միդաս թագա-
ւորի մը առասպել հնարած է . որ
իր խնդիրքին համեմատ՝ ձեռքը ինչ
բանի որ դրպչէր նէ ոսկի կը կըտ-
րէր , անօթի մեռաւ : Աստի խե-
լացի թագաւորները և մեծ փիլի-
սոփայները ամէնն ալ երկրագործու-
թիւնը առաջ տանելու ջանք ըրին :

2. Վ ԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ : Սիայն վաճառականութիւնն է՝ որ չունեցածը առնելու համար ելլել ունեցածը տալու ճամբան դիւրացընելով՝ մէկ երկրին բերքի կողմանէ ունեցած սակասութիւնը կը լեցընէ : Ասով էր որ փիւնիկեցիները մէկ բանի մըն ալ կարօտութիւն չէին քաշեր : Աթենացիները մասնաւորապէս ձիթենի շատցընելու և դարմանելու կընայէին . քանզի երկիրնին ուրիշ բան չէր հասցըներ : Յորենը և հունտեղէնները իրենցմէ զատ վաճ գաղթականներուն երկիրներէն , և մանաւանդ Վիւղանդիայէն կ'առնէին : Քսենոփոն իր մէկ գրքին մէջ աթենացիներուն կը խրատէ՝ որ թէ՛ երկրացի և թէ՛ դրսեցի վաճառականներուն օգնութիւնընեն . առաջկուց ստակ և նաւ և պէտք եղած ապահովութիւնները տան . քանզի ինչպէս որ կ'ըսէ , մէկ երկրին մասնաւոր մարդիկը հարուստ ըլլան նէ՛ տէրութիւնը հարուստ եղած կ'ըլլայ : Աորնթոս և

Սիրակուսա վաճառականութեամբ
 ծաղկեցան . և Պտղամէոս թագա-
 ւորներուն օրը Աղէքսանդրիա ևս
 առաւել ծաղկած էր : Գորդոս քա-
 ղաքէն մինչեւ կարմիր ծով ջրով
 ճամբորդութիւն ընելու ջրանցք մը
 բացեր էին , երկու դին իջեւաններ
 (խաներ) շինված . ասով Ասիայի հա-
 ռաւային մասին բոլոր ասպանքը հոն
 կը վազէր կուգար . Հնդկաց վաճա-
 ռական եղան :

Յ. ԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ : Պերիկ-
 ղէս գեղարուեստներուն ամէնն ալ
 պայծառացրնելու հոգ տարաւ . և
 երկու հարիւր տարիի չափ՝ այս ա-
 րուեստները պատուական և գերա-
 ղանց գործքեր երեւան հանեցին :
 Նարտարապետութեան երէք կար-
 գը՝ որ են Գորիկեան , Յոնիական և
 Կորնթեան ըսվածները , անոր օրէն
 մինչեւ հիմա այն արուեստին մէջ
 անխախտ կանոնի պէս բռնըված
 են : Բնորոշութիւնը քանի որ կա-
 տարելու թեան հասնինէ՝ հիներուն
 ազնիւ պարզութեանը այնքան կը

մօտենայ : Այփետացիք մէկ կանոն մը հանեցին հասարակաց վերաբերեալ շինուածոց վրայ օրինաւոր չափն ու կանոնը չանցնելու համար : Ճարտարապետը մէկ շէնք մը սկսելէն առաջ պէտք էր անոր գինը որոշել . և հաւատարմութեան համար իրեն ինչքը գրաւ (բէհին) գրենել : Թէ որ գինը առաջկուց ցըցուցած չափէն ելել չըլլար նէ՛ այն ճարտարապետին պարգեւ կուտային . Թէ որ ելելնար , և ելելը կըտրած գնոյն չորս մասին մէկէն ելելըլլար նէ՛ ճարտարապետը այն ելելը կը վճարէր :

4. ԲԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ : Յունաց շինած արձանները Փիդիասէն առաջ՝ եգիպտացւոց շինածներուն նման էին . Թեւերնին կախ՝ և մարմինին վրայ փակած . ոտքերնին վերէնվար իրար կըսրած . վրանին շարժելու պատկեր մը , կեցվածք և վայելչութիւն մը չունէին : Ասիկայ իր գիտութիւնովը և խելքովը այս արուեստս կատարելութեան հաս-

ցուց : Նարձր սիւնի մը վրայ դր-
վելու համար արձան մը ինք շինեց ,
արձան մըն ալ Աղկամենէս : Այլ-
մընցաւ , տեսնելու մարդիկ եկան .
Փիղիասին շինածը շատ անճոռնի
բան մը երեւաց . Աղկամենէսինը
գեղեցկու թեամբ զարմանալի : Տե-
ղերնին դրէք արձանները՝ ըսաւ Փի-
ղիաս . քանզի տեղէն ինչպէս երե-
ւելիքը հաշուեր էր արձանը շինած
ատենը : Այն ատենը իմացան դա-
տու մներուն սխալը . Փիղիասին շի-
նածը հոն դրվեցաւ նէ գեղեցկա-
ցաւ . Աղկամենէսինը ինչ ըլլալն ալ
յայտնի չէր այնքան հեռու բարձ-
րու թենէն :

5. ԱՐՁԱՆԱԳՈՐԾԻՔ : Այլուոն ,
Աիւսիսպոս , Պրաքսիտեղէս , և ու-
րիշ քանի մը քանդակիչներ ալ ի-
րենց արուեստովը անուանի եղան ,
Պրաքսիտեղէս երկու հատ Աստղ-
կան արձան շինեց , որ տեսնողները
կը զարմանային : Ագեղեցկու թեան
կողմանէ մէկը մէկալէն աղէկ էր՝
պինտ աղէկը մերկ շինածն էր : Այլ

կղզիին բնակիչները ասոնց մէկը առնել ուղեցին . վարպետը ըսաւ . երկուքին գինը մէկ է , սրը կ'ուղէք նէ այն առէք : Արտացիները հագվածը առին . թէպէտ մէկալին աղքատութեանը չէր հասներ : Հետեւնոսներուն այս ընթացքը հիմակվան չորսուսուս առնողներուն խրատ կրնայ ըլլալ . որ շատ անգամ անպարկեշտ կերպով նկարածին համար սուղ գին ալ կուտան . թէպէտ ընտրութիւննին ամէն ատեն աղէկ չըլլար . պարկեշտ կերպով շինվածը կ'ըլլայ որ իրենց առածէն եվել վարպետութիւն գեղեցկութիւն ունի :

6. ՊԱՏԿԵՐՏԱՆՈՒԹԻՒՆ : Պատկերահաններուն համար Յունաց պատմածները ճշմարիտ չեն երեւիր . մանաւանդ անոր համար՝ որ չորսէն եվել գոյն չէին գործածեր պատկերքաշած ատեննին : Արեւելի պատկերահաններն էին Պողիւգնոտ , Այուզոգորոս , Օււքսիս , Պարրասիոս , Տիմանդէս , Ալեղէս , Պրոտոգէնէս , և այլն : Ասոնք շատ յարգուի

ունէին . մէկ քանին ալ անանկ հը-
 սարա էին՝ որ վրանին խնդալ կու-
 տային , (այսինքն՝ շէշէի էին) : Ա-
 թե՛նացիները թէ որ արուեստից
 յարգութեան մէջ կարգ մը դնէին ,
 լսի զուարճութեան համար եղած
 արուեստները՝ օգտի և մարդկային
 սխտոյից համար եղածներէն վար-
 սեպէին նէ՝ գովութեան արժանի
 կ'ըլլային : Վայց բարուց աւրովիլը ,
 և կանոններուն և ամէն մարդու իր
 ինկածին հետեւելուն պարտակա-
 նութիւնը մոռցրովիլը մէջերնին մը-
 տած էր : Պատկերներու և արձան-
 ներու և Բէատրօնի-ինկած ա-
 տեննին Փրինէ անուն բող մը՝ որ
 Պրաքսիտելէս քանդակագործին ան-
 ծանօթ չէր , թեքէ քաղաքը իր ըս-
 տակովը շինել խոստացաւ այս սպա-
 մանով՝ որ դրանը ճակատը այսպէս
 արձանագրութիւն մը դնել տայ .
 “ Աղէքսանդր փղուց թեքէ քաղա-
 քը . Փրինէ նորէն շինեց ” : Օ՛ր-
 սիս ծիրանիներ և ոսկի թելով շին-
 ված հագուստներ կը հագնէր՝ որ

աչք կ'ուզէր վրան նայելու . ամէն
օր ասանկ կը պըտըտէր : Ալիմպեան
խաղերու ատեն Պարրասիոս չամբը
ցաւ գլուխը ոսկեղէն պսակ մը դը-
նել անանկ պըտըտիլ այն ատենը՝
որ աթենացիք Սոկրատն ու Փոկիո-
նը մեռնելու կը դատապարտէին :

7. ԱՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ : Յունաց բա-
րուցը մէջ երեւելի բան մը այս է
որ՝ երաժշտական գիտութիւնը մեծ
և հարկաւոր բանի մը տեղ կը դը-
նէին : Չայնբուռն ներդաշնակու-
թիւնը (ահէնկը) ասոնց զգայարա-
նացը վրայ մասնաւոր կերպով կ'ազ-
դէր . անոնց բարբը անուշցուցե-
ր , և պատերազմերու մէջ սրտեր-
նին արիութե՛ կրակ մը կը վառէր .
խրոխտութիւն և մեծանձնութիւն
մըն ալ կուտար անոնց . մեծամեծ
մարդոց վրայ գովասանական խաղեր
չալելով և կանչելով , քանզի բանա-
տեղծութիւնը , խաղերը և նուա-
գարանները ասկէց զատ նպատակ
չունէին : Ասոնք ամէնը մէկէն կը
հասկըցվէին երաժշտութիւն (մուզի-

գա) բառով, և մարդոյս կրթութեան հարկաւոր մէկ մասը սեպւած էր. չի գիտցողը անկիրթ և բարբարոս մարդոց կարգը կ'անցնէր: Ասկեդեմոնացւոց օրէնքին մէկը այն էր որ՝ երաժշտութեան մէջ նոր բան մըտցընելը արգիլեցին. չըլլայ որ ասկէց սորվելով ուրիշ բաներ ալ նորոգելու ելլեն: Արեւելի որ մօտ ատեն ներս այս գիտութիւնը եվելօք կատարելութեան հասաւ. բայց հիներուն երաժշտութեանը համար պատմելով թանկերը նորը տակաւին չի կրնար ընել, կատարելութիւնը այն առաջին զօրութեանը վնաս տըված կ'ըլլայ:

8. Օ՛ՒՆԱՐՈՒԵՍՏՔ: Համերոսի ատեն Յոյները տակաւին զինուորական արուեստի տեղեկութիւն բընաւ չունէին. քանզի անոր գըրքերուն մէջը պատմելով պաշարմունքներուն և պատերազմերուն մէջ ատանկ գիտութեան մը նշան չկայ: Ասքը փորձով և խելքով շատ վարպետ եղան: Աննակնին գնելու

աղէկ տեղ ընտրելը , պատերազմի
 ատեն զինուորներուն կանոնաւոր
 շարքը , վարպետ դարձուածքնին և
 գործքերնին , թէ իրենք զիրենք
 պաշտպանելու և թէ թշնամիին վը-
 րայ յարձակելու բանեցուցած կեր-
 պերնին , ասոնք ամէնն ալ ճանչը-
 ված են . և մօտ ատենի երեւելի
 սպարապետներն ալ ասոնցմէ օրի-
 նակ առեր և օգուտ տեսեր են :
 Վիտուին ու արիութիւնը ինչ աս-
 տիճան օգուտ ընելը սորվիլ ուզող
 մարդը՝ Յունաց ընդարձակ պատ-
 մութե մէջ Սիրակուսայի և Տիւրու-
 սի պաշարումը թող կարդայ . որ
 գրքիս համառօտութեանը համար
 մենք չի կրցանք տեղն ՚ի տեղը պատ-
 մել . ուզողը Վլուտարբոսի մէջ կրը-
 նայ գտնել : Հետեւակ զօրքին վը-
 րայ էր բոլոր զինուորական ուժը .
 ձիաւորները քիչ էին՝ ձիերը քիչ
 ըլլալուն համար . և թէպէտ այն ա-
 տենը հիմակվան պէս թամբ (էյէր)
 և ասպանդակ (էօղէնկի) գործա-
 ծելը այնքան սովորական չէր . բայց

աղէկ բարեկարգութեամբ կը պատերազմէին : Վերանդաղէն խառն ըս-
 վածները , որ երկու կողմէն մանգաղի սէս սուր երկաթներ երկրնցած կառքեր էին , և ձի լրծելով թշնամիներուն մէջ կը բըշէին զօրաց բանակը ցրուելու կամ ճըղքելու և իրենց ճամբայ բանալու համար , ետքէն սորվեցան որ օգուտէն աւելի փնաս ունի . ուստի երեսէ ձըգեցին , գործածութիւնը խափանեցաւ : Ատրիճ զինուոր հասցընելու համար ինչ որ կրնային ընել նէ՛ անոնց մէկին ալ անհոգութի չըրին : Ակեդեմոնացիները թէսպէտ մեռնելը բանի տեղ չի դնելու և չի վախնալու սղտիկուց սորված էին , բայց պատերազմի ատեն արիւն տեսնելով չի վախնալու համար զինուորներուն կարմիր լաթ կը հագցընէին : Պատերազմերու մէջ Յունաց ազգը յաղթող ընողը՝ զինուորական բարեկարգութիւն էր , որ երես ձերմըկընողին պատիւ՝ և անկարգ գըանըվողին սպառիժ տա-

լէն եւո չէին կենար . և ամէնն ալ
 փառք ստանալու կը փափաքէին , և
 խայտառակութենէն՝ մեռնելէն ե-
 վել կը վախնային : Վաղաքացիները
 ամէնն ալ զինուոր էին . և մինչեւ
 վաթսուն տարւան ըլլային նէ՝ զի-
 նուորութիւն ընելու պարտական
 էին : Այն մարդիկը՝ որ իրենց ընչիցը
 և ընտանեացը և պատուոյն և ա-
 զատութեանը համար կը կռուէին ,
 յայտնի է որ՝ հասարակ զինուորնե-
 րէն շատ վեր կ'ըլլային : Վայց հի-
 մայ ալ զինուորական բարեկարգու-
 թիւնը և պատուոյ փափաքիլը շատ
 բան կ'ընեն :

ՅՕԴՈՒԱԾ Բ .

Վարդ-Բիւն* :

1. Վարդ-ԲԵԱՆ մէջ Յունաց ազ-
 գը ուրիշ ամէն կրթեալ ազգերու
 վրայ գերազանց ընողններն եղան փա-
 փուկ ընտրութիւնը , որով զըուց-
 վածքի մէջ ազէկը գէշը ընտրելու

չէին դիւրաւ խաբւիլիք . վառ վըռ ուն
 երեւակայութիւն , և հարուստ և
 գեղեցիկ լեզու , որ ամէն բան կը
 գեղեցկացընէր : Հոմերոսի գրու-
 թեանց մէջ ուժ և վայելչութիւն
 և վսեմութիւն մէկէն կը գըտնեմք .
 և ասիկայ նշան մըն է որ՝ անկէց ա-
 ռաջ ալ սուր և վարպետ գրիչ ու-
 նեցող մարդիկ կան եղեր . քանզի
 լեզուները կանոնի մըտնելը քիչ ա-
 տենի մէջ չի լըմննար , և կատարե-
 լութեան հասցընողը՝ գիրքերն են :
 Իայց ասոր համար հազարաւ որ տա-
 րիներ ալ պէտք չեն , քանզի լեզուին
 առաջին մաքրութիւնը աւրող պատ-
 ճառ որքան քիչ ըլլայ նէ՝ մաքրելն
 ալ այնքան քիչ ատենի մէջ կ'ըլլայ :
 Այլ լեզուն մաքրողը միտքն է , որով
 հետեւ լեզուն՝ մտքին թարգմանն
 է , յստակ գաղափար ունեցողին լե-
 զուն ալ յըստակ , և շփոթ գաղա-
 փար ունեցողին լեզուն ալ շփոթ
 կ'ըլլայ հարկաւ :

2. Գրելու մասին գրեթէ միշտ
 բանաստեղծութիւնը ուրիշ տեսակ

գրվածքներէն առաջ եղած է : Սար-
 գոյս բնականի պէս բան մըն է որ՝
 մէկ բանի մը վրայ իր սրտին մէջ
 զուարճու թիւն զգայ նէ՝ հասարակ
 խօսելու կերպով չուզէր այն զուար-
 ճու թիւնը յայտնել : Նմանապէս
 պաշտած աստուածներուն կամ ե-
 րեւելի քաջութիւն ընող գիւցա-
 ղունքներուն գովեստը , կամ ինչ
 բան որ կ'ուզէն որ հասարակուի-
 ր սորվի ու չի մոռնայ , անոնք ամէնն
 ալ ոտանաւոր ընելու յօժարութիւր
 բնականի պէս է : Նոր համար վայ-
 րենի և անկիրթ ազգաց մէջ ալ
 հիմա ոտանաւորներ կը գըտնեմք .
 քանզի ինչ ճամբով որ իրենց առա-
 ջին ժամանակին երեւելի գործքերը
 միտքերնին մնացին՝ իրենք ալ կ'ու-
 ղեն իրենց ժամանակի երեւելի գործ-
 քերը նոյն ճամբով անմոռաց ընել :
 Այլ և՛ բանաստեղծական լեզուն
 կիրքի լեզու է : Ազգ մը վայրենուի
 մէջ իյնալով արուեստները և գի-
 տութիւնները կը մոռնայ , բայց կիր-
 քը միշտ չի մոռնար , մանաւանդ

աւելի զօրաւոր կ'ըլլայ անոնց քով .
 անոր համար խօսել գիտցող ազգը
 բանաստեղծական լեզուն չի կորսըն-
 ցըներ : Ասոր երկու նշան կայ . մէկ
 մը որ՝ գիտուն և փիլիսոփայ մար-
 դիկ բանաստեղծութիւն չեն կրը-
 նար ընել : Այլորորդ՝ նոյն իսկ բա-
 նաստեղծներն ալ որքան ծերանան
 նէ , ըսել է որ՝ աշխարհքի բանե-
 րուն վրայօք որքան փորձերնին շատ-
 նայ և խելացի ըլլան նէ , բանաս-
 տեղծական ոգին սցնքան կը թոււ-
 նայ :

3. Առաջ բանաստեղծութիւն-
 ներուն նպատակը պատմութիւններն
 են : Ատքը բանաստեղծական պատ-
 մութենէն կ'ելլէ նոխազերգութի
 (թրածէտիա) ըսվածը : Կտիկ ը-
 նողներուն ախորժեի գալու բաներ
 կը ձեւացընեն հանդիսարաններու
 մէջ . որով հասարակութիւնը զը-
 ւարձալի կերպով մը կը կրթըլի . աշ-
 խարհք և մարդիկ կը սորվի : Այս-
 քիւղէսին բանաստեղծութիւննե-
 ըր մտիկ ընողներուն սրտին մէջ

բռնաւորութեան գէմ աստելու թի մը
կ'արմատանար . և այս բանաստեղ-
ծըս՝ Պարսից Քսերքսէս թագաւո-
րին օրն էր : Սոփոկղէս ասոր իր գործ-
քերովը վաստրկած փառքն ու համ-
բաւը տեսնելով ինքն ալ նոյն ճամ-
բովը աշխատեցաւ , և անկէց երե-
ւելի եղաւ : Ալբրիպիղէս՝ որ Սո-
փոկղէսի ժամանակակից և նախան-
ձաւոր էր՝ նոխաղերգութեան մէջ
ոճի ազդուութիւն և բարոյական
խրատներ խօթեց : Այն ատենը նա-
խանձաւորութիւնը միայք սրբելու
և ասանկ աղէկ բաներ ընելու պատ-
ճառ կ'ըլլար : Հիմայ ալ կ'ըլլայ ,
բայց ընողները քիչ և աննշան մար-
դիկ ըլլալով՝ օրինակները մեր ա-
կանջը չեն հասնիր : Սողոնի ատե-
նէն թէսքիս՝ Բէտրոյի Տրամա ըս-
ված հանդէսները հնարեց : Ասոր
չինաճները աղէկ չէին , բայց աղէկ-
ներու ճամբայ բացին :

4. Չի գիտցրով թէ ինչո՞ւ հա-
մար աթենացիք իրենց Բրամէփիս
չինող վարպետներուն բանաստեղ-

ծուծեանցը մէջ մտած բարոյական
 ներուէն համը առնելէն ետքը կրցան
 Արիստոփանէսի անհամ ծաղրաբա-
 նուծիւններուն հաւնիլ ու ծափ
 զարնել. ինչպէս ներեցին որ Քե-
 օրոյի վրայ հանէ և խաղայ իրենց
 պաշտած աստուածները և դիւցա-
 զունները և քաղաքական իշխաննե-
 րը և կառավարութիւնը և Սոկրա-
 տի պէս մարդը անգամ, որ այն ա-
 տե՛նական գաղափարներուն համեմա-
 տելով սրատուական մարդ էր : Հին
 Կաթոլիկոս-Քիւնը ասանկ համարձա-
 կութիւններ ունէր. ծաղը ընելու
 համար ամէն բան ոտքի տակ կ'առ-
 նէր. և ժողուրդը ասոր պէս բա-
 ներու հաւնելու չէր ամբընար : Մի-
 ջին Կաթոլիկոս-Քիւն ըսվածը երեսուն
 բռնաւորաց ատենը հնարվեցաւ .
 անունները կը ծածկէր, բայց ան-
 ձանց նախատինք տալու կողմանէ
 նոյն իսկ հինն էր : Այդ Կաթոլիկոս-
 Քիւնը առանց մարդու գպչելու մի-
 այն գէշ բարքը կը ծաղըէր : Ասոր
 մէջ գերազանց գլանըվեցաւ Սե-

նանդրոս . և մենք ասոր շինած բանաստեղծութիւններուն աղէկ բան ըլլալը անկէց գիտեմք՝ որ Տերենտիոս իր շինածներուն օրինակ ասիկայ բռնեց . ուստի Սենանդրի գործքերուն կորստեանը վրայ շատ կը ցաւիմք :

5. Աւրիշ տեսակ բանաստեղծութիւններով անուն և համբաւ վաստակեցան Ասիոգոս , Աղկէոս , Սալուստիոս , Պինդարոս , Սիմոնիդէս , Անակրէոն , Թէոկրիտէս , և ուրիշներ ալ : Արգ , Աղբերգութիւն , Սչակական , Հովուական , Ասումնական բանաստեղծութիւն և Արգիւծական վերտառութիւն ըսված տեսակները ասոնք ծաղկեցուցին : Վայց ասոնց շատին ալ վերջին կատարելութիւն տուողները հռոմայեցիներն էին : Վնութե կարգին մեջը այս ալ կայ որ՝ սրամիտ մարդը հիւներուն օրինակէն օգուտ կը քաղէ . սխալները կը ճանչնայ և կըզգուշանայ , աղվորութիւնները կը տեսնէ և հետեւող կ'ըլլայ , և ինքն ալ նոր աղէկութիւններ կ'եւելցընէ :

6. Պատմութեան առաջին հեղինակ կամ հայր սեպիլած է Արդոտոս աղիկառնացին : Ասիկայ Քըսերքսէսի յունաստան գալէն քանի մը տարի ետքը ծնաւ : Ատեն մը ասոր համար կ'ըսէին որ՝ պատմութեան մէջ խօթած բաներուն սուտը շիտակը չինայիր . կարգացողին զարմանալ մը բերել կ'ուզէ : Անոր համար մէջը սուտ առասպելներ շատ կան կ'ըսեն : Բայց քանի որ ժամանակ անցնի նէ՝ քիչ քիչ այն սուտ կարծրվածները ճշմարիտի կը փոխվին կոր . և շատն ալ հիմը շիտակ , բայց ինքը անանկ կերպով մը պատմեր , է անկատար տեղեկութի առնելով , որ պատմածը սուտ կը նրմանի : Ասանկ է այն որ մէկ տեղ մը կ'ըսէ թէ՝ եգիպտացիները իրեն պատմեր են թէ օր մը արեւը արեւմուտքին դիէն ծագեր դէսլ 'ի աւրեւելք քալեր է : Աստուածաշունչի պատմութեան տեղեակ չեղողները ասոր վրայ կը խնդան . բայց կարգացողները Աղեկիա թագաւո-

րին օրը արեւը արեւային ժամա-
ցոյցի հաշուով տասն աստիճան ետ
դառնալը կարգան նէ՝ Արողոտոսին
պատմած շիտթ լուրը ասոր հաս-
տատու թիւն բերելով ճշմարիտ կը
գըտնեն : Քանի որ եգիպտական և
ուրիշ ազգաց հնու թիւերուն տեղ-
եակ ըլլալի նէ՝ Արողոտոսի սուտե-
րը այնքան կը պակսին , և վերջը քիչ
սուտ կը մնայ՝ ուրիշ ճշմարտախօս
անուն վաստրկած պատմիչներուն
գրքին նայելով : Արողոտոս գրած
պատմութիւնը լումնցընելէն ետքը
ողմպիական խաղու մը ատեն բազ-
մութեան մէջ կարգաց : Արտիկը
նողները շատ հաւնեցան և գովե-
ցին :

7. Թուկիդիտէս այն ատենը
տակաւին տղայ էր . նոխազերգու-
թիւն մը լրածին պէս լացաւ : Արո-
ղոտոս տեսաւ և ըսաւ որ այս տը-
ղան շատ առաջ գալու յոյս կու-
տայ . ուստի հօրը ասըսալրեց որ
մասնաւոր խնամք ունենայ վրան :
Այն ատենէն Թուկիդիտէս ուս-

ման հետեւեցաւ . և պեղոսպոննի-
 սական սրատերազմին ատենը գործի
 վրայ ըլլալով ամէն բան դիտեց . օ-
 բարազիր շինեց . և ետքը այն օրագի-
 րէն հանելով իր սատմութե՛ գիրքը
 շինեց . անանկ գիրք մը՝ որ ճշմարիտ
 սատմութիւն ըլլալը բացէն կ'երե-
 ւի : Քսենոփոն ասկէց քիչ մը ետ-
 քը երեւան ելաւ : Աիւրոսի դաս-
 տիարակութիւն անունով ասոր շի-
 նած գիրքը կարդալու է , չէ՛ թէ
 իբրեւ սատմութիւն , այլ բարոյա-
 կան և քաղաքական կեղծեալ վի-
 սասանութե՛ մը պէս : Այս գիրքս
 անցած տարի հայերէն թարգման-
 վեցաւ և Ա իէննա տպւեցաւ : Յու-
 նաց երեւելի սատմիչները այս ը-
 սածներէս զատ՝ ասոնք են . Պողիւ-
 բիոս , Վիտնէսիոս աղիկառնացի .
 Վիտգորոս սիկիլիացի՝ որուն ճշգու-
 թիւնը խորենացին ալ կը գոյլէ , և
 Պլուտարքոս , որ երեւելի արանց
 վարք շինած ունի , և Յունաց հին
 սատմութեան գրե՛թէ ամէնը մէջը
 առած է : Այս սատուական գիրքս

գրաբառ շատ ընտիր թարգմանու
թեամբ տարլած է Վէնէտիկ :

8. Ռուն պերճախօսու թէ սկիզ
բը Պէրիկլէսի կուտան . որ տրա
մաբանական ուժն ու կիրք շարժե
լը կըրցաւ մէկ տեղ բերել : Ասկէց
առաջ ժողովրդեան ատեանը խօ
սողներ կ'ըլլային , բայց ատենաբան
չէին ըսվեր : Տեսանք որ 'Վեմու
թենէս այս արուեստովս ռամկին
վրայ տիրած էր : Ասոր նախանձա
ւոր էր Ալքսինէս , բայց չէր կրնար
ասոր հասնիլ : Փոկիոնի խոհեմ ա
տենախօսու թեանն ալ շատ անգամ
յաղթեց : Այս հասարակապետու
թեանս մէջ՝ որ խօսքը ռամիկին
քովը կը լըմըննար , ռամիկին խօսք
հասկըցընելու կարողու թիւն ունե
ցող ատենաբանները շատ յառաջա
դէմ ըլլալուն համար ասոր ետեւէն
խնող և սորվող շատ կար : Վստկրա
տէս մէկ վարպետ ճարտասան մը ե
ղաւ : Իրեն աշակերտու թիւն ընո
ղէն շատ ստակ կ'ուղէր . և 'Վեմու
թենէս շատ ստակ չի կրնալ վըճա

ընելուն համար ուրիշ վարպետի քով
մտաւ : Ղարտասաններուն շատը իւ
մաստակու թեան ձեւերու յատուկ
վարժու թիւն կ'ընէին . որով մի և
նոյն բանի պաշտպանու թիւն ընե-
լու ալ հակառակու թիւն ընելու
ալ խօսք կը գըտնէին . ասոր համար
այն ատենները ճարգասան և իմաստի
մէկ բան ըսել էր : Ասանկ իմաս-
տակներուն շատ դէմ էր Սոկրատ .
ասոնցմէ մէկը թէ որ ձեռքը անց-
նէր նէ՝ ինքը տգէտ ձեւանալով և
տեսակ տեսակ բաներ հարցընելով
անանկ նեղը կը լըծէր որ՝ կ'անձըր
կէին . իրենց տգիտու թիւնը իրենց
բերնովը կը խոստովանէին : Աւստի
Սոկրատայ ալ գլխաւոր թշնամինե-
րը ասանկ մարդիկն էին : Խորասո-
ներ շինած ունէին՝ որ ինչպէս մէկ
բանին պաշտպան կենալու և ինչպէս
հակառակելու է : Իայց ասանկ բա-
ները ամենեւին օգուտ չեն ըներ .
խելքը և կրթու թիւնը և երեւելի
ատենաբաններուն գիւրքերը կար-
դալն է պիտանին :

Գիտութիւնն կամ Փիլիսոփայութիւնն :

1. ԵՐԲՈՐ Հետաքրքրու թիւնը , ուրիշի նախանձաւոր ըլլալը և ուրիշ պատճառներ (Յոյները մտածելու և խելքերնին բանեցրնելու ըստիպելցին՝ այն ատենը մէջերնին մըտաւ փիլիսոփայութիւնը : Առաջին փիլիսոփայները խելացի մարդիկն էին , որ գլխաւորապէս քաղաքակաւնութեան սկզբունքներու և ընկերական կենաց պարտականութիւններու վրայ կը մտածէին . քանզի կը տեսնէին որ՝ ազատութեան չափազանց սէրը քաղաքականութիւն կ'աւրէ , և կրից բռնութիւնն ալ ընկերական կենաց պարտաւորութիւնները կը մոռցրնէ : Աստուծոյ գոյութեւ և հոգւոյ անմահութեան և հանդերձեալ կենաց վրայ , և ուրիշ ասանկ մէթաֆիզիքական առարկայներու վրայ մտածելիք չունէին . քանզի ասոնք իրենց խելքին

գիւտը չէր կրրնար ըլլալ, նախնիք-
 ներէն սորվածովը պիտի երթային :
 Արբ որ ասանկ բաներն ալ մտածու-
 թեան նիւթ առին, իրենց խելքին
 կշռովը կշռել սկըսան նէ՝ ասոնց ա-
 մէնն ալ ուրացողներ ելան իրենց
 մէջը : Այց ասիկայ ետքէն եղած
 բան է : շին իմաստունները ոչ հա-
 կաճառուի գիտէին, ոչ բարակնալ
 և ոչ բառերու վրայ կռիւներ հա-
 նել : Աւստի այն ատենները իրարու
 հակառակ փիլիսոփայական ազանգ-
 ներ ալ չի կային : Մտացածին կար-
 ծիքներու ետեւէ չինկան, որով հիւ-
 ներուն փիլիսոփայութիւնը իրենց
 քով մնաց : Աւ աւելի ստուգել ու-
 զողներուն ալ մտքէն չէր անցներ որ
 իրենց խելքովը կրրնան ասանկ բա-
 ներու տեղեկանալ, թէ որ ասանկ
 գիտնային նէ՝ իրենց տեղը կը մընա-
 յին կը խորհէին, և խորհելով գը-
 տածնին՝ ճշմարտութիւնը գտանք ը-
 սելով կը հրատարակէին : Ասանկ չը-
 ըին, այլ մինչեւ սրարսկաստան գա-
 ցին մոգերուն հետ խօսելու հա-

մար . Ազխարտոս գացին քուրմերէն
բան սորվելու համար . և հնդկաս-
տան գացին մերկիմաստակներէն
հին իմաստութիւնը ստուգելու
համար :

2. Ասոնցմէ ետքը ելան անանկ
մարդիկ , որ աշխարհքի սկզբնաւո-
րութեանը և առաջին պատճառին ,
և մարդու խելք չի կրնալ հասնե-
լու բաներուն վրայ խնդիրներ հա-
նեցին : Խնդիր հանելը գէշ չէր .
այս խնդիրներուն պատասխանը ի-
րենց խելքին մէջ բընտրուելով սը-
խալեցան : Թաղէս միլետացի՝ որ
Սողոմի ժամանակակից էր , փիլիսո-
փայական աղանդոյ մը գլուխ եղաւ ,
որ Յոնիական ըսվեցաւ : ()ր մը այս
փիլիսոփայս աստղերուն նայելով
քաղած ատենը՝ առաջը փոս մը կայ
եղեր , չի տեսնելով մէջը ինկաւ :
Աին մը ասոր ըսաւ . « Առջեւիդ բա-
ները չես տեսներ նէ՝ երկինքի բա-
ները ի՛նչպէս պիտի ճանչնաս » :
Արքնայ ըլլալ որ երկինքի բաները
կամ աստեղաց ընթացքը հասկըցած

վրայ . բայց կնկանը ըսածն ալ խե-
լացի խօսք է . մանաւանդ՝ թէ որ
մեր խելքը հասնելու սահմանէն
դուրս եղած բաներու վրայ ըսվինէ :

3. Պիւթագորաս , որ Իտալական
ըսված աղանդոյն գլուխ եղաւ , փիլ-
լիսոփայու թեան մէջ խենթութեանթ
դրու թիւններ ունէր ալ նէ՝ բարու
յականի վրայօք աղէկ աշխատեցաւ :
Ընն սորվելու համար գնացեր էր
Եգիպտոս , Փիւնիկէ , քաղղէացւոց
երկիրը . կարելի է որ՝ մինչեւ Հընդ-
կաստան ալ գնաց : Աղէկ աստղա-
բաշխ և երկրաչափ էր . բայց խո-
հեմութիւնը ամէն իմաստութեանէ
վեր սեպեց . և յատկապէս հասա-
րակութիւնը խոհեմ ընելու հա-
մար աշխարհք եկածի տեղ դրա-
զինքը : Իգալիայի Սեծ յունաստան
ըսված կողմը անցաւ , և այս անու-
նիս պատճառը այն էր որ՝ յունաս-
տանէն շատ տուն հոն գացեր բնա-
կութիւն հաստատեր էին : Յորդոր-
մունքով և խրատներով այն տեղաց-
ւոց վարքն ու բարքը շիտկեց , մա-

նաւանդ Արտսն քաղաքի բնակիչ ներուներ, որ ամէն տեղացիներէն աւելի աւրոված էին :

4. Իր աշակերտներուն հետ մէկ տեղ կ'ապրէր . և մէջերնին նորընծայութեան պէս կանոն մը հաստատած էր, որ երկու տարի կը քրչէր . երբեմն ալ մինչեւ հինգ տարի կ'երկըննար . և այսքան ատենի մէջ կատարեալ լուութի միայն լրացանին միտք պահելու պիտի նայէին . ամենեւին սորվածներնուն վրայօք բան պիտի չի հարցընէին : Աստուծոյ վրայ բրած վարդապետութիւնը զարմանալի էր : Անանկ կ'ուզէր որ՝ ամէն բրածովնիս և ջանքովնիս և կամքովնիս ճշմարտութիւնը ստանալով Աստուծոյ նման ըլլալու աշխատիմք : Այլ ճշմարտութիւնը ձեռք ձգելու համար պէտք է կ'ըսէր հոգին մաքուր պահել , և կիրքերէն ազատ ըլլալ : Արեւելի որ՝ ասանկ բաները Փիւնիկէ երթալով սորվեցաւ , որ Պաղեստինու սահմանակից ըլլալով՝ հրէից վարդապետու-

Թե՛նէ՛ն բան խառնըված էր փիււնի-
կեցւոց ուսմանց մէջ, ինչպէս որ իւ-
մաստուն մարդիկ կը հաստատեն :
Անանկներ ալ ելան որ՝ Պիւթագո-
րասը Ազեկիէլ մարգարէն կարծե-
ցին : Թէպէտ անհիմն է կարծիք-
նին, բայց ՚ի հարկէ ասանկ կարծե-
լու սլատճառ մը ունեցած կ'ըլլան.
և այս է երկուքին խօսքը շատ տեղ
իրարու նման ըլլալը :

5. Անանկ կը սորվեցընէր որ՝
մարդ մը մեռնի նէ՛ անոր հոգին
կամ անասունի մը կ'անցնի, կամ
ուրիշ մարդու մը, և այս է հոգե-
փոխուի ըսվածը : Ա երջին ժամանա-
կի Հրէից ռաբբիներն ալ այս կար-
ծիքս ունին, և անոնցմէ և Պիւթա-
գորասէն ալ հին է Հնդիկներուն
այս կարծիքս ունենալը : Պիւթագո-
րաս անոնցմէ սորված կ'ըլլայ. Հըր-
եայներն ալ կամ փիւնիկեցիներէն,
կամ պիւթագորեան հին փիլիսո-
փայներէն առին, ինչպէս որ սղատու
նականներէն բան սորվելնին ալ՝ Փիւ-
լոն եբրայեցիին գիրքերէն յայտնի է :

Այս սուտ դրուժիւնէս Պիւթազորաս օգտակար հետեւութիւներ հանեց : Առաքինի վարուց վարձք , և չոր գործքերուն պատիժ կը ջըցընէր մարդուս մեռնելէն ետքը : Իրեն աշակերտներէն երկուքը՝ Օւլեւկոս և Քարոնդաս՝ օրէնսդիր եղան : Սէկը սիբարացիներուն օրէնք տուաւ , որ անկէց առաջ փափուկ կեանք անցընելով անուանի եղած էին : Սէկն ալ Իդալիայի Վոկրիք ըսված ժողովրդեանը : Պիւթագորաս Քնէ 540 տարի առաջ էր :

6. Անաքսագորասին համար առաջիկուց պատմութեան կարգը խօսած էմք , որ Պէրիկղէսի վարժապետ եղաւ : Ասիկայ ըսաւ որ՝ աշխարհքիս բարեկարգութիւնը մէկ անհուն և անսահման հոգիի մը բան է : Արեւուն համար՝ բըռնկած կրակ կտրած նիւթ մըն է ըսելով՝ աթենացիներուն աչքին անասունաձեւ երեւցաւ : Ամէն տեղ տգէտները ասանկ ծուռ դատաստաններ կ'ընեն : Սոկրատ՝ ասոր աշակերտն

էր, բայց իր փիլիսոփայութիւնը միայն հասարակաց վարքը շիտկելուն և բազմութեան օգտին բանեցուց: Ասոր ալ փոխարինութիւնը աթենացւոց կողմէն՝ մեռնիլը եղաւ:

7. Սոկրատէն ետքը անուն վաստրկեցան Պղատոն և Արիստոտէլ: Ասոնց երկուքն ալ անթիւ աշակերտներ ունեցան: Պղատոնի ազանդոյն անուն դրվեցաւ ախարիժեան, և արիստոտէլեանին՝ ճեմական: Սոտ ժամանակի ճեմականները՝ որ իրենց ուսմունքները Ալքրոպայի դպրատուններու մէջ խօթեցին, կարելի է որ Արիստոտէլի բուն միտքն ալ չի կրցան հասկընալ, որ անոր կը հետեւիմք ըսելով կը պարծէին: Արիստոտէլի և Պղատոնի ատեն՝ Անտիսթենէս ալ կիւնիկեան կամ շնական փիլիսոփայներուն պարագլուխ եղաւ: Նորը ունեցածնին պիտի ըլլար վերարկու (մանթօ) մը, մախաղ կամ տօսրակ մը և դաւազան մը: Ասանկ աղքատ պըտըտելով՝ իրենց աղքատութեանը վրայ

կը հպարտանային . և բոլոր մարդոց վրայ խնդալու և ծաղր ընելու իրաւունք ունեցած կը կարծէին ղիրենք : Լնուանի Վիոգինէսը սուտ ստակ կտրելու յանցանքով Սինոպէն քրշվելով՝ որ իր հայրենի երկիրն էր , Լնախթեհէսի աշակերտ եղաւ . և մոլութե՛ գէմ խօսելով՝ մոլի մարդոց անունն ալ կուտար և պատուոյն կը դրպչէր : Շան առաջ նետածի պէս ասոր ալ ոսկոր կը նետէին , որ չամբնալը մէկ դի ձգէ՛ . ասով կը պարծէր ալ : Արատէս անուն ուրիշ շնական մը շատ ընչից տէր եղաւ մէկուն ժառանգ ըլլալով : Բնչքերը ամէնն ալ ծախեց , ստակ ըրաւ . և այն ստակը տարաւ ծովը թափեց : Հիմակվան կառավարութենէրը փիլիսոփայութե՛ շատ չէն հասկընար . ձեռվընին ասանկ փիլիսոփայ մը անցնի նէ՛ խենթեցեր է ըսելով յիմարանոցը կը դնեն . որ փիլիսոփայ ըլլալէն ազատի , խեղքը գլուխը գայ :

8. Օ՛հնոն՝ Սոյիկէան ազանդոյն պարագլուխը՝ կը սորվեցընէր

որ, մէկ մարդ մը առաքինի ըլլայ նէ՝
 գլուխը ինչ փորձութի և ինչ ցաւ
 գալու ըլլայ՝ տակաւին երջանիկ
 կ'ըլլայ : Վարմնոյ նեղութիւնները
 և զգալի ցաւերը անգամ գէշ չեն
 կ'ըսէր անանկ մարդուն համար :
 Ասոր ըսածին նայելով՝ խելացի
 մարդը կիրք պիտի չունենար . ուրիշ
 չին ցաւին անգամ ցաւակից ըլլա-
 լու չէր . բայց մարդկութիւն ինկած
 պարտականութիւնները ամէնն ալ կա-
 տարելու էր : Ասոր վարդապետութիւնը
 յիրաւի չափազանցութիւն ունէր,
 բայց այս ազանդոյն հետեւողներուն
 մէջ աղէկ մարդիկ շատ եղան, որ
 առաքինութիւն անուն վաստրկեցան :

9. Ասոր հակառակը Ապիկուրոս
 կ'ըսէր որ՝ երջանկութիւն հեշտութիւն
 վրայ կը կայանայ : Արժէք կայ որ՝
 հեշտութիւն ըսածը՝ առաքինական
 գործքերէ պատճառված հեշտու-
 թիւնը պիտի ըլլայ . բայց ծովն միա-
 թի տանիլն ալ գիւրիւն էր . ասով
 այս ազանդը շուտով գէշցաւ : Ա-
 պիկուրեանները մարմնական հեշ-

տու թիները ամէն հեշտու թիներէն վեր բռնեցին . և իրենք զիրենք անառակու թէ գործքի տուին : Հիմա ալ խիստ շատ Ապիկուրեան կայ . որ այս անունովս աղանդ աշխարհի վրայ երեւիլն ալ չի գիտեն , բայց իրենք ճշմարիտ Ապիկուրեան են :

10. Պիւռոն և Պիւռոնականներն քրքր չափազանցուե՛ն ծայրը հասան : Ինաւ մէկ բանին ճշմարտութիւնը չէին ճանաչէր : Աւրիշ փիլիսոփայներ ալ ելան՝ որ Աստուծոյ գոյութիւնը ուրացան . և այս փիլիսոփայութիւն ամէնուն ալ սոսկում կը բերէր : Փիլիսոփայութիւնը եղաւ մէկ անհատնում աղբիւր մը . որկէց կը բըղխէին սուտ դրութիւններ , և վըտանգաւոր վիճաբանութիւններ , երբ որ նախնեաց ուսմունքը ձրգեցին , և խելք չի հասնելու բաներն ալ իրենց դատողութեան տակը առին : Չարմանքը այն է որ՝ այս ամէն տեսակ փիլիսոփայութիւնները իրենց հետեւող գտան չէ՛ թէ միայն հին ատենը , այլ նոր ատենս ալ : Ասկէց

կը հասկընաս որ՝ մարդկային մտաց
դատումը որքան աւրըված է եղեր :

11. Յոյները այս ըսած փիլիսո-
փայութիւններէս զատ՝ երկրաչա-
փութեան և աշխարհագրութեան
և աստղաբաշխութեան ալ տեղե-
կութի ունեցան : Վագարատ կամ
Հիպոկրատէս՝ Քրիստոսէն 460 տա-
րի առաջ ծընաւ . ասիկայ կըրնայ
ճշմարիտ բժշկութեան նախահայրը
սեպիլիլ . որ փորձի և քննութեան
վրայ հիմնած է : Փիլիսոփայներուն
պէս բժիշկներն ալ՝ մեջերնին այլ
և այլ աղանդներ ունին . և ասիկայ
աւելի գէշ է . քանզի փնասը մար-
դու կենացը կը դըպչի : Հիմակվան
իմաստուններուն շատին գիտցա-
ծին հիմը հին Յունաց իմաստուն-
ներուն սորվեցուցածն է . անոր հա-
մար իմաստուն է ետեւէ իյնող մարդ-
մը պէտք է որ այն իմաստուններուն
խօսած և գրած լեզուն սորվի :

Վ.Ե.Բ.Պ. :

Յ Ը Ն Կ

Մ Ը Մ Ն Ը Ռ Ը Ջ Ի Ն

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Ա Ջ Գ Ա Ց

Գ Լ Ը	Պատմութիւն եղիպտացւոց . . .	1 :
Գ Լ Բ	Պատմութիւն փիւնիկեցւոց . . .	25 :
Գ Լ Գ	Պատմութիւն քաղղէացւոց և ասորեստանեայց	52 :
Գ Լ Դ	Պատմութիւն Մարաց և Պարսից	57 :
Գ Լ Ե	Պատմութիւն Հնդկաց	51 :

Մ Ը Մ Ն Բ .

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Յ Ո Ւ Ն Ա Ց

Գ Լ Ա	Առասպելական ժամանակներուն պատմութիւնը	57 :
Գ Լ Բ	Սպարտա , և Լիւզորկոսին օրէնքները	75 :
Գ Լ Գ	Աթէնք , և Սողոնին օրէնքները .	96 :
Գ Լ Դ	Պարսիկները յունաստանի վրայ կ'երըն , և Միլչիատէսէն կը յաղթըվին	115 :
Գ Լ Ե	Արիստիդէս և Թեմիստոկղէս . Քսերքսէս յունաստանի վրայ կ'երէ	122 :

- ԳԼ. Զ. Պարտիկները ամէն տեղ կը
յաղթըզվին, և յունաստանէն
դուրս կը վըռընտրվին . . . 133 :
- ԳԼ. Է. Լակեդեմոնացւոց և աթենացւոց
իրար չի քաշէլնին. Արիստի-
դէսի իշխանութիւնը . . . 145 :
- ԳԼ. Ը. Կիմոն աթենացւոց փառքը կ'է-
ւելցընէ 154 :
- ԳԼ. Թ. Պերիկղէս Աթէնքը կը կառա-
վարէ 161 :
- ԳԼ. Ժ. Պեղոպոննիական պատերազմին
սկիզբը. Աղկիրիադէս . . . 171 :
- ԳԼ. ԺԱ. Պեղոպոննիական պատերազմին
չարունակութիւնը. Աթէնք
քաղաքին պղտիկնալը և տկա-
րութիւնը 186 :
- ԳԼ. ԺԲ. Սպարտայի աւրըվելը. Աթէնքի
ազատութիւնը. Սոկրատայ դատը. 199 :
- ԳԼ. ԺԳ. Ագեսիդայոս Ասիա կ'անցնի .
Պարսից հետ ամօթալի հաշ-
տութիւն. Թեբէի հասարա-
կապետութիւն 213 :
- ԳԼ. ԺԴ. Թեբայեցւոց յաղթութիւնը. մին-
չեւ Եպամինոնդայ մահը . . . 225 :
- ԳԼ. ԺԵ. Փիլիպպոս մակեդոնացիին թա-
գաւորութեան սկիզբը 240
- ԳԼ. ԺԶ. Փիլիպպոսի թագաւորութեան
վերջը. Փսկիոն Դեմոսթենէսի
դէմ կը խօսի 255 :
- ԳԼ. ԺԷ. Աղէքսանդրի թագաւորութիւնը
մինչեւ Արքեղայ պատերազ-
մը 266 :



ԳԼԻ ԺԸ. Աղէքսանդրի Թագաւորութեան
 նը վերջը 288 :

ԳԼԻ ԺԹ. Աթէնք և Մակեդոնիա եղած
 բաները 302 :

ԳԼԻ Ի. Աղէքսանդրի կայսերութիւն բաժ.
 նը վիլը. Կեղտոց ազգին յու.
 նաստան երկիրը կոխելը . . . 314 :

ԳԼԻ ԻԱ. Աբայեան նիզակակցութիւն. Ա.
 գիս և Կղէոմենէս 325 :



ՅԱՆՆԱԿԱՆ ԳՐԱՆԵՐ

ՅՈՒՆԱՅ ԱՐՈՒԵՍՏԻՑ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

ՅՕԴՈՒԱԾ Ա. Արուեստք 347 :

1. Երկրագործութիւն անդ :

2. Վաճառականութիւն 348 :

3. Ճարտարապետութիւն 349 :

4. Քանդակագործութիւն 350 :

5. Արձանագործք 351 :

6. Պատկերհանութիւն 352 :

7. Երաժշտութիւն 354 :

8. Զինարուեստք 355 :

ՅՕԴՈՒԱԾ Բ. Դպրութիւնք 358 :

ՅՕԴՈՒԱԾ Գ. Գիտութիւն կամ Փիլի
 սոփայութիւն 370 :

